

Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12

Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր
և բնագիտամաթեմատիկական հոսքերի
12-րդ դասարանի համար

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 373.167.1:891.981.0 (075.3)

ԳՄԴ 83.33 ց72

Ե 381

Խմբագիր՝ Վ. Սաֆարյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Եղիազարյան Ա.

Ե 381

Հայ գրականություն 12: Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանի դասագիրք / Ա. Եղիազարյան; խմբ.՝ Վ. Սաֆարյան. - Եր.: ՄԱՆՄԱՐ, 2016. - 184 էջ:

Դասագրքի մեթոդական ապարատի ստեղծմանը
մասնակցել է Բ.Գ.Թ. Նաիրա Տողանյանը

ISBN 978-9939-62-049-7

ՀՏԴ 373.167.1:891.981.0 (075.3)

ԳՄԴ 83.33 ց72


© Եղիազարյան Ա., 2016

© ՄԱՆՄԱՐ, 2016

© Պետական գիտությունների գործակալություն, 2016

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

(1903 – 1969)



Յեղասպանությունից հետո արևմտահայության մի մասը հանգրվան գտավ Արևելյան Հայաստանում: Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում Վանի և նրա շրջակայքի բնակիչները, որոնք նահանջող ռուսական զորամասերի հետ կարողացան անցնել Արևելյան Հայաստան և փրկվել: Հետագայում նրանցից շատերը դարձան հայտնի գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, մեծ ավանդ մուծեցին հայ նորագույն մշակույթի գանձարանը:

Արևելյան Հայաստան հասած վանեցիների մեջ էր նաև պատանի Գուրգեն Աճեմյանը, որը գաղթի ճանապարհին կորցրել էր իր ընտանիքը և տեղավորվեց որբանոցում, ինչպես Նաիրի Զարյանը: Որբանոցում էլ նրանք ծանոթացան և

մտերմացան: Գուրգեն Աճեմյանը մի քանի տարի հետո հայ ընթերցողներին հայտնի դարձավ իբրև Գուրգեն Մահարի:

Մահարու մանկության և պատանեկության մասին գիտենք իր գրքերից՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին»: Մահարու կյանքի վաղ տարիները անցել են հայրենի քաղաքում՝ Վանում: Նրա հայրը երիտասարդ տարիքում զոհ է գնացել մի արկածի: Հոր մահը ծանր հարված էր պատանի Գուրգենի համար, և իր գործերում Մահարին մի անգամ չէ, որ անդրադարձել է այս դեպքին: Երիտասարդ մայրը երեք երեխաներով մնացել է այրի: Գուրգենը իր մանկական տարիներն անցկացրել է տատի տանը: Տատը մահացել է գաղթի ճանապարհին, և դա մեծ կորուստ է եղել Գուրգենի համար: Գաղթել են բոլորի հետ, երբ ռուսական զորքերը, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գրավել էին Արևմտյան Հայաստանը և հասել Վան, անսպասելիորեն նահանջում են: Արևելյան Հայաստանում Գուրգենն ապրել է Երևանի, Դիլիջանի որբանոցներում, սկսել գրել, ծանոթացել է Եղիշե Չարենցի հետ, դարձել նրա մտերիմներից մեկը:

Մանկության տարիների և գաղթի մասին Մահարին այսպիսի վկայություն ունի ինքնակենսագրության մեջ. *«Իսկ ի՞նչ է մանկությունը, եթե ոչ ամենամեծ արևը երկնքի վրա, բաց պատուհանից նայող ամենահսկա լուսինը, վիթխարի բարդու գագաթին կանգնած արագիլի՝ արևի տակ փայլող*

կտուցը, մորդ ժպիտը արցունքների միջից և արցունքները ժպիտով ողողված, ապա և կանաչ ճյուղերի մեջ վառվող մրգերն ու փակ պատուհանի ապակու վրա բզգացող բզեզի արծաթե թևերի զնգոցը, առաջին մանկական գրքի զարմանալիորեն հաճելի բուրմունքը, թարմ հացի բույրը և աստղոտ երկնքի տակ փռված այգիների բուրմունքը և բուրմունքը նեղ փողոցով անցնող փողոտ նախիրների և հոտերի...

Քաղաքը, ուր անցել է իմ մանկությունը, տներ է ունեցել տափակ տանիքներով և ամեն տան առաջ տնամերձ մեծ մի այգի՝ ամեն միւրգ ու բարիքով: Հողը հարուստ էր ցորենով և ծաղիկներով, հողը պարարտ էր, որովհետև տարիներ շարունակ հոսել էր մարդկային արյունը, և մարդկային արյունից ծաղիկներն ու խնձորները ավելի վառ կարմիր էին:

Փոքր էի, երբ կորցրի հորս, մի քիչ ավելի մեծ, երբ կորցրի ծննդավայրս: Ծննդավայրիս հետ կորցրի առմիշտ տատիս և մորս ժամանակավորապես: Չքացավ քարտեզի վրայից այն, ինչ կոչվում էր Արևմտյան Հայաստան, և մեկուկես միլիոն հայերի արյունից մի անգամ էլ ծաղիկները կարմրեցին, և վերջալույսները արյուն հագան: 1915 թվականին ես էջմիածին ընկա, հետո՝ Դիլիջան, հետո՝ Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց, մահճակալից մահճակալ»:

Ուշադրություն դարձրեք, թե ինչպես ծննդավայրի նկարագրության քնարականությանը փոխարինում է հաջորդ տողերի ողբերգականությունը, երբ խոսում է կոտորածների, գաղթի, որբության մասին... Քնարականության և ողբերգականության այս միահյուսումը դարձավ Մահարու գրականության առանձնահատկություններից մեկը:

Խորհրդային տարիներին սկսվում է Մահարու բուռն գրական գործունեությունը: Սկզբում գրում է բանաստեղծություններ, որոնք հետո հավաքվում են «Մրգահաս» ժողովածուում: Այնուհետև անցնում է արձակի:

Թվում է՝ Ցեղասպանությունից փրկված երիտասարդ գրողի կյանքը պետք է ընթանար գոնե համեմատաբար խաղաղ հունով: Նրա առաջին գրքերը լավ համբավ էին նվաճել, նրան խոստումնալից ապագա էր սպասում: Մահարին ոչ միայն գրում էր իր գրքերը, այլև ակտիվորեն մասնակցում էր գրական կյանքին. նա Չարենցի ղեկավարած «Հայ պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միություն» կազմակերպության անդամ էր, մասնակցում էր այն տարիների գրական բանավեճերին: Բայց մոտենում էին 1936–1937 թվականները: Մահարուն էլ ձերբակալեցին, երբ նա, ինչպես ինքն է պատմում, կոնյակ էր խմում նշանավոր դերասան Վահրամ Փափազյանի հետ այսօրվա «Երևան» հյուրանոցի սրճարանում: Նրան այսպես արհեստականորեն և բռնությամբ հեռացրին գրական կյանքից և զրկեցին ստեղծագործելու հնարավորությունից: Մահարուն աքսորեցին, և նա աքսորում մնաց ընդհանուր առմամբ 17 տարի (այդ ընթացքում քառասունականների վերջերին նրան ազատում են, բայց հետո նորից են ձերբակալում, և նա աքսորավայրում մնում է մինչև Ստալինի մահը):

Վերադարձից հետո Մահարին գրում է իր լավագույն գործերը՝ պատմվածքներ աքսորի մասին, «Ծաղկած փշալարեր» և «Այրվող այգեստաններ» վեպերը, ակտիվորեն աշխատակցում է գրական մամուլին, մասնակցում է գրական կյանքին:

Մահարու պոեզիան: Մահարու բանաստեղծությունները չէին կարող դուրս լինել անցյալ դարի 20-ական թվականների գրական մթնոլորտի ազդեցությունից՝ հեղափոխական փորձարարությունից և հեղափոխությանը նվիրված երգերից: Նա գգում է, որ նոր առօրյան, մեծ քաղաքի տարերքը գորավոր են: Բայց զարմանալիորեն հավատարիմ է մնում քնարերգությանը, մարդկային հավերժական զգացմունքներին, բնությանը: Քսանական թվականների բանաստեղծություններից մեկում գրում է.

Միևնույն է՝ որքան էլ փախչես,

Ցնորես քաղաքներ հսկա,

Քեզ հողդ պիտի ճանաչե,

Քեզ հողդ պիտի զգա:

Այս երկվությունը (գյուղն ու բնությունը մի կողմից, մյուս կողմից՝ «մեծ քաղաքների խոլ խուժը», այսինքն՝ աղմուկը) բնորոշ էր Մահարու շատ ժամանակակիցների: Պատահական չէր նրա սերը ռուս հայտնի բանաստեղծ, ռուսական բնության մեծ երգիչ Սերգեյ Եսենինի նկատմամբ: Բայց իր սերնդակիցների մեջ Մահարին թերևս ամենից քիչ ենթարկվեց հեղափոխական պոեզիայի պահանջներին: Եվ թեև հնի մահը, երկաթի և պողպատի երգերը ժամանակ առ ժամանակ հայտնվում էին նրա գործերում, նա ավելի շատ գրում էր սիրո, բնության գեղեցկության մասին՝ չվախենալով երգել իր թախիծը, տխրությունը: Այդ տարիներին դրա համար Մահարուն շատ են քննադատել: Բայց նա գնաց ի՛ր ճանապարհով: Ահա երկու քառատող «Այգեստաններ» բանաստեղծությունից.

Այգեստաններ միին, սաղարթավոր ու վեհ,

Այգեստաններ, որոնք կարկամել են, տարվել,

Բլուրների վրա ու բլուրներն ի վեր...

Այգեստաններ...

Այգեստաններ հուռթի ու կատաղի, հզոր

Բազուկներով ու մրգերով դեղին,

Այգեստաններ, որոնք վարարել են այսօր,

Սպասում են սիրով իրենց հավաքողին:

Այսպես է գգում Մահարին բնությունը: Առհասարակ կյանքի վառ գույները հատուկ են Մահարու զգացողությանը, և այդ զգացողությունը հեղափոխական

փորձարարության տարիներին չխամրեց: Մահարու բանաստեղծությունները զգալի ազդեցություն գործեցին հայ քնարերգության հետագա զարգացման վրա:

Արձակը: Քսանականների վերջերից Մահարու ստեղծագործության մեջ գլխավորը դառնում է արձակը, արձակ գործերի շնորհիվ է նա առաջատար տեղ գրավում հայ գրականության մեջ: Այդ թվականներին Մահարին սկսում է գրել իր հայտնի ինքնակենսագրական եռագրությունը՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին» (եռագրություն – երեք գրքերից կազմված շարք, որտեղ գործում են նույն հերոսները): Կյանքի վերջին տարիներին սկսել է շարադրել նաև իր երիտասարդության պատմությունը, որն անավարտ է մնացել:

Այդ վիպակները սոսկ ինքնակենսագրություն չէին. դրանց մեջ Մահարին վերստեղծում է իր ժամանակի, իր հայրենի քաղաքի, մարդկանց տպավորիչ պատկերներ: Նրա եռագրությունը իր մեջ արտացոլում է հայոց պատմության ողբերգական, ճակատագրական էջերը՝ Ցեղասպանությունը, գաղթը, Առաջին հանրապետության տարիները: Այս գրքերում զուգակցվում են կյանքի մանկական ու պատանեկան ընկալումը և հասունացած մարդու հայացքը այդ նույն տարիների նկատմամբ: Ընթերցողը ոչ միայն մեծ բավականություն է ստանում այդ գործերը կարդալիս. դրանք ստիպում են մտածել հայոց կյանքի ու ճակատագրի կնճռոտ խնդիրների մասին:

Մահարու արձակում առհասարակ և մասնավորապես այս գրքերում մեծ դեր է խաղում նրա անզուգական հումորը: Բայց հումորը զուգակցվում է կյանքի հանդեպ ամենալուրջ հայացքի հետ, այդ հայացքի մի մասն է: Կյանքի ամենաողբերգական պահերի մասին էլ Մահարին կարող է ժպիտով խոսել. հումորը որևէ կերպ չի նվազեցնում, ընդհակառակը, ավելի է սրում և ընդգծում իրականության ողբերգականությունը: Միաժամանակ Մահարու հումորը շատ հաճախ քնարական երանգ է ստանում, միահյուսվում նուրբ քնարականությանը:

«**Մանկության**» մեջ Մահարին պատմում է իր կյանքի ամենավաղ տարիների մասին, որն անցկացրել է հայրենի Վան քաղաքում: Ընթերցողը լիովին զգում է մանկական տպավորությունների անմիջականությունը, վայելում հայոց հնագույն քաղաքներից մեկի կոլորիտի հմայքը:

Ահա մի դրվագ մանկությունից: Մահարու տատը հարևանների հետ զրուցելիս կեսկատակ ասում է, որ հենց Գուրիսը դառնա տասնհինգ տարեկան, կպսակի (տանը փոքրիկ Գուրգենին այդպես են կանչել): Գուրիսը, որն, իհարկե, ներկա էր այդ զրույցին, պատրաստակամություն է հայտնում հենց հիմա պսակվել, եթե դա տատին հաճելի է: Այս փոքրիկ պատմությունը չի կարող ընթերցողին չզվարճացնել: Միաժամանակ ընթերցողը պատկերացում է կազմում Վանի ընտանեկան հարաբերությունների և կենցաղի մասին:

Երկրորդ վիպակը՝ «**Պատանեկությունը**», պատմում է Վանի կռիվների և գաղթի մասին: Պառավ տատը, Գուրգենի երիտասարդ մայրը և երեք երեխաներ

մնում են մենակ գաղթի ճանապարհներին: Սկզբում քեռին նրանց հետ է, և դա ինչ-որ չափով փրկություն էր բոլորի համար: Բայց քեռին որոշում է, որ հիմա ամեն մարդ պետք է մտածի իր փրկության մասին, և լքում է հարազատներին: Տատը մահանում է ճանապարհին, մեծ քույրը, որը հոր մահվանից հետո խելագարվել էր, կորչում է: Հետո Գուրգենը մենակ է մնում և ուրիշ փախստականների հետ հասնում Երևան:

Այստեղի տպավորությունները արտացոլում են անցյալ դարի տասական թվականների վերջերի Երևանի և Հայաստանի կյանքը: Որոշ էջեր իսկապես ողբերգական հնչեղություն ունեն: Դրանք այն տարիներն էին, երբ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգի տակ էր: Սով, համաճարակ, չորս կողմը՝ թշնամիներ, թուրքական հարձակումը՝ ահա այն տարիների առօրյան: Մահարին քաղաքականության մասին չի խոսում, մարտեր չի նկարագրում: Երիտասարդ մարդկանց ճակատագրերն է ներկայացնում, և այդ ճակատագրերում արտացոլվում է ժամանակի ողջ ողբերգական մթնոլորտը: Գուրգենը որբանոցում մտերմացել է երիտասարդ դաստիարակչուհիներից մեկի հետ: Եվ մի օր նամակ է ստանում այդ աղջկանից, որը նա գրել էր ինքնասպանությունից առաջ: Աղջիկը հանդիպել է իր դպրոցական ընկերոջը, որը ռազմաճակատ պետք է գնար: Երիտասարդը վերջին գիշերը անցկացրել է աղջկա հետ՝ նրա կամքին հակառակ: Նա վախենում էր զոհվելուց և ուզում էր դրանից առաջ գոնե մի քիչ, գոնե այդպես վայելել կյանքը: Այդ երիտասարդը հուսալքված է, կոտրված: «...Մենք տրորվեցինք, իսկ ինչո՞վ մեղավոր ենք մենք, ինչո՞վ...», - ասում է նա իր և իր ընկերների մասին: Աղջիկը դրանից հետո ինքնասպանություն է գործում: Ինքնասպանություն է գործում և երիտասարդը: Ռոմանտիկական երազներ, սպասումներ և՛ այդպիսի հիասթափություն. շուրջը մահ, պատերազմ, անորոշություն և վախ...

Հարուստ է եռագրության երրորդ վիպակը՝ **«Երիտասարդության սեմին»**: Գուրգենը հարազատների հետ է, Թիֆլիսում: Փախստական վանեցիների մի մասը ապրում է այստեղ: Գուրգենը հանդիպում է Վանի հայտնի հասարակական գործիչներից շատերին, շփվում է գրական միջավայրի հետ, տպագրվում: Վիպակի էջերում երևում են մեր հայտնի գրողները՝ Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանը, գորավար Անդրանիկը...

Այստեղ էլ են երևում հայկական աղետի տխուր հետևանքները: Գուրգենի ազգականներից մեկը կնոջ հետ հանգրվանել է Հյուսիսային Կովկասում: Հայկական ընտանիք է՝ նահապետական պատկերացումներով: Բայց ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ այդ ընտանիքի գլխին եկած փորձությունները շատ բան են փոխում, հիմնիվեր շուռ տալիս: Ազգականի կինը հեռանում է ամուսնուց՝ անհոգ ապրելու համար: Հին պատկերացումները այլևս չեն գործում, մարդկային կապվածությունները կորցնում են ուժը: Ամեն մեկը մտածում է իր սեփական կյանքի, այս կյանքից մի քիչ հաճույք ու բարեկեցություն

փախցնելու մասին, կարևոր չէ թե ինչ գնով: Գաղթի ճանապարհներին քեռին այդ նույն բնագրի թելադրությամբ է լքում իր հարազատներին...

Մահարու «**Ծաղկած փշալարեր**» վեպում ներկայացվում է ճամբարային կյանքը: Երեսնական թվականներին Խորհրդային Միությունում միլիոնավոր անմեղ մարդիկ աքսորվեցին դեպի հյուսիս, դեպի սիբիրյան տայգաները: Այդ ձևով Ստալինը և իր զինակիցները, որոնց մեջ չարագուշակ դեր էր կատարում հատկապես Լավրենտի Բերիան՝ ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմը (կամ այսօրվա բառով՝ նախարարը), ամրապնդում էին իրենց իշխանությունը: Աքսորվածների մեջ էին բանվորներ, գյուղացիներ, պետական և կուսակցական աշխատողներ, գրողներ, արվեստագետներ, գիտնականներ: Սիբիրում նրանց պահում էին հատուկ ճամբարներում, որոնք շրջապատված էին փշալարերով և պահպանվում էին զինվորականների կողմից: Այդ ճամբարների համակարգը կոչվում էր Գուլագ՝ Главное управление лагерей (ճամբարների գլխավոր վարչություն): Ստալինի մահվանից հետո շատ գրքեր գրվեցին ճամբարային կյանքի մասին՝ և՛ Ռուսաստանում, և՛ խորհրդային մյուս հանրապետություններում: Հայաստանում ևս գրվեցին այդպիսի գրքեր, որոնց մեջ հատկապես հայտնի դարձան Մկրտիչ Արմենի պատմվածքները՝ «Պատվիրեցին հանձնել ձեզ» ընդհանուր վերնագրով: Մահարին էլ պատմվածքներ գրեց սիբիրյան կյանքի մասին: Բայց հայ գրականության մեջ ճամբարային կյանքի պատկերը ամենից ամբողջական ներկայացվեց «Ծաղկած փշալարեր» վեպում:

«Ծաղկած փշալարերը» ևս ինքնակենսագրական երկ է, ինչպես նախորդ երեք վիպակները: Առհասարակ, Մահարու համար իր արձակի գլխավոր առաղձը սեփական տպավորություններն են, այսինքն՝ նրա արձակը գերազանցապես ինքնակենսագրական է: Մահարին այս վեպում էլ, ինչպես եռագրության մեջ, պատմում է առաջին դեմքով, հերոսների անունները չփոխելով:

Վեպը պատմություն է մարդկային ահավոր տառապանքների մասին: Երևանի բանտում հավաքված են բազմաթիվ նշանավոր մարդիկ, որոնց տանում, ծեծում և մեղայական են պահանջում: Այդ ամենի մեջ արդեն մարդու երևակայության մեջ չտեղավորվող բան կա. ինչո՞ւ են այդ վաստակավոր մարդկանց, որոնք ազնվորեն ծառայել են իրենց ժողովրդին, այդպես խոշտանգում: Շատերը անվանի հեղափոխականներ և կուսակցական գործիչներ են: Ինչո՞ւ են նրանց հետապնդում նույն հեղափոխության անունից: Բայց իսկական Գողգոթան դեռ առջևում է: Դատապարտյալներին ուղարկում են հյուսիս: Տանում են հատուկ գնացքներով, որոնք ունեն վանդակապատ լուսամուտներ և դռներ, վագոններում նեղվածք է, շոգ: Սոված դատապարտյալներին տալիս են աղի ձուկ և զրկում են ջուր խմելու հնարավորությունից: Ի՞նչ հիվանդ երևակայություն պետք է ունենային այն մարդիկ, որոնք այսպիսի պատիժ էին հնարել անմեղ մարդկանց համար:

Սիբիրում նրանց տեղավորում են ճամբարներում: Մարդիկ, որոնք մինչ այդ գրադվել էին առօրյա, սովորական աշխատանքով՝ գյուղում կամ գործարանում, գրքեր էին գրել, արվեստի գործեր ստեղծել, դասախոսություններ կարդացել, ամառվա տապին և սիբիրյան ձմեռային սառնամանիքներին ամբողջ օրը պետք է ծառ կտրեին: Շատերը մահանում էին և հավերժ մնում սիբիրյան տալգայում: Հսկիչները ամեն կերպ ստորացնում էին նրանց՝ դժոխքի վերածելով նրանց առանց այն էլ դժվար կյանքը:

Այսպիսի պայմաններում թույլ մարդիկ կոտրվում էին բարոյապես: Բայց Մահարու հերոսներն անմարդկային պայմաններում պահպանում են իրենց մարդկայնությունը: Մահարու վեպը ըստ էության ոչ այնքան ճամբարային կյանքի անհեթեթ դաժանության մասին է, որքան այն մասին, թե ինչպես այդպիսի պայմաններում մարդը մարդ է մնում: Մահարին հանդիպում է ուժեղ մարդկանց, որոնք կարողանում էին, հնար էին գտնում օգնել ուրիշներին: Այդպիսի մարդ է Աշոտ դային՝ մեկը մեր բազմաթիվ հայրենակիցներից, որոնք ընկել էին սիբիրյան ճամբարները: Նա կարողանում է համոզել պետերին, որ կարելի է ճամբարում բրուտազործական արհեստանոց ստեղծել, զանազան կավե առարկաներ պատրաստել և վաճառել: Ինքը դառնում է արհեստանոցի ղեկավար, շատերին վերցնում իբրև բանվոր և փրկում անտառահատման տաժանելի աշխատանքից:

Մահարին այդ բանվորների թվում էր: Արհեստանոցի բանվորների մեջ էր ազգությամբ գերմանուհի մի կին՝ Լյուդմիլա Շարթը, տաղանդավոր քանդակագործուհի, որը կրթություն էր ստացել Բեռլինում: Ի՞նչ պետք է աներ այդ կինը տալգայում: Բայց ոչ միայն Աշոտ դային էր հոգում նրա մասին: Աղբբեջանցի կառապան Մամոն ևս աշխատում էր նույն արհեստանոցում: Նա սիրահարվում է քանդակագործուհուն, ձեռքն ընկած մթերքի մնացորդները բաժին հանում նրան: Մի կողմից, այս սիրավեպի մեջ մենք տեսնում ենք ճամբարային իրականության ողջ ողբերգական անհեթեթությունը: Եվրոպական կրթության ու համբավի տեր քանդակագործուհին ի՞նչ գործ ուներ թեև բարի, բայց արվեստից անսահմանորեն հեռու, անուսում կառապանի հետ: Բայց, մյուս կողմից, մարդն, ուրեմն, այսպիսի պայմաններում էլ չի կորցնում իր դեմքը, պահպանում է քնքուշ զգացմունքների, սիրած կնոջ համար իրեն գրկելու ընդունակությունը:

Ահա թե ինչու է Մահարին իր վեպն անվանել «Ծաղկած փշալարեր»:
Մարդկային հոգիները իրենց ջերմությամբ կարող են անգամ փշալարերը կենդանացնել...

Մահարու այս վեպը առաջին անգամ տպագրվեց Բեյրութում: Խորհրդային Հայաստանում վախեցան այն հրատարակել. միայն տարիներ անց՝ ԽՍՀՄ-ի փլուզումից ոչ շատ առաջ, տպագրվեց Երևանում:

Շատ ավելի դրամատիկական ճակատագիր էր վիճակված Մահարու վերջին՝ «Այրվող այգեստաններ» վեպին: Վեպի տպագրությունից հետո նրա շուրջը բուռն վեճեր ծավալվեցին: Շատերը Մահարուն մեղադրում էին Վանի կյանքը, մարդկանց, ազգային կուսակցությունների գործունեությունը ճիշտ չներկայացնելու համար: Բայց դա արդար չէր այս տաղանդավոր վեպի հանդեպ: Վեպը, որ տպագրվեց Մահարու կյանքի վերջին տարիներին, նրա գեղարվեստական որոնումների յուրատեսակ հանրագումարն էր: Այստեղ ևս Մահարու անձնական տպավորությունները էական դեր են կատարում: Բայց այն, ինչ նկարագրվում է, դուրս է գալիս հուշերի շրջանակից: Մահարին ներկայացնում է իր հայրենի քաղաքի՝ Վանի կյանքի վերջին տարիները: Պատկերված են քաղաքային կեցադը, առօրյան, մարդիկ, քաղաքի արտաքին տեսքը: Մահարին լայնորեն ներկայացնում է նաև հայկական քաղաքական ուժերի գործունեությունը Վանում: Գրողը վկայում է, որ այս գործը գրելու ազդակներից մեկը նրա մեծ բարեկամների՝ Չարենցի և Բակունցի գրքերն էին՝ նվիրված իրենց հայրենի քաղաքներին: Չարենցը քսանականների սկզբին գրեց «Երկիր Նաիրին», որի մեջ պատկերեց իր ծննդավայրի՝ Կարսի անկումը, իսկ Բակունցը գրեց «Կյոռեսը»՝ իր հայրենի քաղաքի պատմությունը: Ահա թե ինչ էր գրում Մահարին վեպի սկզբում. *«Ինչպես մեծ կարսեցին մի օր գունազարդեց և նկարագրեց իր կորած ծննդավայրը, և ինչպես նրանից հետո մեծ գորիսեցին քեմ հասնեց իր կորցրած Կյոռեսը, իմ մեծ նախնիների (որոնք միաժամանակ անարժանիս ժամանակակիցները եղան) օրինակով ես էլ մի վերջին անգամ գրեցի իմ Վանը:*

Կուզենայի, որ եթե այս գործում կա դույզն իսկ կրակ, հասներ այն ընթերցողի սրտին, իսկ իմ չնաշխարհիկ ծննդավայրի այրված այգեստանների ծուխը՝ աստծո և նրա բազում ստեղծածների անզգա միրուքին»:

Բայց Մահարու անհատականությունը և նյութը նրան թելադրեցին վեպի ի՞ր ձևը, որն այդ գործը դարձրեց հայկական վիպագրության ամենահինքնատիպ երկերից մեկը՝ տարբեր և՛ «Երկիր Նաիրիից», և՛ «Կյոռեսից»:

«Այրվող այգեստանները» նախ և առաջ հայկական հնագույն քաղաքներից մեկի՝ Վանի հուշարձանն է: Վանը հիմնադրվել է հազարամյակներ առաջ՝ դեռ ուրարտական ժամանակներում, այնուհետև եղել է հայոց մշակութային և քաղաքական կենտրոններից մեկը: Հայկական կյանքը և մշակույթը հարատևել են այստեղ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը և Յեղասպանությունը: Վանում ստեղծվել էին ավանդույթներ, որոնք դարերի պատմություն ունեին, քաղաքի կենցաղը վկայում էր վանեցիների բարձր մշակույթի մասին: Մահարին, օրինակ, նկարագրում է իր վեպի գլխավոր հերոսներից մեկի՝ Օհանես աղայի (վանեցիները նրա անունը Ախանես էին արտասանում) բնակարանը: Հյուրասենյակը երկու տեսակ կահավորում ուներ՝ եվրոպական և արևելյան՝ թուրք այցելուների համար: Եվրոպական մասում դրված էին բազկաթոռներ,

դաշնամուր և այլ իրեր՝ հատուկ բերված եվրոպական քաղաքներից: Վանում դպրոցներ և գրադարաններ կային, կրթական բարձր ավանդույթներ, թերթեր էին տպագրվում: Պատահական չէ, որ վանեցի փախստականների միջավայրից դուրս եկան Խորհրդային Հայաստանի շատ հայտնի մտավորականներ:

Վեպում մենք տեսնում ենք նաև վանեցիների ընտանեկան կյանքը: Մահարին ներկայացնում է այն նահապետական ջերմությունը, որով ընտանիքի անդամները վերաբերվում են միմյանց, նրանց փոխադարձ հարգանքը: Օհանես աղան խորապես հարգում ու սիրում է մորը՝ ընտանիքի ավագին: Իսկ կնոջը հաճախ դիմում է այսպես. «Մեռնեմ իմ խորոտ կնկան»: Այս գծերի մեջ երևում է վանեցիների հավատարմությունը նահապետական սրբագործված սովորություններին: Վեպի ամենահուզիչ հատվածներից մեկը Մուրադխանյան եղբայրների մոր մահվան դրվագն է՝ գրված զուսպ, բայց քնարական գույներով, նահապետական-ընտանեկան հոգեբանության փայլուն իմացությամբ:

Բայց Մահարին չի իղեալականացնում իր հերոսներին: Նույն Օհանես աղան ունի հարուստներին հատուկ այնպիսի գծեր, որոնք ոչ մի կերպ դրական չեն համարի: Փող շատ է սիրում, նույնիսկ կրտսեր եղբորը, որն ապրում էր գյուղում և կառավարում Օհանես աղայի կալվածքները, դժվարանում է դրամ տալ՝ կնոջը շոր գնելու համար: Առհասարակ, եղբայրների հետ հարաբերություններում Օհանեսը տարուբերվում է եղբայրական սիրո և վաճառականի ազահության միջև: Օհանեսը Վանի հարուստներից է և գիտի հարստության արժեքը: Միաժամանակ, երիտասարդ տղամարդ է և անտարբեր չէ ուրիշ կանանց հրապույրների հանդեպ: Օհանեսի այս թուլությունը, նրա վերաբերմունքը մահացած եղբոր կնոջ նկատմամբ հետո վեճերի և ծայրահեղ գնահատականների առիթ դարձան:

Մահարու վեպում շատ կարևոր տեղ են գրավում քաղաքական խնդիրները: Քսաներորդ դարի սկզբի երկու տասնամյակները ազգային շարժումների աշխուժացման և ապա Յեղասպանության տարիներն էին, որոնք դարձան նաև Վանի կործանման տարիներ: Մահարին ոչ միայն վառ գույներով ներկայացնում է Վանի կյանքն ու կենցաղը, այլև վերլուծում Վանում ստեղծված իրադրությունը, հայ բնակչության, հայկական քաղաքական ուժերի և թուրքական իշխանությունների հարաբերությունները: Անկասկած, Մահարին շատ լավ հասկանում էր, որ թուրքերը, նրանց իշխանությունները՝ համիդյան թե երիտթուրքական, ատում էին հայերին, որ նրանց մեջ ապրում էր հայկական հարցը վերացնելու երազանքը:

Բայց Մահարու վերաբերմունքը հայկական կուսակցությունների հանդեպ ևս հիացական չէ: Արդեն «Մանկության» մեջ, Գուրիսի տատիկի բերանով արտահայտվում է հասարակ մարդկանց դժգոհությունը ազգային կուսակցություններից: Այդ վերաբերմունքը խորացվում և ճշգրտվում է «Այրվող այգեստաններում»: Օհանեսի կյանքից այսպիսի մի դրվագ է ներկայացվում:

Նրա տուն հյուր է գալիս քաղաքի ոստիկանապետ Ագյահը: Օհանեսը պարտավոր էր պահպանել հյուրասիրության կանոնները և սուրճ հրամցնել թուրք պաշտոնյային: Բայց նա խելոք մարդ էր և հասկանում էր, թե դրանից հետո ինչ է լինելու: Քանի՜ անգամ այդպես անհետացել կամ սպանվել էին հայտնի հայերը: Այսինքն՝ թուրք պաշտոնյան այցելում էր այն նշանավոր հային, որին ուզում էր վերացնել տալ: Թուրքերը գիտեին, որ այդ այցելությունից հետո դաշնակցականները շատ արագ վերացնելու են այդ մարդուն՝ նրան կասկածելով թուրքերի հետ համագործակցելու մեջ: Ահա թե ինչու թուրքի գնալուց հետո Օհանեսը շտապում է Վանի դաշնակցականների պարագլուխ, հայտնի կուսակցական գործիչ Արամի մոտ՝ նրան բացատրելու համար, որ թուրքը դիտմամբ էր եկել: Այլապես ինքն էլ պետք է դառնար հայրենակիցների կույր վրեժխնդրության զոհը:

Առհասարակ Արամի կերպարն ամբողջությամբ (ինչպես և մյուս դաշնակցական ղեկավարների՝ Իշխանի, Վռամյանի) վեճեր է առաջացրել: Արամ Մանուկյանը եղել է հայկական ազատագրական շարժման հայտնի առաջնորդներից մեկը, Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից, հետագայում մեծ դեր է կատարել Առաջին հանրապետության ստեղծման գործում: Մահարու վեպի հերոս Արամը մարդկային ուրիշ գծերով է ներկայանում: Բայց գրողը գեղարվեստական կերպար է ստեղծում և ոչ թե պատմական անձի գիտական կենսագրություն:

Մահարին չի համակրում դաշնակցական ղեկավարներին: Բայց և նրանց չի դարձնում սարսափազդու խրտվիլակներ: Նրանք, ընտրելով իրենց ճանապարհը, ըստ էության, դարձել էին մահապարտներ (Իշխանին և Վռամյանին թուրքերը խաբեությամբ սպանեցին 1915-ին): Մենք տեսնում ենք, որ և՛ Արամը, և՛ Իշխանը ժամանակ առ ժամանակ մտատանջությունների մեջ են ընկնում, մանավանդ հայ մարդկանց մահվան դատապարտելիս: Ճիշտ են վարվում իրենք: Արամը նույնիսկ խոսում է այն մասին, որ ինքը մի բան է մտածում իբրև մարդ և մի այլ բան՝ իբրև կուսակցական գործիչ: Բայց նրանց վերջնական որոշումները ուղղագիծ են, դաժան:

Այստեղ մենք գործ ունենք գրական մի շատ նուրբ խնդրի հետ: Ի՞նչ չափով է գրողն ազատ պատմական փաստերի մեկնաբանության հարցում: Գրողը ոչ թե պատմական ուսումնասիրություն է գրում, այլ՝ գեղարվեստական երկ: Նրանից սպասում են ոչ թե կոնկրետ փաստերի **ճշգրիտ վերարտադրություն**, այլ՝ գեղարվեստական ընդհանրացումներ և **գեղարվեստական ճշմարտություն**: Գրողի ընկալումները կարող են տարբեր լինել հասարակության մեջ ընդունված տեսակետներից: Գրողի աշխատանքը պատմաբանի աշխատանքից տարբերվում է նրանով, որ նա հենց իր ընկալած ճշմարտությունն է ներկայացնում: Մահարին կարող էր շեղվել ազգային այս կամ այն գործչի կենսագրության փաստերից: Բայց հայոց ազգային ողբերգության՝ Յեղասպանության

մեկնաբանության մեջ նա ուներ իր սկզբունքները և վեպում հենց դրանք է ներկայացրել: Ընդ որում, Մահարու տեսակետները շատ մոտ էին Չարենցի, Շահնուրի, Թոթովենցի, Օշականի և մյուսների գնահատականներին, որոնք ասպարեզ էին բերվել դեռ անցյալ դարի 20–30-ական թթ: Նրանք, հատկապես Չարենցը, խիստ քննադատության էին ենթարկում ազգային կուսակցություններին՝ արկածախնդրական քաղաքականության համար: Բայց երեսնական թվականների մթնոլորտը Հայաստանում, նաև սփյուռքում, տարբերվում էր վաթսուականների մթնոլորտից: Յեղասպանության ահավոր վերքը դեռ թարմ էր, հայ մտածող մարդիկ ավելի շատ զբաղված էին ազգային քաղաքական ուժերի գործունեության վերլուծությամբ, և Չարենցի ու մյուսների քննադատությունը առարկություններ չէր հարուցում: Իսկ վաթսուական թվականներին, երբ ասպարեզ եկավ Մահարու վեպը, ավելի շատ խոսվում էր արտաքին ուժերի, Թուրքիայի և Արևմուտքի մեղքի մասին: Ազգային կուսակցությունները վաղուց արդեն արգելված էին Հայաստանում, գործում էին միայն սփյուռքում, և նրանց քննադատությունը անհասկանալի էր քսաներորդ դարի սկզբի խնդիրներին քիչ ծանոթ հայաստանյան հասարակությանը: Հասարակական դժգոհության պատճառներից մեկն այն էր, որ Մահարին իր վեպում գրեթե չէր խոսել Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին: Մահարին այս դիտողությունը հաշվի առավ և վեպի վերամշակված տարբերակում մի ծավալուն գլուխ նվիրեց ինքնապաշտպանության կռիվներին:

Վեպում Մահարու հումորը փայլում է իր բոլոր եզրերով: Ընդ որում, և՛ իր՝ պատմողի խոսքն է հազեցած հումորով, և՛ հերոսների խոսքը: Ահա Օհանես աղան անցնում է Վանի շուկայով: Նա Վանի հարգված մարդկանցից է, հարուստ վաճառական, և ամեն մեկը ցանկանում է իր հարգանքի տուրքը մատուցել նրան: Շուկայի առևտրականներից մեկը, որը դագաղագործ էր, արագ մոտենում է Օհանես աղային և իր պատրաստակամությունը հայտնում՝ օգտակար լինելու նրան: Օհանես աղան, որը ևս հումորի լավ զգացողություն ուներ, ասում է. «Քեզի օգտակար եղի, քեզի, բալամ»: Կամ ահա Մահարին նկարագրում է Վանի հարուստ տներից մեկի ճաշը: Սեղանը դրված է, տան տղամարդը արդեն եկել է: Բայց ինչ-որ բան պակաս է: Չկա Հակոբ աղա Կանդոյանը, հայտնի վանեցին, որը հաջողացնում է ամեն օր ճաշել իր համաքաղաքացիներից մեկի տանը՝ գործը ամեն անգամ այնպես ներկայացնելով, թե ահա պատահաբար անցնում էր և որոշեց ընտանիքի քեֆը-հալը հարցնել: Վանեցիները լավ գիտեն նրան և հումորով են վերաբերվում նրա այս սովորությանը:

Այս կետում է Մահարու վեպի տարբերություններից մեկը Չարենցի «Երկիր Նաիրի» վեպից: «Երկիր Նաիրին» երգիծական վեպ է, որտեղ ոչնչացնող ծաղրի են ենթարկվում հայկական հասարակության արատները: Երգիծանքը

առհասարակ ոչնչացնող է: **Երգիծանքը** ուղղված է այնպիսի դեմքերի և երևույթների, որոնց հանդեպ հեղինակը ժխտողաբար է տրամադրված: Այդպիսին է, օրինակ, Չարենցի վերաբերմունքը հայոց ազգային գործիչների պոռոտախոսության նկատմամբ: Եվ դրա համար էլ նա իր վեպի էջերում բերում է հատվածներ հերոսների ճառերից՝ դրանց ներքին դատարկությունն ու անիմաստությունը ցուցադրելու համար: **Հումորը** բարի է, ուղղված է ամբողջության մեջ դրական երևույթների ու մարդկանց մանր թերություններին ու ծիծաղելի կողմերին: Մահարին սիրով ու կարոտով է գրում իր հայրենի քաղաքի ու մարդկանց մասին, և երգիծանքը նրա խոսքում չէր կարող տիրապետող լինել: Երգիծական տարրերը ուժեղանում են հատկապես կուսակցական գործիչների մասին խոսելիս:

Իսկ նրա հումորը ավելի կենսալից ու ամբողջական է դարձնում այդ քաղաքի պատկերը: Հումորին և առհասարակ պատումի աշխուժությանը շատ է նպաստում այն, որ Մահարին հմտորեն օգտագործում է Վանի բարբառի տարրերը: Այդ գեղեցիկ, այսօր արդեն գրեթե անհետացած բարբառը ապրում է «Այրվող այգեստանների», նաև ինքնակենսագրական եռագրության էջերում:

Այս վեպում ևս Մահարու խոսքի կարևորագույն առանձնահատկություններից մեկը քնարականությունն է, որը ներդաշնակորեն միահյուսվում է հումորին: *«Քամին երեկոյան ծովից էր փչում, իսկ երբ բարձրանում էր լուսաստղը՝ սարից: Այն ժամանակ ծառերի տերևները շրջվում էին: Եվ ոչ միայն ծառերի տերևները: Շրջվում էին խաղաղ հոսող ջրերի կնճիռները, տափակ տանիքների վրա բացօթյա կահված լվացքի շորերը, քաղաքի վրա իշխող հողմադացի պտույտը, բարձր հացիների և բարդիների վրա գիշերող թռչունների փետուրները, ինքը՝ գիշերը, և Օհանես աղան»:* Այս տողերով է սկսվում «Այրվող այգեստանները», այս տողերում տրոփում է սերը հավետ կորած հայրենի քաղաքի հանդեպ, և այդ սերը անցնում է առաջին տողից մինչև վերջ:

Մահարու վեպի հրատարակությունից հետո տասնամյակներ անցան, և փոխվեց վերաբերմունքը դրա հանդեպ: Այսօր վեպը միանգամայն արժանավորապես համարվում է քսաներորդ դարի հայ արձակի բարձրագույն նվաճումներից մեկը և հայոց հնագույն մայրաքաղաքներից մեկի՝ Վանի անմեռ հուշարձանը:

Մահարու գրական ժառանգությունը այս երկերով չի սպառվում: Նա գրել է պիեսներ, պատմվածքներ, երգիծական մանրապատումներ, հողվածներ, և այս բոլոր գործերում նրա տաղանդը երևում է իր տարբեր կողմերով: Նրա ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հուշագրությունը, որի կենտրոնում Եղիշե Չարենցն է՝ Մահարու ավագ ընկերն ու բարեկամը, որին Մահարին վերաբերվում էր խորին ակնածանքով և սիրով:

Եվ փառք ոգևորված այն սերնդին, որ Արարիչ Աստծու նման ի չգոյե ստեղծեց մեզ Համար Հայրենիք: Դա Ալեքսանդր Մյասնիկյանի, Աղասի Խանջյանի և Արամայիս Երզնկյանի, Չարենցի և ՄաՀարու, Կոջոյանի և Սարյանի, Թորամանյանի և Թամանյանի, Աճառյանի և Աբեղյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արշակ Չոպանյանի փառաՀեղ սերունդն էր, մատչյան մի գունդ, որ մարտի նետվեց մեզ Համար ամենաողբերգական պաՀին, երբ կարող էինք կորցնել ազգ և երկիր լինելու վերջին Հնարավորությունները նույնպես: ՏանջաՀար ժողովուրդն ըստ երևույթին ոգեկոչեց նաև իր ապագայի ուժերը, այլապես երկու տամնամյակը մեզ այդքան մեծեր չէր նվիրի: Դա առաջամարտիկների Հերոսական սերունդն էր, և որպես իսկական առաջամարտիկներ՝ նրանց խիտ շարքերը մեր օրերին Հասան նոսրացած, բզկտված, Հոշոտված, ուխտագրծորեն թիկունքից զարկված և, զարմանալիորեն, դարձյալ ոգևորված: ՄաՀարին դեռ ոտքի վրա էր և չէր նկատում, որ Հազիվ է ոտքի վրա: Այդպես լինում են սևեռուն նպատակի մարդիկ: Նպատակը նրան Հմայել-ձգում էր: Նրա ուժասպառ մարմինը դժվար էր Հասնում նրա ձգտման ետևից, ապա ետ մնաց, ապա՝ ոգին Հիսուն թվականների մեջ մի տեղ թողեց այդ դավաճան մարմինն ու տարիներ շարունակ սավառնեց դեպի նպատակ առանց մարմնի: Եվ Հասավ ու գամեց բարձր գրականությունը մեծ Հայրենա-սիրությունը: Բանաստեղծության աստվածը, երբ ջախջախվում էին մեր երազները, այն Հեռավոր տարիներին ՄաՀարուն շնջացել էր մի մեծ գաղտնիք՝ պետք է գրականությամբ ետ խլել այն, ինչ պաՀել չենք կարենում՝ ռազմի գնդերով: Երբեմն «պարտիզանական կռիվներով», երբեմն՝ կեղծ նաՀանջներով և վերջապես փայլուն մի ճակատամարտով նա անՀայտությունից խլեց ու իր Հայրենիքին վերագարձրեց իր Վանը, և մեծ գրող ու այդպիսով մեծ Հայրենասեր Գուրգեն ՄաՀարու այդ Վանը արդեն անկորնչելի է: Դա ոչ միայն այլևս անկողոպտելի մասն է Հայ գրականության, այլ նաև Հայ ապագա իրականության: Դա թուխքային Հրապարակ է դեպի իրական Վան: Դա Արևմտյան Հայաստանի մեծ խավարից ՄաՀարու լույսով բացազատված այն Հովիտն է, որ դեպի իրեն կգրավի խարխափող սերունդներ ու սերունդներ:

Հրանտ Մաթևոսյան

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑՍԱԳՐՍՆԵՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Գ. Մահարին:
2. Ինչո՞ւ է Գ. Մահարին հայտնվել մանկատանը:
3. Ո՞ր ստեղծագործություններում է Մահարին պատմում իր կյանքի վաղ տարիների մասին:

4. Ողբերգական ինչ իրադարձություններ տեղի ունեցան Մահարու կյանքում:
5. Հիշե՛ք Մահարու բանաստեղծությունների ժողովածուի վերնագիրը. նշե՛ք մեկ-երկու բանաստեղծություն:
6. Ինչ իրադարձություններ են պատկերված «Ծաղկած փշալարեր» վեպում. որտեղի՞ց է հեղինակը վերցրել նյութը, որտե՞ղ են տեղի ունենում դեպքերը, ովքե՞ր են հերոսները:
7. Ինչո՞ւ է վեպի վերնագրում Մահարին փշալարերն անվանում «ծաղկած»:
8. Ինչ իրադարձություններ են պատկերված «Այրվող այգեստաններ» վեպում. համառոտ ներկայացրե՛ք բովանդակությունը, գլխավոր հերոսներին:
9. Որտե՞ղ են տեղի ունենում «Այրվող այգեստաններ» վեպի գործողությունները. համառոտ նկարագրե՛ք այդ վայրը:
10. Ցույց տվե՛ք Մահարու հումորը ներկայացնող մի քանի հատված «Այրվող այգեստաններ» վեպում:

ՏՆՍՅԻՆ ՍՈՍՑՄԱՐՄՆԵՐ


1. «Ծաղկած փշալարեր» վեպի սկզբում հայտնվում է կին հերոսուհին.
 - ինչ էր նրա անունը, ինչ մասնագիտություն ուներ, ո՞վ էր ազգությամբ,
 - ինչ հանցանքի համար էր նա ձերբակալված,
 - ինչ պատահեց նրան (համառոտ ներկայացրե՛ք):
2. Ներկայացրե՛ք «Այրվող այգեստաններ» վեպի գլխավոր հերոսին՝ Օհանես աղա Մուրադխանյանին՝ պատասխանելով հետևյալ հարցերին.
 - վեպում առաջին անգամ ինչ իրավիճակում է հանդես գալիս Օհանես աղան,
 - ինչ վերաբերմունք ուներ նա ազգային կուսակցությունների հանդեպ:

ԹԵՄԱՅԻՆ ՍՈՍՑԻԱԼՆԵՐ

1. Ընտրե՞ք ճիշտ պատասխանը. «Ճաղկած փշալարեր» վեպի հիմքում ընկած են՝
 - Վանի ինքնապաշտպանական կռիվների մասին հուշերը
 - Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների հուշերը
 - մանկական տարիների հուշերը
 - աքսորի մասին հուշերը
2. Ո՞ր շարքում են միայն «Ճաղկած փշալարեր» վեպի հերոսների անունները.
 - Աշոտ դայի, Բիչկո, Մամո, Համբարձում աղա
 - Արամ, Աշոտ դայի, Օհանես աղա, Սաթենիկ
 - Մամո, Իոնաս, Աշոտ դայի, Բիչկո
 - Լյուդմիլա Շարթ, Իշխան, Վռամյան, Բիչկո
3. «Այրվող այգեստաններ» վեպի գլխավոր հերոս Օհանես աղան՝
 - հարուստ վաճառական է
 - քաղաքական գործիչ է
 - կուսակցական գործիչ է
 - գինվորական է
4. Ո՞րն է ճիշտ պատասխանը.
 - Օհանես աղան զոհվում է Վանի պաշտպանության ժամանակ և այնտեղ էլ թաղվում:
 - Օհանես աղայի ճակատագիրն անհայտ է մնում:
 - Օհանես աղային խեղդում են Վանա լճում:
 - Օհանես աղան հրդեհում է իր տունը և ճանապարհվում դեպի Երևան:

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

(1900 - 1969)



Քսանական թվականներին Հայաստանում գրական ասպարեզ իջավ մի սերունդ, որը ապրել էր դարասկզբի տասնամյակների ողջ ողբերգությունը, համաշխարհային պատերազմի բերած աղետները: Այդ սերնդի գրողների մեծ մասը ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը՝ իբրև կործանումի ուղուց դուրս գալու միջոց: Նրանք գրեթե Չարենցի տարիքին էին, բայց Չարենցն այդ ժամանակ արդեն մեծ համբավի տեր բանաստեղծ էր, խորհրդային հայ գրականության առաջնորդներից մեկը: Ահա այս նորերը Չարենցի հետ ստեղծեցին հայոց նորագույն գրականությունը՝ արտացոլելով իրենց սերնդի աննախադեպ հարուստ ու ողբերգական փորձը:

Նաիրի Զարյանը այս սերնդի լավագույն գրողներից մեկն էր:

Զարյանը ծնվել է 1900թ. դեկտեմբերի 31-ին Արևմտյան Հայաստանի գավառներից մեկում՝ Վանա լճից ոչ հեռու գտնվող Խառակոնիս գյուղում (որտեղ ապրել է միջնադարի բանաստեղծ Նահապետ Քուչակը. նրա գերեզմանը մինչև Ցեղասպանությունը պահպանվել էր Խառակոնիսում): Իսկական անուն-ազգանունը եղել Հայաստան Եղիազարյան: Հետագայում ինքը դարձրել է Նաիրի Զարյան:

Իր մանկությունը և պատանեկությունը Զարյանը նկարագրել է «Երկրորդ կյանք» հուշագրության մեջ: Եղել է աղքատ ընտանիքի զավակ: Գյուղում սիրված է եղել իբրև Խառակոնիսի ամենաընդունակ երեխաներից մեկը: Բայց ծնողները շուտ մահացել են՝ Հայաստանին և քրոջը թողնելով հորաքրոջ հույսին: Ցեղասպանության տարիներին տեղահանել են նաև Խառակոնիսը: Զարյանը քրոջ հետ հասել է Արևելյան Հայաստան, այստեղ կորցրել քրոջը: Մինչև 1921թ. ապրել է որբանոցներում, որտեղ սկսել է բանաստեղծություններ գրել: Այստեղ մտերմացել է ապագա հայտնի գրող Գուրգեն Մահարու հետ, որն այդ տարիներին դեռ Գուրգեն Աճեմյան էր: Հետո երկու ընկերները ծանոթացել են Եղիշե Չարենցի հետ, որը որբանոցի դաստիարակ էր: Որբանոցի վերջին տարիներից սկսած՝ Զարյանի ամբողջ կյանքը կապված է եղել հայ գրականությանը:

Կյանքի վերջին տարիներին Զարյանը որբանոցային տպավորությունների հիման վրա գրեց իր լավագույն արձակ գործերից մեկը՝ «Պարոն Պետրոսը և

իր նախարարները» վեպը, որտեղ պատկերում էր Առաջին հանրապետության տարիները, որբերի դժվար կյանքն ու փորձը:

1918-ին, իբրև աշխարհագրային, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին: 1921-ի փետրվարյան ապստամբության ժամանակ մարտերին մասնակցել է հակախորհրդային ջոկատների կազմում: Բայց հետո հրապուրվել է կոմունիստական գաղափարներով, ընդունվել կոմկուսի մեջ և դարձել ակտիվ գրական գործիչ: Քսանական թվականներին եղել է Հայ պրոլետարական գրողների ասոցիացիայի (ՀՊԳԱ) ղեկավարներից մեկը: Այն ժամանակ Հայաստանում գործում էին երկու պրոլետարական գրական կազմակերպություններ՝ ՀՊԳԱ-ն և Հայ պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը: Երկու կազմակերպություններն էլ կանգնած էին կոմունիստական դիրքերում: «Պրոլետարական» բառը հուշում էր, որ երկուսն էլ իրենց համարում էին պրոլետարիատի (պրոլետար նշանակում է ընչազուրկ բանվոր) տեսակետների արտահայտիչը գրականության մեջ: Բայց ՀՊԳԱ-ն ավելի ծախ էր, այսինքն՝ ավելի արմատական իր պահանջներում: Իսկ «Նոյեմբեր» միությունը, որի ղեկավարը Չարենցն էր, ավելի խելամիտ պահանջներ էր առաջ քաշում: Երկու կազմակերպությունների միջև բախումներ են տեղի ունենում, դրանց հետևանքով սրվում են Ջարյանի հարաբերությունները Չարենցի և նրա ղեկավարած միության անդամների, այդ թվում և իր որբանոցային տարիների ընկերոջ՝ Գուրգեն Մահարու հետ:

Այս և այլ փաստեր հետագայում առիթ են տվել մեղադրելու Ջարյանին Չարենցի և Ակսել Բակունցի ձերբակալության, Բակունցի գնդակահարության համար: Իրողությունն այն է, որ վեճերում Ջարյանը իր բռնկուն բնավորության պատճառով հասնում էր ծայրահեղությունների, տալիս էր անարդար գնահատականներ: Բակունցի դեպքում խախտել է նաև ասպետության և մարդկայնության օրենքները՝ քաղաքական սուր մեղադրանքներ նետելով արդեն բանտարկված գրողի հասցեին: Բայց երկու մեծ գրողների ճակատագիրը որոշում էին ոչ թե նրանց գրչակիցների ելույթները, այլ Ստալինի և նրա գինակիցների վարած քաղաքականությունը: Ինքը՝ Ջարյանը, նույնպես շատ հաճախ դարձել է անարդար հարձակումների թիրախ և բանտարկությունից ու գնդակահարությունից փրկվել պատահաբար:

Ջարյանի հակումը ծայրահեղությունների նկատմամբ զգացվում է նաև քսան-երեսնական թվականներին գրված գործերում: Այստեղ նրա կոմունիստական հայացքները, կուսակցական մտածողությունը հասնում են մոլեռանդության: Իր բնավորության այս գիծն է նկատի ունեցել Ջարյանը, երբ մահվանից ոչ շատ առաջ (1967թ.) գրել է.

*Շատ բան եմ ես գրել հուզված ու հողմավար,
եվ շատ հղացումներ մնում են անկատար:*

*Եվ իմ հոգին անվերջ այրվում է նույն հարցով.
Ես ի՞նչ անեմ, ի՞նչը ես ամսոսամ այսօր,
Իմ չգրածների՞, թե՞ գրածների համար:*

Երեսնական թվականների ծանր մթնոլորտում Զարյանը իր շատ սերնդակիցների պես ծանր սխալներ է գործել: Բայց միշտ մնացել է հայ բանաստեղծ, որի համար ամենաբարձրը եղել իր ժողովրդի շահը: Ամենաձայրահեղ քաղաքական բանաստեղծություններում էլ՝ այս կամ այն գործչի մասին, նա հիացական տողեր է գրել՝ մտածելով որ այդ գործիչների վարած քաղաքականությունը նպաստավոր է հայ ժողովրդի համար: Միշտ պետք է հիշել, որ դեռ 1922թ. ամենահայրենասեր ու խելոք հայ քաղաքական գործիչներից մեկը՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, որը նաև գրականագետ էր, նրան առանձնացրել է Հայաստանի մյուս պրոլետարական բանաստեղծներից, որովհետև, ըստ Մյասնիկյանի՝ «Նաիրի Զարյանը ... երգում է, հայավարի երգում ու (հայ աշխատավորի նման) մտածում Շիրակի դաշտերի մասին»: Այս գիծը՝ հայավարի երգելն ու մտածելը, մնաց Զարյանի ստեղծագործության ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը նրա ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում:

Հեղափոխությունը, նոր կյանքի կառուցումը: Երեսնական թվականներին Զարյանը բանաստեղծություններ և պոեմներ է գրում Հայաստանում և ողջ Խորհրդային Միությունում ծավալվող շինարարության, աշխատանքային եռուզեռի մասին: Դրանց մեջ առանձնանում են գյուղում կատարվող փոփոխություններին նվիրված գործերը: Զարյանին մեծ համբավ է բերում «Ռուշանի քարափը» ծավալուն պոեմը, որի մեջ նա նկարագրում է գյուղի սոցիալիստական վերակառուցման ընթացքը: Քսանական թվականների վերջերից Խորհրդային Միությունում մի շարժում սկսվեց, որի նպատակը գյուղացիական մանր տնտեսությունների փոխարեն խոշոր կոլեկտիվ տնտեսություններ ստեղծելն էր: Հավատում էին, որ կոլեկտիվ տնտեսությունները ավելի արդյունավետ կլինեն և մարդկանց մեջ նոր, համայնական հոգեբանություն կդաստիարակեն:

«Հացավան» վեպը նույնպես պատմում է կոլեկտիվ տնտեսությունների կառուցման դժվարին ընթացքի մասին: Զարյանը ստեղծում է գյուղական տիպերի մի ամբողջ շարք: Այստեղ կան մարդիկ, որոնք ամբողջ հոգով կոլտնտեսության կողմն են. դրանք հատկապես երիտասարդներն են, որոնք ոգևորված են նոր կյանքի հեռանկարներով: Ավելի մեծ մասը տատանվում է, կան նաև նոր կարգերի և կոլեկտիվ տնտեսության կատաղի հակառակորդներ: Բոլորի համար Զարյանը գտնում է համապատասխան գույներ, բոլորը կենդանի մարդիկ են: Զարյանի համակրանքը անվերապահորեն ոգևորված երիտասարդների, կոլեկտիվ տնտեսության կողմն է: Երկար տարիներ այս վեպը մնում էր հայ ընթերցողի ամենասիրելի գրքերից մեկը: Բայց մանավանդ 60-ական-

ներից, երբ ավելի ու ավելի հստակ էին երևում գյուղական տնտեսության կոլեկտիվ ձևի արատները, «Հացավանը» սկսեց հնանալ:

Արվեստագետը և իշխանությունը: Մեծ անհատը: Երեսնական թվականների խորհրդային ժողովուրդների գրականություններում շատ ընդունված էր Ստալինին նվիրված բանաստեղծություններ ու ծավալուն գործեր գրել: Հեղինակների մեծ մասը այն ժամանակ հավատում էր, որ Ստալինն իսկապես մտահոգված է խորհրդային մարդկանց երջանկությամբ (հետո հայտնի դարձավ, որ ամենաձանր, դաժան բռնությունների կազմակերպիչը հենց նա էր): Զարյանը դրանց մեջ էր և իր առատաձեռն տուրքը տվեց այս թեմային: Առհասարակ Զարյանը շատ էր խորհրդածում մեծ անհատների դերի մասին, գրեց մի ամբողջ ժողովածու «Հավերժական գագաթներ» վերնագրով, որի կենտրոնական թեման հենց մեծ անհատների, դրանց թվում, առաջին հերթին, հեղափոխության մարտիկների գործն էր: Այդ խորհրդածությունները իրենց ամբողջության մեջ իրավունք են տալիս ասելու, որ Զարյանը այս կամ անհատի հարցում կարող էր մոլորված լինել. բայց էությամբ մերժում էր բռնությունը և ստորաքարշությունը:

1934թ. գրում է «**Երկու հանճարեղ գլուխ**» հայտնի բանաստեղծությունը, որի հերոսներն են գերմանացի մեծ կոմպոզիտոր Լյուդվիգ վան Բեթհովենը (1770–1827) և մեծ գրող Յոհան Վոլֆգանգ Գյոթեն (1749–1832): Նկարագրված դեպքը իրականում տեղի չի ունեցել: Զարյանը օգտագործել է երկու մեծ մարդկանց կենսագրության որոշ փաստեր՝ մարդկային երկու տարբեր անհատականությունների բախումը ներկայացնելու համար: Հայտնի է, որ Գյոթեն երկար տարիներ բարձր պաշտոններ է վարել գերմանական իշխանների պալատներում (Գյոթեի ապրած տարիների Գերմանիան դեռ միավորված չէր, բաժանված էր տարբեր իշխանությունների): Իսկ Բեթհովենը հրապուրված էր Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ, նրա սիմֆոնիաներում և տոնատներում զգացվում է հեղափոխական ըմբոստ ոգին:

Եվ այսպես, երկու մեծ անհատները զբոսնում են քաղաքամերձ անտառում և քննում մարդու կեցության ամենատարբեր խնդիրները, ինչպես վայել է մեծ մտածողներին: Գեղեցիկ և տպավորիչ բնանկարից հետո Զարյանը ստեղծում է գրուցակիցների դիմանկարները.

Մեկը բարձրահասակ և գեղիրան՝

Որպես նոճին արքայական այգու,

Մյուսը՝ վայրի, կոպիտ կաղնու նման՝

Խռիվ գանգուրներով և ահարկու:

Հետագա քառատողերում այս բնութագրերը խորացվում են: Այնուհետև մի քանի նրբագծերով Զարյանը տալիս է իր հերոսների գրույցի էությունը: Նրանք երկուսն էլ առաջադեմ մարդիկ են.

*Նրանք խոսում էին հոգեկորով,
Հպարտ, ինքնավայել մարդու մասին,
Որ իր ազնիվ բազկով, իր հանճարով
Տիրում է իր փառքին և իր հացին:*

Բայց ահա երևում է արքայի կառքը: Այստեղ արդեն մենք տեսնում ենք երկու ոչ միայն տարբեր, այլև հակադիր բնավորություններ: Գյոթեն հարգանքով ճանապարհից դուրս է գալիս, խոնարհվում անցնող տիրակալին: Բեթովները շարունակում է ճանապարհը՝ առանց ուշադրություն դարձնելու արքային և նրա շքախմբին: Եվ ապա խստորեն հանդիմանում է իր գրուցակցին.

*– Ինչպե՞ս չամաչեցիր,– գոչեց սահեղ
Հնչունների արքան՝ արդեն սառած,–
Որ թեքեցիր գլուխդ հանճարեղ
Այդ թագակիր տխմար գլխի առաջ:*

Զարյանը երկուսի բախումը չի պարզունակացնում՝ մեկին դարձնելով անվերապահորեն դրական, հեղափոխական, մյուսին՝ ստորաքարշ ծառայող: Բայց այս երկու հանճարեղ մարդիկ տարբեր կենսական դիրքորոշումներ ունեն: Մեկը հարգում է իշխանությունը, իսկ մյուսի համար հանճարը բարձր է իշխանությունից, և Զարյանը անվերապահորեն երկրորդի կողմն է: Խոսքը մտածող և ստեղծագործող մարդու և առհասարակ մարդու արժանապատվության մասին է:

Մեծ անհատի թեմային Զարյանը հետո էլ է անդրադարձել: «**Բռնակալն ու բանաստեղծը**» (1939թ.) գործում նա ներկայացնում է արևելյան պալատի բարբերը: Բռնակալ արքան բանաստեղծի հովեր է առել: Գրել է մի գագել և իր թագավորության ամենամեծ բանաստեղծին տվել է կարծիք հայտնելու: Բանաստեղծն ասել է իր անկեղծ կարծիքը՝ «...դու չես տիրում, տիրակալը մեծ, բանաստեղծության ջքնաղ արվեստին»: Կատաղած միապետի հրամանով բանաստեղծին բանտարկում են: Բայց բռնակալը շարունակում է գրել: Աշխարհի բոլոր բռնակալների նման համոզված է, որ ինքը տաղանդավոր է, և բոլորը պարտավոր են փառաբանել իրեն: Նրա պալատականները կեղծավորաբար գովերգում են նրան, բայց նա ուզում է փառաբանական խոսքեր լսել հենց բանաստեղծից: Բանտից բերում են բանաստեղծին, և արքան կարդում է նոր գրած բեյթերն ու ռուբայիները: Բանաստեղծը չի կարող իր խղճին հակառակ փառաբանել արքայի գրածները: Իսկ արքան հենց դրան է սպասում: Եվ բանաստեղծի անկեղծ կարծիքը լսելով՝ նորից հրամայում է բանտարկել նրան: Թագավորը հիմա էլ պոեմ է գրում, և նրա պալատականները դարձյալ փառաբանում են նրան, հայտարարում «երգի անմար արև»: Արքան նորից կանչում է բանաստեղծին, բայց բանաստեղծը, լսելով տիրակալի նոր գործը, անխոս ուղղվում է դեպի դուրս: Արքան զարմացած է.

– Սպասիր,– կանչեց արքան զարմացած,–
Իմ այս նոր երկում թերություն չկա՞.
Դու ո՛ւր ես գընում:– Բանաստեղծն ասաց.
– Ես բանտ եմ գընում, արքայից արքա...

Բանաստեղծը չի կարող փառաբանել արքայի հորինվածքները: Արվեստագետի նրա արժանապատվությունը դա թույլ չի տալիս: Նա գերադասում է բանտը: Այսպես է Զարյանը լուծում արվեստագետի և տիրակալի հարաբերության խնդիրը՝ արվեստագետի արժանապատվությունը բարձր դնելով արքայի իշխանությունից:

Այլ գործերում Զարյանը հիացմունքով պատմում է այն առաջնորդների մասին, որոնք մտահոգված էին հպատակների կյանքով, իրենց փառքը տեսնում էին նրանց ապահովության մեջ («Կյուրոսի կտակը», «Ալեքսանդր Մակեդոնացին»):

Հայրենիքը: Հայրենիքի մասին խոհերը միշտ կարևոր տեղ են գրավել Զարյանի քնարերգության մեջ: Բայց հատկապես Հայրենական մեծ պատերազմի ժամանակ նա գրեց հայրենիքի ճակատագրին նվիրված շատ գործեր, որոնք կարևոր տեղ գրավեցին հայկական հայրենասիրական բանաստեղծության մեջ: Դրանց թվում են «Արգաքանդի խնձորները» և այլ բանաստեղծություններ, «Չայն հայրենական» պոեմը, «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: Այս գործերում հատկապես խորությամբ դրսևորվեց Զարյանի քնարերգության և ողջ ստեղծագործության կապը հայկական մշակույթի ավանդույթների հետ: Դրանց մեջ վերակենդանանում են հայ միջնադարյան բանաստեղծության պատկերները, հայոց դիցաբանությունը, հայոց պատմության հերոսական էջերը: «**Արգաքանդի խնձորները**» պատմում է հայ գյուղացիների մասին, որոնք խնձորի առատ բերք են աճեցրել և ուզում են վայելել իրենց արդար աշխատանքի արդյունքները, բայց պատերազմը թույլ չի տալիս: Այս բանաստեղծության մեջ Զարյանը դիմում է միջնադարի հայտնի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու գործին: Գրիգորիսի հերոսը բողոքում է անարդար ճակատագրից, որը թույլ չի տալիս վայելել իր աշխատանքով ստեղծված այս գեղեցիկ աշխարհը: Զարյանի գեղջկուհին նույն ոճով արտահայտում է իր զայրույթը Հիտլերի նկատմամբ, որը խանգարում է վայելել իր և իր համագյուղացիների աշխատանքով ստեղծված բարիքները:

Իմ զավակներն են քաջ փորել այգին,
Մեր զով հովերն են օրորել այգին,
Մեր արևից է կարմրել այգին:
Ես եմ այգին պահել ու փայփայել:
Ասում են ինձ՝ արի, այգուցդ ել:
Ինչո՞ւ ելնեմ ես իմ տնկած այգուց...

«**Զայն հայրենական»** պոեմում վերակենդանանում է հայոց ողջ պատմությունը իր հերոսական էջերով: Զարյանը պատմում է դրանց մասին, որպեսզի ռազմաճակատում կռվող հայ զինվորները հիշեն, որ իրենց նախնիները միշտ կռվով են նվաճել ապրելու իրավունքը: Այս պոեմում անսքող հպարտություն կա հայոց պատմության, մեր նախնիների քաջության և ազատասիրության համար: Հենց սկզբից Զարյանը թշնամու խփված տանկերը համեմատում է Ավարայրի դաշտում հայերի նետահարած փղերի հետ՝ Հայրենական մեծ պատերազմը այդպիսով կապելով հայոց ազատագրական պայքարի, Վարդանանց պատերազմի և Ավարայրի ճակատամարտի հետ: Հիշելով հայոց նախահայրերին՝ ասում է.

Ոսոխն իր որսը խորովել դեռ չգիտեր,

Մենք աստվածներ էինք ձուլում՝

Ու վայելում գինի:

Ծանոթ է Հոմերոսը մեր Զարմայր Նահապետին,

Որ զորագունդ ուներ, և թագ, և պղնձյա վահան:

Մերոնք Հեկտորի հետ մեկտեղ մաքառեցին

Ընդդեմ գոռոզ Աքայացու, հանուն գեղեցկության:

Այս խրոխտ և ոգևորիչ տողերի մեջ հստակ երևում է գլխավորը. հայերը հնագույն քաղաքակրթության կրողներն են և մարտնչում են հանուն մշակույթի, հանուն գեղեցկության, հանուն իրենց արժանապատվության: Պատերազմի տարիներին այս մոտիվը հայ բանաստեղծության և հրապարակախոսության մեջ հաճախ է արժարժվել: Ավետիք Իսահակյանը և Դերենիկ Դեմիրճյանը իրենց հոգվածներում միշտ ընդգծել են, որ հայ ժողովրդի տեղը մարդկության հազարամյակների պատմություն ունեցող մշակույթի պաշտպանների շարքում է, որովհետև հայերը եղել են այդ մշակույթն ստեղծողների մեջ: Նրանք բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների հետ կռվում են ֆաշիստական բարբարոսության դեմ, հանուն մշակույթի, հանուն ազատ մարդկության:

«**Արա Գեղեցիկ**» ողբերգության մեջ վերակենդանանում են հայոց դիցաբանության էջերը, որոնք պատերազմի ժամանակ նոր նշանակություն են ձեռք բերում: Մովսես Խորենացին դեռ V դարում գրի է առել հայոց հնագույն բանահյուսության նմուշներ, որոնց մեջ և՛ Արա Գեղեցիկի առասպելը: Ըստ այդ առասպելի՝ Ասորեստանի Շամիրամ թագուհին սիրահարվում է հայոց արքա Արա Գեղեցիկին: Շամիրամն էլ գեղեցիկ էր, բայց բռնակալի հոգով: Նա պահանջում է Արայից թողնել իր երկիրը և գալ Ասորեստան, դառնալ իր՝ Շամիրամի ամուսինը: Արան հրաժարվում է, Շամիրամը հարձակվում է Հայաստանի վրա: Արան մարտում սպանվում է, Շամիրամը փորձում է նրան վերակենդանացնել հարալեզների (առասպելական շների) օգնությամբ, բայց չի կարողանում:

Այս առասպելը XX դարում մի անգամ չէ, որ գրավել է հայ բանաստեղծների ուշադրությունը: Առասպելի թեմայով բանաստեղծություններ են գրել Վահան Տերյանն ու Եղիշե Չարենցը, պոեմ է գրել Կոստան Զարյանը: Ուշադրությունն առասպելի հանդեպ պատահական չէր: Հավատարմության թեման, որն ընկած է առասպելի հիմքում, այնպես, ինչպես վերաշարադրել է Խորենացին, հայ ժողովրդի և հայ մշակույթի համար XX դարում նրանց գլխին կախված ահավոր վտանգների հանդեպ առանձին կարևորություն էր ստանում:

Զարյանի մշակումը առասպելի ամենահամապարփակ մեկնաբանությունն է: Զարյանը, հենվելով Խորենացու գրառման վրա, հյուսում է մի խորիմաստ և գեղեցիկ պատմություն հայրենասիրության և հավատարմության մասին:

Ասորեստանի թագուհի Շամիրամը խաբեությամբ խլել է իշխանությունը իր ամուսնուց՝ Նինոսից, այնուհետև մահապատժի է ենթարկել նրան և դեսպաններ է ուղարկել հայոց Արա Գեղեցիկ թագավորի մոտ՝ առաջարկելով նրան ամուսնանալ իր հետ և դառնալ Ասորեստանի թագավոր: Արան՝ իբրև տղամարդ, հրապուրված է Շամիրամի գեղեցկությամբ և դեսպանների խոսքը լսում է բարեհաճ ուշադրությամբ: Նրա մայրը սպառնում է անիծել նրան, եթե ընդունի Շամիրամի առաջարկությունը: Համառ արքան պատրաստ է չանսալ նաև մայր թագուհու խոսքին: Բայց գործին խառնվում է Նուարդը՝ Արայի կինը և հայոց թագուհին: Նա խնդրում է արքայամորը՝ չանիծել Արային և նրան ազատություն է տալիս իբրև կին: Նուարդի վերաբերմունքը ազդում է Արայի վրա: Դեսպանները նկատում են, որ Արան սկսում է տատանվել: Այդ ժամանակ նրանք կարդում են Շամիրամի երկրորդ նամակը, որը լի է սպառնալիքներով Արայի հասցեին, եթե նա չընդունի իր առաջարկությունը: Սպառնալիքները զայրացնում են Արային, և նա դեսպաններին հետ է ուղարկում մերժումով: Շամիրամը իրականացնում է իր սպառնալիքը, հարձակվում է Հայաստանի վրա: Արա թագավորը մարտում զոհվում է: Շամիրամը ուզում էր, որ հարալեզները վերակենդանացնեն Արային: Բայց առասպելական շները անգոր էին, իսկ հայերը լցված էին վրեժով: Շամիրամը փախչում է Հայաստանից:

Զարյանը կարողացել է պահպանել հեռավոր հեթանոսական ժամանակների առասպելական մթնոլորտի պատրանքը՝ միաժամանակ առասպելը մարդկայնացնելով և մոտեցնելով մեր ժամանակների մարդուն: Մի կողմից, նրա ողբերգության մեջ զգացվում է XIX և XX դարերի հայ գրականության հայրենասիրական ավանդույթը: Մենք հիշում ենք Բաֆֆու «Սամվել» վեպի հերոսներին, Մերուժան Արծրունու մորը, որը, իմանալով որդու դավաճանության մասին, սուգ է հայտարարում, սև դրոշներ կախում ամրոցի աշտարակներից և արգելում դռները բացել դավաճան որդու առջև: Հայրենիքի և ընտանիքի պատիվը բարձր է ամեն ինչից: Արայի մայրը և Մերուժանի մայրը նման են իրենց վճռականությամբ, նրանց մեջ ոգի է առնում նախահայրերի,

հայրենիքը ստեղծողների և պահպանողների հիշատակը: Մյուս կողմից, ողբերգությունը պատմություն է սիրո և սիրո հավատարմության մասին: Զարյանի հաջողության գաղտնիքներից մեկը այն է, որ նա կարողացել է հավատարմության թեմային այսպիսի լուծում տալ. հավատարմությունը հայրենիքին հավատարմություն է նաև սիրուն, ընտանիքին: Հայրենասիրությունը մարդկայնանում է, անձնական երանգ է ստանում: Արքայամոր և Նուարդի կերպարները կանգնում են կողք կողքի: Նուարդի սերը նույնքան և ավելի ազդեցիկ է, քան արքայամոր անեծքի սպառնալիքը. բայց հենց այդ սպառնալիքն է ստիպում խոսել Նուարդին: Նուարդի մեջ սիրո հոգեբանության նոր եզրեր է բացահայտում Զարյանը: Սերը կարող է վրեժխնդիր լինել, բայց սերը կարող է նաև մեծահոգի և ներող լինել: Հենց այս մեծահոգությունն է ուշքի բերում Արային և վերաբարձում նրա սերը Նուարդի հանդեպ:

Արայի կերպարը ևս հետաքրքրական հոգեբանական երանգներ ունի: Սկզբում տղամարդն է, որը տարվել է Շամիրամի գեղեցկությամբ և սկսել է տատանվել իր կնոջ՝ Նուարդի և Շամիրամի հանդեպ ունեցած զգացմունքների միջև: Համառ է, նույնիսկ արքայամոր զայրույթը չի կարող նրան ստիպել փոխել իր վերաբերմունքը Շամիրամի հանդեպ: Բայց Նուարդի մեղմությունը, սիրո մեծությունն ու անսահման ներողամտությունը փոխում են նրան: Նրա աչքի առջև բախվում են Նուարդի մեծ սերը և Շամիրամի՝ անգամ սիրո մեջ բռնակալական հոգին: Լսելով Շամիրամի երկրորդ՝ արդեն սպառնալից նամակը, Արան բացականչում է.

Վերադարձեք Նինվե և ասացեք Շամիրամին,

Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,

եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին:

Հայոց թագավորը գնահատում է Նուարդի սերն ու հավատարմությունը և մերժում է Շամիրամի բռնությունը: Այս խոսքերը ողբերգության կարևորագույն հատվածներից են:

Ողբերգության կարևոր մոտիվներից մեկը Արայի քաղաքականության հանդեպ նրա հպատակների վերաբերմունքն է: Այդ վերաբերմունքի հակասականությունը ներկայացվում է երկու գործող անձանց՝ վաճառական Կաթմոսի և Արայի թիկնապահ Վաշտակի միջոցով: Կաթմոսը, իր զբաղմունքի թելադրանքով, գտնում է, որ ոչ մի վատ բան չի լինի, եթե Արան ամուսնանա Շամիրամի հետ և թագավորի և՛ Ասորեստանում, և՛ Հայաստանում: Սահմանները կբացվեն, առևտուրը կլավանա, երկիրը կհարստանա: Իսկ Վաշտակին զայրացնում է այն միտքը, որ Արան կարող է թողնել Նուարդին, ամուսնանալ օտար գեղեցկուհու հետ և հեռանալ հայրենի ավանդներից: Սա մի վեճ է, որ արդեն հարյուրամյակներ շարունակվում է հայ գրականության և հրապարա-

կախոսության մեջ: Բայց Զարյանի համակրանքը, անկասկած, ոչ թե այսպես կոչված պրագմատիկ, այսինքն՝ կոնկրետ բարիքներ հետապնդող մոտեցման, այլ հավատարմության կողմն է:

Ողբերգությունը մեծ հաջողությամբ բեմադրվեց սկզբից Գյումրիում (այն ժամանակ Լենինական), բայց շուտով խիստ քննադատության ենթարկվեց իշխանությունների կողմից այն մեղադրանքով, որ խորհրդային գրողը փառաբանում է արքային: Սա այն ժամանակվա ուղղագիծ, մակերեսային, այսպես կոչված գռեհիկ-սոցիոլոգիական մոտեցման տիպիկ դրսևորում էր: Կրքերը հանդարտվեցին, երբ ռուս քննադատները և ընթերցողները բարձր գնահատեցին Զարյանի ողբերգությունը: «Արա Գեղեցիկը» մնաց հայ գրականության մեջ իբրև լավագույն հայրենասիրական պիեսներից մեկը:

* * *

Հայրենիքի և հայրենասիրության թեման մնաց գլխավորներից մեկը Զարյանի ամբողջ ստեղծագործության մեջ: Նա գրեց անկեղծ, խոր բանաստեղծություններ՝ նվիրված հայոց լեզվին՝ «Հայերեն (մի հայուհու)», «Արի, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն», Հայաստանին, իր հայրենի գյուղին ու հայրենի տանը՝ «Խառակոնիս», «Հայրենի տուն», «Ուղերձ իմ ժողովրդին», «Ես լոկ ալիքն եմ քո ծովի» և այլն: Նա նորից ու նորից անդրադառնում էր հայոց պատմությանը, նրա բախտորոշ դեպքերին («Ասք Անդրանիկ գորավարի», «Արշակ և Շապուհ», «Միհրդատի դամբարանը», «Ասք էության» պոեմները, «Արտավազդ և Կլեոպատրա» ողբերգությունը)՝ փորձելով հասկանալ հայոց պատմության ամենամռայլ կնճիռները: Մանավանդ պատերազմից հետո գրված գործերում զգացվում է անպատասխան հարցերի բերած տխրությունը: Ինչո՞ւ է այսպես դասավորվել հայոց ճակատագիրը, ինչո՞ւ մենք չենք կարողացել ազատագրվել բարբարոսների լծից, չենք միաբանվել. այս և բազմաթիվ նման հարցեր են տանջում բանաստեղծին: Ապահովության այն զգացումը, որն ունեին հայ մարդիկ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, սկսում էր մռայլվել այն սուր գիտակցությամբ, որ հայ ժողովրդի հանդեպ պատմական մեծ անարդարություն է թույլ տրվել, որ փոքր ժողովուրդների ճակատագիրը որոշում են հզոր պետությունները ըստ իրենց շահի: Մի փոքրիկ բանաստեղծության մեջ (1967թ.) ուղղակի գրում է.

*Սևան, իզուր ես որոտում,
Ափերը քո պատառոտում,
Ճակատագիրը իմ և քո
Այս անտարբեր լուսնի ներքո
Օվկիանոսներն են որոշում:*

Այս ոգով է գրված «Արտավազդ և Կլեոպատրա» ողբերգությունը՝ ստեղծված մոտավորապես այն նույն տարիներին (1968թ.): Պիեսի հիմքում ընկած է մի իրական դրվագ հայոց հին շրջանի պատմությունից (մ. թ. ա. 1-ին դար): Հռոմի Անտոնիոս եռապետը խաբեությամբ գերում է հայոց Արտավազդ արքային և տանում նվեր իր սիրուհուն՝ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրային: Արտավազդից պահանջում են Կլեոպատրայի առջևով շղթայակապ անցնելիս փառաբանել թագուհուն, և նրան կյանք կշնորհվի: Բայց արքան բարձր ճակատով անցնում է իր վերջին ճանապարհը՝ Կլեոպատրայի հասցեին ասելով նրան արժանի ծանր խոսքեր... Այսպես է վճռվում հայոց թագավորի ճակատագիրը: Սա, անկասկած, հերոսական դրվագ է, բայց Զարյանն այս անգամ պատմական փաստը մեկնաբանել է ավելի հոռետեսական ոգով: Հայաստանը տառապում է երկու հզոր և ուխտադրուժ հարևանների՝ հռոմեացիների և պարսիկների միջև, և չի երևում ելքը:

Հայոց պատմությանը նվիրված գործերի մեջ է նաև մի պոեմ՝ նվիրված գորավար Անդրանիկին («**Ասք Անդրանիկ գորավարի**»): Անդրանիկը հայոց նորագույն պատմության ամենահայտնի դեմքերից մեկն է՝ շատ սիրված ժողովրդի մեջ: Իր ամբողջ կյանքը անմնացորդ նվիրել է հայոց ազատագրության գործին, անձնական կյանք գրեթե չի ունեցել: Վայելել է Հովհաննես Թումանյանի բարեկամությունը: Տարբեր ժամանակներում նրա գործողությունները տարբեր, երբեմն հակասական գնահատականների են արժանացել: Ժամանակին գծովել է ազգային կուսակցությունների հետ, և նրա որոշ գործողություններ պայմանավորված են այս իրողությամբ: Անդրանիկի կերպարի այս և այլ գծերի մասին է խոսում Զարյանը իր պոեմում: Ամփիջական ստեղծագործական ազդակ է ծառայել այցելությունը Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատուն, որտեղ մինչև վերջին ժամանակներս, մինչև աճյունը Հայաստան տեղափոխելը, թաղված է եղել Անդրանիկը: Նրա գերեզմանին դրված է եղել գորավարի ձիարձանը, որը հիմա էլ մնում է փարիզյան գերեզմանատանը: Հայ հերոսի հուշարձանը օտար քաղաքի գերեզմանոցում առիթ է տվել տխուր խոհերի հայոց ճակատագրի մասին:

Ինչո՞ւ ես դու ապաստանել այստեղ,

Այս հեռավոր շիրիմների շարքում:

Ինչո՞ւ ես մատնված օտարության.

Դու չէ՞ որ ժողովուրդ ունես,

Ծննդավայր և տուն...

Տնքում է դարերով անպատասխան

Հայոց բախտի բազմաշարժար «ինչուն»:

Զարյանը հիշում է Անդրանիկի փառավոր ճանապարհի տարբեր դրվագները՝ շեշտը դնելով հատկապես Անդրանիկի քաջության և ասպետության վրա: Առհասարակ, Անդրանիկի ասպետությունը շատ գրույցների առարկա է եղել: Դրա մեջ արտացոլվել են Անդրանիկին ծնող ժողովրդի լավագույն գծերը: Բարբարոսների գործած բոլոր չարիքները չեն չարացրել, չեն խեղաթուրել հայ մարդու հոգին, նա երբեք ձեռք չի բարձրացրել թուրք կնոջ, երեխայի, անպաշտպան ծերունու վրա: Հիշելով թուրքերի բարբարոսությունները՝ Զարյանն ասում է.

*Բայց դու քո վեհ նախնյաց իմաստությունն առած՝
Երբեք չստրկացար ատելությունը կույր,
Թաթով անգամ չըսաստեցիր
Նրանց մանուկներին,
Դու թշնամու անգեն կնոջն
Անվանեցիր «քույր»...*

Զարյանը չի դժգոհում Անդրանիկից՝ Դաշնակցություն կուսակցության հետ կապերը խզելու համար: Բայց ցավով է խոսում այն մասին, որ 1918-ի դժվար օրերին Անդրանիկը, քենով լցված Դաշնակցության հանդեպ, չմասնակցեց Լոռիում տեղի ունեցած մարտերին ընդդեմ թուրքերի: Այս դեպքը, որ մինչև հիմա էլ վեճեր է հարուցում, Զարյանին առիթ է տալիս խոսելու հայոց պատմության ամենացավոտ խնդիրներից մեկի՝ ժողովրդի անմիաբանության մասին.

*Օ՛, պառակտում, դու պատուհասն ես հայության,
Մեր թշնամու եղեռնակից եղբայր...*

Իսկապես, նորագույն ժամանակների հայ ամենալուսավոր հերոսներից մեկի՝ Անդրանիկի կերպարը մթագնվում է այս դրվագով: Բայց նաև այս դեպքը, Անդրանիկի ողջ կենսագրության հետ միասին, ստիպում է մտածել հայ ժողովրդի պատմության բազմաթիվ կնճռոտ խնդիրների մասին: Անդրանիկը այն գործիչներից էր, որոնց կենսագրությունը սերտորեն կապված է հայոց պատմությանը, և հասկանալ Անդրանիկի կերպարն ու կենսագրությունը՝ նշանակում է հասկանալ հայոց նորագույն պատմության շատ դրվագներ...

Քնարերգությունը: Բանաստեղծի ճակատագիրը: Զարյանի քնարերգությունը XX դարի հայ բանաստեղծության արժեքավոր էջերից է: Ինչպես արդեն ասվեց, նա իր ստեղծագործական ճանապարհը սկսում էր իբրև բանաստեղծ: Այդ վաղ տարիների բանաստեղծության մեջ արդեն զգացվում էր քնարերգակի տաղանդը: Հետագայում ժամանակ առ ժամանակ քնարական լարը թուլանում է նրա ստեղծագործության մեջ, մանավանդ այն տարիներին, երբ տիրապետող են դառնում քաղաքական թեմաները: Բայց աստիճանաբար Զարյանի գործերում քնարականությունը վերագրավում է իր իսկական տեղը, մանավանդ

երեսնական թվականների երկրորդ կեսից սկսած՝ ծնվում են լավ բանաստեղծություններ մարդկային հոգու ամենաուրբ շարժումների մասին: Մեր, տիրություն, հուսահատություն, հույս՝ այս բոլորը իրենց արտահայտություն են գտնում Զարյանի բանաստեղծություններում: Զարյանը, ինչպես բոլոր իսկական բանաստեղծները, չի կրկնում իր նախորդներին, այլ մարդկային սովորական զգացմունքները երգում է ի՛ր ձևով, ի՛ր բանաստեղծական անհատականության օրենքներով: Նրա քնարական հերոսը (այսինքն՝ այն մարդը, որի հոգին է բացահայտում իր գործերում) առնական, փորձություններից չվախեցող, կյանքին ու մարդկանց սիրով վերաբերվող անհատն է, որը խորությամբ վերապրում է և՛ ուրախությունը, և՛ վիշտը:

*Եթերն անխափան երգեհոն է մի՛
Մեզ ամեն կողմից աշխարհի բոլոր
Ձայները բերող,
Աշխարհը երգ է հրաշքներով լի,
Եվ լսում եմ ես իմ ականջներով:*

Զարյանի քնարական հերոսը չի տրտնջում, չի հակադրվում աշխարհին ու մարդկանց: Նա ավելի հակված է ինքն իրեն մեղադրելու, եթե իրեն չեն հասկանում. ամեն դեպքում նրա զայրույթն ու վիրավորանքը արագ կարող են փոխարինվել նոր ոգևորությամբ ու սպասումներով:

Զարյանի քնարերգության մեջ արտացոլվել է նրա սեփական բանաստեղծական և մարդկային ճակատագիրը: Քանի որ Զարյանը իր բռնկուն բնավորությամբ, իր կրքոտ խառնվածքով թշնամիներ շատ էր վաստակել և մանավանդ ժամանակին իսկապես բախվել էր Չարենցի, Բակունցի և մյուսների հետ, նա համարվեց երկու մեծ գրողների մահվան մեղավորը: Ինքը այդ մասին այսպես է գրել.

*Եվ ինչ հոտառովթյամբ ամբոխային
Գտան մի մարդ, մի աղմկոտ պոետ,
Որի վրա մի կերպ կարկատեին
Քո կորստյան պատճառը չարաղետ:*

Այս քառատողը վերցված է «**Զրույց մեռած բանաստեղծի հետ**» գործից (1960թ.): Բանաստեղծությունը նվիրված է Եղիշե Չարենցին: Զարյանը տալիս է իրենց հարաբերությունների ընդհանրացված գնահատականը, որ նա հաստատել է նաև հետմահու հրատարակված գրառումներում: Նա միշտ ընդունել է Չարենցի մեծ տաղանդը, նույնիսկ նրա հետ վիճելիս: Նա ընդունել է նաև Չարենցի մեծ հեղինակությունը, հաշվի նստել նրա գնահատականների հետ, նրան համարել իր ուսուցիչը:

*Բայց ես տեսնում էի քո անսահման,
Քո փոթորկված գարնանաբեր հոգին,*

Եվ դու գիտեիր, դու գիտեիր միայն

Տեսնել իմ ապառուժ գալիք ոսկին:

Բայց քաղքենիական ամբոխը այլ կերպ էր նայում երեսնականների իրադարձություններին.

Ինչ փուլի՞ նրանց մեր երգն ու ապագան:

Նրանց մի մարդ էր պետք, մի բանաստեղծ,

Որին տային կսկիծը քո մահվան,

Անմահությունդ վերցնեին իրենց:

Ահա սա բոլոր ժամանակների ամբոխային մտածողության դրսևորումներից մեկն էր: Ամբոխին իրականությունը չի հետաքրքրում, այդ իրականության բարդությունը վեր է ամբոխային մտածողության հնարավորություններից: Ամբոխը գերադասում է ամեն ինչ պարզեցնել, վերածել պարզ սխեմաների և դրա հիման վրա դատավճիռներ կայացնել: Այսպես վարվեցին Զարյանի հետ: Իր բանաստեղծությունը նա ավարտում է այսպիսի ճշմարիտ տողերով.

Քո մահը իմ կորուստն է դառնակեզ:

Ես ողբացել եմ քեզ հազար անգամ:

Հազար ափսոս, որ դու կենդանի չես,

Իմ ախոյան, վարպետ և բարեկամ:

Վերջին տողը ճշմարիտ բանաձևումն է Զարենցի և Զարյանի հարաբերությունների:

Զարյանի ամենավերջին տարիների բյուրեղացած քնարերգության մեջ քաղքենիության և չարության թեման շատ մեծ տեղ է գրավում: Ամբոխը առանձնակի հաճությամբ հալածում է այն մարդկանց, որոնք իրենից բարձր են, բայց անպաշտպան: Զարյանի քնարական հերոսը ամբողջ սրությամբ զգում է այս ճշմարտությունը և երբեմն հուսահատվում.

Նա ինձ ասաց.— Դուք մի հոխորտացեք,

Ես ձեզանից բնավ չեմ վախենում:

Եվ պատասխան տվի ես հուսաբեկ.

— Ունեք մեծ պաշտոն և փոքր խելք,

Եվ ձեզանից ես ինքս եմ վախենում:

Շատ բնորոշ են և այս տողերը.

Երգելն իզուր է... երգս չի հասնում

Ո՛չ հարազատներին, ո՛չ օտարին:

Մենակ եմ ես, ինչպես անապատում

Տխուր կանգնած կայծակնահար կաղնին:

Բայց կենսասիրությունը և հավատը կյանքի, մարդկանց հանդեպ շատ ուժեղ են հերոսի մեջ: Եվ տխուր տողերին հետևում է ռոմանտիկական հավատը այն բոլոր արժեքների հանդեպ, որոնք ուղեկցել են Զարյանին իր ողջ կյանքի ընթացքում: Այդ տրամադրությունների ընդհանրացումն է Զարյանի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Սպասում եմ քեզ» (այս վերնագրով ժողովածուն հրատարակվեց 1968թ., դրա համար նա ստացավ Հայաստանի Պետական մրցանակ): Դա իդեալների, գեղեցկության, սիրո հանդեպ հավատի մի բյուրեղացած արտահայտություն է: Մարդը հասել է կյանքի ավարտին, բայց շարունակում է սպասել իր իդեալին.

Դու խոստացել ես ինձ՝ հոգուս

Կապույտ այգաբացին,

Միջնադին իմ վաղահաս՝

Ես սպասում եմ քեզ:

.....

Կաղնիս վաղուց է մերկացել

Հույսի տերևներին,

Թեկուզ դալուկ աշնանը գաս,

Ես սպասում եմ քեզ:

Մինչև վախճանն այս երազի

Մնացել է մեկ վայրկյան,

Երջանկության անմահ երազ,

Ես սպասում եմ քեզ:

Կյանքի հանդեպ պայծառ հայացքի բարձր արտահայտությունն էր «Հրաժեշտի սաղմոս» բանաստեղծությունը, որը ստեղծել է մահվան մահճում: Զարյանը խորին սիրով է գրում հայրենի քաղաքի, երկրի, մարդկանց մասին, որոնցից պիտի շուտով հեռանա: Ներողամտությամբ է գրում իր բազմաթիվ հակառակորդների մասին, որոնք այնպես թունավորեցին նրա կյանքի վերջին տարիները: Դա Զարյանի քնարերգության վերջին ակորդը եղավ.

ՀՐԱԺԵՇՏԻ ՍԱԳՄՈՍ

Մնաս բարո՛վ ասա կյանքին,

Մնաս բարո՛վ ասա:

Եվ մոռացիր քո անթառամ այգին

Եվ ծառուղին քո այն ծովեզրյա,

Որտեղ պիտի ճեմեր քո երազի հերոսուհին,

Մաղիկներին բաժանելով ժպիտ և բուշր,
 Ուր ծառերի վրա պիտի ճովողեին
 Թռուները քո ոսկեփետուր:
 Մնաս բարով ասա
 Քո ցրտաշունչ Անապատին,
 Որտեղ հեռւմ է գայլերից
 Պատառոտված քո ձին,
 Որտեղ հողմերը հեկեկում են ողբաձայն
 Քո որբացյալ ծոռնիկների նման:
 Մնաս բարով ասա
 Քո այն հրաշք երեանին,
 Որ բարձրանում է խայտալով,
 Զուգվում է աչքերիդ հայելու մեջ կանգնած:
 Բոլոր գալիք հրաշքներին
 Ասա մնաս բարով
 Եվ բարձրացիր քո նավը տիեզերագնաց:
 Մնաս բարով ասա կամաց-կամաց
 Քո հայ ժողովրդին
 Իր աստղառկայծ հույսերի հետ,
 Քո ճանապարհներին աշխարհաերթ,
 Անծայր Կաթնծիրին:
 Եվ այս հողագնդին անտեր,
 Որի գլխին դիզվում են անդադար
 Կործանումի ատոմային ամպեր:
 Մնաս բարով ասա խոնարհաբար
 Քո բարեկամներին և թշնամիներին,
 Բոլոր մարդկանց,
 Որ անցնելու են այս ճանապարհով,
 Քո ցավերին, հիվանդություններին
 Եվ ինքդ քեզ, և ինքդ քեզ
 Ասա մնաս բարով:

...Նորից նոր Հաստատում եմ, որ շատ ճիշտ վարվեցիր՝ կոտրելով սառույցը և այցելեցիր ինձ: Ծերությունն իմաստութիւնն է, բայց ոչ բոլորն են օգտվում այդ շնորհքից: Դու օգտվեցիր, և օրհնյալ լինես: Մեր մանկութեան և պատանեկութեան տարիների բարի հուշերը ուրիշ բան չէին կարող թելադրել:

Գուրգեն Մահարու՝ Նաիրի Զարյանին գրած նամակից, 1969թ.

Նաիրի Զարյանը անցել է մեր պատմութեան դժվարին, կտրուկ ճանապարհներով, բախումնային կեանքներով, երբեմն արել է այն, որ չպետք է աներ, երբեմն Հանձնվել է արագութեան անդէկ տարերքին, բայց իր տողերով (լինեն դրանք Հզոր թե դալուկ) կանգնած է եղել ժողովրդի ճակատագրի կողքին:

Սուրեն Աղաբաբյան

Այդ (Հայրենական պատերազմի) տարիներին լույս տեսավ մեր չափա-ծո գրականութեան գլուխգործոցներից մեկը՝ «Արա Գեղեցիկը»: Մեկ էլ «Ձայն Հայրենականը»՝ գրված լայն շնչով, թափով և այնպիսի մի ընդգրկումով, որ մինչև այդ Հատուկ էր միայն Չարենցին: Մեծ ընդու-նելութիւն գտավ: Թարգմանվեց ռուսերեն: Արտասանվում էր բեմերից: Հասավ ռազմաճակատ: Զոհված ռազմիկներից շատերի գրպանում գտե-լ են «Ձայն Հայրենական» գրքույկը, երբեմն էլ ձեռքով արտագրված:

Ռուբեն Զարյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌՁԱՍԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք Ն. Զարյանի կենսագրությունը՝ ըստ հետևյալ պլանի.
 - Ի՞նչ է իսկական անուն-ազգանունը
 - Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել, ի՞նչո՞վ է հայտնի ծննդավայրը
 - Ե՞րբ և ի՞նչո՞ւ է լքել ծննդավայրը
 - Դ՞ր ստեղծագործության մեջ է նկարագրել իր մանկությունն ու պատանեկությունը
2. Ի՞նչ մասնակցություն ունեցավ Ն. Զարյանը 20–30-ական թթ. գրական կյանքին և ի՞նչ սխալներ թույլ տվեց այդ տարիներին:
3. Ովքե՞ր են «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության հերոսները, ինչպե՞ս են սրանք նկարագրված բանաստեղծության սկզբում:

4. Ինչ է պատահում հերոսների հետ, երբ անցնում է արքան իր շքախմբով:
5. Հայրենասիրական թեմայով ինչ ստեղծագործություններ է գրել Ն. Չարյանը. թվարկե՞ք մի քանիսի վերնագրերը:
6. Ո՞վ էր Պեր-Լաշեզ գերեզմանատան քարե ձիավորը, և ինչ խոհեր է նա արթնացնում բանաստեղծի հոգում:
7. Անդրանիկ զորավարի կյանքի ինչ դրվագներ են ներկայացված «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմում:
8. «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմում ինչ նկատի ունի Ն. Չարյանը, երբ գրում է հետևյալ տողերը. «Օ՜, պառակտում, դու պատուհասն ես հայության / Մեր թշնամու եղեռնակից եղբայրը»:
9. Ո՞ւմ է նվիրված «Չրույց մեռած բանաստեղծի հետ» բանաստեղծությունը. ինչո՞ւ է Չարյանն անդրադարձել այդ թեմային:
10. Մեկնաբանե՞ք բանաստեղծության վերջին՝ «Իմ ախոյան, վարպետ և բարեկամ» տողը:

ՏՆԱՅԻՆ ՍՈՍՑՄԱՐԱՆՔՆԵՐ

«Երկու հանճարեղ գլուխ»

1. «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծությունից դժուր գրե՞ք «խոսքի արքային» և «հնչյունի արքային» բնութագրող տողերը, ինչ ընդհանրություն և ինչ տարբերություններ ունեն երկու հանճարները:

«Ասք Անդրանիկ զորավարի»

2. Օգտվելով «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմի բնագրից՝ ներկայացրե՞ք՝
 - Անդրանիկ զորավարի կյանքի հերոսական ուղին,
 - Անդրանիկ զորավարի մեծահոգի, ասպետական վարքագիծը ցուցադրող դրվագը,
 - ինչո՞ւ զորավարը հեռացավ հայրենիքից:

«Չրույց մեռած բանաստեղծի հետ»

3. Ինչո՞ւ է Ն. Չարյանը համարում, որ ինքն ամենաշատն է զգում «մեռած բանաստեղծի» կարիքը:

ԹԵՄԱՅԻՆ ՍՈՍՑՈՂՐԱՆԵՐ

1. Ն. Չարյանի իր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

Դու ո՞վ ես, արծվաքիթ և թավաբեղ:

Ստարացած քո հայացքով

Դու ի՞նչ ես ակնարկում:

Ինչո՞ւ ես դու ապաստանել այստեղ՝

Այս հեռավոր շիրիմների արանքում:

- «Չայն հայրենական»
- «Ասք Երևանի»
- «Ասք Անդրանիկ զորավարի»
- «Երկու հանճարեղ գլուխ»

2. Ո՞րն են նվիրված հետևյալ տողերը.

Քո մահը իմ կորուստն է դառնակեզ:

Ես ողբացել եմ քեզ հազար անգամ:

- բանաստեղծի մորը
- Ակսել Բակունցին
- Ստալինին
- Եղիշե Չարենցին

3. «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության վերաբերյալ ի՞ր պնդումն է ճիշտ.

- Երևում է արքայի կառքը, և Երկու հանճարները բացահայտում են իրենց կենսական տարբեր դիրքորոշումները:
- Երկու հանճարներն էլ ցուցադրում են, որ իրենք կախյալ վիճակում են:
- Երկու հանճարեղ գլուխները չեն խոնարհվում արքայի առջև:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

(1885 – 1969)

Կոստան Զարյանի (Կոստանդին Եզիազարյան) կյանքի պատմությունը իսկական «թափառական հայի» պատմություն է: Ծնվել է Հարավային Կովկասի Շամախի քաղաքում, մի ընտանիքում, որի հետ ազգակցական կապեր ունեին արձակագիր Ալեքսանդր Շիրվանզադեն և դերասան Հովհաննես Աբելյանը: Հայրը եղել է ռուսական բանակի գեներալ: Նրանց ընտանեկան ազգանունը եղել է Եզիազարյան. դրանից իբրև գրական անուն մնացել են վերջին երկու վանկերը:

Ծնողները շուտ են մահացել, և նա գնացել է արտասահման՝ ավագ եղբոր մոտ: Դրանից հետո նրա կյանքը հիմնականում անցել է Եվրոպայում: Այնտեղ ուսում է առել, սովորել է եվրոպական մի քանի լեզուներ, սկսել է գրել: Նրա առաջին գործերը տպագրվել են ֆրանսերեն, հետո՝ իտալերեն: Եվրոպական գրական շրջաններում նրան հատկապես մեծ հռչակ է բերել իտալերեն հրատարակված «Երեք երգ» գործը: Ուսանել է Բրյուսելի համալսարանում, այս քաղաքում ծանոթացել է Բելգիայի մեծ բանաստեղծ Էմիլ Վերհարնի հետ, որի խորհրդով էլ վերադարձել է մայրենի լեզվին:

Ակտիվորեն մասնակցել է դարասկզբի գրական շարժումներին: Պոլսում ստեղծել է իր հանդեսը՝ «Մեհյան», մի քանի բարեկամների հետ, որոնց թվում էր և Դանիել Վարուժանը: Բայց հետո Վարուժանը հեռացել է «Մեհյանից». Զարյանի հանդեսը չէր ընդունում հեթանոսական շարժման սկզբունքները, որի առաջատարը Վարուժանն էր:

1914թ. աշնանը Զարյանը ընտանիքով Պոլսից կարողացել է հեռանալ և փրկվել մյուս հայ մտավորականների ճակատագրից: Պատերազմից հետո նորից ապրել է Պոլսում, որտեղ Վահան Թեքեյանի և ուրիշների հետ հրատարակել է «Բարձրավանք» հանդեսը: 1922թ. եկել է Խորհրդային Հայաստան, դասախոսել պետական համալսարանում: Այնուհետև, դժգոհ մթնոլորտից և վախենալով հետապնդումներից, հեռացել է արտասահման: Այստեղ աշխատակցել է հայկական պարբերականներին (Բոստոնի «Հայրենիք» հանդեսը) և տպագրել իր երկերը: Հիմնադրել և խմբագրել է հայագիտությանը նվիրված անգլիալեզու պարբերականներ:

Նորից Հայաստան է վերադարձել վաթսուհիններին և մահացել ու թաղվել այստեղ:



Պոեզիան: Գրել է արձակ գործեր, բանաստեղծություններ և պոեմներ: Դրանց մի մասը ամփոփված է «Գիրք դյուցազներգության» ժողովածուում (Երուսաղեմ, 1978թ.): Դրանք հայկական ավանդությունների մշակումներ են: Չափածոյից հատկապես հայտնի է «Տատրագոմի հարսը» պոեմը: Պոեմի նյութը վերցված է ֆիդայական շարժման պատմությունից: Դեպքը իրական է, տեղի է ունեցել Արևմտյան Հայաստանում և հիշատակվում է Դաշնակցության գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերում: Երիտասարդ լեռնականը՝ Հովանը, ամուսնանում է մանկամարդ գեղջկուհու հետ, հետո հեռանում է լեռները՝ միանալու ֆիդայիներին: Նրա կինը՝ Սանան, դատապարտված է մենակության. ֆիդայիների օրենքները խիստ են, ֆիդային այլևս իրավունք չունի մտածելու սովորական աշխարհիկ կյանքի ու վայելքների, ընտանիքի ու կնոջ մասին: Իսկ Սանան երիտասարդ է, նա ուզում է սիրել: Անցնում են տարիներ, Սանան մենակ է մնում: Հայ երիտասարդները իրենց չեն կարող թույլ տալ սիրահետել ֆիդայու կնոջը: Բայց մի օր գյուղում հայտնվում է մի երիտասարդ քուրդ, որը սիրահարվում է Սանային: Սանան նրան պատասխանում է փոխադարձությամբ: Նրանք փախչում են գյուղից: Ֆիդայիները իմանում են այդ մասին: Կատարվածը անպատվություն էր հայկական գյուղի, հայ ֆիդայիների համար: Սանայի ամուսնու ընկերները որոշում են, որ ամուսինն ինքը պետք է իր ձեռքով սպանի դավաճան կնոջը: Նրանք գտնում են քրդին և Սանային, քրդին սպանում են: Հովանը կարեկցում է կնոջը, բայց ֆիդայական օրենքները այսպիսի դեպքերում դաժան են: Եվ նա սպանում է Սանային:

Կոստան Զարյանը, ինչպես ամեն մի հայ մարդ, խոնարհվում է ֆիդայական շարժման առջև: Հիացմունքով է նա պատկերում Հովանի հարսանիքը, գեղջուկների պարը, գծում ֆիդայիների կերպարները.

Մակար ծերունին,—

Թիկնավետ լայնքով, պեղերը սրած, հեռավոր գյուղից

Դուրս եկած ասպետ, երազկուն ու վեհ

Մի խիստ Դոն Գիշոտ՝

Կովան խոյի պես առաջ է ընկել

Եվ առել կրծքին ճամփի ոլորուն, անհայտ գիշերը:

Բոլոր այդ բնորոշումները՝ ասպետ, երազկուն ու վեհ Դոն Գիշոտ, վկայում են Զարյանի ակնածանքը ֆիդայիների հանդեպ:

Տպավորիչ և ուժեղ է ֆիդայիների և թուրք զորքի բախման պատկերը: Վիրավոր Մակարը, ծախսելով իր փամփուշտները թշնամու վրա, իրեն նետում է անդունդը: Այդ տողերին հետևում է պերճախոս մի հատված ևս՝ ներծծված հիացումով ու խոնարհումով դեպի ազատամարտիկները.

*Թող այլ երկերում հնչե ոսկեձայն Ռուլանի փողը:
 Զեն ու զարդերով, սրերով փողփող և կորդակներով
 Թող առաջանան ասպետները ժիր Կարլոս Մեծի,
 և դղյակներում
 նուրբ պրինցեսները թող երգ հառաչեն,
 լուսե ձայներով, հերոսի համար:
 Հայոց լեռների դաժան վայրերում, միայն ձորերի
 ոգին է դժգույն,
 որ իր գլուխը զարնում է քարին և կաղկանձելով
 թավալ է գալիս:*

Զարյանը հիշում է ֆրանսիական միջնադարյան էպոսը՝ «Ռուլանդի երգը», նրա հերոսներին և ազնվական մեղկ միջավայրը, և ակնհայտ է, որ իր հիացմունքը հայ գեղջուկ հերոսների, նրանց անշուք կենցաղի և ֆրանսիական հերոսներից ոչ պակաս ասպետության կողմն է: Ֆրանսիացի հերոսները մարտում մտահոգված էին իրենց պատվով, իսկ հայ ֆիդայիները՝ իրենց ժողովրդի կյանքով ու արժանապատվությամբ:

Բայց միայն ֆիդայիների հերոսությունը չէ, որ գովերգվում է այս պոեմում: Նույնքան ուժեղ գույներով նա ներկայացնում է երիտասարդ կնոջ լքվածության տառապանքը: Չվայելած սիրո և ընտանեկան կյանքի քաղցրությունը՝ տարիներ շարունակ նա լուր է սպասում Հովանից. բայց ֆիդային չպետք է հիշեր, չպետք է մտածեր կնոջ և աշխարհիկ վայելքների մասին: Իսկ Սանայի երիտասարդ սիրտը և մարմինը սեր էին տենչում օրեր, տարիներ: Բնության զարթոնքը ամեն անգամ Սանային հիշեցնում էր իր երիտասարդությունը: Սիրո կարոտը ելք պետք է փնտրեր:

Ահա մի հատված պոեմից, որը շատ բան է բացատրում հերոսների գործողություններում: Ամուսնու ձեռքով սպանվելուց առաջ Սանան ասում է.

*— Ես սիրեցի... Մեղք է սիրել... Ես իմ գյուղից դեռ երեխա
 Հովանի մոտ նոր հարս եկա... Թողեց գնաց և վեց տարի
 էլ գյուղ չեկավ, լուր չը խաբրեց, չը հարցրեց...*

.....

— Յավրճւմ, հրեշտակ, ես ինչ արի, ես սիրեցի, մեղք է սիրել...

Բայց դա դավաճանություն էր ֆիդայիների, նրանց խիստ և իսկապես ասպետական բարոյականության հանդեպ: Մինչև այսօր էլ այդ պոեմի ընթերցողները բաժանվում են երկու խմբի՝ նրանք, ովքեր Սանային համարում են դավաճան, և նրանք, ովքեր հասկանում են երիտասարդ կնոջ ապրելու և

վայելելու իրավունքը: Զարյանը իսկապես ողբերգական հակասությամբ լեցուն սյուժե է ընտրել, սյուժե, որտեղ սովորական մարդկային զգացմունքները բախվում են հայրենիքի, ընտանիքի հանդեպ ունեցած պարտքին:

Զարյանի արձակը ավելի հարուստ է՝ վեպեր, վիպակներ, պատմվածքներ, օրագրային գրառումներ, ուղեգրություններ: Այս վերջիններից հատկապես երկուսը՝ «Միացյալ Նահանգներ» և «Սպանիա» (Սպանիա – Իսպանիա անվան արևմտահայերեն գրությունը), շատ կարևոր տեղ են գրավում նրա ժառանգության մեջ: Զարյանը իր ժամանակի ամենակրթված հայ մտավորականներից էր, որը հրաշալի գիտեր պատմությունը, արվեստը, տարբեր երկրների մշակույթը: «Սպանիա» ուղեգրության մեջ, խոսելով իսպանական բնության, արվեստի, մշակույթի մասին, այդ երկիրը հաճախ համեմատում է Հայաստանի հետ: Հիացած է իսպանական մշակույթով, կերպարվեստով, իսպանական մշակույթի հոգեղենությամբ: Հակառակ դրան՝ խիստ անբարյացակամ, եթե չասենք բացասական, վերաբերմունք ունի ամերիկյան կյանքի և մշակույթի հանդեպ՝ դրա նյութականության, օգտապաշտության համար:

Զարյանի վեպերն ու վիպակները սովորաբար պատմում են հայ մարդու մասին, որը ապրել է օտար երկրներում, խորապես ծանոթացել այդ երկրների մշակույթին, բայց հոգու խորքում հայ է մնացել: Ու միշտ ձգտում է դեպի Հայաստան, դեպի հայրենիք: Բայց միշտ չէ, որ կարողանում է վերագտնել կապերը հայրենիքի հետ: Ահա նրա ամենակարևոր հերոսներից մեկը՝ Վահան Իբերյանը «Բանկոտպը և մամուռի ոսկորները» («մամուռ» նշանակում է մամոնտ) անավարտ, բայց շատ կարևոր վեպից: Իբերյանը հասակ է առել և կրթվել Եվրոպայում, հեղափոխությունից հետո եկել է Հայաստան, ուզում է իր ներդրումն ունենալ հայրենի երկրի վերականգնման գործում: Բայց հենց սկզբից պարզ էր, որ նա իր տեղը չի գտնելու Հայաստանի կյանքում: Մի կողմից, նա զգում է Հայաստանի գերազանցությունը Արևմուտքի հանդեպ՝ հայկական ոգին հակադրելով արևմտյան նյութապաշտությանը: Եվ նույնիսկ Արևմուտքի ներկայացուցիչը՝ ամերիկուհի Հելենեն, սիրահարված է նրան՝ նրա մեջ տեսնելով հայկական բնորոշ գծեր, որոնք Իբերյանին բարձր են դնում ամերիկացի տղամարդուց: Բայց, մյուս կողմից, և՛ նոր կարգերը, և՛ հայկական իրականության գավառականությունը Իբերյանին դուրս են մղում Հայաստանի կյանքից: Եվ նա ստիպված պետք է հեռանա: Վեպում բերված են Իբերյանի շատ հետաքրքրական խորհրդածությունները իր և հայրենիքի հարաբերությունների մասին.

«Հեշտ չէր այդպես դյուրին կերպով բաժանվել մի վայրից, որի մասին տարիներով երազած էի, որի հետ մարմին դարձած հոգեկան գիտակից և անգիտակից ձգտումներով կապված էի, որի բովանդակությունը լեցրել էր սիրտս և միտքս լավագույն թռիչքներով և որ, բոցկլտացող խարույկի պես,

տարիներով կազմած էր աշխարհագրացումիս կենտրոնում: Գուցե հենց այդ էր պատճառը, մտածում էի ես այն թույլեին, որ մենք մեկը մյուսին լավ չհասկացանք: Պատահում է կյանքում, երբ մենք հեռվում գտնվող կինը սնուցանում ենք մեր լավագույն հույզերով, հագցնում մեր երազներից հյուսված ոսկեփայլ մետաքսներով, աչքերին լույս ենք տալիս և շրթների վրա բոցեր գետեղում: Ու որովհետև հանդիպումի վայրկյանին չենք գտնում ծառի վրա շողշողացող արշալույսի հետքերը՝ մենք հիասթափվում ենք: Մինչ կինը արարած է ուրիշ արարածների նման: Ունի անշուշտ իր արտացոլման և իր ճառագայթի կերպը և ձևը: Իր հոգին, իր հարստությունը և իր թշվառությունը: Նա չի ընթրնում պատրանքիդ գեղեցկությունը, և դու չես ընթրնում նրա ներքին ու արտաքին աշխարհի ուրույն իրականությունը»:

Այս խոսքերը (որ գրված են Իբերյանի հիշատակարանում) շատ կարևոր են հայության մի կարևոր հատվածի հոգեբանությունը հասկանալու համար: Այդ մարդիկ ապրում են օտար միջավայրում, դաստիարակվում են այդ միջավայրի օրենքներով, բայց հոգու խորքում միշտ փայփայում են հայրենիքի պատկերը, ձգտում դեպի հայրենիքը: Իսկ հայրենիքը տեսնելիս հիասթափվում են, որովհետև իրենց պատկերացումները և իրականությունը իրար չեն համապատասխանում: Պատահական չէ, որ այս խոսքերի արձագանքը լսվում է նաև «Նավը լեռան վրա» վեպում՝ Պետրոս Մարկի և կապիտան Հերյանի խորհրդածություններում:

Իբերյանի՝ Հայաստանից հեռանալու պատճառներից մեկը քաղաքական իրադրությունն էր, այն բնություններն ու սահմանափակումները, որոնք կատարվում էին այնտեղ: Բայց այդ մասին Զարյանը ավելի մանրամասն պատմում է ինքնակենսագրական-ուղեգրական գրքում, որն անվանել է «Անցորդը և իր ճամփան»: Այս գիրքը Զարյանի կյանքի պատմությունն է այն մի քանի տարիներին, երբ ինքը ապրել է Խորհրդային Հայաստանում: Նա չի թաքցնում իր հիասթափությունը հայկական իրականությունից, խորհրդային կարգերից, այն հայ մտավորականներից, որոնք համագործակցում էին խորհրդային իշխանության հետ: Գրքում, ճշմարտության հետ միասին, շատ ծայրահեղ, նաև անարդար գնահատականներ կան: Բայց էականը մարդկային այն նույն տիպն է, որը նա ներկայացնում է ավելի ուշ «Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպում: Դա նույն հայ մտավորականն է, որը ամբողջ էությամբ ձգտում է դեպի հայրենիք, բայց այստեղ հիասթափվում է ոչ միայն քաղաքական կարգերից, այլև մարդկանցից: Գրքի վերնագիրը շատ բնորոշ է. Զարյանը իրեն և իր նման մարդկանց համեմատում է անցորդների, ճանապարհորդների հետ, որոնց վիճակված է անընդհատ փնտրել, ձգտել, բայց մնալ չբավարարված: Ու միշտ երագել հայրենիքի մասին: Եթե վերադառնանք վեպին («Բանկոռպը...»), կարող ենք հիշել Իբերյանի խոսքը. «...Ի ծննդանև մենք անցորդներ ենք, սահման-

ները անցնողներ, հորիզոնները ճեղքողներ»: Սա Կոստան Զարյանի նախընտրած հերոսն է, որն իրենով ներկայացնում է աշխարհով մեկ սփռված հայ մարդուն՝ ճակատագրի բերումով անցորդ դարձած...

Այդ նույն մարդն է Զարյանի ամենահայտնի՝ «Նավը լեռան վրա» վեպի հերոսը՝ նավապետ Հերյանը: Բայց նախ մի քանի խոսք այս վեպի ճակատագրի մասին:

Վեպը առաջին անգամ հրատարակվեց Բոստոնում (ԱՄՆ) 1943թ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Այդ իրադրությունը չէր կարող այս կամ այն կերպ չարտացոլվել վեպի մեջ, գոնե նրա առաջաբանում: Այստեղ Զարյանը հպարտությամբ խոսում է, որ հայ ժողովուրդը զենքը ձեռքին կռվում է բռնակալության դեմ և դարբնում իր ապագան: Բուն վեպը գրված է հակախորհրդային դիրքերից: Նրանում շարունակվում ու զարգացվում են այն տրամադրությունները, որոնք արտահայտված էին «Անցորդը և իր ճամփան» ուղեգրության մեջ և «Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպում:

Վաթսուհականների սկզբին Զարյանը տեղափոխվեց Հայաստան և հրատարակեց վեպի նոր տարբերակը: Սա արդեն գաղափարական միանգամայն հակառակ դիրքերից էր գրված: Զարյանը համակրանքով էր խոսում խորհրդային կարգերի, կոմունիստների և նրանց գործունեության մասին՝ պաշտպանելով այն տեսակետը, որ խորհրդային իշխանությունը փրկեց Հայաստանը: Գրականության պատմության մեջ այսպիսի դեպքեր շատ քիչ են լինում, երբ նույն գործը սկզբում տպագրվի գաղափարական մեկ ուղղվածությամբ, հետո հրատարակվի առաջինին հակառակ տրամադրություններով: Այս փաստը պայմանավորված էր ինչպես հայոց նորագույն շրջանի պատմության, այնպես էլ Կոստան Զարյանի անձնական և գրական ճակատագրի առանձնահատկություններով: Հայաստանում նրա վրա որոշակի ճնշում գործադրվեց վեպի գաղափարական ուղղվածությունը փոխելու համար: Բայց ինքը՝ Զարյանը, երևի ինչ-որ չափով պատրաստ էր վերանայել իր հայացքները հայոց նորագույն պատմության այդ շրջանի վերաբերյալ: Վեպի առաջաբանում՝ «Այս վեպը», Զարյանը գրում է. *«Արտասահմանյան պայմաններում, հեռու երկրից և ականատեսների վկայություններից, դժվար էր հարազատ պատկերը տալ բոլոր անցուդարձերի, և վեպում ակամա տեղ էին գտել որոշ անճշտություններ, որոնք և աշխատել եմ ուղղել երկրորդ հրատարակության առիթով»*:

Ի վերջո, վեպի երկու տարբերակներում էլ ամենահետաքրքրականը ոչ թե քաղաքական գնահատականներն են, այլ Զարյանի հայացքը հայոց ճակատագրին, հայ մարդու և Հայաստանի առանձնահատկություններին: Նա շարունակում է իր այն խորհրդածությունները, որոնք սկսել էր նախորդ գրքերում: Եվ ելակետը դարձյալ հայ մարդն է, որը ճակատագրի բերումով գրկվել է

հայրենիքից, իսկ այժմ ձգտում է դեպի Հայաստան: Հայտնի նավապետ Հերյանը հրաժարվում է իր պաշտոնից ու դիրքից, որ ուներ ռուսական նավագնացության մեջ, և գալիս է Հայաստան: Հերյանը, որպես գրական հերոս, Իբերյանի հարազատ եղբայրն է՝ նրա պես դրսում դաստիարակված, օտար կրթություն ստացած, բայց էությամբ միշտ դեպի Հայաստան ձգտող: Այս մարդկանց ճակատագրերի մասին խորհելիս չենք կարող չհիշել Վահան Տերյանի հայտնի բանաստեղծությունը «Երկիր Նաիրի» շարքից.

*Որպես կաերտի որդին, որպես
Ուլիս մի՛ թողած և՛ հող, և՛ տուն,
Անցա ծովեր և ցամաքներ ես՝
Ամեն տեղ օտար և անխնդուն:*

*Ու հոգնած քայլով ահա կրկին
Վերադառնում եմ հայրենի հող,
Դեպի քարերըդ ազնիվ ու հին
Եվ խրճիթներդ՝ ահով նիրհող:*

Սա հայ մարդու ճակատագիրն էր, մարդու, որին պատմությունը հեռացրել է հայրենի հողից, բայց չի կարողացել մոռանալ տալ հայրենիքը, մշակույթը: Ահա արդեն քանի դար շարունակվում է հայ մարդու այս ողիսականը: Կոստան Զարյանի արձակի գլխավոր հերոսը հենց այդ հայն է, և այդ հայի կերպարը՝ նրա արձակի գլխավոր նվաճումը:

Բայց, ի տարբերություն նախորդ գրքերի հերոսների՝ Իբերյանի և մյուսների, Հերյանը գալիս է Հայաստան՝ այստեղ մնալու և աշխատելու հաստատ մտադրությամբ, և հակառակ բոլոր արգելքներին՝ իրականացնում է իր ծրագիրը՝ Սևանի լճում ստեղծել նավագնացություն: Օգտագործելով իր կապերը՝ նա ռուսական նավատորմերից մեկից ստանում է նավ, որը պետք է հասցներ Սևան: Կարելի է պատկերացնել, թե ինչ դժվարություններ պետք է ունենար Հերյանը նավը Հայաստան և ապա Սևան հասցնելիս: Նրան խանգարում էին հսկա նավի չափերը, բարեկարգ ճանապարհների իսպառ բացակայությունը, մարդկանց անըմբռնողությունը, քաղաքական ցնցումները: Բայց Հերյանը անհողողոդ էր: Նրա երազանքը պետք է իրականանար:

Այս վեպում Զարյանը պատկերում է հայ ժողովրդի պատմության ամենաբարդ շրջաններից մեկը՝ 1918–20 թվականները՝ Սարդարապատի ճակատամարտը, Առաջին հանրապետության տարիները, և ավարտում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ: Հայաստանը լցված էր արևմտահայ փախստականներով, թուրքերը հարձակվում էին, նոր ստեղծված պետությունը, ինչպես Զարյանն է ներկայացնում, անգոր էր աղետի առաջն առնելու: Հերյանը

Հայաստան է գալիս ահա այդ ճակատագրական տարիներին և չնայած բոլոր դժվարություններին՝ մնում է հայրենիքում: Սա է Հերյանի ամենամեծ տարբերությունը Զարյանի նախորդ գրքերի «անցորդ» հերոսներից: Ասենք, այդպիսի հերոս այս վեպում էլ կա՝ Պետրոս Մարկը, որն Ամերիկայից եկել է Հայաստան, ուսումնասիրում է Հայաստանը, փորձում հասկանալ նախնիների հայրենիքը: Զարյանը էջեր է նվիրում նրա և Հերյանի գրույցներին: Բայց Մարկը չի մնա Հայաստանում, նա չի վստահում այս երկրին: Զարյանի համակրանքը Հերյանի կողմն է, որը, անկախ Հայաստանի վիճակի ողջ ողբերգականությունից, մնում է և իր ներդրումը անում նոր Հայաստան ստեղծելու գործում: Կա և մեկ ուրիշ հայ՝ ծովային սպա Միքայել Թումանյանը, որը թողել է իր ծառայությունը ռուսական նավատորմում և հոր հետ եկել Հայաստան՝ իր հայրենիքին ծառայելու: Նրան չի հուսահատեցնում այն, որ ծովերի և օվկիանոսների փոխարեն իր առջև ընդամենը Սևանա լիճն է, նա էլ կառուցում է ի՛ր երազանքի նավը՝ խղճուկ նավակ այն նավերի փոխարեն, որոնցով ինքը նավարկել է Ռուսաստանում: Բայց նա նվիրված է իր հայրենիքին ու իր երազանքին, հայրենիք, որը նա նոր-նոր սկսում է ճանաչել: Թումանյանը չի կարողանում հարմարվել նոր պայմաններին, որոնք ստեղծվում են խորհրդային կարգերի հաստատումով, և նրան գնդակահարում են: Այս խմբին է պատկանում նաև երիտասարդ սպա Բաբկեն Միրանյանը, որը դաստիարակվել է Ռուսաստանում, ծառայել է ցարական բանակում, իսկ հիմա ծառայում է հայկական բանակում և զոհվում թուրքերի դեմ մղված մարտերում: Ինչպես տեսնում ենք, Զարյանը ստեղծում է «թափառական հայերի» մի փոքրիկ պատկերասրահ: Իսկապես, հայի այս տիպն է ամենից շատ հետաքրքրում Կոստան Զարյանին, նրա աչքերով է նա տեսնում Հայաստանը: Նրանցից ամեն մեկը իր ճակատագիրն ունի: Եվ միայն Հերյանն է կարողանում հաղթահարել բոլոր դժվարությունները, մնալ հայրենիքում և մարմին տալ իր երազանքին:

Զարյանը տալիս է այդ տարիների հայկական կյանքի բավական ամբողջական համապատկեր: Ե՛վ պետական պաշտոնյաներ, նախարարներ, և՛ ռազմական գործիչներ, և՛ գրականության ու մշակույթի մարդիկ (որոնց մի մասը, օրինակ՝ Կարա Դարվիշը, իրենց իսկական անուններով), և՛ գեղջուկներ, և՛ ռազմի տեսարաններ, և՛ պառլամենտական կյանք՝ այս բոլորը այս կամ այն չափով ներկայացված են վեպում: Բայց ընթերցողը միշտ այն տպավորությունն ունի, որ, ի վերջո, սրանք չեն ամենակարևորը, այլ այն ներքին, հոգևոր կյանքը, որն ապրում են հերոսները, նրանց գաղափարներն ու երազները, նրանց ձգտումը դեպի հայրենիք: Հերյանը հիշում է մի հայ գաղթականի խոսքերը. *«Հայի սրտում երկիրը, հայրենիքը միայն անուշ հիշատակ չէ, այլև արյունի հետ շրջող հոգեկանություն, առանց որի աշխատանք, հարստություն, դիրք և փառք դառնում են անիմաստ»:* Պատահական չէ, որ Կոստան Զարյանը

վեպի նախաբանում՝ «Այս վեպը», իր գիրքը համարում է «հոգիների պատմություն»: Եվ իսկապես, Զարյանի ոչ միայն այս, այլև մյուս վեպերը առաջին հերթին հոգիների պատմություն են, հոգևոր որոնումների պատմություն, և այուժեն, դեպքերի ընթացքը ավելի շատ լրացնում են «հոգիների պատմությունը»:

Նավի ամբողջ պատմությունը ավելի խորհրդանշական, քան իրական իմաստ ունի, դա, ըստ էության, «հոգիների պատմության» արտահայտություն է: Մեծ նավը Սևանի լճի համեստ չափերին հարմար չէր: Բայց այդ նավի պատմությունը ցուցադրում էր հայ մարդու կիրքը՝ օգնելու իր երկրին, նրան բերելու քաղաքակրթության նվաճումները: Քչերն են հասկանում Հերյանին. և՛ մտավորականները, և՛ քաղքենիները, և՛ գեղջուկները ծաղրում են նրան, չեն ըմբռնում Հերյանի տառապանքների իմաստը: Կոստան Զարյանին շատ էր մտահոգում Հայաստանի, հայ մարդու գավառականության խնդիրը: Սիրելով այդ երկիրը՝ նա իր սերնդի շատ գրողների նման՝ Վահան Տերյան, Եղիշե Չարենց և ուրիշներ, գտնում էր, որ Հայաստանը պետք է դուրս գա այդ վիճակից, պետք է ոգևորվի համամարդկային հոգևոր նվաճումներով: Նոր Հայաստանը Հերյանի համար ամենից առաջ հոգևոր ձգտումների երկիր էր: Հերյանի նավը այդ ձգտման մարմնացումն էր: Սևանի կղզում Հերյանը այսպիսի աղոթք է հղում Աստծուն. *«Տեր Աստված, տեր Աստված, ինձ ուժ տուր՝ իրագործելու այսօրվա հղացած գաղափարս... Ոչ անձնական շահի համար, ոչ փառասիրության համար, այլ այս ժողովրդի համար, որ ահա քո առաջ չորած, սպասում է քո լույսին... Դու, որ ապրում ես այս կղզում, դու, որ ստեղծել ես այս լիճը, տուր ինձ ուժ և եռանդ և հարատևություն՝ բերելու համար երազած նավը... Նավը հավատքի և լույսի...»*: Ուշադրություն դարձրեք ընդգծված բառերին: «Նավը լեռան վրա» արտահայտությունը մեկ ուրիշ խորհրդանշական իմաստ էլ ուներ. ըստ աստվածաշնչյան ավանդության՝ Նոյ նահապետի տապանը համաշխարհային ջրհեղեղի ժամանակ կանգ էր առել Արարատ լեռան վրա: Կյանքը վերսկսվել էր Հայաստանում: Լեռ բարձրացող նավի խորհրդանիշը պետք է հիշեցնեք նաև այս ավանդությունը: Ժամանակ առ ժամանակ Նոյյան տապանի թեման հնչում է Հերյանի մտքում...

Վեպում Զարյանը նորից ու նորից անդրադառնում է հայկական բնության՝ իր սիրած թեմային, դրա հնությանն ու ոգեղենությանը, թեմա, որի մասին շատ և հետաքրքրական դատողություններ է անում «Անցորդը և իր ճամփան» և «Բանկոռպը և մամուրի ոսկորները» գրքերում: Կարելի է ասել, որ բնությունը վեպում սեփական ձայնն ունի, մի ինքնատիպ հերոս է, առանց որի մյուս հերոսները և նրանց խոսքը շատ բաներից պետք է զրկվեին: Ահա մի փոքրիկ հատված Սևանի բազմաթիվ նկարագրություններից (Զարյանը շատ է սիրում Սևանը, նախորդ գրքերում էլ Սևանի մասին խոսում է ներշնչված, ոգևորությամբ). *«Արևի կարմիր գունդը, չափազանց մեծացած, դանդաղ իջնում*

էր ուրվացնող սլաքներով ձգված լեռների կուտակումների հետև, ինչպես վայրենի աստվածության խորհրդավոր մի դիակ, որը գործողությունը վերջացնելուց հետո լքում է բեմը՝ ոսկիներով և կրակներով հյուսված կախարդական մի վարագույրի հետևում անհետանալու համար:

Գրոհ տվող այդ գույները և պսպրացող ճաճանչները կարծես թաքնված երաժշտության ձայներ էին, ճառագայթների ծնծղաները մեկը մյուսին էին բախվում, սրինգները հալված ապակի՝ արտացոլվող լույսեր էին դաշնակում, և բոցակիզված մետաղները դղրդալով վայր էին թափվում օդի լարված թմբուկների վրա:

Լիճը, ոսկի այդ հեղեղով լցված, երփներանգ քամիներից ծեծվող հսկայական խարույկի էր նմանվում»: Այսպիսի շքեղ, կարծես կոփածո-ոսկեփռ պատկերները շատ բնորոշ են Զարյանի գործերին: Դրանցում իր՝ Զարյանի և մյուս «թափառական հայերի» սերն ու հիացումն են հայրենի բնությամբ, այդ բնության ներքին-հոգևոր իմաստը հասկանալու ձգտումը:

Արվեստը: Առհասարակ, Զարյանի լեզուն շատ պատկերավոր է թե՛ արձակում, թե՛ պոեզիայում: Զարյանը շատ հակված է դեպի փոխաբերական մտածողությունը: Հատկապես բնության պատկերներում նա լայնորեն օգտագործում է փոխաբերություններ (նաև համեմատություններ ու մակդիրներ): Իբրև օրինակ բերենք նախ մի հատված «Տատրագոմի հարսը» պոեմից.

Միայն կապուտաշ

աղքատ մի հրեշտակ թռչելու ատեն թե՛ր զարկում է

ժամի սուր խաչին և կսկծալով մնում շվարած:

Գյուղը կախվել է Սասնա փեշերից, աչքերը նետել

խորխորատի մեջ ու միտք է անում, դարավոր մի միտք:

Գյուղը ձյան տակ ցրտից դողում է: Կապտած ձեռքերը

ամուր բռնել են ուռկանը հողմի՝ որսում են լեռան ամեհի ստվերը

և խոր ձորերից եկած ձայների

մռունչը և խուլ արձագանքները:

Բոլոր այս տողերը, որոնց մեջ նկարագրվում է հարսանքավոր Տատրագոմը, փոխաբերություններ են՝ գյուղի միտք անելը (որը հիշեցնում է Թումանյանի «Մարոյի» սկիզբը), նրա դողալն ու մրսելը, հողմի ուռկանը և այլն, և այլն: Իսկ առաջին երեք տողերը ակնարկում են Զարյանի սերը առասպելական մտածողության ու պատկերների հանդեպ: Այսպես Զարյանը ներկայացնում է ոչ միայն հայկական բնությունը, այլև իր հերոսներին: Փոխաբերականությունը վառ արտահայտվում է նաև արձակում: Ահա մի քանի օրինակ «Նավը լեռան

վրա» վեպից: Հերյանը հիշում է իր կյանքում կարևոր տեղ գրաված երկու կանանց՝ ռուս Դաշենկային և հայ աղջկան՝ Զվարթին: «Մեկը կապված էր ծովի հետ: Լայնատարած բացը, շոգենավերի սուլոցը, մեքենաների աղմուկը, մեկնումի վայրկյանների ջերմը... Մյուսը լիճն էր: Կապույտ աչքերով երկնքին նայող մենակությունը, լեռների մեջ փակված մոտեխմ չքնադությունը, երկու հազար ոտք վեր գցած տեսիլքը...»: Ընդգծված տողերը փոխաբերությունների շարք են, որոնք պետք է ներկայացնեն ոչ միայն լճի գեղեցկությունը, այլև դրա ընկալումը մարդկանց կողմից: Եվ մի օրինակ հերոսների խոսքից. Զվարթը պատմում է Հերյանին դպրոցի իրենց գրույցների մասին. «Ո՛ր է իմանում: Մեր երկիրը կրակով և մորկով է լցված»:

Փոխաբերականության այս միտումը իր վտանգն ունի՝ այն արհեստականության երանգ է տալիս մանավանդ հերոսների խոսքին: Պետք է նկատի առնել նաև, որ հայերենը Զարյանը սովորել է հետազայում, և դա էլ իր կնիքն է դնում նրա լեզվի վրա: Բայց փոխաբերականությունը նաև շքեղություն է հաղորդում նրա լեզվին, հատկապես պոեզիայում:

Առաջ ցրված, խառնված էինք անհարազատ և թշնամի տարրերի Հետ, իսկ այսօր մի կտոր Հողի վրա միատարր մի ազգ ենք. մի ճակատի վրա կանգնած՝ նոր ոգի դարձնող, երկրի խոր մշակման միջոցով նոր աստվածների և նոր մարդկային տիպի ձգտող մի բանակ: Աշխատում ենք և սպասում, որովհետև գիտենք, որ այնտեղ, Հայրենիքի այն մասում, որ լքել ենք, ինչ որ չենք կարողանում անել մենք, անում է ինքը՝ երկիրը: Անում են մեր լեռները, մեր դաշտերը, մեր ձորերը...

Ինչպես շատ անգամ պատահական լսած մի ձայն Հանկարծ արթնացնում է մեր մեջ բարդ մի սիմֆոնիայի ամբողջ Հիշատակը, այդպես լեռան փեշից վար վազող գյուղացու այդ վերակոչումը մտքիս մեջ վերքի նման բաց է անում արևաշող Հայրենիքի Հեռավոր և երաժշտական աշխարհը: Ամեն ինչ ապրում է նրանով և նրա Հետ: Ամեն ինչ ընկնում է նրա առատ, կենդանի և գերիշխող լույսի տակ: Ու զարմանալի չէ՞ այդ... Այս երկրագնդի վրա բոլոր ապրած երկրներից Հայաստանն այն աշխարհն է, ուր ամենից քիչ են կանգ առել: Ուր չեն իսկ ծնվել, և ուր մարդիկ նայում էին ինձ և երևի շարունակում են նայել դեռ օտարի աչքերով: Եվ սակայն, ինչպես ասեմ այդ, էս նրան գիտեի նրան տեսնելուց առաջ և երբ տեսա, նա վաղուց սպասող սիրուհու նման բաց արեց ինձ այնպիսի գաղտնիքներ, որոնց մասին գաղափար չունեին և չունեն տարիներով նրա շուրջը ապրողները և նրա մարմնի գովքը հյուսողները:

Կոստան Զարյան, Սպանիա

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Կ. Չարյանը, ինչ է նրա իսկական անուն-ազգանունը:
2. Ինչ ժանրերով է ստեղծագործել Կ. Չարյանը:
3. Որտեղից է վերցված «Տատրագոմի հարսը» պոեմի նյութը, ինչ դեպք է ընկած պոեմի հիմքում:
4. Ինչ գիտեք «Նավը լեռան վրա» վեպի հրատարակման պատմությունից. Երբ, որտեղ, քանի անգամ է հրատարակվել վեպը:
5. Համառոտ ներկայացրե՞ք «Նավը լեռան վրա» վեպի սյուժեն. ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրված, ո՞վ է հերոսը, ինչ է պատահում նրա հետ:
6. Ինչ իրադարձությամբ է ավարտվում վեպը:
7. Թվարկե՞ք վեպի հերոսներին:
8. Համառոտ ներկայացրե՞ք Հերյանի և Չվարթի սիրո պատմությունը:
9. Ինչպե՞ս կբացատրեք վեպի վերնագիրը. ինչ է խորհրդանշում «Նավը»:

ՏՆՄՅԻՆ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. «Նավը լեռան վրա» վեպում, գլխավոր հերոսներից բացի, ներկայացված են նաև առանձին դրվագներում հանդես եկող հերոսներ. նշե՞ք նրանց անունները:
2. Երբ և ինչ իրավիճակում ենք հանդիպում վեպում՝
 - Դաշենկային
 - Մարկ Պետրոսին
 - տիկին Վարդուհուն

ԹԵՄԱՅԻՆ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ընտրե՞ք ճիշտ պատասխանը. Արա Հերյանը՝
 - կուսակցական գործիչ էր
 - քաղաքական գործիչ էր
 - Նավաշինարար էր
 - Նավապետ էր
2. Ո՞ր միտքն է ճիշտ.
 - Արա Հերյանը գալիս է Հայաստան, սակայն չի կարողանում իրականացնել իր երազանքները և հեռանում է:
 - Չնայած բոլոր դժվարություններին՝ Հերյանը մնում է Հայաստանում:
 - Արա Հերյանը Հայաստանում հայտնվում է ծայրահեղ թշվառության մեջ և զոհվում:
 - Արա Հերյանը բռնության զոհ է դառնում:
3. «Նավը լեռան վրա» վեպի ո՞ր հերոսին են ձերբակալում և գնդակահարում բոլշևիկները:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՐ

(1903 – 1973)

Շահան Շահնուրը գրական անունն է: Իսկական անունը Շահնուր Քերեսթեճյան է. գրական անունը իր և իր սիրելի ուսուցչի՝ Շահան Պերպերյանի անուններից է կազմել:

Շահնուրը ծնվել է Պոլսում (այժմ՝ Ստամբուլ): Ցեղասպանությունից հետո այս քաղաքում բազմաթիվ հայկական ընտանիքներ էին մնացել, որոնք հույս ունեին բնականոն կյանքով ապրել, պահպանել Պոլսի՝ հարյուրամյակների պատմություն ունեցող հայկական մշակութային ավանդները: Բայց 1922-ին սկսվեցին նոր հալածանքներ հայերի հանդեպ: Շահնուրը պատմում է, թե ինչպես մի երեկո, երբ ինքն ու քեռին՝ հայտնի գրական գործիչ Թեոդիկը, միասին խմբագրում էին Թեոդիկի գործը,



տնեցիները տազնապահար խնդրում են մարել լույսերը: Թուրք խուժանդ փողոցներն ընկած ավերում է հայերի տները: Դրանից հետո նոր արտագաղթ սկսվեց Պոլսից: Երիտասարդությունը հեռանում էր այնտեղից: Հեռացողների մեջ էր նաև Շահնուրը: Նա մեկնեց Փարիզ, այնտեղ զբաղվեց լուսանկարչությամբ:

Իր լավագույն գրական երկը՝ «Նահանջը առանց երգի», գրել է երիտասարդ տարիքում, քսանականների վերջերին: Այստեղ նա օգտագործել է իր փարիզյան տպավորությունները: Այդ վեպը համբավ ու ճանաչում բերեց նրան:

Երեսնական թվականներին նա ակտիվորեն մասնակցում է փարիզահայության գրական կյանքին, իր նման երիտասարդ մարդկանց հետ ստեղծում «Մենք» գրական խմբակցությունը, գրում այդ խմբակցության հայտարարության իր տարբերակը: «Մենք»-ի ուղղությունը թարմ հոսանք էր սփյուռքահայության գրական և հասարակական կյանքում: Մենքականները գրական երկերը գնահատում էին գրական բարձր չափանիշներով, կտրուկ մերժում կուսակցական մոտեցումները, առհասարակ քննադատաբար էին մոտենում ազգային կուսակցությունների գործունեությանը:

Շահնուրը ընկերների մեջ առանձնանում էր իր անգիշումությամբ, հաճախակի բախումներ էր ունենում նրանց հետ: Մյուս կողմից, հիվանդանում է ծանր և անբուժելի հիվանդությամբ, տասնամյակներ անցկացնում մահճակալին

գամված: Ինչ-որ պահի հեռանում է հայկական գրական միջավայրից՝ սկսելով գրել ֆրանսերեն: Ֆրանսերեն գրված գործերը ստորագրում է Արմեն Լյուբեն անունով (ինչպես տեսնում ենք, անվան մեջ արտացոլում է իր հայկական ծագումը): Այնքան լավ էր գրում այդ լեզվով, որ ստանում է ֆրանսիական ակադեմիայի մրցանակը ֆրանսերեն գրող օտարագզիների համար:

Կյանքի վերջին տասնամյակներին վերադառնում է հայությանը, գրում բազմաթիվ հուշեր ու հոդվածներ՝ շարունակելով կրթոտ, երբեմն ծայրահեղություններով համակված բանավեճը հայ մշակույթի, հայոց պատմության գնահատման շուրջը: Նա նամակագրական կապեր ուներ հայաստանցի գրողների հետ: Հատկապես երկարատև և բեղուն եղավ նամակագրությունը Գուրգեն Մահարու հետ: Նրանք տարեկիցներ էին, հայոց նորագույն պատմության շատ խնդիրների մասին ունեին միանման հայացքներ:

Շահնուրը ևս քննադատական հայացքով էր նայում մոտիկ անցյալի իրադարձություններին, դրանցում ազգային ուժերի կատարած դերին: Ընդհանրապես Շահնուրի սերնդին շատ ծանր պարտականություն բաժին ընկավ՝ վերլուծել և հասկանալ Ցեղասպանության պատճառները: Այդ սերունդը այսպես թե այնպես դեռ հիշում էր նախապատերազմյան տարիները և այդ տարիներին հայկական իրականության մեջ հնչող կոչերն ու Արևմտյան Հայաստանը ազատագրելու հավատը: Բայց պատերազմը աղետ եղավ հայ ժողովրդի համար: Անխուսափելիորեն պետք է ծագեր այն հարցը, թե ինչու ազգային կուսակցությունները, որոնք իրենց վրա էին վերցրել ազգային կյանքի ղեկավարությունը, չկարողացան գոնե մեղմել Ցեղասպանության հետևանքները: Դա զուտ տեսական խնդիր չէր այս սերնդի երիտասարդների համար, աղետի ահավոր հետևանքները նրանց աչքի առաջ էին, նրանցից շատերը այդ հետևանքները զգում էին անձամբ՝ դառնալով թափառական և հետևում թողնելով հայրենիքն ու դարավոր ավանդույթները: Երիտասարդ մարդկանց հոգիներում կուտակված դառնությունը հաճախ ելք էր գտնում ազգային ուժերի, երբեմն իր իսկ՝ ժողովրդի հասցեին ասված դառը, ծայրահեղ խոսքերում, գնահատականների միակողմանի սրվածության մեջ: Այդ խոսքերը միշտ չէ, որ ճիշտ էին ընկալվում հայրենակիցների կողմից: Շահնուրը շատ հաճախ դառնում էր հարձակումների թիրախ սփյուռքյան շրջանակներում: Դա իր հերթին դառնացնում էր նրան, հեռացնում հայրենակիցներից:

«Մենքի» համար գրված հայտարարության մեջ նա խիստ քննադատության է ենթարկում ազգային ուժերի անհեռատեսությունն ու անշրջահայեցությունը ոչ հեռու անցյալի ողբերգական իրադարձություններում.

«Կնմանեիք մանուկի մը, որ քնացող գազանի մը վրա խճաքարեր կնետնէ՝ բարկացած և դժգոհ ըլլալուն համար: Բայց նախքան այդ՝ ինքզինքը չէ պատասպարած վանդակորմին ետև: Նախքան այդ՝ չէ սորված գազանազստությունը. հասպա եթե գազանն արթննա՛ր: Արթնցալ՛»:

Գազանը թուրքական պետությունն էր: Շահնուրի այս հայացքները իրենց ձևով արձագանքում էին Չարենցի մտքերին և գնահատականներին, որոնք նա արտահայտեց հատկապես «Երկիր Նաիրի» վեպում և երեսնական թվականների պոեմներում: Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններում» և այլ գործերում ևս տիրապետողը այդ նույն հայացքն է: Այսինքն՝ հայկական կուսակցությունները չգտան այն ճիշտ ճանապարհը, որը պետք է գոնե ինչ-որ չափով զսպեր թուրքական գազանին:

Խնդիրը Շահնուրին շատ է զբաղեցրել, ավելի ճիշտ կլիներ ասել՝ շատ է տառապեցրել: Իր երկու հայտնի գործերում ևս՝ «Ավագ ուրբաթ» և «Պոյնուզլուները», այդ նույն հարցերի մասին է խորհում:

Շահնուրի տեսակետներն արտացոլվեցին **«Նահանջը առանց երգի»** վեպում: Այդ վեպը, որ գրված էր գրական փորձ չունեցող երիտասարդի գրչով, դարձավ սփյուռքահայ գրականության և ողջ հայ արձակի կարևորագույն իրադարձություններից մեկը: Վեպ, որը խորությամբ և ճշմարտացիորեն ներկայացրեց սփյուռքահայության ողբերգությունը: Իր կատարելությամբ «Նահանջը» մնաց սփյուռքահայ արձակի՝ նույն թեմային նվիրված լավագույն երկը:

Վեպի հերոսը՝ Պետրոսը, երիտասարդ լուսանկարիչ է, որը Պոլսից եկել է Փարիզ: Նրա ընտանիքը մնացել է Պոլսում: Ինքը պիտի կարողանա հարմարվել այդ մեծ քաղաքի կյանքին, այլապես կործանվելու է: Բայց դա ծանր, դրամատիկական գործընթաց էր: Պետրոսի մեջ ապրում էին իր ընտանիքի նահապետական բարքերից ժառանգած բարոյական սկզբունքները: Վեպի առաջին մասի սկզբում, որտեղ նկարագրվում է Պետրոսի մեկնումը Պոլսից, այսպիսի տողեր կան. *«Հոս կալարտի պետությունն մը, ու վերջնականապես կթուլնա թաթը տղուն պատկանած ազգին: Մեկնող երիտասարդը իր երակներուն մեջ կտանի միայն արյուն մը մաքուր ու առողջ, ինչպես այն երկինքը, որուն տակ իր առաջին շրջանն էր սկսեք»* (ուշադրություն դարձրեք ընդգծված բառերին): Բայց, մյուս կողմից, Փարիզը քաշում էր նրան իր բարքերի ազատությամբ, բազմաթիվ երիտասարդ կանանց և աղջիկների հմայքներով, որ նրանք պատրաստ էին վաճառել բոլորին, միայն դրամ լիներ:

Աշխատանք որոնելիս նա հանդիպում է մի գեղեցիկ տիկնոջ, որը սիրեկանի հետ լուսանկարչական սրահ էր պահում: Պետրոսը սիրահարվում է տիկնոջը այնպես, ինչպես կարող էր սիրահարվել մաքուր, միամիտ երիտասարդ մարդը: Նա պարզունակ հաճույքը չէր փնտրում այդ սիրո մեջ, այլ մաքուր, ուժեղ զգացմունքը: Լուսանկարչատան տիրուհին՝ Ժանեթը, կարծես թե պատասխանում է նրա զգացմունքներին: Շահնուրը հեթանոսական գույներով նկարագրում է Պետրոսի և Ժանեթի հանդիպումները: Հայկական արձակում երոտիկան դեռևս այդքան վառ գույներով չէր արտահայտվել: Այդ սիրային պատմության մեջ մենք տեսնում ենք սիրո երկու միանգամայն տարբեր ընկալում: Պետրոսի համար իրենց հանդիպումները սիրո տոն են, իսկ Ժանեթի

համար՝ սովորական մի բան, հերթական արկածը հերթական գեղեցիկ տղամարդու հետ: Հետաքրքրական է հեղինակի մի դիտողությունը կանանց հանդեպ Պետրոսի վերաբերմունքի մասին: Մինչև Ժանեթը Պետրոսը ընկերուհի էր ունեցել: Այդ կինը իսկապես սիրում էր Պետրոսին: *«Անկեղծության դեմ հայը չէր կրթած շնական կամ քիրտ ըլլալ, որով անկարող՝ այս ալ նախորդներուն պես դուրսուրջամբ լքելու»*: Պետրոսի հոգին անընդունակ էր ցինիկ, շնական լինելու մարդկանց, առավել ևս կանանց հանդեպ:

Ժանեթը չի էլ մտածում, որ իրենց սիրավեպը շարունակություն պետք է ունենա: Իսկ Պետրոսը մտածում է իրենց սիրո մասին, նա իր կյանքը այլևս առանց Ժանեթի չի պատկերացնում: Վայելքի պահերին նա Ժանեթին ասում է քնքուշ խոսքեր, որոնք իր հոգու խորքերից էին գալիս, դրա համար էլ նա միայն իր մայրենի լեզվով կարող էր դրանք արտաբերել: Այսպես բախվում են սիրո փարիզյան ժամանակակից ընկալումը, որի դեպքում սերը պարզ հաճույք է, և նահապետական-մարդկայինը, որի համար սերը կյանք է, տանջանք է, ուրախություն է... Այդպես է սկսվում բախումը Պետրոսի հայկական-նահապետական մաքուր հոգեբանության և Ժանեթի՝ փարիզյան բոլոր արատներով ներծծված, կյանքից միայն հաճույք փախցնելու հոգեբանության միջև: Հետո այդ բախումը խորանալու էր, ցնցված Պետրոսի հայացքին բացվելու էին նորանոր արատներ, որոնց կրողը իր սիրուհին էր՝ գեղեցկուհի Ժանեթը կամ Նենեթը, ինչպես փաղաքշանքի պահերին ինքը անվանում էր նրան:

Իհարկե, Շահնուրը չի պարզունակացնում Ժանեթի կերպարը: Այդ գեղեցկուհին դժվարին մանկություն է ունեցել, կյանքի հարվածներին դիմագրավելու համար դիմել է տարբեր միջոցների, դարձել Լեսբյուռի սիրուհին, սովորել խաբել, խորամանկել, անկեղծ չլինել նույնիսկ այն երիտասարդի հետ, որն իրեն այդքան անկեղծորեն սիրում է: Նա հասկանում էր, որ Պետրոս-Պիեռի պես իրեն ոչ ոք չի սիրել, և երբ ավտոաղետի հետևանքով զրկվում է ձեռքից, կորցնում գեղեցկությունը՝ իր գլխավոր զենքը, նա հասկանում է, որ միայն Պիեռի մոտ կարող է հենարան փնտրել... Շահնուրը լավ հոգեբան է, կարողանում է տեսնել և նկարագրել մարդկային հոգու դրամատիկական շարժումները:

Հայ երիտասարդը այսպես ընկնում է մեծ քաղաքի ավերող ու համահարթող գիրկը, որը նրան պետք է աստիճանաբար զրկեր ազգային դիմագծից, ազգային արժեքներից, կտրեր հայրենական հիշատակներից: Ժանեթը Փարիզի մարմնավորումն է, Փարիզի հմայքի և արատավորության խորհրդանիշը:

Կարելի է ասել, որ քսաներորդ դարի մեծ քաղաքի դեմքը հայ գրականության մեջ առաջինը ներկայացրեց Շահնուրը, և այդ պատկերը մնաց անգերազանց մեր նորագույն շրջանի գրականության մեջ:

Եվ այսպես, Պետրոսը աստիճանաբար խրվում է Փարիզի ճահիճները, վերածվում Պիեռի: Այս անվանափոխությունը (Պիեռը Պետրոս անվան ֆրան-

սիական ձևն է) շատ խորհրդանշական է: Պետրոսը մի կողմից պահպանում է բնավորության այն գծերը, որոնք ժառանգել էր իր հայկական արմատներից: Բայց, մյուս կողմից, նա աստիճանաբար խզում է կապերը Պոլսի, հայկական միջավայրի հետ: Ի վերջո, Շահնուրի վեպի հիմնական խնդիրը հենց այս հեռացումը պատկերելն է: Պետրոսը Փարիզում ունի ընկերական միջավայր՝ իր նման հայ տղաներ, որոնք թուրքական հալածանքներից պատսպարվել են այստեղ: Տարբեր մարդիկ են, տարբեր խառնվածքներով, բայց բոլորի առջև կանգնած է նույն դրամատիկական երկընտրանքը՝ մնա՛լ հայ, թե՛ անվերադարձ ձուլվել նոր միջավայրին: Պատասխանները տարբեր են:

Նրանցից ամենամաքուրը՝ Լոխումը, ամբողջ էությամբ ըմբոստանում է փարիզյան իրականության դեմ.

«Ծո, այս ինչ անաստվածային, հսկանարդկային, հրեշական բարբարոս օրենք է. ո՞ր անիծված ձեռքը արձանագրեր է գայն, ո՞ր չորնալիք ուղեղը պարտադրեր է մեր գլխին: Ես հայր մը ունիմ, ես մայր մը ունիմ, ինչո՞ւ անոնցմե հեռու մնամ, ինչո՞ւ անոնք իմ կարոտովս հյուծին, և չկարենամ վայելել անոնց մոտիկությունը: Մենք ասոնց պես չենք. մեզի համար ծնողքե ավելի մեծ ու նվիրական ի՞նչ կա. ո՞ր սերն է, որ մայրական սիրուն տեղը կրնա բռնել. մա՛յր, մա՛յր... ամեն բան է ան ինձի համար: Ես ինչո՞ւ չկարենամ Պոլիս երթալ. Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, որ պետությունը կզբաղի ինձմով, մեզմով: Բոլոր իմաստասերները, բոլոր բարոյագետները, բոլոր մարդասերները և նույնիսկ կենդանապաշտպանները պետք է թողուն ամեն ինչ ու զբաղին միայն ասով, միմիայն այս գուլումով»:

Նա երագում էր տեղափոխվել Խորհրդային Հայաստան: Բայց Հայաստանի իշխանությունները քաղաքական պատճառներով պատրաստ չէին ընդունել այդ երիտասարդ մարդկանց: Նրանց մեջ թշնամիներ էին տեսնում կամ առնվազն անվստահելի մարդկանց, որն արդար չէր և գալիս էր երեսնական թվականների խորհրդային իրականության գաղափարախոսական քարացած պատկերացումներից: Լոխումը ինքնասպանություն է գործում: Մեկ ուրիշը՝ ավելի թույլ, ենթարկվող, ամուսնանում է մի փարիզուհու հետ, որը տղամարդկանց, այդ թվում և ապագա ամուսնու ընկերների հետ իր հարաբերություններում շատ ազատ էր: Հայկական ընտանիքի օրենքները արդեն մոռացված էին:

Այս խմբի գաղափարախոսը մտածող, իրենց վիճակի դրամատիզմը լավ հասկացող Սուրենն է: Նա տեսնում է, որ իրենք բոլորը տեղի են տալիս Փարիզի ճնշմանը: Նրա հռչակավոր մենախոսությունը իրենց վիճակի բանաձևումն է: Դա, թերևս, Շահնուրի վեպը հասկանալու լավագույն բանալին է: Իրենք ճակատագրի կամքով նետված են այդ աշխարհը և ի վիճակի չեն պայքարելու դրա գայթակղությունների դեմ: Ահա այդ մենախոսությունը.

«Ի՛նչ պետք, ի՛նչ պետք սակայն ըսել այս բոլորը, որ արդեն իսկ այնքան անգամներ կրկնված ըլլալու դժգունությունը ունի: Ի՛նչ պետք մա-

նախանդ զբաղիլ պարագաներով, որոնց լավագույն դարմանը բառերուն և խոսքերուն ուժը չի կարող կազմել բնավ: Ոչ թե որովհետև այժմ պատերազմ կա ու կռիվ, ոչ թե որովհետև այժմ ճակատամարտ կա ու կենսապայքար, այլ որովհետև կա բան մը ավելի ճակատագրական, ավելի աններող, կա բան մը սհեղ, անդիմադրելի, որ իր անունը կոռնա բոլոր քառուղիներեն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն: Կռիվը սրբազան բան է, ճակատամարտը՝ երբեմն նույնիսկ օգտակար. անոնցմե ազգ մը դուրս կուգա պարտված կամ հաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգա: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտույտ տվող զառիթափին վրա այս նահանջը կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան: Իրավ, բազմաթիվ չեն այսպիս զարգացած անտարբերներ, սակայն անդին կան ամբոխները անտաշ, անմիտ և ուժացած մարդոց, որոնք կարծես բնազդաբար, կարծես արյունով ու ծուծով ճիշտ նման են նախորդին: Անոր պես առաջինը կրլլան ընկրկող, մոռացող, ուրացող: Եվ կկազմվի սհեղ զանգվածը անոնց, որոնք կնահանջեն ու ու այդ մեծ հոսանքին մեջ կբշեն կտանին մյուսներն ալ, ցանցառ բացառություններն ալ:

Կնահանջեն ծնողը, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ. մեղա՛, մեղա՛ Արարատին:

Եղան հայեր, որոնք իրենց մոռթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ, որոնք տվին հավատը, կուսություն. եղան վատեր, որոնք լքեցին տուն, տեղ, երկիրը. եղան դեռ վատեր, որ ուրացան ազգ ու լեզու, և հերոսներ, որոնք տվին արյուն, կյանք, օր ու արև: Իսկ մենք կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա, մեղա Արարատին»:

Բայց հենց այս Սուրենը առաջիններից մեկն է վճռականորեն կապերը խզում հայ գրի ու գրքի հետ: Պետրոսը, որն այնքան ոգևորվել էր Սուրենի գրքի հրատարակությամբ, ցնցվում է, տեսնելով, որ գիրքը ֆրանսերեն է, և Սուրենը նրան բացատրում է, որ հայերեն, մեկ է, չէին կարդալու: Եվ ոչինչ, որ ֆրանսերենում չկա «կարոտ» բառը... Շահնուրը իր հերոսներին չի բաժանում լավ և վատ հայերի, նրանք բոլորը երիտասարդ հայ տղաներ էին, որոնք կարոտում էին իրենց ծնողներին, իրենց նախորդ կյանքը: Բայց փարիզյան իրականությունը ավելի զորեղ էր նրանց հայրենասիրական տվայտանքներից:

Այս երիտասարդների կյանքը իրապես նահանջ էր առանց երգի, այսինքն՝ նրանք նահանջում էին ոչ թե նորից իրենց դիրքերը վերադառնալու, պայքարը

շարունակելու համար, ինչպես հաճախ լինում է պատերազմներում: Նրանց ազգային ինքնությունը պարտված էր, կյանքը նահանջ էր առանց երգի, այսինքն՝ պարտված բանակի նահանջ էր: Շահնուրի վեպի վերնագիրը մեծ և տխուր ընդհանրացում էր:

Այդ ընդհանրացման մեջ գույները թերևս մի քիչ խտացված էին: Հայկական սփյուռքը գոյատևում է արդեն տասնամյակներ: Բայց իրողությունը ճիշտ էր նկատված: Օտար միջավայրում, օտար բարքերի և մշակույթների ազդեցության մթնոլորտում անհնար էր պահպանել ազգային դեմքը: Ժամանակակից քաղաքակրթությունը ավելի հակված է ազգային առանձնահատկությունների համահարթման, և դա հատկապես մեծ քաղաքներում շատ սուր է զգացվում: Սփյուռքահայ զանգվածները պայքարում են ուժացման (ձուլման) դեմ: Նրանց պայքարը արժանի է հիացմունքի և պաշտպանության: Բայց կան օրինաչափություններ, որոնց դեմ պայքարը միայն ժամանակավոր հաջողություններ կարող է ունենալ: Ամեն ժողովուրդ կարող է հարատևել միայն իր հողի վրա, իր հայրենիքում:

Պատահական չէ, որ Շահնուրի վեպի անվանումը ծնեց սփյուռքահայ գրականության մի ամբողջ հատվածի բնորոշումը՝ նահանջի գրականություն: Գերազանցապես Փարիզում հիմնավորված գրողները՝ Շահնուրը, Հրաչ Զարդարյանը, Զարեհ Որբունին և ուրիշներ, պատկերում էին օտար երկրներում ապաստանած հայության կյանքը նույն դիտակետից, ինչ որ Շահնուրը: Նրանք պատկերում էին այդ կյանքը իբրև տեղատվություն ապրող, մեծ քաղաքի օրենքներին ենթարկվող մի իրականություն:

Շահնուրը հեղինակ է նաև պատմվածքների մի շարքի, որի վերնագիրն է «Հարալեզներուն դավաճանությունը»: Այս շարքի առանցքը ևս սփյուռքում հայտնված հայ մարդկանց ճակատագրերն են: Այստեղ է «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքը՝ Շահնուրի ամենահայտնի գործերից մեկը: Պատմվածքը շատ կարևոր է մի քանի առումներով: Այն ցույց է տալիս, թե ինչ սեր ու խոնարհում ուներ Շահնուրը իր ժողովրդի, նրա բարոյական արժեքների հանդեպ, և եթե նա ծայրահեղ բաներ էր ասում և գրում երբեմն, դա ոչ թե սիրո պակասից էր, այլ խոր սիրուց, այդ ժողովրդի ճակատագիրը ամբողջ սրտով, ամբողջ էությանմբ վերապրելուց:

Պատմվածքը պատմությունն է մի հայ կնոջ՝ Եպրաքսե հանրմի, որը տղաների հետ Պոլսից տեղափոխվել է Փարիզ և ոչ մի կերպ չի կարողանում հաշտվել մեծ քաղաքի բարքերի, հարաբերությունների անսրտության, հաշվենկատության հետ: Երբ տրամվայում տեսնում է երիտասարդ տղային ու հասկանում, որ հայ է, չի կարողանում անտարբեր մնալ, «քաղաքավարի լինել», այլ սկսում է հարցուփորձ անել, մայրաքաղաքի դիտողություններ է անում նրան եղանակին հարմար չհագնվելու համար, իր տղաների մասին է պատմում: Այնինչ հայ երիտասարդը այդ օրը պատրաստվում էր ինքնասպանություն

գործել: Փարիզը, ըստ էության, սպանել էր նրան, և հայ կնոջ այդ սրտագին, անկեղծ վերաբերմունքը հուզում է երիտասարդին: Մի պահ նա գտնում է այն, ինչ կորցրել էր Փարիզ գալով: Ահա այդ Եպրաքսե հանըմը «պճեղ մը անուշ սիրտ» էր, որը, դժբախտաբար, ի վիճակի չէր փրկելու տղային, «անուշցնելու» մեծ և անսիրտ քաղաքը... Այս հակադրությունը շատ բնորոշ է Շահնուրի մտածողությանը: «Նահանջի» մեջ էլ հեռվում գտնվող հայրենիքը միշտ հակադրվում է Փարիզին:

Կարելի է և պետք է ձեզ գլխալ, բայց չեմ կրնար սիրել ձեզ: Գիտեմ, թե ձենե և շատեր (գրեթե բոլորդ) բարի նպատակներով տողորված էիք, բարի կամեցողություն ունեիք երբեմն և կսիրեիք Հայր: Բայց ատիկա բան մը չարդարացներ: Այն որ ազգի մը ճակատագրի Հետ կիսաղա, այն որ ժողովուրդի մը պատասխանատվությունը վրան կառնե, ան կրնա անբարոյական ըլլալ, կրնա սրիկա ըլլալ, կրնա վատ ըլլալ, բայց պետք է որ միտք ունենա և Հաջողի: Վայրենի անասուններն ալ լավ զգացումներով են տողորված երբոր ուրիշ կենդանիներ կբզբտեն: Եվ դուք մեզ բզբտեցիք:

Ուղեցի գտնել լուծումը այս բոլորին, ուղեցի գտնել լուծումի մը Հոյսը: Բայց ինչպես այն մանչուկը, որ նախ մեղմաձայն «մայրիկ» կպռուա, և Հետո ձայնը կբարձրացնե կոկորդը պատռելու աստիճան, որովՀետև ամեն րոպե կանդրադառնա, որ իրապես և վերջնապես կորսված է անտառի մեջ, ահա այդ մանչուկի նման ես աղաղակեցի: Հետո սկսա վազվտել ամեն ուղղությամբ, ինկա ցախերու, մացառներու մեջ, զարնվեցա ծառերու, արյունեցա: Արյունես կուրցած՝ եղա անգուլթ. ախ Հոյս մը, Հոյս մը... «մայրիկ, մայրիկ»:

Շահան Շահնուր, «Ավագ ուրբաթ»

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Ծ. Շահնուրը, ինչ է նրա իսկական անուն-ազգանունը:
2. Համառոտ ներկայացրե՛ք «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքների ժողովածուն. ինչ պատմվածքներ են գետեղված, որն է այնտեղ արծարծված հիմնական թեման, ովքեր են հերոսները:
3. Ինչ պատմություն է ընկած «Նահանջը առանց երգի» վեպի սյուժեի հիմքում:
4. Ո՞վ էր Պետրոսը. համառոտ ներկայացրե՛ք նրա կյանքի ուղին:
5. Ո՞վ էր Լեքայուռը, ինչ խնդիր կար նրա և Պետրոսի միջև:

6. Ի՞նչ ավարտ է ունենում Պետրոսի և Նենեթի սիրո պատմությունը:
7. Փորձե՞ք բացատրել վեպի վերնագիրը. ինչո՞ւ՝ Նահանջ առանց երգի, ինչի՞ց էին Նահանջում հերոսները:
8. Նշե՞ք վեպում գործող հայ երիտասարդների անունները: Նրանցից ո՞վ չի Նահանջում:
9. Ինչպե՞ս է ավարտվում վեպը:

ՏՆՄՅԻՆ ՍՈՍՑՍԱՐԱՆՔՆԵՐ


1. Ի՞նչ Նամակ էր ուղարկել Պետրոսին մայրը, ի՞նչ էր ուղարկել Նամակի հետ, ի՞նչ իրավիճակներում է հերոսը հիշում Նամակի մասին:
2. Օգտվելով վեպի բնագրից՝ ներկայացրե՞ք Լոխումիին. ի՞նչ էր իսկական անունը, ինչո՞ւ էին նրան այդպես անվանում, ի՞նչ է պատահում նրա հետ:

ԹԵՄԱՏՎԻԿ ՍՈՍՑՍԱՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղի՞ց էր Փարիզ եկել Պետրոսը.
 - Հայաստանից
 - Պոլսից
 - Ռուսաստանից
 - Հունաստանից
2. Վեպի ո՞ր հերոսի խոսքերն են՝ «ճահիճները չորցնենք, ջրանցքներ բանանք».
- Լոխումի
 - Սուրենի
 - Պետրոսի
 - Նենեթի
3. Նշվածներից ո՞վ «Նահանջը առանց երգի» վեպի հերոսներից չէ.
 - Լեքսյուն
 - Հրաչ
 - Չարեհ
 - Չվարթ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

(1915 – 1984)



Հովհաննես Շիրազը (Օնիկ Կարապետյան) ծնվել է Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Հորը սպանել են թուրքերը: Ընտանիքն այնքան աղքատ էր, որ մայրը ստիպված է եղել որդուն որբանոց տալ: Սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Այնուհետև իրեն ամբողջովին նվիրել է գրականությանը:

Տպագրվել սկսել է շատ վաղ: 1935-ին լույս է տեսել նրա «Գարնանամուտ» ժողովածուն, որը միանգամից բանաստեղծի համբավ է բերել Շիրազին: Գրական անունն արդեն բնութագրական էր Շիրազի ստեղծագործության համար: Շիրազը քաղաք է Իրանում՝ հայտնի իր վարդերով: Բանաստեղծն այդ անունով ազդարարում էր իր բանաստեղծության քնարական ուղղվածությունը:

Ինչ էր կատարվում այդ տարիներին Հայաստանի գրականության մեջ: Հեղափոխական ոգևորությունն իր տեղը զիջել էր բնականոն կյանքին ու առօրյային, հեղափոխական երգերը այլևս չէին կարող բավարարել մարդկանց: Հասունանում էր նոր բանաստեղծության՝ մարդկային հավերժական զգացմունքների և ապրումների բանաստեղծության անհրաժեշտությունը: Շիրազն ահա հենց այն բանաստեղծն էր, որն այդ պահին պետք է ասպարեզ գար: Նրա բնատուր մեծ տաղանդը ամենաճիշտ արձագանքն էր ժամանակի տրամադրությունների: Ծիշտ է, պաշտոնական քննադատությունը, կուսակցական ղեկավարությունը շարունակում էին խոսել հեղափոխության, քաղաքացիական երգերի մասին, բայց բոլորն էլ զգում էին բանաստեղծության թարմացման անհրաժեշտությունը: Դեռ Չարենցն էր քսանականների կեսերից դնում այդ խնդիրը: Շիրազն, ուրեմն, իր մեծ տաղանդով եղավ առաջնեկը այն նոր բանաստեղծության, որի գալուն սպասում էին մարդիկ:

Դեռ 1935թ. Ալեքսանդր Շիրվանզադեն նկատել է. «Ուշադրություն պիտի դարձնել այս պոետի վրա: Պիտի դաստիարակել նրան, մեծ ապագա է խոստանում: ...Ընդհանուր աղմուկի մեջ ժողովրդական լիրիկա է քերում»: Արդեն իր երգերի ընդգծված քնարականությամբ Շիրազը շահեց ընթերցողների համակրանքը: Առաջին իսկ բանաստեղծություններով նա հաստատեց իր մեծ տաղանդը:

Գրական ճանապարհի սկզբում և հետագայում նրան աջակցեց իր մեծ հայրենակիցը՝ Ավետիք Իսահակյանը: Իսահակյանի վերաբերմունքը միայն հայրենակցությամբ չէր պայմանավորված: Շիրազը իր տաղանդի բնույթով շատ մոտ էր Իսահակյանին: Նրա ամբողջ ստեղծագործության վրա հստակորեն զգացվում է Իսահակյանի բարերար ազդեցությունը: Երկու բանաստեղծներին էլ բնորոշ է քնարական վարար տարերքը: Շատ են ընդհանուր մոտիվները նրանց երգերում:

Բայց Շիրազի պոեզիան ի՞ր ժամանակի ծնունդն էր: Այդ բանաստեղծությունը երբեմն ժամանակավրեպ են համարել: Սակայն Շիրազի երգերը այդպիսի համակրանք չէին շահի, եթե իր ժամանակի արտահայտությունը չլինեին: Պատերազմի, Ցեղասպանության, հեղափոխության փոթորիկներից հետո մարդիկ կարիք ունեին մարդկային պարզ ու բնական զգացմունքների, քնարականության, և Շիրազը բերում էր հենց այդ ամենը: Նրանից հետո եկողներն էլ նույն զգացմունքներն էին երգելու: Շիրազը պարզապես ավելի անգիջող էր, ավելի ամբողջական ու տարերային իր բանաստեղծական համակրանքներում: Նրա այս բանաստեղծական սկզբունքայնությունը ծնունդ էր տալիս նաև կրկնությունների, պատկերավորության չարաշահումների, որոնք նշվել են ժամանակի քննադատության կողմից: Բայց այն լավագույնը, որ ստեղծեց Շիրազը, դարձավ հայ քնարերգության բարձրագույն նվաճումներից մեկը:

Բնության երգը: Շիրազի տաղանդի կարևորագույն եզրերից մեկը բնության խոր զգացողությունն է: Նրա քնարականությունը անխզելիորեն կապված է բնության հետ, մի գիծ, որ գալիս է հայ միջնադարյան քնարերգությունից: Հենց իր առաջին ժողովածուն բացող «Գարնանամուտ» բանաստեղծությունը ծրագրային հայտարարության (դեկլարացիայի) արժեք ուներ: Շիրազը բանաստեղծին տեսնում է իբրև բնության ոգու՝ զարդարված ծաղիկներով:

*Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,—
Ու քայլեցի խայտալուով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր.
— Ի՞նչ թարմություն,— ասացին,— ի՞նչ թարմություն,— ու բացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին*

*Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներից՝ կանցներ զմրուխտ հեքիաթով,
Երկրեերկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:*

Ձեր առջև է կարծես բնության ոգին, հայկական Պանը (հին հույների դիցաբանության մեջ Պանը բնության ոգին էր), նրա պես զարդարված բնության հրաշալիքներով: Բանաստեղծությունը ներծծված է անսահման հրճվանքով, որով երիտասարդ հոգին համակվում է զարնամամուտին: Այդ հրճվանքը իր գուտ անձնական զգացմունքը չէ, երիտասարդը դա բաժանում է բոլոր մարդկանց: Հոգևոր բարիքները բոլորին տալու, բոլորին ուրախացնելու ցանկությունը Շիրազի լավագույն գործերի բնորոշ գիծն է: «Թագադրումը» դարձյալ զարնան գովերգ է, և դարձյալ Շիրազի քնարական հերոսը ուզում է իրեն թագադրել զարնան թագավոր՝ մարդկանց ուրախություն և երջանկություն պարգևելու համար: Բնությունը միշտ եղել է նրա գլխավոր թեմաներից մեկը: Շիրազի քնարական հերոսը ոչ թե ձգտում է աշխարհի ու մարդկանց արատներից թաքնվել բնության հեռուներում, այլ բնության գեղեցկություններով գեղեցկացնել մարդու կյանքը: Ահա ևս մի գեղեցիկ բանաստեղծություն այդ նույն ցանկությամբ.

*Գարունն արևով ժպտաց ամենքին,
Բացվեցին բոլոր դռները գարնան,—
Իմ դուռն էլ խուժեց գարունը կրկին,
Բայց սիրտս այսպես ողջունեց նրան:—
— Գարուն, արևդ տա՛ր աշխարհներին,
Ինձ մի մանուշակ թող մնա միայն...*

Բայց Շիրազի աշխարհընկալումն ավելի լայն էր ու համապարփակ: Մերը, կյանքի և մահվան խնդիրները, իր հայրենիքի ճակատագիրը, մարդկության ապագան՝ այս բոլորի մասին Շիրազը գրել է և հաճախ այնքան լավ է գրել, որ շարժել է ոչ միայն ընթերցողների, այլև իր ավագ ու կրտսեր ժամանակակիցների հիացմունքը:

Սիրո երգը: Սիրո մեջ նա նույնպես առավելապաշտ է, ինչպես Իսահակյանը: Երագում է մեծ, անդավաճան սեր: Այդպիսի սեր է պատկերում «Միամանթո և Խջեզարե» պոեմում, որը գրվել է ժողովրդական ավանդության հիման վրա և անմիջապես շահել ընթերցողների խոր համակրանքը: Շիրազը պատմում է հայ տղայի և քուրդ աղջկա սիրո մասին: Այստեղ նա լայնորեն

օգտագործել է ժողովրդական բանահյուսության տարրերը: Հատկապես երգա-
յին-քնարական հատվածները համակված են ժողովրդական զգացողություն-
ներով: Պոեմի քնարական հատվածների հիման վրա կոմպոզիտոր Վլադիլեն
Բալյանը գրել է երգեր, որոնք մեծ ժողովրդականություն ձեռք բերեցին:

Շիրազը երգում է սիրո զգացմունքի ամենատարբեր երանգները՝ վայելքը,
եսասիրության և անհավատարմության պատճառած ցավը, տխրությունը,
կարոտը:

Սիրո կարոտի բյուրեղյա արտահայտություն է այս բանաստեղծությունը.

*Որտե՞ղ ես այժմ, հեռավոր իմ վիթ,
Արդյոք զգո՞ւմ ես, որ ինչ-որ մի սիրտ
Այրվում քեզ համար, մոխրանում տխուր,
Նորից է ծնվում կարոտից վճիտ,—
Նորից այրվելով սպասում գալուդ,
Նորից է կանչում և՛ ձեզ, ի՞մ հույսեր,
Ե՛վ ձեզ, երազնե՛ր, ետ բերեք անսուտ
Իմ ջահելության ցնորքն անստվեր...*

Մոր կերպարը: Մորը նվիրված բանաստեղծությունները Շիրազի ամե-
նասիրված գործերից են: Շարունակելով Ավետիք Իսահակյանի քնարեր-
գության գլխավոր թեմաներից մեկը՝ Շիրազը իր գույներն է բերում այդ
թեմային: Յոթերորդ դասարանում դուք արդեն ծանոթացել եք Շիրազի
ամենակատարյալ բանաստեղծություններից մեկին՝ «Ձյուն է իջնում,
կուտակվում», որի մեջ նուրբ գույներով արտացոլված է որդիական սերը մոր
հանդեպ: Արտաքնապես ձմեռային փոքրիկ բնակար՝ այն իր մեջ ունի
որդիական սիրո, պաշտամունքի, կարոտի ողջ խորությունը:

Ահա և մի ուրիշ բանաստեղծություն.

*Մայրս՝ փոքրիկ, մայրս՝ խեղճ,
Մայրս՝ մի մայր հասարակ,
Մայրս այս մայր երկրի մեջ՝
Արևի դեմ մի ճրագ:*

*Բայց արևի լույսի տակ,
Երբ ցավեր եք ինձ բերում,
Սրտիս մռայլն անհատակ՝
Այն խեղճ ճրագն է ցրում:*

*Մայրս՝ փոքրիկ, մայրս՝ խեղճ,
 Մայրս՝ մի մայր հասարակ,
 Մայրս՝ մի բուռ սրտիս մեջ՝
 Գիշեր ու զօր՝ արեգակ:*

Ինչպես տեսնում եք, Շիրազը իր բանաստեղծությունը կառուցել է ճրագ-արեգակ հակադրության վրա: Մայրը ընդամենը ճրագ է արևի համեմատությամբ, բայց նա արեգակ է իր որդու համար, ինչքան էլ արտաքնապես փոքրիկ ու խեղճ լինի:

Հակադրությունները մեծ դեր են խաղում նաև «Մայրս» բանաստեղծության մեջ.

*Մեր հույսի դուռն է մայրս,
 Մեր տան մատուռն է մայրս,
 Մեր օրօրոցն է մայրս,
 Մեր տան ամրոցն է մայրս,
 Մեր հերն ու մերն է մայրս,
 Մեր ճորտն ու տերն է մայրս,
 Մեր տան անշուքն է մայրս,
 Մեր վեհաշուքն է մայրս,*

.....

*Մեր տան ճրագն է մայրս,
 Մեր արեգակն է մայրս,
 Ախ, մեր տան Սիսն է մայրս,
 Մեր տան Մասիսն է մայրս,*

.....

*Մայրս, մեր հացն է մայրս,
 Մեր տան աստվածն է մայրս...*

Մայրական հատկանիշները կարծես ասվածով չեն ավարտվում. մոր նկատմամբ եղած խոր սերը որդուն ստիպում է անվերջ համեմատություններ փնտրել մորը բնութագրելու համար, և բարձրակետը դառնում է վերջին տողը՝ «Մեր տան աստվածն է մայրս...»:

Վաղուց նկատվել է, որ եթե Իսահակյանը իր երգերում շեշտը դնում է մայրական սիրո ուժի վրա, ապա Շիրազը ավելի ընդգծում է որդիական սերը մոր հանդեպ: Երկու դեպքում էլ բարձրացվում է մոր կերպարը՝ որպես զորեղ և անաղարտ սիրո ու նվիրվածության խորհրդանիշ:

Շիրազը բազմաթիվ բանաստեղծություններ է նվիրել նաև հորը: Հայրը նրա բանաստեղծություններում ներկայանում է իբրև հողի լեզուն լավ հասկացող, հողն ու բնությունը սիրող մարդ, բարության ու սիրո մարմնացում: Շիրազի հորը սպանել են թուրքերը, երբ Շիրազը դեռ երեխա է եղել, և սա խոր տխրության երանգ է տվել նրա բանաստեղծություններին, առիթ դարձել հայոց Յեղասպանության թեմայի նոր արձարծումների:

Հայրենիքի երգը: Շիրազն այն հայ բանաստեղծներից է, որոնց ստեղծագործության մեջ հայրենիքի թեման կենտրոնական տեղ է գրավում: Բանաստեղծություններից մեկում գրում է.

*Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից, թե սիրտս ճեղքես,
Դրոշի բոցը պիտի հուրհրա:*

*Ձեմ ուզում գողալ իմ սիրո մասին,
Սակայն, իմացիր, հայրենի՛ք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:*

*Ես ամբողջովին քոնն եմ, հայրենի՛ք,
Եվ մոմի նման, ճամփեքիդ վրա,
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա:*

Այս զգացմունքը ուղեկցում է Շիրազին նրա ողջ ստեղծագործական կյանքում: Թերևս առաջին հերթին հայրենեագությունն է նրան այդքան սիրված դարձրել մեր ժողովրդի մեջ:

Շիրազին բնորոշ է հավատը հայրենիքի ապագայի հանդեպ: Շատ դառնացած է հայոց պատմությամբ, Յեղասպանությամբ, բայց միշտ վստահ է իր երկրի ուժին: Այդ հավատի լավագույն արտահայտություններից մեկն է «Վերելք» («Հայ ժողովրդի երգը») բանաստեղծությունը: Այդ հավատը նրան ուժ է տվել գրելու իր հռչակավոր «Էքսպրոմտը» («Մենք խաղաղ էինք մեր լեռների պես»), որը Երկրորդ համաշխարհային (Հայրենական) պատերազմի ծանր տարիներին գրված լավագույն հայրենասիրական բանաստեղծություններից մեկն է: Շիրազը վստահ է, որ իր հայրենիքի բոլոր թշնամիները ի վերջո պետք է պատժվեն, որովհետև հայ ժողովուրդը երբեք զավթիչ ու հարստահարիչ չի եղել ուրիշ ժողովուրդների համար:

Շիրազի հայրենասիրությունը չի վերածվում ատելության ու թշնամանքի ուրիշների հանդեպ: Հայը միշտ պատրաստ է հակահարված տալու թշնամիներին, բայց և պատրաստ է բարեկամությանը պատասխանել բարեկամությամբ: Ահա նրա լավագույն բանաստեղծություններից մեկը.

*Դուք ո՞ր երկրից կգաք, հովեր,
Այսքան քնքուշ ու մեղմ այսքան,
Ո՞ր լեռներից կգաք, հովեր,
Համբույրի պես քրոջական,—
Այնքան մեղմ եք, հեռվի հովեր,
Կարծես շունչն եք քնած մանկան:*

*Մեր լեռներից, հեռվի հովեր,
Համբույր տարեք ձեր լեռներին,
Վարդերի բույր տարեք, հովեր,
Մեր դաշտերից ձեր դաշտերին,—
Բայց թե մի օր, հեռվի հովեր,
Հողմեր բերեք մեր լեռներին,—
Մեր ամպերը՝ մեր սարերից՝
Շանթ կբերեն ձեր լեռներին,
Շանթ կբերեն մեր լեռներից,
Մահ կսփռեն մեր դաշտերին,
Ձեր դաշտերին, ձեր լեռներին,
Ձեր արևին, ձեր աշխարհին...*

*Մեր լեռներից, հեռվի հովեր,
Համբույր տարեք ձեր լեռներին,
Համբույր տարեք,
Գարուն տարեք,
Արև՝ տարեք աշխարհներին:*

Շիրազի այս լայնախոհությունը հոգեհարազատ է հայկական ժողովրդական էպոսի՝ «Սասնա ծռերի» տրամադրություններին:

Շիրազի հայրենասիրական քնարերգության ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը մեր ժողովրդի կորցրած հողերի, Արևմտյան Հայաստանի ճակատագրի թեման է: Վստահորեն կարելի է ասել, որ Արևմտյան Հայաստանի թեման քսաներորդ դարի հայ բանաստեղծության մեջ ամենից ուժեղ հնչել է Շիրազի ստեղծագործության մեջ:

Նրա գործերում ավելի ու ավելի մեծ տեղ գրավեցին Արարատ լեռը, Վանա լիճը, Սիփան սարը և Արևմտյան Հայաստանի այլ անկյուններ, որոնք միշտ թանկ են եղել հայ մարդու սրտին, բայց հիմա դատարկված են հայությունից, կտրված՝ Հայաստանի Հանրապետությունից: Արդեն «Սիամանթո և Խջեզարե» պոեմում գործողությունները կատարվում են Սիփան սարի լանջին: Իսկ հայտնի «**Ո՞րն է, բաբո...**» բանաստեղծության մեջ ուղղակի խոսվում է մեր հայրենիքի այդ անկյունների մասին.

– *Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք:*
– *Էն, որ ունի բարձր երկինք,*
էն, որ ունի ամպ ու արև,
Յուր թագարժան գլխու վերև:
Էն, որ ունի լեռն Արագած՝
Հայ թագուհու զմրուխտ հագած,
Որ կսպասե իր արքային,
Արքան՝ գերի այլոց գահին:
Էն, որ տեսքով իր Սևանի
Մազերն արձակ ու գեղանի,
Լացող հարսի կնճանի,
Որ կսպասե ողջ ազգովին
Իր մեծաքույր Վանա ծովին:
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Հանց թագավոր Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը՝ մրմուռ,
Գլուխը վեր, դրախտի դուռ:
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթնում,
Որ ավերակ, բայց դեռ դարեր
Լուռ կաղոթեն երկինքն ի վեր...

Այս բանաստեղծությունը Հայաստանի մի յուրատեսակ պատմություն ու աշխարհագրություն է, որտեղ ամբողջական Հայաստանն է՝ առանց արևելահայ և արևմտահայ բաժանումների, որոնք արյունոտում էին ինչպես Շիրազի, այնպես էլ բոլոր հայ մարդկանց սրտերը: Հայ բանաստեղծության մեջ թերևս ոչ ոք այնքան ինքնամոռաց չծառացավ այդ անարդար բաժանման դեմ, ինչքան Շիրազը: Սա այն իրողություններից էր, որը Շիրազին այնքան սիրելի դարձրեց ժողովրդին:

Նրա ամենասիրված բանաստեղծություններից է այս մեկը.

Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:
Աղբյուրների պես աղջիկները գան՝
Ես ծարավ սրտով չնայեմ նրանց,
Տուն կանչե մորս ձայնը իրիկվան՝
Զպոկեմ սարից աչքս կարոտած:
Եվ նստած լռին այդ քարի վրա՝
Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,
Եվ մամռած նայեմ իմ Արարատին:

Արարատը և ողջ Արևմտյան Հայաստանը դառնում են Շիրազի ամենամեծ կարոտներից մեկը: Եվ պատահական չէ, որ բանաստեղծը կտակում է իր որդուն՝ գերությունից փրկել Արարատը («Կտակ»).

Որդիս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, իմ բալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ, թե խինդի մեջ քո գալիք.
Գանձեր չունեմ, բայց գանձն ի՞նչ, գանձը լույսն էր աչքերիս,
Դու ես միակ իմ գանձը, դու ես գանձը գանձերիս:
Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր,—
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեր մեծ դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում.
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,
Ու կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարության ուժն է ծով,
Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմոսի:

.....

*Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:*

Դժվար է այսօրվա աշխարհում ցույց տալ մեկ ուրիշ ժողովուրդ, որի ազգային խորհրդանիշը մնացած լինի այլ պետության սահմաններում, իսկ Մասիսը մեր երկրի և ժողովրդի խորհրդանիշն է՝ Յեղասպանության և Թուրքիայի զավթողական քաղաքականության հետևանքով Թուրքիայի սահմաններում մնացած: Դրա համար է Շիրազը շեշտում, որ այդպիսի կտակ միայն հայ հայրը կարող է թողնել իր որդուն:

Ունի պոեմների մի ամբողջ շարք՝ նվիրված Հայաստանին՝ «Երգ Հայաստանի», «Անի», «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը», «Հայոց անունները», «Մեր գյուղերի անունները» և այլն: «Հայոց հրաշքը» պոեմը նվիրված է Մեսրոպ Մաշտոցին և հայ գրերի գյուտին: «Հայոց դանթեականը» նվիրված է Յեղասպանությանը:

Շիրազի ամենահայտնի գործերից մեկը «**Բիրլիական**» պոեմն է, որը փիլիսոփայական երկ է՝ նվիրված մարդուն, նրա ուժին և հնարավորություններին: Դա քնարական պոեմ է, որի մեջ Շիրազը պատմում է աշխարհի ստեղծման մասին իր բանաստեղծական ընկալումով: Աստված ստեղծում է երկիրն ու կենդանիներին, բաժանում նրանց իր բարիքները.

*Վեհուժյան խինդը լեռներին տվեց:
Լույսի հրճվանքը տվեց երկնքին,
Կապույտ ծիծաղը ծովին ծավալեց,
Ճերմակ ժպիտը սփռեց ձյուններին:*

Այսպես, իրեն հատուկ շքեղ ոճով Շիրազը նկարագրում է նորաստեղծ աշխարհի հրաշալիքները: Բայց մի բան Աստված չգիտի ում տա՝ վշտի ծովը: Սկսում է բաժանել կենդանիներին ու բնությանը՝ չեն դիմանում: Կակաչների սիրտը սևանում է, գազանները կորցնում են իրենց լեզուն, լեռները ցավից հառաչում են հրաբուխներով, իրենց լանջերին բացված խոր վիհերով, դաշտերը ծածկվում են անապատներով, ծովը ցավից ալեկոծվում ու մռնչում է... Եվ Աստված մտածում է, որ միայն մարդը կարող է դիմանալ ցավին: Ու որոշում է ցավը տալ մարդուն: Մարդը պայքարում է կատաղորեն, չի հանձնվում: Միայն նա է կարողանում դիմանալ ցավին և ոչ միայն դիմանում է, այլև ստեղծագործում՝ իր խելքով ու արարումով դիմագրավելով դրան: Պոեմի բնաբանը, որ բանաստեղծը վերցրել է մոր խոսքերից, մարդու այդ ուժի վկայությունն է,

Շիրազը զարգացրել-ծավալել է ժողովրդական իմաստությունը, որն արտացոլված է այդ խոսքերում՝

*Ցավը տվեց սարերին՝
Սարերը շտարան,
Ցավը տվեց մարդուն՝
Մարդը տարավ:*

Եվ երբ Աստված տեսնում է մարդու այդ հզոր համբերությունն ու ուժը, ասում է նրան.

*– Դու,— ասաց մարդուն,— վշտին հաղթեցիր,
ժառանգիր ահա տիեզերքն իմ մեծ,
Քո մտքի թագով իր արքան դարձիր:
Վշտին հաղթողը իշխանն է խինդի,
Իշխիր գաղտնալից տիեզերքն համայն,
Ինքդ ստեղծիր հողը դրախտի,
Եվ սնիր, որ հար վայելես նրան,
Որ վշտիդ գետերն էլ շծովանան:
Իշխիր ծովերի մռայլ հատակում,
Իշխիր ինքդ քեզ ու վագրին իշխիր,
Իշխիր դու երկրում, իշխիր երկնքում,
Մրջյունից մինչև աստղերին իշխիր:
Եվ ինչ որ քո դեմ գաղտնիք թողեցի՝
Պեղիր տիեզերքն՝ հայտնութուն դարձրու,
Դու՝ հրաշքներից հրաշքն իմաստուն,
Թող վիշտդ ու խինդդ անբաժան լինեն՝
Ինչպես կակաչի կարմիրն ու սևը,—
Եվ թող հավիտյան ախոյան՝ բախվեն
Վիշտն ու խինդը քո՝ քո մահն ու սերը...*

Դժվար չէ տեսնել, որ այս խոսքերով Աստված կարծես իր լիազորությունները հանձնում է մարդուն՝ նրան վստահելով երկրի ու տիեզերքի ճակատագիրը: Այս խորհրդածությունները տանում են մի հետաքրքրական եզրակացության.

*էլ չապավինեց նա ոչ մի աստծո
Ու ոչ մի ոգու, որ իբր ահի
Տեսիլն էր անգո՝ այս տիեզերքում.—*

.....

Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում:

Այսպես Շիրազը աստվածացնում է մարդուն: Այս պոեմը բարձր գնահատականի արժանացավ ամենատարբեր մարդկանց, բանաստեղծների, ընթերցողների կողմից: Ահա թե ինչ է գրել Ավետիք Իսահակյանը. «*Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի պառնասում, հորդաքուխ ու ճշմարիտ բանաստեղծ... Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեն, ես մեծ սիրով տեղ կտայի «Էքսպրոմտին», «Բիբլիականին» և այլ բանաստեղծությունների... «Բիբլիական» պոեմը գրված է վայրի տաղանդով*»:

Արվեստը: Շիրազը շքեղ պատկերավորության բանաստեղծ է: Նրա բացահայտ, ընդգծված զգացմունքայնությունը արտահայտվելու համար վառ գույներ է փնտրում: Նա լայնորեն օգտագործում է պատկերավորության բոլոր միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն: Դրանում դուք կարող եք համոզվել՝ ուշադիր կարդալով վերը բերված բանաստեղծություններն ու հատվածները: Հատկապես հետաքրքրական է «Թագադրումը», որի մեջ գարնան շքեղ ծաղկումը ներկայացված է բարձր արվեստով: Ուշադիր կարդացեք հենց առաջին քառատողը՝ «*Հոգիս արթնացավ հարավի բույրից, / Ինձ դուրս է կանչում զեփյուռը նրա, / Չյունն էլ արևի ջահել համբույրից / Ուրախ լալիս է դաշտերի վրա*»: Չորս տողն էլ փոխաբերություններ են, որոնք բոլորը միասին ստեղծում են գարնան, բնության զարթոնքի գունագեղ պատկեր: Հիմա՝ մեկ ուրիշ բանաստեղծություն, այս անգամ՝ սիրային.

*Ա՛խ, ես կուզեի քեզ այնպես սիրել,
Ինչպես ծաղկունքն են մեկմեկու սիրում,
Գգվել ինչպես ցող, այնպես համբուրել,
Ինչպես որ քնած ծաղիկն է բուրում:*

*Բայց դու բոցեղեն համբույր կտեղաս,
Որ վարդ շուրթերիդ թերթերը թափե,
Ա՛խ, ես կուզեի՝ դու իմ գիրկը գաս՝
Ինչպես ծովն ընկնող լուսնյակն արծաթե...*

Այս բանաստեղծության գլխավոր բաղադրիչը համեմատություններն են: Առաջին քառատողը կազմված է միայն համեմատություններից, երկրորդի վերջին երկտողը ևս համեմատություն է: Բայց հետաքրքրական է՝ ի՞նչն է ինչի հետ է համեմատում Շիրազը: Պարզ երևում է, որ իր համեմատությունների համար Շիրազը եզրեր գտնում է բնության մեջ, մարդու գործողությունները համեմատում բնության իրադարձությունների հետ՝ մարդու սերը – ծաղիկների

սերը, մարդու գգվանքը – ցողի գգվանքը և այլն: Բայց այդ բոլոր համեմատությունների կազմում դեռ կան փոխաբերություններ՝ *ծաղիկները սիրում են, ծաղիկները քնում են, ցողը համբուրում է, լուսնյակը ծովն է ընկնում*: Պակաս չեն իրերի և երևույթների գեղարվեստական բնորոշումները՝ մակդիրները՝ *բոցեղեն* համբույր, *վարդ* շուրթեր, *արծաթե* լուսնյակ: Մարդու զգացմունքը բնութագրելու համար Շիրազը այսպես լայնորեն դիմում է բնությանը, նրա անվերջ բազմազանությանը: Երբեմն Շիրազը չարաշահում է պատկերավորությունը: Դա իջեցնում է բանաստեղծությունների արժեքը: Բայց նրա լավագույն գործերում այս շքեղ պատկերավորությունը դասական կատարելություն է ձեռք բերում, այդ բանաստեղծությունները մնում են անհատի և ժողովրդի հիշողության մեջ նաև այս գունագեղությամբ: Աշխարհը Շիրազի լավագույն գործերում ներկայանում է լուսավոր, շքեղ, բազմազույն:

Շիրազի «Բիբլիական» պոեմը Հայ գրականության մեջ անսովոր երևույթ է, փիլիսոփայական իմաստով չափազանց խոր, նա միաժամանակ ունի բարձր գեղարվեստական գրվածքի բոլոր արժանիքները՝ Շիրազին բնորոշ պատկերների թարմությունը և օրիգինալությունը պահպանվում են այս պոեմում, այդպիսիք զուգակցվում են նաև Համեմատությունների, անսպասելի Հակադրությունների Հետ, Շիրազը մեր սրտից է խոսում, ինչքան ազգային, նույնքան Համամարդկային է նա: «Բիբլիականից» ես գեղարվեստական մեծ Հաճույք ստացա:

Վիկտոր Համբարձումյան

Շիրազը սփյուռքի մեջ սովետահայ ամենաժողովրդական և սիրված բանաստեղծն է, Հուզիչ կապ է մեր և մեր Հայրենիքի ժողովուրդին մեջ, նրա ձայնը սփյուռքում՝ սրտեր կգրավե և մեզ կխրախուսե, որ շարունակենք երազել, որ Արարատեն և Վանա լճեն և լուռ պատմական Հայաստանեն չհրաժարվինք: Տարբեր լարեր կան անոր քնարին վրա՝ թե՛ աշուղական, թե՛ քնարական, թե՛ փիլիսոփայական, և նկարագրով էլ, որպես մարդ, նա Հրաբխային բանաստեղծ է:

Լևոն Զավեն Սյուրմեյան

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Յ. Շիրազը, ինչ է նրա իսկական անուն-ազգանունը:
2. Ինչ է նշանակում նրա գրական կեղծանունը:
3. Ո՞րն է Յ. Շիրազի առաջին ժողովածուն:
4. Ինչ թեմաներով է ստեղծագործել Յ. Շիրազը:

5. Բնույթով ի՞նչ պոեմ է «Բիբլիականը» և ո՞ւմ է նվիրված:
6. Օգտվելով պոեմի բառապաշարից՝ ներկայացրե՛ք, թե ինչպես է Աստված ստեղծում երկիրը և բաժանում իր բարիքները:
7. Ինչպե՞ս են կենդանիներն ու բնությունը ընդունում իրենց տրված ցավը:
8. Ինչպե՞ս է մարդն ընդունում ցավը. ի՞նչ է կատարվում այն պահից, երբ մարդուն տրվում են ցավն ու վիշտը:
9. Մորը նվիրված ի՞նչ բանաստեղծություններ ունի Յ. Շիրազը: Հայ բանաստեղծներից էլ ովքե՞ր են գրել այդ թեմայով, ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կարող եք տեսնել:
10. Համառոտ վերլուծե՛ք «Կուզեի նստել մի քարի վրա» բանաստեղծությունը:
11. Նշե՛ք Յ. Շիրազի բանաստեղծական ոճի առանձնահատկությունները:

ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՊՐԱՆՔՆԵՐ

1. Նշե՛ք Յ. Շիրազի այն բանաստեղծությունների վերնագրերը, որտեղ արծարծված է Արևմտյան Հայաստանի թեման. ի՞նչ տեղանուններ, աշխարհագրական անուններ կան այնտեղ:
2. Ներկայացրե՛ք Շիրազի կերտած մոր կերպարը՝ ըստ «Հուշարձան մայրիկիս» շարքի:

ԹԵՄԱՏՎԻՆ ԱՌԱՋԱՊՐԱՆՔՆԵՐ

1. Լրացրե՛ք Ա. Իսահակյանի խոսքերի բաց թողած մասերը. *«Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի պառնասում, հորդաբուխ ու ճշմարիտ բանաստեղծ... Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեն, ես մեծ սիրով տեղ կտայի, և այլ բանաստեղծությունների...»:*
2. Յ. Շիրազի ո՞ր բանաստեղծությունից է հետևյալ տողը.
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես.
 - «Ո՞րն է, բաբո... »
 - «Թագադրում»
 - «Կտակ»
 - «Էքսպրոմտ»

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

(1914 – 1993)

Համո Սահյանը համեմատաբար ուշ է գրական հրապարակ մտել: Պատերազմից հետո տպագրել է մի շարք գրքեր: Բայց նրան իսկական գրական համբավ բերեցին «Մայրամուտից առաջ» (1964թ.) և «Քարափների երգը» (1968թ.) գրքերը: Դրանցով նա դարձավ ամենասիրված հայ բանաստեղծներից մեկը և այդպիսին մնում է մինչև այսօր:

Համո Սահյանը (Հմայակ Սահակի Գրիգորյան) ծնվել է 1914թ. Միսիանի շրջանի (այժմ՝ Սյունիքի մարզ) Լոր գյուղում: Տասներեք տարեկանում մեկնել է Բաքու, այնտեղ ստացել բարձրագույն կրթություն, ծառայել բանակում մինչև պատերազմի վերջը և ապա տեղափոխվել է Երևան: Վաթսունական թվականներին խմբագրել է «Գրական թերթը», որն այն ժամանակ ամենաազդեցիկ թերթերից մեկն էր:

Բնությունը և մարդը: Հենց սկզբից Սահյանի ստեղծագործության մեջ կենտրոնականը եղել է հայրենիքի, հայրենի բնության թեման: Դեռ 1943-ին գրել է մի բանաստեղծություն՝ «Նաիրյան դալար բարդի» վերնագրով, որը հաստատուն տեղ գրավեց հայկական հայրենասիրական բանաստեղծության ընտրանիում, դարձավ սիրված երգ: Հայկական բարդին մարմնավորում էր Հայաստանը: Պատահական չէր, որ Հայաստանի խորհրդանիշ էր դառնում հայկական բնության ամենագեղեցիկ զարդերից մեկը՝ բարդին:

*Նազում ես ու շորորում զմրուխտե քո շորերում,
Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի,
Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:*

*Ա՛խ, ասես խարույկ լինես՝ բռնկված կանաչ բոցով,
ես հեռվից քեզ եմ գգվում կարոտով կրակ սրտի,
Լցնում ես դաշտերն ամեն հարազատ քո խշշոցով,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:*



*Իմ արտույտ-մանուկն ահա խաղում է քո շվաքում,
Քո փառքին երգ է շրշում շրթերով կոկոն վարդի,
Զով արա նրա կյանքին, հոր նման գգվիր անքուն,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:*

*Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց զատ,
Քեզ նման կանաչ կյանքով քեզ համար ելած մարտի,
Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:*

Հետագայում նա գրեց հայրենիքին նվիրված ուրիշ բանաստեղծություններ, որոնք սիրվեցին ընթերցողների կողմից՝ «Ախր ես ինչպե՛ս...», «Հայաստան ասելիս...», «Գարունդ հայերեն է գալիս» և այլն: Եվ միշտ հայրենիքն ու հայրենի բնությունը հանդես են գալիս միասին, հայրենիքը հերոսին երևում է հայրենի լեռների ու ձորերի, գետերի ու լճերի տեսքով:

Առհասարակ բնությունը Սահյանի աշխարհի կարևորագույն բաղադրիչն է, նրա կենսափիլիսոփայության հիմքը: Նրա առաջին ժողովածուի վերնագիրը՝ «Որոտանի եզերքին» (1946թ., Որոտանը Միսիանի տարածքով հոսող գետ է), այս իմաստով շատ խոսուն է: Բայց բնության արժեքը, իբրև աշխարհընկալման ելակետ, հստակորեն պարզվում է «Մայրամուտից առաջ», «Քարափների երգը» և հետագա գրքերում: Ամեն ինչին Սահյանը նայում է իբրև բնության մարդ, իբրև մեկը, որ սիրում, հասկանում է բնությունը և նրանով չափում ամեն ինչ:

Սահյանի բնության մեջ ամեն ինչ շնչում է, ապրում, չկան անկենդան առարկաներ: Ոչ միայն բույսերն ու կենդանիները, այլև ամպը, քամին, կայծակը և այլն, և այլն՝ սրանք բոլորը մարդու պես ապրող ու զգացող էակներ են: Այս տեսակետից Սահյանը կարող էր հիշեցնել Միսաք Մեծարենցին, որի բանաստեղծություններում ողջ բնությունը ապրում և զգում է: Բայց մի էական տարբերություն կա Մեծարենցի և Սահյանի երգերում: Մեծարենցի աշխարհում ամեն ինչ համակված է հովվերգական խաղաղությամբ, իսկ Սահյանի աշխարհում այդ խաղաղությունը չկա, կռիվ է, պայքար է, կորուստ, անվերջ և դրամատիկական շարժում: Սահյանը մի շատ հետաքրքրական բանաստեղծություն ունի՝ «Անձրև», որը կազմված է երեք մասից, և այդ մասերից յուրաքանչյուրը բնության մեջ տեղի ունեցած դրամայի երեք գործողություններն է ներկայացնում: Առաջինում նախաամպրոպային լարվածությունն է՝ «Ինչ-որ տազնապ կա ձորում, / Ինչ-որ սարսուռ է...»: Երկրորդը բուն անձրևն է, երրորդը՝ անձրևից հետո եկած խաղաղությունը: Կենտրոնականը անձրևի նկարագրությունն է՝ հագեցած արագընթաց և աղետալի դեպքերով՝ «ամպերը փուլ են գալիս», «քանդուքարափ է», «ուռին ուզում է փախչել, բայց արդեն ուշ է»:

Խնչ կատարվեց... երկնքում

Քանդութարափ է:

Ամպերը փուլ են գալիս,

Տեղատարափ է:

Կապույտ մրրիկ է պայթել,

Կապույտ մշուշ է...

Ուռին ուզում է փախչել,

Բայց արդեն ուշ է:

Ուռին ճշում է կարծես.

– Հասե՛ք, աղետ է:–

Առուն ուշքի է եկել

Եվ արդեն գետ է:

Բնության այսպիսի ընկալումը արտացոլում է Սահյանի կենսական տպավորությունները: Մարդու կյանքը անվերջ դրամատիկական շարժում է, անվերջ կորուստներ: Բայց բնությունը ներկայանում է նաև իբրև մի բարձրագույն էություն, որը հենարան կարող է լինել քնարական հերոսի համար: Բնության մեջ Սահյանը տեսնում է այն մաքրությունը, որը չկա մարդկային հասարակության մեջ: Մարդը սովորում է բնությունից: Մի քանի բանաստեղծություններ է գրել՝ նվիրված եզանը: Այս կենդանին հազվադեպ է հիշվում պոեզիայում. իսկ Սահյանը գրում է նրա մասին սիրով, ըմբռնումով, կարեկցությամբ: Եզր անվերջ ու անմոռնջ չարչարվող կենդանին է, առանց որի մարդը չէր կարող մշակել հողը: Բայց ամենից շատ հենց եզանն են ծեծում («Եզր»):

Եթե բախտը կար, եզր միջուկն էր,

Օջախի ծուխն էր, նախիրի շուքն էր,

Նա շինականի միակ նեցուկն էր,

Նրա բազուկն էր:

Եվ դեռ ավարտին էլ իրեն համեմատում է այս չարքաշ կենդանու հետ...

Բնությանը նվիրված բանաստեղծությունների շարքում կա մեկը՝ «Պտուղդ քաղող չկա» վերնագրով, որ նվիրված է մասրենուն: Դեռ դրանից առաջ մի բանաստեղծություն էլ է գրել «Մասրենի» վերնագրով, որ դուք անցել եք նախորդ դասարաններում: Այդ գեղեցիկ բույսը շատ է մտածել տվել Սահյանին: Եվ նրա մեջ մենք տեսնում ենք ոչ միայն բնության մի մասնիկը, այլև մարդուն, մարդկային ճակատագիրը.

Պտուղդ քաղող չկա,
 Մասրենի, սարի մասրենի,
 Պատիվդ պահող չկա,
 Մասրենի, բարի մասրենի:
 Ասում են՝ էլ մարդ չկա,
 Որ փնտրի քնքշանքդ փշոտ,
 Քեզ գրկի ու տաքանա,
 Մասրենի, ժայռի մասրենի:
 Երեսիդ նայող չկա,
 Մասրենի, վայրի մասրենի,
 Կրքերիդ կրակը քեզ
 Թող այդպես այրի, մասրենի...
 Կանգնել ես քո բարձունքին,
 Մեկուսի, մենակ, մենավոր...
 Իմ երես առած դարում
 Դու լքված այրի, մասրենի:

Սահյանը ներկայացնում է մասրենու իրական ճակատագիրը: Այդ հատապտուղը մարդկանց կյանքում այլևս այն դերը չի կատարում, ինչ տասնամյակներ առաջ, երբ գյուղացու կյանքը սերտորեն կապված էր բնության հետ, և մասրենու պտուղները և՛ դեղ էին, և՛ սնունդ: Հիմա մարդիկ իրենց դեղը և սնունդը ստանում են ուրիշ աղբյուրներից, և մասրենին այլևս ոչ ոքի չի հետաքրքրում: Բայց դա և մարդկային արժեքների ճակատագիրն է նոր ժամանակներում: Այն, ինչ թանկ էր առաջներում, այսօր կորցնում է իր արժեքը: Մարդիկ հիմա շրջապատված են տեխնիկայի՝ նախկինում աներևակայելի նվաճումներով (դա նկատի ունի Սահյանը, երբ ասում է՝ «Իմ երես առած դարում») և այլևս չեն նկատում իսկական, բնատուր գեղեցկությունը: Եվ մասրենին ընթերցողի երևակայության մեջ արդեն պարզ թուփ չէ, այլ՝ մարդ, մտածող և զգացող էակ, որ այդքան ծառայել է մարդկանց, իսկ այժմ լքված է բոլորից:

Առհասարակ մարդկային հասարակությունը կարող է շատ անարդար լինել իր անդամի, մարդ անհատի հանդեպ: Սահյանի բանաստեղծությունը բողոք է այդ անարդարության դեմ, մաքրության և բարության կարոտ, որը հասարակությունը չի տալիս մարդուն: Իսկ մարդը, որն ունի այդ կարոտը, հենարան և դաշնակից է փնտրում բնության, նրա նախնական պարզության և գեղեցկության մեջ:

ԱՂՈԹԱՐԱՆ ՍԱՐԸ

Ձէ, աշխարհի սարերի մեջ
Ձուներ հավասարը
Հարգանքը մեծ ու սիրտը մեծ
Աղոթարան սարը:

Ձգիտերի՝ ո՞վ էր թռչում –
Դո՛ւ, թե՛ ճանապարհը,
Երբ զարթնում էր ու չէր ննջում
Աղոթարան սարը:

Հավք ուզերի, նա քեզ կտար
Մեկի տեղ հազարը,
Հավքի բույն էր փեշից կատար
Աղոթարան սարը:

Ծաղիկ ասես, ծաղիկներով
Կպահեր աշխարհը...
Ուրախ էր իր տալիքներով
Աղոթարան սարը:

Հյուրը հանկարծ ծարավ մնար,
Իզուր չէր հուսալը,
Սրտից աղբյուր կհաներ նա՝
Աղոթարան սարը...

Հիմա այս բանաստեղծությունը համեմատենք մեկ ուրիշի հետ.

Քնած տեղս բաց եմ լինում,
Դու ինձանից նեղանում ես,
Վերքիս ցավից լաց եմ լինում՝
Դու ինձանից նեղանում ես:
Նեղանալը քարը գլխին,
Սկսում ես նեղացնել...
Այս ի՞նչ տեսակ զարմանք բան է,
Ձեռն էլ ուզում մի հարցնել՝
Ինչից է, որ քնած տեղը
Մարդը հանկարծ բաց է լինում,

*Եվ ի՞նչ վերք է, որի ցավից
Նստում մեկ-մեկ լաց է լինում:*

Սա արդեն մարդու վերաբերմունքն է մարդու հանդեպ, նրա անտարբերությունը, անըմբռնողությունը ուրիշի ցավերի ու հոգսերի նկատմամբ:

Կամ այս մեկը.

*Ա՛խ, ինձ ծլել չթողին,
էլ ուր մնաց կանաչել,
Ծանոթանալ չթողին,
էլ ուր մնաց՝ ճանաչել:*

*Սովորեցի չգործած
Մեղքիս համար մեղանշել՝,
Իմ տվածով գոհանալ,
Վարձիս համար ամաչել:*

*Ինձ հառաչել չթողին,
էլ ուր մնաց՝ շառաչել:*

Ընթերցողը չի կարող չզգալ այն խորին դառնությունը, որ պատճառել են մարդիկ քնարական հերոսին, չի կարող չընկալել նրա վիրավորվածությունը:

Այնինչ, բնությունը միշտ պատրաստ է օգնելու, ինչպես Աղոթարան սարը... Սահյանի հերոսը փնտրում է մարդկայնություն և դա գտնում է բնության մեջ: Բնությունը նրան տալիս է ուժի, ամրության, հավատարմության օրինակներ: Ունի մի ծավալուն և տպավորիչ բանաստեղծություն, որը փոքրիկ պոեմի է նման՝ «Քարափը»: «... Ինչ-որ հեռավոր նմանություն կա Խաչիպապ պապիս և այս հյուրընկալ քարափի միջև», – գրում է Սահյանը այդ բանաստեղծության մեջ: Սա շատ պերճախոս համեմատություն է՝ քարափը և պապը հյուրասեր և ուրիշներին օգնելու պատրաստ էություններ են, նույն բնության հարազատ զավակները... Պատահական չէ, որ այդքան հաճախ է դիմում քարափին, ժողովածուներից մեկն էլ անվանում «Քարափների երգը»:

Մանկությունը: Բայց ոչ միայն բնության մեջ է մարդկայնություն փնտրում Սահյանը: Նրա քնարերգության կենտրոնական մոտիվներից մեկը մանկության հուշերն են: Սրանք սովորական կարոտ չեն անդարձ անցած տարիների հանդեպ, որ հատուկ է մարդկանց մեծ մասին: Այդ բանաստեղծություններում անցյալը, մանկության տարիները մարդկայնության խտացում են, այն բարձրագույն արժեքների ժամանակը, որոնք մեր օրերում կորչում են: Այդ տարիները Սահյանը հիշում է խոր տխրությամբ: Դրանցից երկուսը՝ «Օրը մթնեց» և «Պապը», դասական կատարելության գործեր են:

1 Մեղանշել – այստեղ օգտագործված է մեղա գալու իմաստով:

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:

Իջնում էին խոհուն, խոնարհ
Դեզերի ուսին
Մի կաթնահունց երկնակամար,
Մի ծերատ լուսին...

Մեկը մեկից ամաչելով,
Եվ զուսպ, և՛ հավաք
Նստում էին մերոնք կարգով –
Կրտսեր ու ավագ:

Նստում էին և սպասում,
Մինչև պապը գար,
Մինչև բակում ծաղիկ եզան
Զանգը ծլնգար:

Պապը գալիս, սուփրի գլխին
Նստում էր շուքով,
Ու լցվում էր տունը դաշտի
Բույր ու շշուկով...

Ու երբ տատս ձեռքն էր առնում
Շերեփը իր հին,
Գդալները բնագդաբար
Աղմկում էին:

Թանապուրի տաք գոլորշին
Գերանին առնում
Եվ սյունն ի վար գլոր-գլոր
Ուլունք էր դառնում:

Վայելում էր տաք թանապուր,
Հավաշ ու սամիթ

*Աշխատավոր մի գերդաստան՝
Պարզ ու միամիտ...*

*Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա...
Ես եմ մնում լուկ իբրեւ հուշ
Եվ իբրեւ վկա:*

*Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տիրությունս կամաց-կամաց
Փոխվում է լացի:*

Այս պատկերը կարելի էր համարել հովվերգական, եթե չլիներ այն խոր տխրությունը, որով համակված է ամբողջ բանաստեղծությունը: Անցել է այս բոլորը, անցել անվերադարձ: Անցել են ոչ միայն հարազատ մարդիկ, այլև այն պարզ ու իմաստալից կյանքը, որով ապրել են այդ մարդիկ: Բանաստեղծի հայացքը կանգ է առնում այնպիսի մանրամասնությունների վրա, որոնք ընդգծում են անցած կյանքի այդ բնույթը: Նախ, նահապետական աշխարհի կարևորագույն գծերից մեկը՝ հարգանքը ավագների հանդեպ: Գլխավոր գործող անձինք պապն ու տատն են: Բայց նրանք սոսկ ավագներ չեն, նրանք աշխատավորներ են, ընտանիքի գլխավոր աշխատավորները: Պապը գալիս է դաշտից Ծաղիկ եզան հետ (հիշեք եզանը նվիրված բանաստեղծությունը), իսկ տատը աշխատել է տանը: Համեստ է սեղանը, բայց վաստակած: Համեստ է կենցաղը: Սահյանը առանձին մանրամասներով ներկայացնում է գեղջկական տան պատկերը, տան իրերը, սուփրան (սփռոցը), որի շուրջը հավաքվում է մեծ ընտանիքը, գերանակապ տանիքը, սյունը և այլն: Ընթերցողը կարծես տեսնում է այս ամենը, գեղջկական ընտանիքը մի պահ վերակենդանանում է և ընթերցողին համակում իր պարզ գեղեցկությամբ: Սահյանն առհասարակ սիրում է պատկերի տեսողականությունը, նկարչականությունը, և այդ հատկանիշները այս բանաստեղծության մեջ կարևոր են: Դրանով պատկերը ավելի համոզիչ է դառնում:

«Պապը» դիմանկարն է գեղջուկ աշխատավորի, ով օգնել է բոլոր գյուղացիներին, կատարել գյուղական բոլոր աշխատանքները, սիրել ու հասկացել է բնությունը.

*Իմ պապը հողի հետ
Խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասովել,
Ջրի հետ հոսել է...*

Մահյանը գտել է մի շատ հետաքրքրական, տպավորիչ նրբագիծ պապի կերպարը ամբողջացնելու համար՝ նրա վերջին պահի պատկերը.

*Մի օր էլ, երբ հանկարծ
Ծալվել են ծնկները,
Ջարմանքից քարացել,
Ամոթից շիկնել է:
Թողել է նա մաճը
Եվ շունչը պահել է,
Եվ հետո քրտինքը
Ճակատին պաղել է:
Եվ պապը ակոսում
Պառկել ու քնել է,
Խառնվել այն հողին,
Որ իրեն սնել է:*

Ինչպես զինվորի համար ամենապատվաբեր մահը գենքը ձեռքին մարտում զոհվելն է, այնպես էլ հողագործ պապի համար այս մահը ամենաարդար մահն է՝ մաճը ձեռքին, նոր բացված ակոսում: Մարդը, որի կյանքի իմաստը եղել է աշխատանքը, ամաչել է, որ չի կարողանում աշխատել...

Մանկական հիշողությունները վերջին ժողովածուներում մեծ տեղ են գրավում: Հիշում է իրենց տունը, որն արդեն ավերվել է ժամանակի ձեռքով, ընտանիքի անդամներին, պատանեկան սիրո առարկային և այլն, և այլն: Եվ այդ բոլոր հիշողություններում նույն խոր թախիծն է կյանքից հեռացած մարդկանց և անցած մարդկային հարաբերությունների, դրանց մաքրության ու խորության համար: Հերոսը մերժում է ժամանակակից բարքերը, մարդկանց մեջ մարդկայնության պակասը, եսասիրությունը: Միրային բանաստեղծություններում էլ այս ներքին խոր անբավարարվածությունը կա: Հերոսը սիրում է խորն ու անկեղծ, բայց նրան պատասխանում են անտարբերությամբ, անսրտությամբ: Բանաստեղծություններից մեկում ասում է, որ ինքը ներել է սիրած կնոջ դավաճանությունը, բայց կինը չի ներել տղամարդու ներելը: Սա մարդկային հարաբերությունների ամենահակասական կողմերից մեկն է: Եթե երկու մարդկանց հարաբերություններում մեկը մեծահոգություն է ցուցաբերում, մյուսը, որ կարծես թե շնորհակալ պետք է լիներ դրա համար, պատասխանում է ատելությամբ, չարությամբ, որովհետև դիմացինի մեջ տեսնում է բարոյական գերազանցություն իր հանդեպ:

Իսկ նահապետական աշխարհում, մանկական հուշերում մարդիկ այլ են: Նրանք հոգում են ուրիշների մասին, և նրանց պատասխանում են շնորհակալությամբ: Ահա թե ինչու հերոսի հոգին ձգտում է դեպի այդ աշխարհը:

Այսպիսով, նահապետական աշխարհը և բնությունը բարոյական մաքրության այն կղզիներն են, որոնք մաքրում են մարդուն, նրա մեջ կենդանի պահում բարոյականությունն ու մարդկայնությունը:

Արվեստը: Սահյանի բանաստեղծական արվեստը շատ հետաքրքրական է, առաջին հայացքից դժվարըմբռնելի, թեև մյուս մողմից միշտ կա պարզության զգացողությունը: Ինքն էլ բանաստեղծություններից մեկում խոսում է իր պարզության մասին: Բայց ավելի ուշադիր ընթերցման ժամանակ դժվար չէ նկատել, որ Սահյանի երգերը շատ հաճախ փոխաբերությունների խաղ են, երբեմն փոխաբերությունների իսկական հրավառություն: Պարզության զգացողությունը գալիս է նրանից, որ Սահյանը իր պատկերներն ստեղծում է՝ հենվելով ժողովրդական խոսքի վրա: Ահա այս առանձնահատկությունը՝ քնարերգության խիստ անհատականությունը և ժողովրդական խոսքի տարրերի հմուտ զուգակցումը, յուրահատուկ գույն ու հմայք է տալիս Սահյանի բանաստեղծություններին: Ահա մի փոքրիկ բնանկար՝ «Ձյուն է գալու».

*Մշուշների շղարշի տակ
Աշնան խաշամն է խշխշում,
Քամու ձեռքերն անհամարձակ
Ամպի փեշերն են քաշքշում:*

*Ամպը լեզուն կուլ է տվել,
Հնար չունի որոտալու,
Ցերեկն էլ է ցրտից կծկվել,
Չէ, երևի ձյուն է գալու:*

Առաջին իսկ հայացքից դուք նկատում եք ժողովրդական խոսքի տարրերը՝ «խաշամ» բառը, «լեզուն կուլ է տվել» դարձվածքը: Բայց միաժամանակ նկատում եք այնպիսի տարրեր, որոնք ժողովրդական լեզվին բնորոշ չեն. դրանք Սահյանի անհատական մտածողության դրսևորումներն են: Նախ՝ չենք կարող չնկատել դեռ Տերյանից եկող գեղեցիկ ալիտերացիան՝ շ-երի կուտակումը, որը այստեղ էլ կապվում է աշնան, հենց «աշուն» բառի հետ: Այնուհետև՝ «մշուշների շղարշ» գեղեցիկ փոխաբերությունը, նույն տան մյուս փոխաբերությունը՝ «քամու ձեռքերն ամպի փեշերն են քաշքշում»: Ես հիշեցի «լեզուն կուլ է տվել» դարձվածքը իբրև ժողովրդական խոսքի արտահայտություն: Բայց ամբողջության մեջ դա էլ զուտ հեղինակային փոխաբերություն է՝ «ամպը լեզուն կուլ է տվել»: Փոխաբերություն է նաև «Ցերեկն էլ է ցրտից կծկվել» տողը՝ ստեղծված հեղինակի երևակայության մեջ: Ուրեմն՝ խիստ անհատական մտածողության և ժողովրդական խոսքի, բառուբանի զուգակցումները Սահյանի բանաստեղծական արվեստի տիպական առանձնահատկություններից են: Սահյանը եր-

բեմն օգտագործում է բանահյուսական ձևեր՝ դրանք դարձյալ փոխակերպելով իր մտածողությանը համապատասխան:

Իշավ սարյակը դաշտում – ծիլ էր կտուցին.–

Շուրթիս վրա մի կանաչ տող էր թպրտում:

Արտից տատրակը թռավ – հասկ էր կտուցին. –

Շուրթիս վրա մի կարմիր տող էր թպրտում:

Բնության երևույթների և մարդու, այս դեպքում՝ բանաստեղծի կյանքի գուգահեռ պատկերները բնորոշ են մեր միջնադարի ժողովրդական երգերին, որոնց փորձն օգտագործել է Սահյանը: Միջնադարյան ժողովրդական բանաստեղծության ձևերից նա հաճախ է դիմել հատկապես հայրենների փորձին:

Իբրև ընդհանրացում կարող ենք ասել որ Սահյանի արվեստի զինանոցը բնությունը և ժողովրդական խոսքն էին, որոնց օգնությամբ նրա ինքնատիպ պոեզիան հասավ մեծ բարձունքների:

Նա գյուղացի էր, բնապաշտ, պահպանողական, արևելքցի, աշուղ – նա քմայքոտ մտավորական էր, արևմուտքցի, Հույժ արդիական: Բայց ո՛չ Հույժ արդիական էր, ո՛չ արևմուտքցի, ո՛չ մտավորական, ո՛չ աշուղ, ո՛չ արևելքցի, ո՛չ գյուղացի: Բնությունից գիր – գրից բնություն, ալտրոսկոպից ազգայնականություն և ազգայնականությունից այլասիրություն, այսօրից անցյալ և անցյալից այսօր, բանաստեղծից գյուղացի և գյուղացուց բանաստեղծ երթուղարձն էր Սահյանը, Հարատև, անվերջ երթուղարձը: Կառանուճը, որպես թե վերջապես գտնված որևէ Հանգրվանի, մահ է, պոետի մահն է:

Սահյանը ժամանակների ու տարածությունների մեր այս ջղուտ ու գյուրագրգիռ խաչմերուկի Հայ մարդը եղավ, և իր խոսքը մեր երթի Համար օրհներգ և իր գործը մեր դրոշին ճիշտ մեր պատկերը դարձավ: Եվ որովհետև Հաճախ թափոր ենք առանց դրոշի և ավելի Հաճախ առաջնորդվում ենք ուրիշի սրբապատկերներով, Սահյանի գործը էականորեն կարևոր է:

Հրանտ Մաթևոսյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՍՈՍՑՍԱՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Յ. Սահյանը, ի՞նչ է նրա իսկական անուն-ազգանունը:
2. Ռազմաճակատում գրած ի՞ր բանաստեղծությունը հանրաճանաչ դարձրեց Յ. Սահյանին, ինչի՞ մասին է:

3. «Պտուղդ քաղող չկա» բանաստեղծության մեջ ինչպե՞ս է նկարագրված մասրենին: Ի՞նչ վերաբերմունք ունի նրա հանդեպ հեղինակը:
4. Մասրենուն նվիրված էլ ի՞նչ բանաստեղծություններ ունի Հ. Սահյանը. նշե՛ք դրանցից մեկ-երկուսը:
5. «Աղոթարան սարը» բանաստեղծության մեջ մարդկային ի՞նչ հատկանիշներ են վերագրված սարին:
6. Նկարագրե՛ք մեծ գերդաստանի ընթրիքը «Օրը մթնեց» բանաստեղծության մեջ. ինչո՞ւ է բանաստեղծն ասում. «Տխրությունս կամաց-կամաց / Փոխվում է լացի»:
7. Բնության ի՞նչ պատկերներ են ներկայացված «Անձրև» բանաստեղծության մեջ:
8. Ի՞նչ գնահատական է տվել Հ. Սահյանի արվեստին Հ. Մաթևոսյանը:

ՏՆՄՅԻՆ ՍՈՍՑԻԱԼԻՅԵՏԵՐ


1. Նկարագրե՛ք Հ. Սահյանի մանկությունը՝ օգտվելով «Օրը մթնեց», «Պապը», «Ինչո՞ւ հիշեցրի» բանաստեղծություններից:
2. Գրե՛ք փոքրիկ շարադրանք «Մասրենու կերպարը Հ. Սահյանի քնարերգության մեջ» թեմայով:

ԹԵՄԱՅԻՆ ՍՈՍՑԻԱԼԻՅԵՏԵՐ

1. Հ. Սահյանի ի՞ր բանաստեղծությունից է հետևյալ հատվածը.
*Պապը գալիս, սուփրի գլխին
 Նստում էր շուքով,
 Ու լցվում էր տունը դաշտի
 Բույր ու շշուկով...*
 - «Պապը»
 - «Օրը մթնեց»
 - «Ձյուն է գալու»
 - «Անտառում»
2. Ո՞ր նկարագիրն է բնորոշ Աղոթարան սարին.
 - Սառը, անտարբեր ու անհրապույր սար է:
 - Տխուր և դառը հուշեր է արթնացնում:
 - Աշխարհի ամենալավ սարն է, միշտ պատրաստ է օգնելու:
 - Հավքերը սարից միշտ փախչում են:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

(1924 – 1971)



Պարույր Սևակը (Պարույր Ղազարյան) ծնվել է Վեդու շրջանի Չանախչի գյուղում (այժմ՝ Արարատի մարզ, Զանգակատուն): Սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո ընդունվել է ասպիրանտուրա, բայց, անավարտ թողնելով, տեղափոխվել է Մոսկվա, սովորել Խորհրդային գրողների միության գրական ինստիտուտում, հետո դասավանդել այնտեղ:

1959-ին լույս տեսավ «Անլռելի զանգակատուն» պոեմը, որը Սևակին անմիջապես դարձրեց իր ժամանակի հայ գրականության առաջին դեմքերից մեկը: Պոեմը մեծ արձագանք ունեցավ և՛ Հայաստանում, և՛

սփյուռքում: Դրանից հետո նրա տպագրած բոլոր գրքերը իրադարձություն էին Հայաստանի գրական կյանքում: Նա վերադարձավ Հայաստան և աշխատանքի անցավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, ընտրվեց Հայաստանի գրողների միության քարտուղար:

Սևակը ակտիվորեն մասնակցում էր գրական կյանքին, վերջին տարիներին նա գլխավոր դեմքերից մեկն էր գրական առօրյայում: Նրա ելույթները առիթ էին տալիս լուրջ բանավեճերի, քննարկումների, որոնք կապված էին գրականության զարգացման առանցքային խնդիրների հետ: Վաթսուհականների վերջերին բուռն բանավեճ ծավալվեց ժամանակակից հայ բանաստեղծության շուրջը: Սևակը մի հողված գրեց, որի դրույթները քննարկվում էին դեռ երկար՝ «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի»: Այդ հողվածում նա տալիս էր պոեզիայի զարգացման մի ընկալում, որը ներառում էր և՛ ավանդների շարունակումը, և՛ անխուսափելի փոփոխությունները: Չկա գրականություն առանց ավանդների: Բայց չկա գրականություն և առանց էական, երբեմն արմատական փոփոխությունների: Գրական ընթացքի այս երկու կողմերը կարող են և բախվել, բայց մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: Նա հանդես էր գալիս ինչպես կույր ավանդապահության, այնպես էլ փոփոխությունների ծայրահեղ դրսևորումների դեմ:

Սևակի կենսագրության ամենահետաքրքրական փաստերից մեկը նրա գիտական աստիճանի պատմությունն է: Սևակը ամբողջ կյանքում, բանաստեղծությանը զուգահեռ, զբաղվեց նաև բանասիրությամբ և գրականագիտությամբ: Մոսկվայից վերադառնալուց հետո նա գրեց մի աշխատություն՝ նվիրված Սայաթ-Նովայի կյանքին և ստեղծագործությանը, և այս աշխատանքը ներկայացրեց իբրև թեկնածուական ատենախոսություն, այսինքն՝ դրա համար նա պետք է ստանար գիտական առաջին աստիճանը՝ բանասիրական գիտությունների թեկնածու: Բայց աշխատանքը այնքան խորն էր ու ընդգրկուն, որ գիտական խորհուրդը Սևակին միանգամից շնորհեց երկրորդ և բարձրագույն աստիճանը՝ բանասիրական գիտությունների դոկտոր:

1971-ի հունիսի 17-ին գոհվեց ավտոաղետի ժամանակ:

Բանաստեղծությունները: Ստեղծագործական կյանքի համեմատաբար քիչ տարիների ընթացքում Սևակը դարձավ իր ժամանակի ամենասիրված հայ բանաստեղծը: Ժողովուրդը, և ամենից առաջ երիտասարդությունը, նրան սիրեց իր ձայնի թարմության համար: Սևակը նոր էր, թարմ մի քանի առումներով: Նախ՝ նա դարձավ այն բանաստեղծը, որը պիտի արձագանքեր ժողովրդի մեջ կուտակված սպասումներին: Խորհրդային տարիներին հայ ժողովրդի նորագույն պատմությունը միակողմանի էր ներկայացվում: Շեշտը դրվում էր սոցիալական բախումների, դասակարգային պայքարի վրա: Մոռացվում էր հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունը՝ Ցեղասպանությունը: Պատմության դասագրքերից դուրս էր մնում հայոց ազգային-ազատագրական պայքարը թուրքական պետության դեմ հանուն Արևմտյան Հայաստանի ազատագրության: Բայց ժողովրդի հիշողությունից այդ իրադարձությունները չէին ջնջվել: Հիսունականներից արդեն գրականության մեջ սկսեցին խոսել Ցեղասպանության և ազատագրական պայքարի հերոսների մասին: Բայց այդ բոլորը դեռ հատվածային էին, դեռ չկար շատ թե քիչ ամբողջական պատկերացում այդ դեպքերի ու մարդկանց մասին: Այնինչ դրա պահանջը հասունանում էր: Սևակը առաջինը այդքան սրությամբ զգաց այդ խնդրին անդրադառնալու անհրաժեշտությունը: «Անլռելի զանգակատունը» եղավ այն երկը, որը միանգամից քանդեց բոլոր պատնեշները և տասնամյակների ընթացքում առաջին անգամ ժողովրդին տվեց հայոց նորագույն պատմության ճակատագրական իրադարձությունների պատկերը:

Մյուս կողմից, Սևակի պոեզիան նորություն էր բուն մտածողությամբ, բանաստեղծական խոսքի բնույթով, բառապաշարով, պատկերային համակարգով: Սևակը հրաժարվեց քնարականության մասին ավանդական պատկերացումներից, բանաստեղծություն բերեց ամենօրյա խոսքը, մտածողական կաղապարները՝ դրանով իսկ բանաստեղծությունը մոտեցնելով սովորական մարդուն: Ժամանակակիցները նրա մեջ տեսան իրենց զրուցակցին, իրենց առօրյային տեղյակ բանաստեղծին: Իր հայտնի «**Մարդը ափի մեջ**» (1963թ.)

ժողովածուում այսպիսի մի կարճ բանաստեղծություն կա՝ «**Խոստովանում եմ**» պերճախոս վերնագրով.

Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:

Լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...

Այս երկտողում արտահայտված է Սևակի պոեզիայի կարևորագույն առանձնահատկությունը: Նրբորեն մշակված գեղարվեստական պատկերը, որը դասական քնարերգության հիմքն է, նրան չի հրապուրում: Դա չի նշանակում, որ նա ժխտում է դասական պոեզիան: Խոսքն ի՞ր անհատականության մասին է: Նա նախընտրում է խոսքի այն ձևը, որը հայ բանաստեղծության մեջ ամենից վառ դրսևորվել է Գրիգոր Նարեկացու և Սիամանթոյի ստեղծագործության մեջ և որը չի ենթարկվում բանաստեղծական չափի ու հանգի օրենքներին, լայնորեն դիմում է «ոչ բանաստեղծական» բառապաշարին: Բայց, շարունակելով մեր այս բանաստեղծների ավանդույթները, Սևակը, դրանք զարգացնելով, նորացնելով, արտահայտում էր իր ժամանակի հայ մարդու հոգին, ներքին աշխարհը: Նրա քնարերգության առաջին ժողովածուն, որ դարձավ համընդհանուր ուշադրության առարկա, «Մարդը ափի մեջ» գիրքն էր: Դա շատ խորհրդանշական վերնագիր էր: Սևակը, հրաժարվելով մոտ անցյալի սխեմաներից, ներկայացնում էր իրական մարդուն, նրա իրական ապրումները, խոհերը՝ բանավիճելով նաև անցյալի սխեմաների հետ: Նա ըմբոստանում էր մարդու էության պարզունակացման, հասարակացման դեմ՝ ամեն կերպ ընդգծելով ժամանակակից մարդու բնույթի հակասականությունն ու հարստությունը: Ահա ևս մի բանաստեղծություն նույն ժողովածուից («Ուղտի օրինակով»).

Ես ուղտի նման սակավապետ եմ,

Բայց ոչ ուղտի պես քենը միշտ պահող:

Նման եմ ուղտին և՛ ըս մի բանում.

Է՛հ, մեկ էլ տեսար՝

Պար գալըս բռնեց

Խարխուլ ու ճոճկան կամըրջի վրա:

Այսպես է Սևակը ընկալում մարդու բնությունը: Մարդը ոչ միայն հակասական է, այլև տրամաբանության օրենքներին չենթարկվող, անկանխատեսելի և անհաշվելի: Ժամանակին ուշադրություն գրավեց Սևակի բանաստեղծություններից մեկը՝ «**Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին**»: «Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ...»,– հեգնանքով դիմում է Սևակը խելոք մեքենաներին, որոնք շատ բան կարող են հաշվել, կարող են հաշվել ամեն ինչ, բացի մարդուց, նրա հոգուց, այլոց հետ նրա

հարաբերություններից: Այս բանաստեղծությունը մի անգամ ևս ցույց էր տալիս Սևակի սերտ կապը իր ժամանակի, նոր մտածողության, նոր իրողությունների հետ: Նրա ժամանակակիցները դեռ չէին նկատում տեխնիկայի այդ հրաշքը՝ հաշվիչ մեքենաներն ու համակարգիչները: Իսկ Սևակը կանխագգում էր այդ մեքենաների դերը ապագայում և մարդկանց կարծես զգուշացնում էր նաև՝ չենթարկվել դրանց, զգուշացնում էր այն վտանգից, որը կոչվում է ապամարդկայնացում: Նա հիանում էր մարդով և ուզում էր, որ մարդը պահպանի իր բարդ, անմեկնելի, խոր ներաշխարհը, իր մարդկայնությունը: Մարդու այդ անսահման բարդությունն ու խորությունը հասու չէին ոչ մի ամենախելոք մեքենայի: Հեզնական տողերի ավարտը տխուր է.

*Հաշվեցեք նաև, մի վերջին անգամ,
Թե այդ ի՞նչ ձևով,
Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է մարդուն մարդ պահել
Եվ կամ նոր միայն մարդուն դարձնել Մարդ...*

Եվ այսպես, Սևակը իր առջև խնդիր էր դնում՝ բացահայտել ժամանակակից մարդու ներաշխարհը իր ողջ հարստությամբ ու բարդությամբ: Ահա թե ինչու նա մարդուն դիտում էր ափի մեջ: «Մարդը ափի մեջ» գիրքը հրատարակվեց «Անլռելի զանգակատնից» հետո և ամրապնդեց Սևակի՝ այդ պոեմով ձեռք բերված բարձր համբավը, նոր եզրեր բացահայտեց նրա պոեզիայում: Առաջին ժողովածուները նրան փառք չէին բերել: Բայց «Անլռելի զանգակատնից» առաջ Սևակը տպագրել է մի ժողովածու՝ «Նորից քեզ հետ» վերնագրով (1957թ.), որի մեջ արդեն ուրվագծվում էին Սևակի ոճի առանձնահատկությունները: Այդ ժողովածուից շատ բան մտավ նրա ընտիր բանաստեղծությունների շարքը: Դրանց մեջ էր «Մարդ էլ կա, մարդ էլ» հայտնի բանաստեղծությունը, որը կապված է «Մարդը ափի մեջ» ժողովածուի գլխավոր թեմաների հետ: Խոսքը դարձյալ մարդու էության մասին է, բայց քաղաքացիական կիրքը շատ ուժեղ է այստեղ: Բանաստեղծության գլխավոր միտքը ամփոփված է առաջին երկտողի մեջ.

*Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...*

Դժվար չէ գուշակել, թե Սևակի համակրանքը որ մարդու կողմն է: Սկզբում Սևակը խոսում է այն մարդու մասին, որը «աշխարհն է շալակած տանում»: Հետագա տողերը այն մյուսի՝ աշխարհի շալակը ելած մարդու մասին են: Սևակը նրա մասին գրում է անգիշում մերժումով, զայրույթով: Մարդու այդ տեսակը գիտի կեղծել, նա պատրաստ է ամեն դիմափոխության, միայն թե կարողանա վայելել այս կյանքի բարիքները, մնա «վերեններում».

Նա, որ ելել է շալակն աշխարհի,
 Աշխարհում երբեք թաց տեղ չի քնում,
 Գիտե, թե ում հետ և ուր է գնում,
 Ում մեռելին է անարցունք լալիս,
 Ում խոսքի վրա ստից ծիծաղում,
 Ում հետ դինջ նստած նարդի է խաղում,
 Հարկ եղած դեպքում և տանուլ տալիս...
 Վերից է նայում ցածրում կանգնածին,
 Զի նայում երբեք ներքև ընկածին,
 Վերև կանգնածի աղջրկան, որդուն,
 Սիրուհուն անգամ ու քարտուղարին
 Ո՛հնց է քսմսվում ու շողոքորթում...
 Որտեղ մի պատառ չաղ ու յուզալի,
 Կանգնած է այնտեղ նա երկյուղալի.
 Հեշտ զրպարտում է, երբ տեղն է գալիս,
 Նույն հեշտությամբ էլ իր մեղքն է լալիս...

Ահա այս մարդը ստախոս է, երեսպաշտ, պատրաստ է խոսել բարձր սկզբունքների, բարձր բարոյականության անունից, եթե իր շահը դա է պահանջում: Բայց միայն շահը: Նրան ուրիշ բան չի հետաքրքրում.

Անվերջ սողալով՝ առաջ է գնում,
 Գնում է այսպես և... տարեցտարի
 Ելնում է այսպես... շալակն աշխարհի:

Սևակի երեք ժողովածուներն էլ՝ «Նորից քեզ հետ», «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լույս», ուղղակի և անմիջական արձագանքն էին նաև իր ժամանակի, հասարակությանը, ժողովրդին հուզող խնդիրների: Խորհրդային հասարակության մեջ ավելի ու ավելի էին ընդգծվում երեսպաշտությունը, պաշտոնապես քարոզվող սկզբունքների և մարդկանց իրական վարքի միջև գոյացող անդունդը: Դրա համար էլ Սևակը այնպես կրքոտ խոսում էր մաքրության, անկեղծության, մարդկայնության մասին:

Հատկապես Սևակի վերջին՝ «**Եղիցի լույս**» ժողովածուում այս կիրքը հասնում է իր բարձրակետին: Ինչո՞ւ էր Սևակը իր գիրքը վերնագրել աստվածաշնչյան այդ երկու բառով: Որովհետև նա ուզում էր փարատել մարդկանց հոգիների խավարը այնպես, ինչպես Աստված գոչեց՝ «Եղիցի լույս», և աշխարհը լուսավորվեց: Ամբողջ գիրքը համակված է այդ լույսի ու մաքրության կարոտով: Ժողովածուն սկսվում է լույսը փառաբանող գործերով՝ «Առավոտ լուսո», «Լույս գվարթ», «Լույսի աղբյուրը». այս վերնագրերի մի մասը Սևակը վերցրել է

միջնադարյան հոգևոր երգերից: Օրինակ, մեր պոեզիայի սիրված գործերից է Ներսես Շնորհալու «Առավոտ լուսո» շարականը: Ակնհայտ է, որ դրանով Սևակը ընդգծում է իր երազած լույսի հոգևոր բնույթը:

Սևակը գայրությունով, սուր հեգնանքով է խոսում այն արատների մասին, որոնք մթագնում են մարդու հոգին, և դարձյալ ու դարձյալ նա ըմբոստանում է կեղծիքի ու երեսպաշտության դեմ, ինչպես «Նորօրյա աղոթք», «Դիմակահանդեսի գլխավորը», «Իրերի բնությունը», «Դարակեսի հիմնը» և այլ բանաստեղծություններում: Դիմակահանդեսի գլխավորը համանուն բանաստեղծության մեջ բացականում է.

*Լսում եք ինձ:
Բավական է,
Հանեցե՛ք ձեր դիմակները:
Հանեցե՛ք,
Որ քամու ձեռքով
Ձեզ կարոտած օդն ապտակի
Ձեր իսկական դեմքը տխեղծ,
Եվ շող-շաղափն արեգակի
Սրսկումի նման ծակի
Ընդարմացած ձեր դեմքը խեղճ,
Որի ծանոթ նմանությունամբ են հորինված
(Մի՛ մոռացեք) աստվածները (մի՛ մոռացեք)...*

Ահա այս կիրքը՝ մարդու իսկական, անաղարտ, մաքուր դեմքը տեսնելու ցանկությունը, դառնում է ժողովածուի գլխավոր տրամադրություններից մեկը: Գրքի կարևոր բանաստեղծություններից է «Լուսավորության չգիտեմ ինչը» գործը՝ ամբողջ ժողովածուն հասկանալու բանալիներից մեկը: Քնարական հերոսը ինքը իրեն նշանակում է լույսի սպասավոր, որպեսզի՝

*Սեղմե՛մ մի կոճակ՝
Եվ մարդկանց հոգում
Ծաղիկների պես լույսերը ծաղկեն...*

.....

*Ու եթե լինի՛,
Հենց այսպես լինի,
Իզուր չեմ գոչի ես. «Եղիցի լույս»,
Այլ կշռնջամ արդեն. «Եվ եղև»:
Եվ լինի՛,
Լինի՛...*

Սևակի քաղաքացիական կիրքը շատ ուժեղ է: Բայց նա նաև մարդկային զգացմունքների երգիչն է, և նրա քնարական երգերը նույնքան սիրված էին հասարակության մեջ, երիտասարդության կողմից, ինչպես հասարակական հնչեղություն ունեցող բանաստեղծությունները: «Մոր ձեռքերը» դարձել է հայ ընթերցողի ամենասիրած բանաստեղծություններից մեկը: Երիտասարդությունը շարունակում է կարդալ ու արտասանել Սևակի սիրային բանաստեղծությունները, որոնք այնքան հարազատորեն արտացոլում են ժամանակակից երիտասարդ մարդկանց հոգևոր աշխարհը: Սևակի սիրո զգացումը խորն է, ուժեղ, բռնկուն: Դա այն զգացմունքն է, որ բանաստեղծները երգում են արդեն հազարամյակներ: Բայց Սևակը երգում է իսկապես իբրև ժամանակակից մարդ, հոգեբանական բարդ շրջադարձեր է բացահայտում սիրո հոգեբանության մեջ: Ահա «Քո անունը» բանաստեղծությունը.

*Ես ատում եմ քո անունը,
Ինչպես որ դու քեզ փայփայած
Իմ ձեռքերն ես ատում գուցե:*

*Ես ատում եմ քո անունը,
Որ խրվել է իմ լեզվի մեջ
Փշատենու փշի նման:*

*Եվ դու ինչո՞ւ չես հարցնում,
Թե քո անունն ինչ գույն ունի:
Ես ատում եմ և այդ գույնը:*

.....

*...Եթե աղջիկ ես ունենամ՝
Նա կկոչվի քո անունով:*

Ես ատում եմ քո անունը...

Սա քնարական այն բռնկումը չէ, որ մենք տեսնում ենք Իսահակյանի գործերում, կամ այն մեղմ զգացմունքը, որ կա Տերյանի բանաստեղծության մեջ: Սևակը նման չէ նաև իր ժամանակակիցներին: Այս բանաստեղծության մեջ սիրո ապրումը անցել է երկար տառապած և տառապող, ամեն ինչ մտքի քննությանը ենթարկող մարդու միջով: Զգացմունքի այս հակասականությունը հազվադեպ չէ Սևակի սիրո բանաստեղծություններում:

Ահա և բաժանման տառապանքը («Չկաս ու չես լինելու»).

Դու չկաս, չկաս...

*Եվ առավոտը
Այնպես աղոտ է,*

Ասես ցավոտ է...
 ...ու չէ՞ս լինելու:
 Եվ հորիզոնն է փակվում իմ առջև:
 Նրան փակում է ոչ ամպի ճոթը,
 Այլ քո զգեստի ամպեղեն փոթը:
 Դու չկաս, չկաս...
 Եվ օդ է դարձել
 Այս համատարած անտեր կարոտը:
 ...ու չէ՞ս լինելու:
 Ու թվում է, թե լուցկի մոտեցնեմ՝
 Պիտի բռնկի ինքը վառ օդը:
 Դու չկաս, չկաս...
 Ինչո՞ւ եմ, սակայն, քեզ զգում այնպես,
 Այնպե՞ս եմ զգում, ինչպես երևի
 Ոտից նոր զրկվածն զգում է ոտը,
 Որ նույնպես չկա
 Ու չի՞ լինելու...

Սերը Սևակի պոեզիայի ամենակարևոր թեմաներից մեկն է: Ոչ միայն բանաստեղծություններ, այլև պոեմներ է նվիրել Սևակը սիրուն՝ «Նահանջ երգով», «Երգ երգոց», «Ուշացած իմ սեր», «Ֆրանչեսկա դա Ռիմինի»: Եվ բոլոր այս գործերում Սևակը երգում է ուժեղ, խոր զգացմունքը:

«Անլռելի զանգակատուն» պոեմը: Կոմիտասի անհատականությունը, իր իսկ՝ Սևակի վկայությամբ, վաղուց էր նրան զբաղեցնում: Նա մտածել է Կոմիտասի կյանքը ներկայացնել տարբեր ժանրերով, բայց ի վերջո կանգ է առել պոեմի վրա: Ինչպես ինքն է վկայում, Մոսկվայում աշխատած տարիներին պատահաբար ռադիոյով լսում է Կոմիտասի երգերից մեկը, և միանգամից հստակվում է մտահղացումը: Սկսում է աշխատել, և համեմատաբար կարճ ժամանակում (մեկ տարուց քիչ ավելի) պոեմն ավարտում է: Հայաստանի իշխանությունները ընդհանուր առմամբ լավ են ընդունում Սևակի պոեմը, շուտով այն տպագրվում է և դառնում այդ տարիների ամենակարդացվող, հանրաճանաչ երկը: Սևակը մինչ այդ հայտնի էր գրական աշխարհին, բանաստեղծություններ, գրքեր էր տպագրել: Բայց դեռ նրա անհատականությունը չէր դրսևորել իր ողջ ինքնատիպությունը: Հենց սկզբից Սևակի բանաստեղծական մտածողությունը տարբերվում էր իր սերնդակիցների, նաև նախորդների մտածողությունից: Երբ Սևակի մահվանից հետո լույս տեսան նրա պատանեկան բանաստեղծությունները «Սկիզբ» գրքում, այս ճշմարտությունը ակնհայտ դարձավ: Բայց մի

պահ Սևակը ցանկացավ նման լինել մյուսներին և գրեց գործեր ավանդական ոգով, որոնք կորան այն տարիներին տպագրվող գրքերի հոսքում: Իսկ այս պոեմով Սևակը վերագտավ իր իսկական ձայնը: Հայ ժողովրդի հոգևոր կյանքում հասունացած խնդիրների զգացողությունը և տաղանդը «**Անլռելի զանգակատունը**» դարձրին ժամանակի ամենանշանակալից գրական երկը:

Պոեմի կառուցվածքը երաժշտական տարրեր ուներ իր մեջ: Դա երևում է արդեն վերնագրում: Մասերը կոչվում էին համազանգեր և դողանջներ: Սևակը տեքստում լայնորեն օգտագործում է Կոմիտասի մշակած երգերի տողերը:

Բայց պոեմը սոսկ մեկ, թեկուզ հանճարեղ մարդու կյանքի պատմությունը չէ: Պոեմի հսկայական ազդեցությունը պայմանավորված էր նրանով, որ Կոմիտասի կյանքի դրվագների շուրջը հյուսվում է հայ ժողովրդի այդ ճակատագրական տարիների ամբողջ պատմությունը՝ հերոսական և ողբերգական:

Կոմիտասի կյանքը ամբողջ ժողովրդի պատմության համատեքստում դիտելու միտումը զգացվում է դեռ պոեմի առաջին տողերում:

*Հազար ութ հարյուր վաթսուհինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,
Դժվար է ասել:*

*Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...*

Կոմիտասը ծնվել է 1869թ.: Այդ նույն թվին է ծնվել նաև Հովհաննես Թումանյանը: Երկու մեծ հայերի՝ մեծ բանաստեղծի և մեծ երաժշտի ծնունդը նույն թվականին կարծես խորհրդանշում էր ամբողջ հայ մշակույթի, գրականության և երաժշտության միասնությունը: Նրանք երկուսով պետք է դառնային հայոց պատմության ամենաողբերգական տարիների վկաներն ու, ամեն մեկը իր ձևով, դրանք արտացոլեին իրենց ստեղծագործության մեջ՝ իրենց կնիքը դնելով հայոց հոգեբանության ու մտավոր կյանքի վրա: Որոշակի օրինաչափություն կար այն բանում, որ Թումանյանի «Անուշի» հիման վրա օպերա գրելու առաջին փորձը կատարեց Կոմիտասը, թեև այդ փորձը անավարտ մնաց...

Սևակի այս պոեմում ամբողջ ուժով արտահայտվեց հայ ժողովրդի հոգում կուտակված ցավը, որ դեռ արժանի ու խորունկ արտահայտություն չէր գտել երեսնականներից հետո: Այդ ցավը միշտ մղվել էր ժողովրդի գիտակցության խորքերը: Սևակը ելք տվեց դրան:

Բայց միայն ցավը չէր, որ հնչեց Սևակի պոեմում: Նրա մոնումենտալ մտահղացման մեջ շատ կարևոր էր ժողովրդի կյանքի պատկերումը: Կոմիտասի ստեղծագործությունը ներկայացնել առանց դրա անիմաստ կլիներ: Բոլոր այդ երգերը ծնվել էին ժողովրդի առօրյայից: Սևակը, որն ինքը ծնվել և հասակ էր առել գյուղում, լավ գիտեր հայ գեղջուկի կյանքը: Եվ նրա պոեմում ընթերցողի աչքի առջև ծավալվում է այդ կյանքը՝ իր երգերով, պարերով, ուրախությամբ ու գրկանքներով:

Պոեմին հյուսված են Կոմիտասի մշակած ժողովրդական երգերի բազմաթիվ հատվածներ: Երգային հատվածների առատությամբ Սևակի պոեմը հիշեցնում է Թումանյանի պոեմները: Սա պատահական չէր: Ինչքան էլ Սևակը իր մտածողությամբ հեռու լիներ Թումանյանից, ժողովրդական կյանքի պատկերումը թելադրում էր իր օրենքները: Երգերը ժողովրդի կենցաղում հսկայական դեր էին կատարում:

Կոմիտասի տխուր մանկության պատմությունն անելուց հետո Սևակը ներկայացնում է նրա ուսումը Էջմիածնում, նրա երիտասարդությունը: Կոմիտասը տարվում է հայոց երաժշտությամբ, ամբողջովին նվիրվում դրա ուսումնասիրությանը: Նա հավաքում է և մշակում, օտարամուտ տարրերից մաքրում ժողովրդական երգերը: Սևակը նկարագրում է նրա ուղևորությունը Բեռլին, որտեղ Կոմիտասը փայլով ներկայացնում է հայ ժողովրդական երաժշտությունը: Եվրոպական հասարակությունը հասկանում է, որ հայկական մշակույթը, հայկական երաժշտությունը ինքնուրույն արժեք են:

Սևակը զուգահեռ ներկայացնում է այն խարդավանքները, որոնք հյուսում էին հայ ժողովրդի շուրջը եվրոպական պետությունները, և թուրքական սուլթանի կազմակերպած, հետո երիտթուրքերի շարունակած կոտորածները Արևմտյան Հայաստանում: Սևակը չի շրջանցում նաև ցարական կառավարության հայահալած քաղաքականությունը Արևելյան Հայաստանում, հայկական դպրոցների փակումը, վանքապատկան հողերի գրավումը: Այսպես ներկայացվում է հայ ժողովրդի կյանքի ամբողջական բանաստեղծական պատկերը մինչև պատմության նորագույն շրջանը, և այդ պատկերի հենքին է հասկանալի դառնում Կոմիտասի գործի մեծությունը:

Պատերազմից առաջ Կոմիտասը մեկնում է Պոլիս, այնտեղ երգչախումբ ստեղծում, համերգներ տալիս: Եվ երբ սկսվում են հայ մտավորականության ձերբակալությունները, ձերբակալում են նաև Կոմիտասին: Ինչպես հայտնի է, Կոմիտասը կենդանի է մնում, բայց կորցնում է բանականությունը: Այս դողանջներում Սևակը պատկերում է ոչ միայն թուրքերի գազանությունը, այլև Եվրոպայի երեսպաշտ հանցակցությունը Թուրքիային.

Ուզեցին մեկ հայ թողնել,

Եվ այն էլ... թանգարանում...

— Գարուն ա, ձուն ա արել...

Մեկ հայ թողնելու մասին, այն էլ թանգարանում ցուցադրելու համար, ասել է գերմանական Վիլհելմ կայզերը:

«Ղողանջ մթագնումի» գլխում Սևակը պատկերում է Կոմիտասի խելագարվելը: Կոմիտասի գիտակցության մեջ կողք կողքի հանդես են գալիս հայրենիքի շքեղ պատկերները և այն ավերը, որ գործեցին այնտեղ թուրքերը.

*Հայաստան կոչված անհայ աշխարհում
Զպիտի՜ հնչի հայ պարեղանակ,
Հայ երգ
Ու խաղիկ...*

*– Դե ե՛կ, Վարդապետ,
Եկ ու մի ցնդիր...*

Ղողանջում այսպես կրկնվում է Կոմիտասի խելագարվելու մոտիվը՝ «Դե ե՛կ, վարդապետ, ու մի խենթանա», «Դե եկ, վարդապետ, եկ ու մի ծովիր» և այլն: Դա դառնում է ոչ միայն այս ղողանջի, այլև ողջ պոեմի առաջատար մոտիվներից մեկը. Կոմիտասը, որն ապրում էր իր ժողովրդի կյանքով, Ցեղասպանության արհավիրքին ի տես պետք է խելագարվեր, որովհետև իր տեսածը դուրս էր մարդկային բանականության սահմաններից...

Պոեմն ավարտվում է հավատի խոսքերով: Ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը ոտքի կանգնեց: Եվ Կոմիտասը մնաց իբրև հայ մշակույթի մշտատևության խորհրդանիշ.

*Դու՛ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց,
Դու՛ մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն
Անլռելի զանգակատո՛ւն...*

«Անլռելի զանգակատնից» հետո պոեմը դարձավ Սևակի ստեղծագործության հիմնական ժանրերից մեկը: Մեկ տասնամյակից քիչ ավել ժամանակամիջոցում ասպարեզ եկան մի քանի պոեմներ, որոնք իրենց ազդեցությունը գործեցին ոչ միայն հայ բանաստեղծության, այլև ժողովրդի ողջ մտավոր կյանքի վրա՝ «Եռաձայն պատարագ», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Ուշացած իմ սեր», «Երգ երգոց» և այլն: Դրանցից երկրորդը նվիրված էր հայ գրերի ստեղծմանն ու ստեղծողին:

«Եվ այր մի՝ Մաշտոց անուն...» պոեմը: Մեսրոպ Մաշտոցը հայոց պատմության ամենակենտրոնական հերոսներից մեկն է: Պարույր Սևակի պոեմը գրված է այս գիտակցությամբ: Մեր կյանքում գրերը, գրավոր մշակույթը անփոխարինելի դեր կատարեցին: Սևակը պոեմում տալիս է հայոց նախագրային պատմության մի տպավորիչ պատկեր՝ Հայկից մինչև Արշակունիներ: Նա հպարտությամբ խոսում է հեթանոսական մշակույթի, հայ արքաների ու գորավարների մասին. բայց ահա գալիս է քրիստոնեությունը, դառնում պետական կրոն Հայաստանում, իսկ Արշակունիների գահը կործանվում է: Եվ ի՞նչ պետք է լիներ Հայաստանի վիճակը այդ պայմաններում՝ խախուտ, ապա կործանված պետականություն, կրոն, որը դեռևս խորթ էր, հեռու էր հայի գիտակցությունից, որովհետև պաշտամունքը կատարվում էր անհասկանալի լեզվով, այդ կրոնի սուրբ գրքերը նույն այդ լեզվի պատճառով անհասանելի էին հայերին: Հայ ժողովրդին ուղեցույց էր պետք: Այդ ուղեցույցը եղավ Մաշտոցը իր գյուտով՝ գրերով: Այսպես է ասում Մեսրոպի սխրագործության մասին Սևակը.

*Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե հրաշք չկա՛,
Կա միայն կարի՛ք:
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,
Թե այնտեղ է լուկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար...*

Ուրեմն՝ Մաշտոցը հայ ժողովրդի այդ ծանրագույն տարիների ծնունդն էր, այն մարդը, որը հասկացավ, որ ժողովուրդը սեփական գրի կարիք ունի՝ պատմության փոթորիկներին դիմանալու համար: Թվում էր, թե հայության գոյության սահմանն էր հինգերորդ դարի սկիզբը, պետականության քայքայումը: Թվում էր, թե իսկապես ամեն մի հնար վերջանում է: Մեսրոպը իր սխրանքով գործեց այն հրաշքը, որ պիտի պահպաներ ժողովրդին բազում դարերի ճանապարհին:

Պոեմի ամենանշանակալից հատվածներից մեկը, թերևս ամենանշանակալիցը Մաշտոցի գործի հետևյալ բնութագիրն է.

*Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ-Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա արեց միայն՝ անգեն ու անգորք.
Մեզանից խլված մեր պետություն տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյալ՝ պետություն,*

*Թագավորություն մի հզորագոր՝
Ոչ թե մեզանից խլված հողերի,
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,
Այլ մեր անբաժան,
Մեր անկիսելի՛,
Երբեք չխլվող հոգիների մեջ:*

Հայ գրերի ստեղծումը Սևակի պոեզիայի համատեքստում կենտրոնական թեմաներից մեկն էր: Սևակը ձգտում էր հասկանալ հայոց պատմության օրինաչափությունները, ընթացքը, իր ժողովրդի կենսունակության գաղտնիքը: Դրանից ժողովուրդը պետք է նաև դասեր քաղեր իր ապագայի համար: Եվ իր որոնումների մեջ Սևակը անխուսափելիորեն պետք է գար հայոց դպրության, մշակույթի, գրի և գրականության խնդրին: Միայն Կոմիտասի երաժշտության հմայքը չէր, որ նրան ստիպեց գրել Կոմիտասի մասին: Կոմիտասը բանալիներից մեկն էր հայոց ճակատագիրը հասկանալու համար: Բայց հայոց պատմության գլխավոր բանալին Մեսրոպ Մաշտոցի գործն էր: Վերևում բերված տողերը ուղղակի վկայում են, որ հայ ժողովրդի պատմական ընթացքի անընդհատությունը, հակառակ բոլոր զավթիչների ու ջարդարարների ջանքերի՝ ապահովեցին հայ գիրն ու գրականությունը, հայկական մշակույթը: Կորցրինք պետականությունը, մեր սահմանները բացվեցին ամեն տեսակի վայրի ցեղերի առջև, բայց ապրեցինք, հարատևեցինք գրի ու դպրության, մշակույթի շնորհիվ: Այս պոեմից առաջ Սևակը մի ծավալուն բանաստեղծություն է գրել՝ դարձյալ նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին՝ «Խոսք հավաստիքի»․ այստեղ շատ մտքեր կան, որ հետո խորացվում են պոեմի մեջ: «...Անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար»․ սա Մաշտոցի գործի էությունը բացահայտող տողերից մեկն է բանաստեղծության մեջ: Այս միտքը հետագայում կրկնվում-խորացվում է պոեմում՝ նորից ու նորից հաստատելով այն իրողությունը, որ ծանրագույն վտանգ էր կախվել հայ ժողովրդի գլխին, և Մաշտոցի գյուտը հեռացրեց այդ վտանգը:

Սևակի պոեմը միակը չէ հայ գրականության մեջ՝ նվիրված Մաշտոցին: Դարասկզբին, երբ նշվում էր գրերի գյուտի 1500-ամյակը, Մաշտոցին նվիրված պոեմ գրեց նաև Միամանթոն: Քսաներորդ դարի երկու սիրված հայ բանաստեղծների այս պոեմները յուրահատուկ ապացույցն էին այն մեծ դերի, որ կատարել էին գիրն ու գրականությունը հայ ժողովրդի կյանքում: Մաշտոցի պաշտամունքը հայոց մշակույթի առանձնահատկություններից մեկն է: Աշխարհում չկա մեկ ուրիշ ժողովուրդ, որն այսպիսի պաշտամունքով վերաբերվի իր գրերին ու գրերն ստեղծողին: Միամանթոյի և Սևակի պոեմները, ինչպես նաև Մաշտոցին ու հայ գրերին նվիրված այլ պոեմներ և բանաստեղծություններ, պետք է քննել այս իրողության լույսի տակ:

Արվեստի առանձնահատկությունները: Երբ Սևակը տպագրեց իր ժողովածուները, եղան ոչ միայն հիացմունքի խոսքեր, այլև առարկություններ և խիստ քննադատություն: Նրան ամենից շատ մեղադրում էին պոեզիայի դատողականության համար: Ամեն մի ընթերցող կարող է վկայել, որ նրա գործերում զգացմունքը շատ է, երբեմն ավելի, քան իր ժամանակակից շատ բանաստեղծների գործերում, որոնք իրենց համարում էին դասական քնարեգության հետևորդներ: Ճիշտ է, որ միտքը, տրամաբանության աշխատանքը շատ կարևոր են Սևակի գործերում: Բայց դա չոր տրամաբանությունը չէ, այլ մարդկային կենդանի խոհը՝ համակված ուժեղ ու խոր զգացմունքներով: Սևակը ինքը շատ լավ գիտակցում էր իր պոեզիայի այս առանձնահատկությունը: Զրույցներից մեկում ասում է. *«...Ես քնալ համամիտ չեմ իմ այն քննադատների հետ, որոնք ինձ լավություն անելու համար հաճախ են գրում, թե ես բանական-դատողական-ռացիոնալ-ինտելեկտուալ բանաստեղծ եմ: Ես ստիպված եմ հանդգնելով ասելու, որ ես ինձ ավելի հուզական-զգացումային բանաստեղծ եմ համարում, քան իմ այն բանաստեղծ-ընդդիմախոսները, որոնք երդվում են հույզի ու զգացմունքի անունով... Իսկական բանաստեղծությունը չի կարող չլինել զգացմունքային, բայց այդ զգացումն էլ չի կարող չլինել խոհական, որովհետև մենք մարդ ենք կոչվում, այսինքն՝ Homo sapiens, այսինքն՝ բանական արարած, որի զգացումներն էլ պիտի լինեն բանական, ինչպես որ բանականությունն է զգայական»:* Սևակին ժամանակակից բանաստեղծության մեջ հենց սա էր ամենից շատ մտահոգում՝ բանականության և զգացմունքի միասնությունը: Ոչ պարզունակ զգացմունքայնությունը, ո՛չ էլ մակերեսային դատողականությունը իսկական բանաստեղծություն չեն կարող ստեղծել: «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» հայտնի հոդվածում նա ասում է. **«Մորոք ու գլխից քացի մենք ունենք ևս մի բան, որ ժամադրալայրն է այդ երկուսի և կոչվում է *հոգի* կամ *նգի*»:** Ահա այս հոգու կամ ոգու բանաստեղծությունն է Սևակի իդեալը:

Մի քանի լրացուցիչ դիտողություն Սևակի արվեստի առանձնահատկությունների մասին:

Սևակը օգտագործեց տաղաչափական մի համակարգ, որը հանգին առանձին նշանակություն չի տալիս: Հանգը կարող է լինել, բայց կարող է և չլինել: Հիշեք «Անլռելի զանգակատան» հենց սկիզբը, գրնգուն հանգերը: Բայց նույն պոեմի բազմաթիվ հատվածներ գրված են անհանգ: Անհանգ են գրված վերջին ժողովածուների բանաստեղծությունները: Սևակը այսպես մոտեցնում էր բանաստեղծական խոսքը առօրյա խոսքին: Երբ նա ասում էր, որ «լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ», նկատի ուներ նաև բանաստեղծությունը մարդկանց մոտեցնելու անհրաժեշտությունը: Չափի հարցում ևս Սևակը իրեն ազատ է զգում: Ռիթմիկ խոսքից չի հրաժարվում, բայց հավասարաձանկ տողերից, բանաստեղծական տներից հրաժարվում է, և դարձյալ կենդանի խոսքի հնչե-

րանգն է հաղթանակում: Ահա «Նամակի փոխարեն» բանաստեղծության սկիզբը.

Դու ի՞նչ ես ուզում:

Դու շա՛տ բան կուզես,

Բայց ես որտեղից քո ուզածը տամ:

Այսպես մենք խոսում ենք մեր առօրյա կյանքում՝ առանց հանգ ու չափի: Խոսքի բանաստեղծականությունը մակերեսից անցնում է խորքերը: Այդ նպատակին էր ծառայում բանաստեղծության բառապաշարի աննախադեպ թարմացումը: Սևակը լայնորեն բացեց բանաստեղծության դռները առօրյա խոսակցական լեզվի բառապաշարի ու ոճերի առջև՝ օգտագործելով բառեր, որոնք մինչ այդ համարվել էին անբանաստեղծական կամ նույնիսկ հակաբանաստեղծական: «Միայն խոսք սխալի մասին» բանաստեղծության մեջ այսպիսի տող կա՝ «*կարող է մայրանալ... մինչև իսկ **չքե՛րը***»: Այս վերջին բառը ժողովրդական-կենցաղային խոսքից է գալիս, հին պատկերացումներով որևէ կապ չունի բանաստեղծական խոսքի հետ: Բայց Սևակի բանաստեղծական համակարգում այսպիսի բառերը կարևոր դեր են կատարում՝ խոսքը վերածելով «հմուտ դարբնի» անգարդ, երբեմն կոշտ, բայց խորքում բանաստեղծական երկխոսության:

Սևակի մահից անցել է քառասուն տարի: Մա բավական ժամանակ է որևէ գրողի ժառանգության կենսունակությունը ստուգելու համար: Սևակի ստեղծագործությունը այսօր էլ կենսունակ է, այսօր էլ նրան կարդում և արտասանում են մենակ և ամենատարբեր դահլիճներում:

Ոչ դքի արժանիքեն բան պակասեցուցած կրլանք, երբ ըսենք թե Չարենցեն ետք Հայտնվող ամենեն ուժեղ խառնվածքը եղավ Պարոյրը:

Իհնչ որ գրե Պարոյր, անձնական ապրումներ, ազգային ցավեր, թե իմաստասիրական խոհեր, միշտ պիտի խոսի առաջին դեմքով երկրորդ դեմքի մը հետ, ու եթե չգտնե իսկ, ինքն է որ Հարցումը պիտի ստեղծե, պատասխանելու Համար ինքն իրեն, ջղային, անՀամբեր, կովազան՝ միանգամընդմիշտ ձերբազատ չափ ու Հանգի կաշկանդումեն, իր ավունին Հորդ թափը բավ Համարելով և չափին և Հանգին և երաժշտականություն: Անդադրում այդ «վեճն» է, ներքին այդ «ինքնակոռվը»՝ որուն շնորհիվ միայն կրնա աճիլ և մոլեգնանալ: Խաղաղ, Հեզասահ և նրբակերտ տողերու կատարելությամբը ներգործող արվեստը իրը չէ: Պրկումի, լարումի և Հարածուն դինամիզմի ուժով, արգելքի դեմ աշտանակվելով միայն կրնա արժեցնել Պարոյրը իր քերթվածը, և ծովափին արգելիչ խարակները պետք է ցցվին առջևը, որպեսզի անոնց դեմ փշրվելով կարենա ստեղծել վարեն վեր արձակվող ջրվեժին ցայտը:

Անդրանիկ Ծառուկյան¹

¹ Անդրանիկ Ծառուկյան – սփյուռքահայ հայտնի բանաստեղծ և հասարակական գործիչ

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Պ. Սևակը, ինչ է նրա իսկական անուն-ազգանունը:
2. Ծրագրային ինչ հողվածով հանդես եկավ Պ. Սևակը և ինչ դրույթներ այնտեղ առաջ քաշեց:
3. Թվարկե՛ք Պ. Սևակի հիմնական ժողովածուների և պոեմների վերնագրերը:
4. Ինչպե՞ս էր պատկերացնում իր ժամանակի մարդուն Պ. Սևակը. ինչպիսի՞ն է «Մարդը ափի մեջ» շարքի բանաստեղծությունների քնարական հերոսը:
5. Ինչ է նշանակում «Եղիցի լույս», ինչո՞ւ է այդպես վերնագրել իր ժողովածուն Պ. Սևակը:
6. Երբ է գրվել «Անլռելի զանգակատուն» պոեմը, ինչպե՞ս է ծնվել պոեմի մտահղացումը:
7. Ինչ կառուցվածք ունի «Անլռելի զանգակատուն» պոեմը: Զանի մասից է բաղկացած, ինչպե՞ս են կոչվում մասերը:
8. Ներկայացրե՛ք Կոմիտասի մանկության և երիտասարդության տարիները՝ ըստ պոեմի:
9. Ո՞ւմ հետ է համեմատում Կոմիտասին Սևակը և ինչո՞ւ:
10. «Անլռելի զանգակատուն» պոեմում Կոմիտասի կերպարն ու հայ ժողովրդի կյանքի ճակատագրական տարիների պատմությունը միահյուսված են. ինչպե՞ս է դա իրագործել Պ. Սևակը:
11. Ո՞րն է «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի նյութը:
12. Ինչպե՞ս են բնութագրված Մաշտոցը և նրա գործը «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմում:
13. Նշե՛ք Պ. Սևակի բանաստեղծական արվեստի մի քանի առանձնահատկություն:

ՏՆԱՅԻՆ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Օգտվելով «Անլռելի զանգակատուն» պոեմի բնագրից՝ նշե՛ք բոլոր համազանգերի վերնագրերը. ընտրե՛ք որևէ համազանգ և համառոտ ներկայացրե՛ք նրա բովանդակությունը (դրականչների վերնագրերը և համառոտ բովանդակությունը):
2. Օգտվելով «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի բնագրից՝ ներկայացրե՛ք, թե ինչպիսին էր հայ ժողովրդի վիճակը «Նրանից առաջ», և ինչ պատահեց, երբ «Նա ծնվեց»:

ԹԵՄԱՏԻԿ ՍՈՍՑԻԱԼԻԶՄ

1. Ո՞ր ժողովածուն է նվիրված ժամանակակից մարդու ներաշխարհի խնդիրներին.
 - «Եղիցի լույս»
 - «Սիրո ճանապարհ»
 - «Մարդը ափի մեջ»
 - «Նորից քեզ հետ»
2. Նշվածներից ո՞րը «Մարդը ափի մեջ» շարքի բանաստեղծություններից է.
 - «Խոստովանում եմ»
 - «Ապրել»
 - «Խոստանում եմ»
 - «Նորօրյա աղոթք»
3. «Անլռելի զանգակատուն» պոեմի ո՞ր համազանգում է նկարագրված Կոմիտասի ուսումը էջմիածնում.
 - Ցայգալույսի համազանգում
 - Արևազալի համազանգում
 - Միջօրեի համազանգում
 - Ծավալվող համազանգում
4. Լրացրե՛ք «Եվ այդ մի՝ Մաշտոց անուն» պոեմի հետևյալ տողերի բաց թողած մասերը.

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,

Թե՛ _____

Կա միայն կարի՛ք:


Նրանք ծնվում են, որ ապացուցեն,

Թե՛ _____

_____ ...

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

(1935 – 2002)



1960-ական թվականները շրջադարձային եղան խորհրդային հասարակության կյանքում: Կառավարող կոմունիստական կուսակցության XX և XXII համագումարների, նույն կուսակցության ղեկավար մարմինների որոշումները ճանապարհ բացեցին ազատ մտածողության համար, գրողներին և արվեստագետներին հնարավորություն տվեցին խոսելու և գրելու հասարակության իրական կյանքի ու հոգսերի մասին: Ճիշտ է, այդ ազատությունը դեռ սահմանափակ էր, պաշտոնապես երկրի միակ գաղափարախոսությունը նույն կոմունիստական գաղափարախոսությունն էր: Բայց սկսվել էր մի գործընթաց, որը դադարեցնելն արդեն անհնար էր:

Հենց այդ տարիներին ասպարեզ իջավ գրական նոր սերունդը. նա արդեն իր կենսափորձով հակված չէր մնալու այն մտածողության շրջանակներում, որը մի քանի տասնամյակ տիրապետող էր եղել արվեստի և գրականության մեջ: Այս սերնդի գրողները հասակ էին առել պատերազմի և հետպատերազմյան դժվարին տարիներին, բախվել կյանքի այնպիսի երևույթների, որոնք խորհրդային գրականության մեջ գրեթե չէին արտացոլվել: Նրանց հայացքը ազատ էր այն սահմանափակումներից, որոնք ձևավորվել էին խորհրդային գրականության մեջ անցած տասնամյակներում: Նրանց ոգևորության աղբյուրը ոչ թե վերացական սխեմաներն էին, այլ իրական կյանքը իր դժվարություններով, հոգսերով, մարդկային դրամաներով: Դրա հետ միասին, նրանց մեջ ուժեղ էր հետաքրքրությունը արևմտյան գրականությունների փորձի հանդեպ: Այդ տարիներին Խորհրդային Միությունում ավելի լայնորեն սկսեցին հրատարակել արտասահմանյան գրականության լավագույն գործերը: Մի խոսքով՝ ձևավորվում էր գրական **նոր մտածողություն, նոր հայացք** կյանքի հանդեպ: Այս նոր հայացքը անվիճելիորեն վաթսունականների սերնդի ձեռքբերումն էր:

Հրանտ Մաթևոսյանը այդ սերնդի գրողներից էր: Նրա ստեղծագործության մեջ գրական նոր մտածողությունը արտացոլվեց ամենից խորը և արդյունավետ:

Մաթևոսյանը ծնվել է Լոռու Ահնիձոր գյուղում: Նրա գյուղական մանկության և պատանեկության տպավորությունները հետագայում լայնորեն արտա-

ցովեցին նրա վիպակներում և պատմվածքներում: Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը, ապա սովորել Մոսկվայի բարձրագույն բեմագրական (սցենարական) դասընթացներում: Երևանում սովորելու տարիներին աշխատել է իբրև սրբագրիչ:

Նրա առաջին գործերը շատ արագ նվաճեցին հասարակության համակրանքը: Դրանք թարգմանվեցին ռուսերեն, արժանացան նաև ռուս ընթերցողի բարձր գնահատականին. նրա բոլոր գործերը հետագայում թարգմանվում էին ռուսերեն (երբեմն դեռ հայերեն չտպագրված): Մաթևոսյանը դարձավ Խորհրդային Միության ամենահայտնի գրողներից մեկը, ստացավ Խորհրդային բարձրագույն գրական պարգևներից մեկը՝ Պետական մրցանակը:

Կյանքի վերջին տարիներին նա ընտրվեց Հայաստանի գրողների միության նախագահ:

Պատմվածքները: Մաթևոսյանի պատկերած աշխարհը գյուղն է, այն միջավայրը, որտեղ ինքը հասակ էր առել և որը շատ լավ գիտեր: Նրա առաջին գործերից մեկը՝ «Ահնիձոր» ակնարկը, որը տպագրվեց «Խորհրդային գրականություն» հանդեսում, ցուցադրում էր անկախ մտածողություն, Խորհրդային գրականության մեջ հաստատված սխեմաների անտեսում, գյուղական կյանքի իրական պատկերներ: Այս ակնարկում ժամանակակից հայկական գյուղը երևում էր իր ամենևին էլ ոչ հովվերգական առօրյայով, բարդ խնդիրներով, աշխատավոր մարդու դժվարին կյանքով: «Ահնիձորն» առաջացրեց պաշտոնական շրջանների դժգոհությունը, դրա տպագրության համար մի քանի պաշտոնյաներ պատժվեցին: Բայց դա ոչ միայն չվնասեց Մաթևոսյանին, այլև բարձրացրեց նրա հեղինակությունը, նրան դարձրեց հայկական արձակի ամենահետաքրքրական դեմքերից մեկը: Ակնարկին հետևեցին «Մենք ենք, մեր սարերը» վիպակը, որի հիման վրա նկարահանվեց համանուն ֆիլմը, պատմվածքների և վիպակների «Օգոստոս», «Մեր վագրը», «Ծառերը» և այլ ժողովածուներ:

Մաթևոսյանից առաջ հայկական գյուղի մասին շատ էր գրվել: Հիշենք հայոց ռեալիստական արձակի առաջնեկներին՝ Պերճ Պռոշյանի «Հացի խնդիրը» և մյուս վեպերը, Ղազարոս Աղայանի «Երկու քույրը», Հովհաննես Թումանյանի ողջ ստեղծագործությունը, գյուղագիրներին: Նորագույն շրջանում այս ավանդույթը շարունակվեց: Գյուղական կյանքի մասին իր հրաշալի պատմվածքները և վիպակները գրեց Ակսել Բակունցը: Ն. Զարյանը գրեց «Հացավան» վեպը և գյուղական պոեմները, Սերո Խանգադյանը՝ «Հողը» վեպը, Խաչիկ Հրաչյանը՝ «Ուրցի Մարանը» վիպակը, և այլն: Սրանցից ամեն մեկը իր ժամանակի գրականության ուշագրավ գործերից էր, ամեն մեկը տվել էր գյուղական կյանքի հետաքրքրական պատկերներ:

Բայց Մաթևոսյանի գրածը իր տեսակի հեղաշրջում էր հայկական գյուղական արձակում: Ուրիշ հերոսներ էին, ուրիշ հոգեբանություն էր, ուրիշ կյանք էր: Թեև նախորդ շրջանի գործերում այդ բոլորի տարրերը կային, բայց դրանք իսկապես նոր որակ դարձնում էր Հրանտ Մաթևոսյանը:

Անցյալ դարի 60-ական թվականներին գրականություն ոտք դրած գրողների միջև բանավեճ ծավալվեց գյուղագրություն թե քաղաքագրություն խնդրի շուրջը: Գրողների մի մասը գտնում էր, որ քաղաքի մասին գրելն ավելի դժվար է, որովհետև հայ գրականության մեջ գյուղի մասին շատ է գրվել, մեր օրերի գյուղի մասին գրողները կարող են հենվել ավանդույթների վրա, իսկ ահա քաղաքի մասին գրողները հենվելու տեղ չունեն: Բայց իրականում այդպես չէր: Նախ, հայ գրականության մեջ քաղաքի մասին էլ շատ է գրվել, և ձեզանից ամեն մեկը կարող է հիշել բազմաթիվ վեպեր, պատմվածքներ, պիեսներ քաղաքային կյանքի մասին, որ գրվել էին վաթսուականներից առաջ: Մյուս կողմից, գյուղի մասին գրողները ոչ թե կրկնում կամ հենվում էին դասականների վրա, այլ պատկերում էին իրենց ժամանակի գյուղը, որը բոլորովին նոր խնդիրներ էր դնում գրողի առջև: Գյուղը դարձել էր ժամանակի բարոյական խնդիրների հանգուցակետը, և պատահական չէ, որ և՛ ռուսական, և՛ այլ ժողովուրդների գրականության մեջ հենց գյուղը առաջին պլան մղվեց: Այսինքն՝ գյուղագիր կոչված հեղինակը գրում էր հենց մարդու մասին, նրա առջև ծառացած մեծ խնդիրների մասին: Գրականության արժեքը արտաքին հատկանիշներով չի որոշվում: Հրանտ Մաթևոսյանը բանավեճի ակտիվ մասնակիցներից էր և իր հոդվածը այդ վեճում ավարտեց այսպես. *«Չկա գյուղագրություն և քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»*: Անկախ այն բանից, թե ինչի մասին է գրական երկը, իսկական գրականությունը շոշափում է առհասարակ մարդու և հասարակության ամենակենսական հարցերը: Հենց դրա շնորհիվ Մաթևոսյանի ստեղծագործությունը դարձավ վաթսուականների և հետագա շրջանի հայ գրականության ամենաբարձր նվաճումներից մեկը:

Ուլբեհր էին նրա հերոսները:

Մինչ այդ խորհրդային գրականության մեջ հաստատվել էր գրական հերոսի առաջատար տիպ՝ հասարակականորեն ակտիվ մարդու, կուսակցական գործչի տիպը: Հեղափոխությունից հետո առաջին տարիներին այս հերոսը տեղին էր և հասկանալի: Կյանքում արմատական փոփոխություններ էին կատարվում, և առաջին պլան էր գալիս ահա այդ փոփոխությունները կատարող մարդը: Այսպես կոչված շարքային մարդը մնում էր այս հերոսի ստվերի տակ:

Բայց պատերազմից հետո շատ բան էր փոխվել, հեղափոխական հերոսը այլևս ուշադրության կենտրոնում չէր: Մարդկանց զբաղեցնում էին առօրեական հոգսերը, օրվա հացի խնդիրը: Գրականությանն ավելի ու ավելի էր հետաքրքրում նույն այդ «շարքային մարդը», որն աշխատում էր, տառապում և միաժամանակ բարիքներ ստեղծում, պահպանում էր դարավոր բարոյական արժեքները:

Հատկապես գյուղում կյանքն ավելի էր դժվարացել: Նախ՝ կոլեկտիվ տնտեսությունները (կոլխոզները), որոնք ստեղծվել էին երեսնական թվականներին,

չէին արդարացնում իրենց, գյուղացիները չնչին եկամուտ էին ստանում իրենց աշխատանքից: Մյուս կողմից, հողագործներից շատերը պատերազմից չվերադարձան, և գուտ տղամարդկային հոգսերը ընկել էին կանանց ուսերին: Գյուղացիներից շատերը ձգտում էին դեպի քաղաք, որտեղ գոնե ամենամսյա աշխատավարձ կար, հույս կար մի քիչ ավելի լավ ապրելու: Հողը, որ դարեր շարունակ կերակրել էր մարդկանց, լքվում էր:

Այս կյանքը և այս մարդկանց էր պատկերում Մաթևոսյանը: Նրա գործերում մենք ոչ մի տողում չենք հանդիպի կյանքը արհեստականորեն գեղեցկացնելու ձգտման, նա ներկայացնում է գյուղացու առօրյան անզարդ, ասկետական գույներով, հենց այդ անզարդության մեջ բացահայտելով իր հերոսների իսկական արժեքը:

Ընթերցողը չի կարող ուշադրություն չդարձնել Մաթևոսյանի գործերի մի առանձնահատկության վրա: Մերը, որ մինչ այդ գյուղական կյանքի պատկերներում մեծ և կարևոր տեղ էր գրավում, Մաթևոսյանի երկերում մղվում է հետին պլան: Նրա հերոսների ծանր առօրյան տեղ չի թողնում ժողովրդի կյանքի գեղեցկությունների համար: Այս առանձնահատկությունը դժվարացնում է Մաթևոսյանի երկերի ընթերցումը: Բայց Մաթևոսյանը զիջումներ չի անում իր գործերը ավելի մատչելի դարձնելու համար: Նրա բոլոր ջանքերն ուղղված են մի բանի՝ իր հերոսների իրական, պրոզայիկ կյանքը ճշմարիտ ներկայացնելուն:

Սյուժեն (դիպաշարը) ևս արմատականորեն ձևափոխվում է: Մաթևոսյանի գործերում հասարակական մեծ բախումներ կարծես թե չկան: Այստեղ մենք տեսնում ենք գյուղական կյանքի սովորական իրադարձությունները, մանր դեպքերը, բայց դրանց մեջ բացահայտվում են մարդու կյանքի իրական դրաման, ժամանակի մեծ խնդիրները:

Մաթևոսյանի գլխավոր հոգսը իր հերոսների ներքին կյանքի բացահայտումն է գյուղական առօրյայի համատեքստում:

Եվ այսպես, Մաթևոսյանի երկերը պատմում են հետպատերազմյան գյուղի մարդկանց, նրանց դժվար առօրյայի ու հարաբերությունների, մարդկանց հոգեբանության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին: Մի կողմից մարդիկ տառապում էին գյուղական կյանքի դժվարություններից՝ ձգտելով պահպանել իրենց բարոյական արժեքները: Մյուս կողմից հեշտ կյանքի ձգտումը աղավաղում էր մարդկանց հոգիները: Նրանք դառնում էին սպառողներ, այսինքն՝ մտածում էին միայն վայելելու, բայց ոչ ստեղծելու մասին: Այս երկու իրողությունները բախվում էին, և այդ բախումը արտացոլվում է Մաթևոսյանի գլխավոր երկերում: Գլխավոր խնդիրը այդ բախման մեջ վերաբերմունքն էր աշխատանքի նկատմամբ:

Նրա ամենահայտնի պատմվածքներից մեկը «**Նարինջ զամբին**» է, պատմություն երկու ձիերի մասին, որոնք ծնվել են գյուղական ախոռում: Բայց հետո մեկին տարել են քաղաք և դարձրել կրկեսի ձի, որը երեկոները պետք է

վազի կրկեսի ասպարեզում և զվարճացնի երեխաներին: Դրա համար նրան լավ կերակրում են, խնամում: Իսկ մյուս ձին, որ ծնվել էր նրա հետ, մնում է գյուղում և դառնում է գյուղացու ընկերը, նրա հետ չարչարվում առավոտից երեկո, և ոչ ոք նրան հոգ չի տանում: Դժվար չէ հասկանալ, որ այս երկու ձիերը խորհրդանշում են մարդկային երկու տիպեր և երկու ապրելակերպ: Մեկը առանց չարչարվելու, թեթև ապրելու սովորած մարդն է, մյուսը՝ ամբողջ կյանքում տառապող, ծանր աշխատանքով իր ապրուստը հոգացող մարդը: Մեկը բարիքներ սպառողն է, մյուսը՝ դրանք տառապանքով ու աշխատանքով ստեղծողը: Եվ իհարկե, Մաթևոսյանի անթաքույց համակրանքը գյուղական ձիու, չարչարվող ու տառապող Ալխոյի կողմն է, իսկ կուշտ ու խնամված Նարինջը միայն հակակրանք է հարուցում նրա աշխարհում:

Շատ հետաքրքրական իրավիճակ է նկարագրված «**Պատիժը**» պատմվածքում: Ամեն ինչից առաջ դա գյուղական կյանքի մի պարզ պատկեր է: Հայրը աշխատատեղից տուն է եկել կարճ ժամանակով, և այդ կարճ ժամանակում էլ պետք է վերանորոգի կոտնտեսության գոմի դուռը, որովհետև լավ արհեստավոր է: Երեխաները կարոտել են հորը, բայց նա ժամանակ չունի երեխաների հետ անցկացնելու համար: Իր սերը կարող է ցույց տալ միայն ժլատ, աննկատ փաղանքշանքով: Պատմվածքը գրված է իբրև այդ մարդու ավագ որդու վերհուշ, բայց դա սովորական վերհուշ էլ չէ: Արմեն Մնացականյանը հիշում ու խորհրդածում է իր հոր, իրենց ընտանիքի, իր մասին: Նրա խորհրդածություններում այդ մի օրվա պատահած ամենաաննշան դեպքերը բացահայտում են ներքին խոր բովանդակություն: Հայր ու որդի գնում են սարը, ձյուն է, սառնամանիք, բայց տղայի համար մեծագույն հաճույք է հոր հետ քայլելը, թեև հայրը շտապում է, և տղան ստիպված պետք ավելի շատ վազի հորը հասնելու համար: Հայրը ժամանակ առ ժամանակ տղային առաջարկում է հետ գնալ: Սիրտը ցավում է, նաև ամաչում է, որ փոքրիկ տղան, որն ընդամենը տասներկու տարեկան է, այդ սարսափելի ցրտին պետք է ինչ-որ հանձնարարություն կատարի: Բայց ուրիշ ելք չկա, պետք է տղան էլ աշխատի: Դեռ իրենց վիճակը շատ լավ է ուրիշների համեմատությամբ. գյուղի տղամարդկանց մեծ մասը գոհվել է ռազմաճակատում, և բազմաթիվ երեխաներ՝ Արմիկի տարիքին, նրանից կրտսեր ու ավագ, անհայր են մեծանում: Իսկ տղան, ինչպես և մյուս երեխաները, հորը շատ է սիրում: Առհասարակ, պատմվածքի ամբողջ մթնոլորտը համակված է սիրով: Երեխաները կապված են իրար, կապված են ծնողներին: Ծնողները շատ են սիրում իրենց երեխաներին, իրենց սար ու ձոր են գցում՝ նրանց շատ թե քիչ տանելի կյանք ապահովելու համար...

Մաթևոսյանի սիրելի հերոսները աշխատավոր մարդիկ են, որոնք իրենց աշխատանքով մի կարգին կյանք էլ չեն կարողանում ստեղծել իրենց ու իրենց երեխաների համար, նրանք *աֆերիստ* չեն, ինչպես բնորոշում է Արմիկի հայրը իրենց մի ազգականին, որը ժամանակին տեղափոխվել է Երևան և այնտեղ

ապրում է ապահով ու հարուստ: Խորամանկելը, կյանքից բարիքներ փախցնելը այս մարդկանց բանը չէ: Նրանք միայն աշխատել ու չարչարվել գիտեն, և դա ամենամեծ բարոյականությունն է այդ մարդկանց համար: Եվ աշխատել չկարողացողներին կամ չսիրողներին արհամարհում են: Արմիկի հայրը իսկական աշխատավորն է, և տղան անթաքույց հպարտանում է իր հորով ու նրա պես արհամարհում աշխատել չկարողացողներին: Այս բոլոր գծերը անցնում են երեխաներին՝ Արմիկին, նրա կրտսեր եղբորն ու քրոջը: Մի բան էլ է ժառանգել Արմիկը հորից՝ խիղճը, որը հոր, Արմիկի և նրանց նմանների բարոյականության առանցքն է: Կարելի էր ասել՝ և աշխատավորի խիղճը: Արմիկի հայրը ամաչում է, որ ինքը պատերազմից հետ է եկել, իսկ իր ընկերների և հասակակիցների մեծ մասը մնացել է պատերազմի դաշտերում: Նա ամաչում է գյուղում երևալ, թեև որևէ հանցանք չի գործել և պատրաստ է կատարել այրիների բոլոր խնդրանքները՝ տուն վերանորոգել, խոտ բերել և այլն: Հենց բարոյականության ու խղճի այս սրվածությունն է Արմիկի հորը դնում այնպիսի վիճակների մեջ, երբ ամեն մեկը կարող է «խաբել» նրան: Սա բարոյականության այն տեսակն է, երբ ազնիվ մարդն է ամաչում իր նմանի գործած անպատիվ արարքից, և ոչ թե խաբեբան ու «աֆերիստը»...

Ահա աշխատավորի այս խիղճն է, որ պատժում է Արմիկին, կամ ինքը իրեն է պատժում խղճի պարտադրանքով: Տղան պետք է անասնակեր բերի: Քանի դեռ հոր հետ է քայլում, ոչ մի բանից չի վախենում: Բայց ինչ-որ պահի նրանք պետք է բաժանվեն: Հայրը պետք է գնա կոլտնտեսության գոմերը, իսկ տղան խոտը պետք է բերի տուն: Տղան վախենում է ու խուճապահար փախչում տուն առանց խոտի: Բայց տուն հասնելուց հետո հրաժարվում է ներս մտնել, ընթրել: Այդպես իրեն պատժում է իր գործը չանելու համար: Նա ծնված օրից տեսել է իր ծնողների առօրյան, մասնակցել տան գործերին և գիտի, որ ամեն մեկը պիտի կատարի իր աշխատանքը, որ առանց աշխատանքի ապրել չի կարելի: Բայց ինքը, ահա, չի կատարել իր աշխատանքը, ուրեմն պետք է պատժվի, ուրեմն արժանի չէ հաց ուտելու:

Վիպակները: Մաթևոսյանի ստեղծագործության գլխավոր ժանրերը պատմվածքն ու վիպակն են, ընդ որում՝ այս երկու ժանրերի մեջ հստակ սահման դնելը բավական դժվար է: Նրա պատմվածքներից շատերը, ինչպես քիչ առաջ վերլուծված «Պատիժը», իրենց հարստությամբ և ծավալով վիպակներին չեն զիջում: Բոլոր դեպքերում, Մաթևոսյանը վեպով չի հրապուրվել և իր ասելիքը ասել է գերազանցապես վիպակների և պատմվածքների միջոցով:

Հ. Մաթևոսյանի առաջին վիպակը, որը հեղինակի անունը արագ հայտնի դարձրեց ընթերցողներին, «**Մենք ենք, մեր սարերը**» գործն էր, որի հիման վրա նկարահանվեց այսօր այնքան հայտնի և սիրված ֆիլմը: Դա պատմություն էր հովիվների կյանքի մասին, որոնց համար առօրյա կյանքի պայմանականու-

թյունները, բյուրոկրատիան խորթ էին: Մորթել-կերել են իրենց համագյուղացու ոչխարը, հետո հաշտվել են. էլ ինչ գործ ունեն միլիցիան (խորհրդային ժամանակներում այսպես էր կոչվում ոստիկանությունը), դատարանը, իշխանությունները: Պարզ, մարդկային հարաբերություններ են նրանց միջև, բայց հասարակությունը խառնվում է այդ հարաբերություններին, իր կամքը թելադրում մարդկանց: Իսկ Մաթևոսյանի հերոսները հենց դա չեն ուզում: Վիպակի վերնագիրն արդեն հուշում է միտումը. մի՛ աղավաղեք մարդկանց կյանքը անտեղի օրենքներով ու ձևականություններով, թողեք վայելենք մեր կարճ կյանքը մեր բնության, մեր կենդանիների հետ: Այս վերնագիրը յուրատեսակ դեկլարացիա էր վաթսունականների գրականության համար՝ մարդու, անհատի կյանքը առաջին հերթին, այդ մեկ-միակ կյանքի արժեքը և գերակայությունը հասարակական պայմանականությունների նկատմամբ:

Հետագայում Մաթևոսյանի վիպակների թեմատիկան և բովանդակությունը բարդացան: Մարդը, նրա կյանքն ու տառապանքները՝ ահա Մաթևոսյանի վիպակների (ու պատմվածքների) առանցքը: Գրողը մատնացույց է անում հասարակական գլխավոր խնդիրները, բայց դա անում է մարդու կյանքի նկատմամբ ունեցած խորին ուշադրությամբ, այդ կյանքի դիրքերից, մարդու հոգու խորքերից: Առհասարակ աշխարհին նայելու նրա ելակետը մարդու հոգին է, և երբ ասում ենք շարքային մարդ, ապա նկատի ունենք միայն նրա սոցիալական դերը: Մարդու կյանքն ու հոգին շարքային չեն լինում: Ամենաշարքային մարդու հոգում ապրումներ ու դրամաներ կան, որոնք պետք է բացահայտվեն, լսվեն:

Նրա գրականության գլխավոր հերոսներից մեկը Ադունն է, որի կյանքը ներկայացվում է «Աշնան արև» վիպակում: Գյուղացի կին, ում կյանքն անցել է անվերջանալի ու ծանր գեղջկական աշխատանքի և այդ դժվար կյանքում իր տեղն ունենալու պայքարի մեջ: Այս կինը չգիտի՝ հանգիստն ինչ բան է: Պիտի աշխատի, պիտի մի բան ավելացնի, «տուն դնի»: Հիմա՝ այդ օրը, երբ պատրաստվում է գնալ քաղաք՝ ավագ որդուն ամուսնացնելու, հիշում է իր ամբողջ կյանքը, հպարտանում անկեղծորեն, որ կարողացել է տունուտեղ դնել, և ուզում է, որ բոլորը տեսնեն, թե ինչ տուն ունի, ինչե՛ր է տանում տղային: Բայց, մյուս կողմից, հիշում է իր անարև երիտասարդության օրերը, պայքարը ամուսնու և նրա ընտանիքի ծույլ խաղաղության, քչով բավարարվելու սովորության դեմ, և ընթերցողն էլ տեսնում է, որ ուրախություն այդ կնոջ կյանքում չի եղել: Բայց նա բացառություն չէ, նա սովորական գյուղացի կին է, այդպես է եղել գեղջկուհու կյանքը: Սկեսուրը հայիոյել է, ամուսնու հայրն ու եղբայրը ծեծել են, տնից վռնդել, իսկ ամուսինը խեղճ-խեղճ նայել է... Այդ մարդիկ՝ Ադունի ամուսինն ու նրա հարազատները, սովորական մարդիկ են, նրանք էլ երևի ունեն իրենց ճշմարտությունը: Բայց այդ բոլորի արդյունքը Ադունի տառապանքն է եղել:

Բախվել են մարդկային երկու տարբեր տիպեր: Աղունը կռվող է, պայքարող, Միմոնն ու իր ընտանիքը՝ եղածով բավարարվող: Նրանց խորթ է Աղունի անհանգստությունը, նրանք չեն սիրում, երբ իրենց կյանքի միապաղաղ ընթացքը խանգարում են:

*«– Ասում եմ՝ դու ոչխարած Սերոն ես:– Երբ ութերորդ դասարանում էլ հանրահաշվից կտրվեց, Միմոնն ասաց. «Կարգին աշխօր ու փող է գալիս, քեր, այ կնիկ, թող գնա գառնարած»: Թող գը-նա գառ-նարած»... **Կռիվ չկա, կամք չկա, լավ ապրելու ցանկություն չկա, կարտուլ է՝ կարտուլ էլ կեր:– Վեր կաց, ես Արմենակ եմ քանեցրել...**»:*

Սա մի հատված է Աղունի խոսքից (այդ խոսքի առանձնահատկությունների մասին՝ քիչ հետո): Ուշադրություն դարձրեք ընդգծված նախադասությանը: Աղունը մեթօմ է ծուլյ, անկիրք, անկամ, հարմարվող մարդկանց ապրելու ձևը: Դա է Աղունի էությունը, դա է նրա կյանքը: Ստեղծելու, կյանքը լավացնելու, չխեղճանալու մի գորեղ կամք կա այդ կնոջ մեջ, և այդ կամքը հաղթահարում է Միմոնի, նրա ընտանիքի և հարևան-բարեկամների անբարյացակամությունը, ծեծելը, վռնդելը: Դրանք թունավորում են Աղունի կյանքը, բայց չեն փոխում նրա էությունը: Նույն հանգամանքները, որոնք ավելի թույլերին դուրս են մղում կյանքի մայրուղուց, Աղունին դարձնում են ավելի վճռական, ավելի համարձակ: Խոսել Աղունի հաղթանակի մասին դժվար է. այդ պայքարից Աղունը դուրս է գալիս ծերացած, երիտասարդությունն ու գեղեցկությունը կորցրած: Ինչպես ինքն է ասում, քառասուն տարեկան է, բայց ութսունի է նմանվում: Եվ այնուամենայնիվ, Աղունը կարողացել է ստեղծել իր տունը, իր օջախը, կրթության է տվել իր երեխաներին, և հիմա՝ այդ պահին, երբ որդին ամուսնանում է, նա իր ստեղծածից առատորեն բաժին է հանում որդուն:

Մաթևոսյանը մի վիպակ էլ ունի՝ «**Տերը**», որի կենտրոնում Աղունին շատ մոտ մարդկային տիպն է, այս անգամ տղամարդու տեսքով: Ռոստոմը անտառապահ է, իսկ անտառը հիմա շատերի է հրապուրում-քաշում: Անտառը գերան է, վառելափայտ է, անտառը որսի կենդանիներ են, որոնց մսից համեղ խորոված է ստացվում, վերջապես անտառը լավ քեֆ անելու տեղ է: Այսպես են նայում անտառին մարդիկ: Նրանք միայն սպառողներ են և ոչ թե ստեղծողներ: Նրանց մեջ տեր չկա, անտառը պահպանողի, մեզնից հետո եկողներին ինչ-որ բան թողնելու հոգսով տառապող չկա: Իսկ Ռոստոմը տեր է, Ռոստոմը չի ուզում թույլ տալ, որ անտառը դառնա սպառման ապրանք: Նա ցանկանում է անտառը պահպանել, և դրա համար նրան գյուղում չեն սիրում, ծեծում են, ընտանիքում էլ երջանիկ չէ: Բայց չի հանձնվում, շարունակում է կռվել, պայքարել, թեն կարծես ոչնչի չի հասնում: Մարդկային այս տեսակը՝ չարչարվողն ու տառապողը, ստեղծողն ու պահպանողը, Մաթևոսյանին ամենից մոտ տիպն է:

«Աշնան արև» վիպակի առաջին տարբերակը կոչվում էր «Երկրի ջիղը», և այս անվանումը շատ էր համապատասխանում Աղունի կերպարի էությանը: Աղունը մարդկային այն տիպն է, առանց որի կյանքը կանգ կառներ: Այդ մարդիկ առաջ են տանում կյանքը: Մաթևոսյանը այնպես է ներկայացնում իր հերոսուհուն, որ չես կարող համակրանքով չլքվել նրա նկատմամբ: Եվ չես կարող չկարեկցել, երբ նա հիշում է իր անլուր տառապանքները ամուսնու ընտանիքում: Դեռ բոլորովին երիտասարդ՝ նրան ամուսնացրել են Միմոնի հետ: Ամմայր աղջիկ է եղել, խորթ մայրը՝ «մերացուն», ամուսնուն համոզել է աղջկան տալ առաջին հանդիպած երիտասարդին, ինչպես շատ ու շատ աղջիկների ամուսնացնում էին գյուղում այն տարիներին: Եվ նոր ընտանիքում փորձել են նրան դարձնել խոնարհ, անխոս, դաժան են եղել նրա նկատմամբ, ամուսինն էլ այնքան թույլ ու հարմարվող էր, որ չի կարողացել կնոջը պաշտպանել: Այսպիսին է եղել գյուղական կնոջ առօրյան:

Կնոջ այս տեսակը շատ հարազատ է գրողին: Նա մի այլ պատմվածք ունի՝ «Ծառերը», որտեղ ներկայացվում է դարձյալ գեղջկուհու կյանքը, և մենք տեսնում ենք նույն գրկանքներն ու տառապանքները: Եվ դարձյալ՝ նույն անբավարարվածությունը, մերժումը այն հեշտ կյանքի, որին ձգտում են նրա որդիները:

«Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լավը չես, մեռդ վրեժ չկա: Զո պապ ու իմ հեր Իշխանը արևազույն պուճուր մի ձի ունեն, էնքան պուճուր, որ բանակ չէին տարել – ասում է, չարությունից պայթում էր՝ որ մի ձի իրենից առաջ էր ընկնում: Հևում էր, թոքերը շխկշխկում էին, քթերից կրակ էր թռչում – իր պուճուր տեղով տրաքում էր չարությունից»:

Նույն գյուղացի կինը՝ նույն Աղունն է խոսում: Իշխանը հերոսուհու հայրն է նաև «Աշնան արևում»: Խեղճության, հնազանդության, խոնարհվելու պատրաստակամության դեմ հանդիման՝ կռվի, պայքարի, հետ չմնալու նույն կիրքը: Իր որդիներին, նրանց նման մարդկանց հերոսուհին նմանեցնում է ծառերին, որոնք միշտ կանգնած են իրենց տեղում, ընդունակ չեն առաջ շարժվելու, ավելի լավ տեղ հասնելու: Եվ այդ մարդկանց հերոսուհին հակադրում է իր հորը՝ Իշխանին, որից բոլորը վախենում էին, թեև փոքրամարմին մարդ էր (իր ձին նման է իրեն), բայց մեջը կար ահա այդ չարությունը, խեղճ չլինելու, հետ չմնալու այդ կիրքը:

Այո՛, այսպիսի մարդիկ առաջ են տանում կյանքը: Բայց նորից դառնանք Աղունին: Նա ի վերջո հաղթել է անտարբերության ու համակերպվողության դեմ իր պայքարում: Բայց նույնիսկ հարազատ որդիները դժվարությամբ են լեզու գտնում մոր հետ: Այդ կնոջ կողքին ապրելը դժվար է: Այնքան ժամանակ, քանի դեռ Աղունը հիշում է իր կյանքը, և ընթերցողը նրա աչքերով է նայում

Աղունի շրջապատի մարդկանց, Սիմոնի մայրը, եղբայրները միայն զայրույթ են առաջացնում: Բայց ահա արդեն հիշողությունը չէ. երևում է ինքը՝ պառաված սկեսուրը, և Աղունի մեջ նորից եռում է հին ժամանակների անգոր կատաղությունը, բարձրանում են բոլոր վիրավորանքները: Աղունը կնավարի վրեժ է լուծում նրանից՝ ցույց տալով իր ունեցվածքը, նրան հիշեցնելով Սիմոնենց տան աղքատությունը, երբ ինքը հարս էր եկել, հիշեցնելով սկեսուրի և մյուսների արարքները: Իսկ երբ խոսում է սկեսուրը, մենք նրա խոսքում ուրիշ երանգներ ենք որսում. *«Կուրանամ ես: Քսանհինգ տարի է՝ էս տանն ես, սրտից եկած մի խոսք չեմ ասել երեխայիս: Կինը կին պիտի լինի, իսկ դու կին չեմ եղել երեխայիս համար»:*

Այս մոտիվը շատ է կրկնվում վիպակում: Աղունին շատերն են հանդիմանում լեզվի, ամուսնու և երեխաների հետ սուր խոսելու համար: Պառաված սկեսուրի խոսքերը ասվում են ոչ չարությամբ, այլ ցավով: Եվ պարզվում է, որ նա ատելություն չի ունեցել Աղունի հանդեպ. *«Միրուն էլ էիր, լավն էլ էիր, ամանները ձեռիդ որ շրխկալով ջուրն էիր իջնում՝ մարդու խինդ էր գալիս, բայց լեզվիդ պատճառով Սիմոնն օր չտեսավ, դու էլ շատ ծեծվեցիր»:* Սա էլ պառավի ճշմարտությունն է: Աղունի պես կանայք կյանքը առաջ են տանում, բայց նրանց կողքին տղամարդը, երեխան իրենց լավ չեն զգում, նրանց շուրջը սառնություն է և ոչ թե ընտանեկան ջերմություն:

Վիպակի շատ կարևոր հատվածներից մեկը Սիմոնի և Սոնայի սիրո պատմությունն է: Երբ Աղունը սարում է եղել, Սիմոնը կապվել է գյուղի երիտասարդ այրիներից մեկի՝ Սոնայի հետ: Սոնայի ամուսինը զոհվել էր պատերազմում, և երիտասարդ գեղեցիկ կինը մենակ էր մնացել երեխաների հետ: Սիմոնը նաև օգնում է նրան տնտեսության մեջ: Եվ երբ Աղունը պատրաստվում էր պատժել Սոնային, նրան վրա է տալիս գյուղի մյուս այրիներից մեկը. Սոնան էլ սիրվելու իրավունք ուներ, բայց նրա ամուսինը ահա չկար, իսկ Սիմոնը հետ էր եկել պատերազմից: Ինքը՝ Սիմոնը, սիրո պակաս էր զգում իր ընտանիքում, Սոնայի ջերմությունը նրան ձգում էր: Վիպակի ավարտին, կնոջ հետ մի անգամ էլ կռվելուց հետո Սիմոնը Սոնայի տան ավերակների մոտ հիշում է նրան. *«Սիմոնը մեխվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար, քանի որ նա ուզում էր միայն Սոնային, իսկ Սոնան մեռած ու հողավորված էր, իսկ ժայռատակի տունը կոպիտ ու թշնամի էր Սիմոնին»:* Սա Սիմոնի կարոտն է, Սիմոնի ճշմարտությունը, և ընթերցողը ընդունում է այս ճշմարտությունը: Մարդը մի անգամ է աշխարհ գալիս և իրավունք ունի իր երջանկության: Աղունն ինքը այս մասին շատ է մտածում իր տխուր խոհերում, բայց ահա կյանքը թույլ չի տալիս նրան երջանիկ լինել, և ինքը չի կարողանում գոնե մի փոքր երջանկություն տալ Սիմոնին:

Այս հատվածի կապակցությամբ պետք է ասել և հետևյալը: Հետպատերազմյան գյուղի կյանքի ամենատխուր գծերից մեկը ամուսիններին կորցրած կանանց վիճակն է: Սոնան այդ կանանցից մեկն էր: Բնությունը այնպես է ստեղծել մարդուն, որ կինն ու տղամարդը պետք է միասին լինեն, իրար նեցուկ լինելով հաղթահարեն կյանքի դժվարությունները, իրար հետ երեխաներին մեծացնեն: Բայց պատերազմը կանանցից շատերին զրկել է այդ բնական տրվածքից, և նրանք տառապում են անմռունչ, չարչարվում են օրնիբուն, կորցնում են իրենց կանացիությունը արևի ու անձրևի, քամու ու ձյան տակ: Մաթևոսյանը սիրում է իր այս հերոսուհիներին, կարեկցում նրանց, ինչն զգացվում է նրա ոչ միայն այս, այլև մյուս գործերի ամեն տողից ու հատվածից...

Ահա սա է կյանքը: Այս կյանքն է ներկայացնում Հրանտ Մաթևոսյանը «Աշնան արևուն» և մյուս գործերում՝ անգարդ ու իրական: Բայց ինչպե՞ս է ներկայացնում: Այստեղ է Մաթևոսյանի ստեղծագործության ամենակարևոր յուրահատկություններից մեկը:

Խոսքի և պատումի առանձնահատկությունները: «Աշնան արևին» և մյուս գործերին ծանոթանալուց հետո դուք առաջին հերթին ուշադրություն եք դարձնում այն բանին, որ Մաթևոսյանի խոսքը սովորական պատում չէ: Այսինքն՝ Մաթևոսյանը չի պատմում այնպես, ինչպես պատմում են Թումանյանը, Շիրվանզադեն և ուրիշները: Թումանյանը իր «Գիքորը» սկսում է այսպես՝ «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել...»: Սա պատմող հեղինակի խոսքն է: Ապա նույն հեղինակը համառոտ ներկայացնում է կռվի պատճառը՝ Համբոն ուզում էր իր որդուն՝ Գիքորին տանել քաղաք, որպեսզի այնտեղ մարդ դառնա, իսկ մայրը չէր ուզում: Այսպես հերթով Թումանյանը պատմում է ճանապարհի, Գիքորի թիֆլիսյան տպավորությունների, առօրյայի, հիվանդության և մահվան մասին: Սա դասական պատումն է, այսինքն՝ արձակի այն ձևը, որը ներկայացնում է մարդուն, կյանքը կողքից դիտողի հայացքով: Շիրվանզադեն «Քառուր» սկսում է այսպես. «Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր...»: Այնուհետև նույն ձևով Շիրվանզադեն ներկայացնում է Ալիմյանի կտակի շուրջը ստեղծված իրավիճակը, պայքարը ժառանգության համար, և այդ պատմության մեջ գծագրվում են հերոսների՝ Ալիմյանի, Սմբատի, Մարութանյանի և մյուսների կերպարները, նրանց դրական և բացասական գծերը և այլն: Հստակ գծագրվում է վեպի սյուժեն:

Ինչպե՞ս է սկսում Մաթևոսյանը իր վիպակը: «Մոսկվայից, Ծմակուտի վրայով, Երևան են հասնում մի 100 թուպեում, իսկ Ծմակուտից Երևան հասնելու համար պետք է գնալ մի ցերեկ ու մի գիշեր»: Ո՞րն են պատկանում այս խոսքերը, ի՞նչ առիթով են ասվում: Հետագա տողերում էլ այս հարցերի ուղղակի պատասխանները չկան, բայց ընթերցողն իրեն աստիճանաբար

հայտնաբերում է հերոսուհու խոսքի շրջապատւոյտում և հասկանում, որ սկիզբը հենց Աղունի խոսքերն են, այն, ինչ այդ թոպեին անցել է նրա մտքով: Եվ այդպես էլ վիպակը շարունակվում է, հեղինակային հանգիստ պատումը, դեպքերին կողքից նայողի հայացքը և գուսպ ձայնը բացակայում են այստեղ: Մենք լսում ենք Աղունի ձայնը, ամեն ինչ տեսնում ենք ամենից առաջ հենց Աղունի հայացքով: Իսկ Աղունի ձայնը և՛ հնչող է, և՛ ներքին, չհնչող: Նա դասավորում է այն, ինչ պետք է Երևան տանի, հիշում է իր կյանքը և ժամանակ առ ժամանակ դիմում որդուն, սկեսուրին, ամուսնուն: Եթե փորձենք այս վիպակի սյուժեն պատմել, ասելիք առանձնապես չի լինի, որովհետև սյուժեն հենց դեպքերի ընթացքն է (բառը հաճախ թարգմանում են հայերեն իբրև *դիպաշար*, այսինքն՝ դեպքերի հաջորդականություն): Աննշան դեպքեր են կատարվում, և ընթերցողը շատ արագ հասկանում է, որ գլխավորը ոչ թե այդ մանր դեպքերն են, այլ այն, ինչ տեղի է ունենում Աղունի հոգում: Աղունը հիշում է իր ամբողջ դառն ու դժվարին կյանքը, թեև վիպակն ուղղակիորեն ընդգրկում է այն ընդամենը մի քանի ժամը, որի ընթացքում Աղունը դասավորում է բեռները և ճանապարհվում: Աղունն ինքն էլ ոչ այնքան դեպքերն է հիշում, որքան իր զգացողություններն այդ դեպքերից: Մի խոսքով՝ այստեղ չկա այն ավանդական պատումը, որը մենք լսում ենք դասական վեպում, վիպակում, պատմվածքում: Այստեղ կարևորը հերոսի, առաջին հերթին՝ Աղունի լարված, ջղագրգիռ, տառապագին խոսքն է: Սա Մաթևոսյանի բերած ամենակարևոր նորություններից մեկն էր հայկական արձակի ասպարեզում: Եվ այդ նորությունը սովորական շարքային հնարանք չէր, այլ կապված էր Մաթևոսյանի գեղարվեստական դավանանքի հետ՝ խոսեցնել մարդուն, ոչ թե պատմել նրա մասին, այլ հնչեցնել, լսել տալ նրա ձայնը, նրա հոգին: Ինքը «Ի սկզբանե էր բանն... ինքնանկարի փորձ» խոհագրության մեջ (էսսեում) ասում է. «*Եվ ուրեմն ի՛նչ գեղեցիկ են նրանք, ովքեր մարդու համար գրում են իր խոսքը, մարդու մեջ բացում են իր լույսը, արձակում իր ձգտումը: Պիտի ցանկանալի նույնագոր եղբոր նման միանալ նրանց և իմ անձնական ու ազգային թուլությունը չբացահայտել, քանի որ երկրի վրա ինչ որ լինում է՝ լինում է նախ խոսքի մեջ*»: Մաթևոսյանի հիացմունքը (*ի՛նչ գեղեցիկ են նրանք*) վերաբերում է իր ամենից հավանած գրողներին, և ինքը ցանկանում է նրանց կողքին կազնել հենց նրանով, որ խոսեցնի իր հերոսներին, լսել տա մարդու խոսքը, բացի այդ մարդու հոգու լույսը, արձակի նրա ձգտումը:

Եթե ուշադիր կարդաք Մաթևոսյանի մյուս գործերը ևս, կհամոզվեք, որ հերոսին խոսեցնելը, նրա ձայնին ազատություն տալը նրա արձակի տիրապետող սկզբունքն է: «**Ծառերը**» վիպակը ամբողջությամբ կառուցված է իբրև հերոսուհու մենախոսություն, ընդ որում, դժվար է ասել՝ դա արտաքին,

հնչող խոսքն է, թե՛ ներքին, իր հոգում ասվող խոսքը: Մաթնոսյանի գործերում հաճախ ներքին և արտաքին խոսքը փոխարինում, շարունակում և լրացնում են իրար: Բայց ամեն դեպքում հերոսի խոսքը նրա էության հարազատ դրսևորումն է, նրա հոգու ինքնաարտահայտությունը:

Հեղինակի խոսքը, անշուշտ, չի վերանում այսպիսի երկերում: Բայց նրա բնույթն էլ է փոխվում: Հեղինակի կամ պատմողի խոսքը մոտենում է հերոսի խոսքին, հաճախ չես էլ նկատում, թե ինչպես մեկը փոխարկվում է մյուսով:

Վերադառնալով «Աշնան արևին»՝ մենք տեսնում ենք, որ վիպակի ծավալի մեջ մեծ տեղը գրավում է Աղունի խոսքը: Բայց Սիմոնին հատկացված էջերը ևս շատ կարևոր դեր են կատարում վիպակում: Սիմոնի խոսքի, հուշերի մեջ երևում է մեկ ուրիշ տառապող հոգի, և նրա տառապանքը պակաս չէ Աղունի տառապանքից: Ընդ որում, եթե Սիմոնը լավ ամուսին չի եղել Աղունի համար, պատճառը իր՝ ամեն ինչին և ամեն մեկին համակերպվելու հատկությունն է, իսկ Աղունը Սիմոնին տանջել է իր չափազանց ակտիվ, աններող բնավորությամբ: Եվ այս դեպքում դժվար է ասել, թե երկուսից որն է արդարացի: Իսկապես ամեն մեկն ունի իր ճշմարտությունը: Վիպակի սկզբում այսպիսի տողեր կան. *«Եվ մատանի դուռը ետևից վրա քերելով, նա մտածեց, որ ամեն մեկը ապրում է իր կյանքը: Որդու ուրախությունը որդունն է, իսկ իրենը պորտի ցավն է, կոշիվն է Սիմոնի հետ, զարուհների հետ՝ կարտուլի հոգսը, ամառների հետ՝ կովերի հոգսը, աշունների հետ՝ ձմեռվա հոգսը»:* Շատ կրկնված այն իմաստությունը, որ ամեն անհատ մի աշխարհ է, այս խոսքերում և ամբողջ վիպակում ավելի խոր մարմնավորում է ստանում: Ամեն մարդ մի աշխարհ է. այդ աշխարհները միշտ չէ, որ համապատասխանում են իրար, լրացնում միմյանց: Ամեն մարդ ապրում է իր կյանքը, այսինքն՝ տառապում, չարչարվում է մենակ: Եվ ամենամեծ բարեբախտությունը մարդու կյանքում այն է, երբ տարբեր մարդկային հոգիները ներդաշնակության կետեր են գտնում...

Նույնիսկ պատերազմը, նույնիսկ պատերազմի ժամանակները ոչ էքսան ամուլ մնացին և իրենց գործը արեցին: Այնուամենայնիվ, այստեղ նույնպես կարողացավ կինոն, շատ դժվար, շատ-շատ դժվար դուրս գալ էդպես ռազմական ճամբարից: 56-57 թվականների խրուշչովյան Հրաշալի օդափոխության շնորհիվ նաև, որ Հովի մաքրող քամու պես խուժեց բոլոր խուցերը և ուղղակի թոթափեց բոլոր տները գարշահոտությունից՝ բռնության ու հնացածության: Ու էդ դրանից Հետո, ահա, պետք է առաջանար: Էդ Հրաշալի հնարավորությունները ստեղծեցին էս երկրի կինոյի համար, կուլտուրայի համար: Դա գուցե ուրիշների համար ոչինչ

չնշանակեր, բայց էս մեծ տարածքի, նաև Հայաստանի տարածքի, ներառյալ, մեզ Համար շատ մեծ բան էր, անպատկերացնելի՝ արդեն նոր եկողների Համար, թե դա ինչ կենարար շունչ էր:

Ի՞նչ կենարար շունչ էր, ի՞նչ արևային շունչ էր՝ մանավանդ իմ սերնդի Համար. 20 տարեկաններին Համար դա ի՞նչ կենարար շունչ էր, որ ուղղակի կարծես այլ ազդ էր առաջանում, կարծես մենք մեր ծնողների Հետ, մեր ծնողների ժամանակների Հետ բացարձակապես կապի մեջ չէինք: Այլ շնչի ժողովուրդ էինք: Եվ, իհարկե, արգասավոր եղավ, երկրի, ժողովրդի և իշխանությունների ջանքը պսակվեց փրկարար, կարելի է ասել, փրկարար կուլտուրայով: Պսակվեց, փրկվեց, ուղղակի իր պատիվը, իր անեծքը՝ բռնություն անեծքը, կարծես իր վրայից կարողացավ Հեռացնել: Եվ առաջացավ մի բան, որ նույնպես աշխարհը ընդունեց, իր եղբայրական ընտանիքի մեջ առավ:

Հրանտ Մաթևոսյան

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆԵՐ

1. Երբ և որտեղ է ծնվել Յ. Մաթևոսյանը:
2. Ո՞րն է Յ. Մաթևոսյանի առաջին գործը, որը մեծ հեղինակություն բերեց նրան:
3. Թվարկե՞ք Յ. Մաթևոսյանի պատմվածքների և վիպակների ժողովածուների վերնագրերը:
4. Ո՞րն է Յ. Մաթևոսյանի վիպակների հիմնական թեմատիկան և բովանդակությունը:
5. Ի՞նչ էր «Աշնան արև» վիպակի առաջին տարբերակի վերնագիրը:
6. Որտեղ են կատարվում վիպակի գործողությունները, ովքեր են հերոսները (թվե՞ք անունները):
7. Համառոտ ներկայացրե՞ք վիպակի սյուժեն:
8. Ներկայացրե՞ք «Աշնան արև» վիպակի հերոսուհուն. ի՞նչ է հայտնի նրա երիտասարդությունից, բնավորության ի՞նչ գծեր ունի նա, ի՞նչ սկզբունքներ ունի նա կյանքում:
9. Նշե՞ք Յ. Մաթևոսյանի խոսքի և պատումի մի քանի առանձնահատկություն:

ՏՆՄՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Օգտվելով «Աշնան արև» վիպակի բնագրից՝

1. համառոտ շարադրեք, թե ինչ նշանակություն ունի Աղունի համար «Սիմոն» բառը,
2. բնութագրեք Սիմոնին, նրա զգացմունքը այրի Սոնայի հանդեպ:

ԹԵՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. «Աշնան արև» վիպակի հոր հերոսի խոսքերն են. *«Սիրուն էլ էիր, լավն էլ էիր, ամանները ձեռիդ որ շրխկալով ջուրն էիր իջնում՝ մարդու խինդ էր գալիս...»*:
 - Սիմոնի
 - Աղունի մոր
 - Սիմոնի մոր
 - Սերոյի
2. Ինչի՞ն է Աղունը պատրաստվում մեկնել քաղաք.
 - տղային ամուսնացնելու
 - տղային ճանապարհելու
 - քաղաքը տեսնելու
 - մթերքներ տանելու
3. Ինչի՞ մասին է Յ. Մաթևոսյանի «Նարինջ զամբիկը» պատմվածքը.
 - Մի գեղեցիկ ձիու մասին է:
 - Երկու ձիերի մասին է, որոնք ծնվում են նույն ախոռում, սակայն տարբեր ճակատագրեր ունենում:
 - Մարդու և ձիու բարեկամության մասին է:
 - Ձիու և գայլի մենամարտի մասին է, որն ավարտվում է ձիու պարտությամբ:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂՈՆԵՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմը հայրենական պատերազմ էր նաև հայ ժողովրդի համար: Մարդկանց մեջ կար այն գիտակցությունը, որ եթե գերմանացիները հաղթեն, ապա նրանց դաշնակից թուրքերը կմտնեն Հայաստան, և այն ժամանակ ինչպիսի՞ն կլինի մեր երկրի ճակատագիրը... Հայ զինվորները քաջաբար կռվում էին ռազմաճակատում: Այս մթնոլորտը իր կնիքը դրեց հայ բանաստեղծության վրա: Գրվեցին հայրենասիրական ուժեղ գործեր՝ պոեմներ, բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը արդեն հիշատակվել են:

Պատերազմից հետո ժողովուրդը վերադառնում էր խաղաղ կյանքի, պոեզիայից սպասում էին այնպիսի բանաստեղծություններ, որոնք համապատասխանեին մարդկային հոգու պահանջներին: Մյուս կողմից՝ մարդիկ հույս ունեին, որ ծանր ու հաղթական պատերազմից հետո բնությունները կվերանան, գրականությունը և արվեստը կգարգանան բնականոն ճանապարհով: Սակայն այդպես չեղավ, գրական կյանքի հսկողությունն ավելի ուժեղացավ, և այն գրողները, որոնք գրում էին մարդու ներաշխարհի, սիրո, հուսախաբության, բնության և այլնի մասին, ենթարկվում էին ամենախիստ քննադատության: Բայց, հակառակ այդ քննադատությանը, այդ տարիներին ստեղծվեցին քնարական այնպիսի բանաստեղծություններ, որոնք ապրում են մինչև այսօր:

Գրական մթնոլորտը ավելի բարենպաստ դարձավ Ստալինի մահվանից հետո, երբ կառավարող կոմկուսակցության ղեկավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց Ստալինի ղեկավարության տարիներին ստեղծված բարքերը վերացնելու, մարդկանց որոշ ազատություններ ապահովելու ուղղությամբ: Գրական կյանքը միանգամից աշխուժացավ, ստեղծվեցին բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ, աստիճանաբար ասպարեզ եկավ գրական նոր սերունդ, որը չէր ապրել ստալինյան տարիների խեղդող մթնոլորտում:

Հետպատերազմյան տարիներին, մանավանդ հիսունական թվականներից սկսած, հայկական պոեզիան շատ հետաքրքրական պատկեր էր ներկայացնում: Դեռ կենդանի էր հայ բանաստեղծության նահապետը՝ Ավետիք Իսահակյանը, որին ժողովուրդը իրավացիորեն պատվել էր Վարպետ կոչումով: Նրա ներկայությունը առանձին շուք էր հաղորդում գրականությանն ու գրական կյանքին:

Շարունակում էին գրել այն բանաստեղծները, որոնք գրականության մեջ առաջատար դիրքեր էին գրավել դեռ քսան-երեսնական թվականներին՝ Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը: Աքսորից վերադարձել էր Գուրգեն Մահարին և ակտիվորեն մասնակցում էր գրական կյանքին:

Գեղամ Սարյանը (1902–1976) ծնվել էր Իրանում, 1922թ. տեղափոխվել էր Խորհրդային Հայաստան: Դեռ քսանական թվականների սկզբներին հայտնի էր դարձել քնարական թախծոտ բանաստեղծություններով, որոնք այսօր էլ չեն

մոռացվել: Նրա ստեղծագործության բնույթը փոխվեց Հայաստան գալուց հետո: Մնաց քնարերգակ, բայց թախծին փոխարինեցին ավելի լուսավոր տրամադրություններ: Պատերազմական թեմաներով գրված երկու բանաստեղծությունները՝ «Կարոտ» և «Սերմնացանները չղարձան տուն», նրան ավելի մեծ ժողովրդականություն բերին: Դրանցից «Կարոտը» «Մարտիկի երգ» անունով դարձավ ամենասիրված երգերից մեկը (երաժշտությունը գրել էր կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը): Այս բանաստեղծությունը կարոտին նվիրված լավագույն գործերից մեկն է հայ պոեզիայում: Պարտադիր չէ այն անպայման կապել պատերազմի հետ. ցանկությունը, որը բանաստեղծն արտահայտում է հենց առաջին տողերում՝ «Թռչեի մտքով տուն, ուր իմ մայրն էր անքուն», կարող է համամարդկային կարոտի արտահայտություն դիտվել: Բայց նաև բնական է, որ պատերազմի ժամանակ դա համարվեց «մարտիկի երգ», հեռավոր ռազմաճակատում մորն ու հայրենիքը հիշած զինվորի երազանք:

Ողբերգական զգացողությամբ էր գրված «Սերմնացանները չղարձան տուն» բանաստեղծությունը՝ նվիրված պատերազմում զոհված մարտիկների հիշատակին:

Հոգնած նայում եմ ես ճամփաներին –

Սերմնացանները չղարձան տուն:

Հանգան շողերը լուռ կատարներին –

Սերմնացանները չղարձան տուն:

Իջավ երեկոն լուրթ ստվերներով –

Սերմնացանները չղարձան տուն:

Գրկեց հոգիս իր մուժ, պաղ թևերով –

Սերմնացանները չղարձան տուն:

Լույսերը վառվեցին խրճիթներում –

Սերմնացանները չղարձան տուն:

Ահեղ լուսթյուն է ճամփաներում –

Սերմնացանները չղարձան տուն:

Սարյանը 1968թ. հրատարակեց իր թերևս լավագույն բանաստեղծական ժողովածուն՝ «Քրիզանթեմը», որի համար արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: «Քրիզանթեմում» հավաքված էին կյանքի մայրամուտին գրված և դրան նվիրված երգեր, որոնց մեջ հուզում ու զարմացում էր Սարյանի կենսասիրությունը: Կյանքից հեռացող մարդը սիրով ու կարոտով է մտածում կյանքի մասին: «Աչքերս լի աշխարհով ես աշխարհից կգնամ»,– ահա այն գլխավոր զգացումը, որը տիրապետում է այս ժողովածուում:

*ես աշխարհից կգնամ ծաղկած գարունն իմ սրտում,
Հայրենի տունն իմ սրտում ես աշխարհից կգնամ,
Հոգիս երգով ջերմացած, թաղած մարմինն իմ ցրտում,
Աչքերըս լի աշխարհով ես աշխարհից կգնամ:*

*Հայոց խոսքն իմ շուրթերին, հայոց երգն իմ ականջում,
Մեր լուրթ կապույտը վրաս ես աշխարհից կգնամ,
Արդեն լսում եմ կարծես՝ ինձ հողի ձայնն է կանչում,
Ապրողներին օրհնելով ես աշխարհից կգնամ:*

Հետպատերազմյան տարիներին գրական մի նոր սերունդ գրավեց ասպարեզը, և այդ սերնդի բանաստեղծների ստեղծագործությունն էր, որ որոշիչ դարձավ Հայաստանի գրական կյանքում մինչև վաթսունական թվականների վերջը: Դրանք այն բանաստեղծներն էին, որոնք սկսել էին գրել դեռ պատերազմից առաջ կամ պատերազմի տարիներին: Պատերազմից հետո նրանց ձայնը գնալով ուժեղացավ: Մանավանդ 50-ական թվականների երկրորդ կեսից, երբ Խորհրդային Միությունում փոփոխություններ սկսվեցին, հնարավոր դարձավ գրել ու խոսել այնպիսի հարցերի շուրջը, որոնք Ստալինի կենդանության ժամանակ արգելված էին, այս բանաստեղծների գործերում ներկայացվեցին մարդուն հուզող ամենատարբեր հարցեր, մարդու ներքին աշխարհը, նրա զգացումներն ու ապրումները, հայրենիքի ճակատագրի խնդիրները:

Այդ բանաստեղծների մի մասը մասնակցել էր Հայրենական պատերազմին, և նրանց գրքերում արտացոլվում էին պատերազմական տպավորությունները: Այդպիսին էր **Հրաչյա Հովհաննիսյանի** (1919–1997) ստեղծագործությունը: Նրա շատ ժողովածուներում պատերազմական երգերը կենտրոնական տեղ էին գրավում: Երկու բանաստեղծություն առանձնանում էին դրանց մեջ: Առաջինը «Նահանջն» էր՝ գրված պատերազմի ամենադժվարին տարիներին, երբ Խորհրդային գործերը գերմանացիների ճնշման տակ նահանջում էին: Հովհաննիսյանը ներկայացնում է նահանջող զինվորի ապրումները՝ ի տես հասարակ մարդկանց տառապանքների, որոնց վիճակված էր մնալ գերմանացիների իշխանության տակ: Այդ նահանջը իսկական ողբերգություն էր և՛ զինվորների, և՛ մնացողների համար: Հովհաննիսյանի այս բանաստեղծությունը պատերազմի առաջին տարիներին ստեղծված ամենաուժեղ գործերից էր երևի ողջ Խորհրդային գրականության մեջ: Երկրորդ բանաստեղծությունը գրված է վերջին տասնամյակներում և նվիրված է բուժքույրերին, որոնք պատերազմի բոլոր սարսափներին հակադրում էին իրենց մարդկայնությունը, նվիրվածությունը վիրավոր զինվորներին, որոնց դուրս էին բերում կրակի տակից

իրենց փխրուն ուսերի վրա: Բանաստեղծությունը կարոտ է մարդկային այն բարձր հարաբերությունների, այն բարձր մարդկայնության հանդեպ, որին բանաստեղծը վկա է եղել ռազմաճակատներում: Այս հատկանիշները միշտ անհրաժեշտ են մարդկանց, բայց ոչ միշտ են դրանք երևում հասարակության մեջ, մանավանդ, երբ տիրապետող են դառնում նյութապաշտությունն ու շահասիրությունը:

ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԸ

Գթության քույրերը բույրերն են բնության,
Գույներն են բնության գթության քույրերը,
Որ դարձած ոգիներ՝ հասնում են օգնության
Ու մահից փրկում են քո կյանքը, քո սերը:

Ու խաչից հանում են քո խաչված մարմինը
Ու լացող մատներով կապում են խոցերդ,
Մոռացած տարիքը, չարիքը ու կինը՝
Հանգցրած դեռատի սրտի լուռ բոցերը:

Սապոգով, շինելով, արույրե մեղալով,
Անձրևի, քամու տակ, ձյան վրա ու տոթին—
Նրանք տաք խոսքեր են շնչում հևալով,
Եվ դու, խեղճ զինվորդ, բուժվում ես ամոթից...

Ախ, ու՛ր եք, սպանված, վիրավոր իմ քույրեր,
Գթության սուրբ քույրեր, ու՛ր են ձեր ձեռքերը.
Ուզում եմ իմ բացված հուշերը գուրգուրել,
Ուզում եմ ամոքել իմ բացված վերքերը:

Այս կյանքում չգտա, չտեսա ձեզ նման —
Անձանոթ հոգու մեջ այդքան սեր, գթություն.
Գթության եղբոր պես պատրաստ եմ ես հիմա
Ծնրագիր պաշտել ձեզ, իբրև հայտնություն:

Թե մի՞նի իմ վերջին ցնորքում ամեն ինչ,
Թե լռեն իմ հոգում աշխարհի սուլերը,
Ախ, այնպես կուզեի հայացքով իրենց ջինջ
Ինձ վրա հակվեին գթության քույրերը:

Պատերազմին մասնակցել էր նաև **Վահագն Դավթյանը** (1922–1996): Նրա առաջին գործերում էլ պատերազմական տպավորություններն էին արտացոլվում: Բայց պատերազմից հետո գրած նրա բանաստեղծությունների հիմնական թեմաները դառնում են մարդու և բնության հարաբերությունները, հայոց պատմությունն ու մշակույթը: Վաթսունական թվականներին շատ տարածված էին նրա պատմական պոեմները հայոց միջնադարի կյանքի մասին, հատկապես «Թոնդրակեցիները», որի մեջ ներկայացվում է միջնադարի ուժեղ աղանդավորական-սոցիալական շարժումներից մեկը: Վահագն Դավթյանը խորհրդային շրջանի հայ լավագույն բանաստեղծ-թարգմանիչներից էր: Հատկապես աչքի են ընկնում ռուս բանաստեղծ Սերգեյ Եսենինից և շոտլանդացի բանաստեղծ Ռոբերտ Բրոնսից կատարված թարգմանությունները:

Այս սերնդի բանաստեղծների մեջ է **Գևորգ Էմինը** (1919–1998): Էմինը ինժեներական (ճարտարագիտական) կրթություն էր ստացել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (այժմ՝ ճարտարագիտական համալսարան): Բայց հետագա գործունեությունը կապվում է գրականության հետ: Կարճ ժամանակ աշխատել է Մատենադարանում, ապա ամբողջովին նվիրվել պոեզիային: Ձգտել է թարմացնել բանաստեղծության լեզուն, նրա շատ բանաստեղծություններում զգացվում է այն նորը, որ հետո ամբողջ ուժով պետք է արտահայտվեր Պարույր Սևակի ստեղծագործության մեջ: Էմինը շատ է խորհում հայոց պատմության ու ճակատագրի, XX դարի կնճռոտ հարցերի մասին: Էմինին մեծ հռչակ բերեց «Սասունցիների պարը» բանաստեղծությունը, որի մեջ, նկարագրելով սասունցիների պարը, նա խորհրդածում է հայ մարդու ճակատագրի, նրա հաստատակամության և դիմացկունության մասին: Այդ բանաստեղծությունը համակված է լավատեսությամբ, թեև հետագայում գրված գործերում նա տխրությամբ ու ցավով է խոսում իր ժողովրդի հանդեպ գործված անարդարության մասին: Ժամանակին մեծ համբավ ձեռք բերեց նրա հրապարակախոսական արձակի գիրքը՝ «Յոթ երգ Հայաստանի մասին»:

XX դարի հայ գրականության մեջ, մանավանդ նրա երկրորդ կեսին, կին բանաստեղծների ճայնը բարձր ու վստահ հնչեց: Մարո Մարգարյանը, Արշալույս Մարգարյանը, Մետաքսեն և ուրիշներ գրականություն բերեցին կանացի հոգեբանությունը, կյանքի տարբեր կողմերին նայեցին կանացի աչքերով, որն, անշուշտ, շատ է հարստացնում գրականությունը: **Մարո Մարգարյանը** (1915–1999) երկար ու բեղմնավոր ստեղծագործական կյանք ապրեց, գրեց բազմաթիվ քնարական բանաստեղծություններ, որոնց մեջ երգվում են սերը, մայրական զգացմունքը, դառնությամբ և հպարտությամբ խոսվում է իր սերնդի դժվար կյանքի մասին: Բանաստեղծություններից մեկում իր մասին ասում է. «Միրանյութից շաղախեցիր ինձ, աստված, Եվ դրեցիր Տարածության մեջ անսեր»: Սա իր ստեղծագործության ճշմարիտ բնորոշումն է: Նրա քնարերգությունը համակված է բարի զգացումներով, սիրով մարդու, հայրենիքի,

աշխարհի հանդեպ: Բայց այդ զգացմունքները հաճախ բխվում են «անսեր» աշխարհի օրենքներին:

Այս սերնդի մեջ իր զգացմունքների խորությամբ ու քաղաքացիական կրքով, իր բանաստեղծությունների հարուցած համաժողովրդական արձագանքով առանձնացավ **Միլվա Կապուտիկյանը** (1919–2006):

Կապուտիկյանը ծնվել է Երևանում՝ վանեցի գաղթականի ընտանիքում: Հայրը մահացել էր մինչև նրա ծնվելը: Կրթություն ստացել է Երևանում, ապա սովորել Մոսկվայի բարձրագույն գրական դասընթացներում: Գրել սկսել է վաղ հասակում. տասներեք տարեկանում տպագրվել է առաջին բանաստեղծությունը: Հայրենական պատերազմն սկսվելուց առաջ արդեն տպագրվել էին այնպիսի երգեր, որոնք բանաստեղծի համբավ էին բերել նրան: Բայց Կապուտիկյանի անունը բարձրացավ հատկապես պատերազմի տարիներին, երբ նա գրեց «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: «Խոսքը» արագ տարածվեց Հայաստանում և սփյուռքում: Հայոց հայրենասիրական պոեզիայի հարուստ գանձարանում այս բանաստեղծությունն առանձնացավ իբրև կնոջ խոսք, իբրև մայրական մաղթանք ու պատվեր որդուն, որ դեռ նոր-նոր սկսում է քայլել: Մայրենի լեզուն բարձր է ամեն ինչից. «Թե մորդ անգամ սրտիցդ հանես, / Քո մայր լեզուն չմոռանաս»: Այս պատվերը հայոց պատմության մութ էջերից էր ծնվել, մայրենի լեզվի և մշակույթի գլխին կախված բազմաթիվ վտանգների զգացողությունից: Դժվար թե ավելի բարեհաջող ճակատագիր ունեցած ժողովրդի գրականության մեջ մայրը այսպիսի պատվեր տար իր որդուն:

Պատերազմից հետո Միլվա Կապուտիկյանը գրեց քնարական բանաստեղծություններ սիրո մասին, որոնցից շատերը հետո երգեր դարձան և երգվում են մինչև այսօր: Այդ բանաստեղծությունները թարգմանվեցին ռուսերեն և տարածվեցին ամբողջ Խորհրդային Միությունում: Միլվա Կապուտիկյանը երգում էր մերժված սիրո ցավը, կնոջ տառապանքները և այդ բոլորի մեջ՝ սիրո հաղթական ուժը, եթե նույնիսկ դա անպատասխան սեր էր: Կապուտիկյանի այդ գործերը կանացի հոգեբանության ամենախոր բացահայտումներից էին հայ բանաստեղծության մեջ:

Էհ, ինչ արած, թող աշխարհում

Բախտը խռով մեզ չհիշի,

Միայն ապրենք մենք սիրելով,

Թեկուզ ես քեզ, դու՝ ուրիշի:

Բայց անհատի կարոտը, սերը, ապրումները ի վերջո ծուլվում են ժողովրդի հոգուն ու հոգսերին: Կապուտիկյանի հայտնի գործերից մեկը «Իմ ակունքները» բանաստեղծությունն է՝ անհատի էության ու ճակատագրի և ժողովրդի էության միասնության վկայություններից մեկը:

Մեր վարդավառին աղբյուրներն ընկած էն աղջիկների
 հենթությունը և խինդը կա իմ մեջ,
 Նրանց շուրթերի կծաբերանից թափվող ծիծաղը:
 Տաք շուրջպարերում փոխեփոխ ասվող սուր քառյակների
 Տենդը կա իմ մեջ,
 Էն թեթև ու խե բառերի խաղը...
 Բայց դժվար ժամին՝
 Թշնամու դիմաց շիփ-շիտակ կանգնող,
 Թխսամոր նման իր որբուկներին թևի տակ առնող,
 Փոքրիկ, բայց համառ հայ մամիկների սիրտը կա իմ մեջ,
 Նրանց ցասու՛մը, նրանց կորո՛վը:

Հետագայում Կապուտիկյանի ստեղծագործության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ է գրավում հայրենի երկրի, նրա ժողովրդի պատմության ու ճակատագրի թեման: Նա իր շատ սերնդակիցների պես մտորում է հայոց ողբերգության, հայ ժողովրդի բաժանվածության, նրա ապագայի մասին: Այդ խոհերի խտացած արտահայտությունը «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմն է, որը գրված է վաթսունականների սկզբին:

Դա այն առաջին գործերից մեկն է Խորհրդային Հայաստանի գրականության մեջ, որում (Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի հետ) առաջին անգամ ամբողջ ձայնով խոսվեց հայոց Յեղասպանության և հայ ժողովրդի վերապրելու կամքի մասին: Այս պոեմը հայության հետագա կյանքի մի ողջ փիլիսոփայություն է, որի հիմքը նրա պատմության նկատմամբ ունեցած հայացքն է: Առհասարակ հիշողությունը այս պոեմի կարևորագույն թեմաներից է: Խորհրդային Միությունում մինչև վաթսունականները պաշտոնապես Յեղասպանության մասին չէր խոսվում, թեև այդ մասին գրել էին և՛ Չարենցը, և՛ Բակունցը, իրենց գործերում այդ մասին ակնարկել էին բազմաթիվ հայ գրողներ: Բայց առանց անցյալը հիշելու և գնահատելու հնարավոր չէ կառուցել ապագայի փիլիսոփայությունը: Կապուտիկյանն ուղղակի ասում է.

*Ո՛չ, իմ ժողովուրդ, դու շահտ ես տեսել,
 Դու պիտի հիշես ապրելու համար...*

Կապուտիկյանի այս պատգամը շատ կարևոր է մեր ժամանակներում, երբ ազգային պատմությունը, հիշողությունը չեն խրախուսվում. հենց Հայաստանում իննսունականներին կոչ էին անում մոռանալ հայոց պատմության ողբերգական էջերը հանուն ապագայի: Կապուտիկյանի պոեմը ուղղված է այս մտայնության դեմ: Բայց հիշելը քիչ է: Ժողովուրդը ապրում է աշխատելով և ստեղ-

ծելով, և հիշողությունը ոչ թե պետք է թունավորի նրա կյանքը, այլ մղի ստեղծարար աշխատանքի: Եվ այստեղ ծագում է վրեժի թեման: Ժողովուրդը, որն ապրելու և պայքարելու կամք ունի, պետք է վրեժ լուծի, արդար վրեժ իր հանդեպ գործած հանցանքների համար: Բայց ոչ թե արյուն թափելով, այլ ապացուցելով, որ ոչ մի բռնություն չկարողացավ սպանել նրա ստեղծագործ էությունը:

*Դու պիտի առնես վրեժդ անհուն,
Պիտի խաղաղես հոգին քո խռով,
Բայց ոչ արյան դեմ կոչելով արյուն
Եվ մահի դիմաց մահ սերմանելով,— ...*

*Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համա՛ռ, հազարապատիկ,
Ավերումի դեմ՝ քո ստեղծելով,
Ավեր Վանի դեմ՝ քո երևանով,
Աքսորների դեմ՝ խուլ անապատից
Նորից տուն դարձող քո քարավանով,—
Դու պիտի ապրես այսպես, սրանով:*

Ահա՛ գլխավորը ապրելու այն փիլիսոփայության մեջ, որ առաջ էր քաշում Միլվա Կապուտիկյանը իր պոեմում: Վրեժի բնական զգացումը կարող է նաև շատ ավերիչ լինել. բայց Կապուտիկյանը այդ զգացումը դնում էր ստեղծարար հունի մեջ՝ ցավի, վրեժի էներգիան վերածելով կառուցման, ստեղծման կրքի: Ավելի ճշմարիտ փիլիսոփայություն մեր պատմությունն ունեցող ժողովրդի համար դժվար է պատկերացնել:

Կապուտիկյանն այս պոեմը գրում էր ամբողջ Խորհրդային Միությունը համակած ոգևորության մթնոլորտում: Ստալինի մահից, կառավարող կոմունիստական կուսակցության XX համագումարի որոշումներից հետո նոր մթնոլորտ էր ստեղծվել ԽՍՀՄ-ում՝ ազատախոհության մթնոլորտ, և մարդիկ հավատում էին, որ Խորհրդային Միությունը գնում է արդար ապագայի կառուցման ճանապարհով: Բայց հետագա տարիները ցույց տվեցին, որ սկսված բարեփոխումները մնում են կեսճանապարհին, և հասարակությունը այնպես էլ մինչև վերջ չառողջացավ, մարդասիրական կարգախոսները կյանքում չիրականացան: Եվ լավատեսական այն լիցքը, որ զգացվում է այս պոեմում, գնալով թուլացավ: Հատկապես ութսունական և հետագա տարիների բանաստեղծություններում մենք հանդիպում ենք տխուր տրամադրությունների, հիասթափության թեմաների: Ութսունականներին Կապուտիկյանը հրատարակեց մի փոքրիկ ժողովածու՝ «Ձմեռ է գալիս», որի մեջ տպագրված բանաստեղծությունները այս

տրամադրությունների հանրագումարն էին: Սրանց մեջ հատուկ տեղ է գրավում «Ջելե, լաո» երգը՝ հայրենիքը կորցրած հայ մարդու անհուն կարոտի ու ցավի մարմնավորումը, որն ավարտվում է հետևյալ քառատողով.

*Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են աստված, երկիր ու երկինք,
Պիտի փլվի՝ ամեն պատենշ, ամեն սուտ,
Պիտի երթանք, պիտի երթանք մեր երկիր...*

Ուշադրություն դարձրեք այս բանաստեղծության թեական երանգին: Չկան նախկին վստահությունը, հավատը, մնացել են խոր, անամոք վիշտը և արդարության ծարավը:

Կապուտիկյանն իր տաղանդի բնույթով հրապարակի բանաստեղծ էր, զանգվածների հետ խոսող, նրանց դիմող բանաստեղծ: Նա իր գործերում արտացոլեց ոչ միայն անհատին, այլև ողջ ժողովրդին հուզող խնդիրներ: Ահա տաղանդի այս առանձնահատկությամբ Կապուտիկյանը դարձավ նաև Խորհրդային Հայաստանի առաջատար հրապարակախոսներից մեկը: Նա շատ բան արեց Հայաստանը և սփյուռքը իրար կապելու համար, առաջին հայ գրողներից մեկն էր, ով եղավ սփյուռքյան գաղթօջախներում. և ոչ միայն եղավ, այլև պատմեց այդ մասին իր ճանապարհորդական գրքերում: Դրանցից առաջինը տպագրվեց վաթսուհիններին՝ «Քարավանները դեռ քայլում են» խորհրդանշական վերնագրով: Այդ գրքի թողած տպավորությունը շատ ուժեղ էր: Առաջին անգամ հայաստանյան ընթերցողը իրական, կենդանի պատկերներով էր տեսնում սփյուռքը, որը դադարում էր վերացական հասկացություն լինելուց, միս ու արյուն էր առնում: Բայց ոչ միայն հայաստանյան ընթերցողը: Ահա թե ինչ էր գրում ժամանակին այդ հատորի մասին Շահան Շահնուրը Գուրգեն Մահարուն ուղղված նամակում. «Իր սիրելի «Կարավանները» արժանի են ավելի մեծ ներքողի և գնահատանքի: Տարիներե ի վեր Մերձավոր Արևելքը ինձի կը դրկե թերթ և գիրք, առանց որ կարենամ հստակ գաղափար մը կազմել իրենց մասին: Պետք եղավ որ կյուրիկ կին մը գա Երևանեն, որպեսզի վարագույրը բացվի ծալ-ծալ»: Կապուտիկյանը պատմում էր աշխույժ, կենդանի գույներով, ստեղծում էր մեր սփյուռքահայ հայրենակիցների կերպարներ՝ այդպիսով սփյուռքը մոտեցնելով հայրենիքին: Հետագայում գրեց «Խճանկար հոգու և քարտեզի գույներից», «Գույներ նույն խճանկարից» և այլ գրքեր՝ ստեղծելով հայկական սփյուռքի համապատկերը:

Կապուտիկյանը ակտիվ հասարակական գործիչ էր, ըմբոստ և խիզախ մարդ և իր ելույթներում արժարժել է մեր երկրի կյանքի կարևորագույն հարցեր, որոնք լայն արձագանք են գտել հասարակության ամենատարբեր շրջաններում:

60-ական թվականների բանաստեղծության համապատկերը բազմազան էր: Սարյանի, Սևակի, Կապուտիկյանի, Մարգարյանի, մյուսերի կողքին ստեղծագործում էին Արամայիս Սահակյանը, Լյուդվիգ Դուրյանը, Սարգիս Խարազյանը, Նանսեն Միքայելյանը, ավելի ուշ գրականություն մտած Թաթուլ Բոլորչյանը և ուրիշները, որոնք հիմնականում հետևում էին դասական բանաստեղծության սկզբունքներին: Արամայիս Սահակյանի և Լյուդվիգ Դուրյանի բանաստեղծությունների տեքստերով գրվեցին ժամանակին սիրված շատ երգեր:

Բայց 60-ականների և հետագա թվականների գրականության մեջ շատ ավելի նշանակալից եղավ հաջորդ սերնդի վաստակը, որի սկզբունքները, աշխարհատեսությունը էականորեն տարբերվում էին նախորդների սկզբունքներից:

Այս սերնդին չէին բավարարում իրենց նախորդների բանաստեղծական լեզուն, պատկերները, ընդհանրապես մտածողությունը: Նրանք շատ ավելի ուշադիր էին արևմտյան ժամանակակից բանաստեղծության որոնումների, տազնապների նկատմամբ, որ մինչ այդ գրեթե անծանոթ էին Խորհրդային Հայաստանի բանաստեղծներին և ընթերցողներին: Ռազմիկ Դավոյանը, Արևշատ Ավագյանը, Յուրի Սահակյանը, Հենրիկ Էդոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Արմեն Մարտիրոսյանը, Հրաչյա Սարուխանը, Դավիթ Հովհաննեսը, Սլավիկ Զիլոյանը, Արտեմ Հարությունյանը, ամեն մեկը իր ձևով, նոր ճանապարհներ էին բացում հայ բանաստեղծության մեջ: Նրանց հաջորդեցին ավելի կրտսերները՝ Հրաչյա Թամրազյանը, Արմեն Ծեկոյանը, Հակոբ Մովսեսը, Էդվարդ Միլիտոնյանը, Հովիկ Հովեյանը և ուրիշներ: Այս բանաստեղծները համախմբվեցին այն տարիներին նոր ստեղծված «Գարուն» հանդեսի շուրջը, «Գարունի» էջերում ծավալվեցին բանավեճեր ժամանակակից գրականության և մասնավորապես բանաստեղծության վերաբերյալ:

Նրանց պատկերները ավելի բարդ էին, նրանք մտածում էին նոր գծագրվող աշխարհի բախումների ու կատակիզմների մասին, նախորդ շրջանի բանաստեղծական լավատեսությունը փոխարինվում էր մշուշոտ ապագայի հեռանկարով: Քնարական հերոսը այլևս անմիջական բռնկումներ, բուռն զգացմունքներ կրողը չէր, այլ ինքն իր մեջ խորացող, աշխարհի հանելուկներով զբաղված մարդը: Հետաքրքրական է, որ այս սերնդի ստեղծագործության մեջ պակաս է սիրային ապրումների կշիռը, այն ապրումների, որոնք հարյուրամյակներ շարունակ կենտրոնական տեղ են գրավել բանաստեղծության մեջ: Նոր պոեզիայի հերոսը ժամանակի ծանրագույն խնդիրների խաչմերուկում շփոթված մարդն է, որը փնտրում է աշխարհի ու կեցության իմաստը: Այս առանձնահատկությունները, որոնք սերնդի առավելություններն էին, ունեցան նաև այն հետևանքը, որ նրանց բանաստեղծությունները ավելի քիչ են ընթերցվում,

քան նախորդներինը: Իրենք՝ հեղինակները, զանգվածային ընթերցող չեն փնտրում, այլ դիմում են «ընտրյալ» ընթերցողների նեղ շրջանակին:

Մի բան անկասկած է՝ վաթսուևականներին սկսված որոնումները նոր ուղիներ գծեցին բանաստեղծության համար: Նորերը, իհարկե, չեն կարող շրջանցել հայ դասական բանաստեղծության փորձը, բայց նրանք, որ ապրում են նորագույն ժամանակների բարդագույն իրադրության մեջ, պետք է գտնեն իրենց ճանապարհները՝ մարդու կյանքում և հոգում կատարվող գործընթացները արտացոլելու համար:

Ներքևում դուք կկարդաք վաթսուևականներին և դրանից հետո գրական ասպարեզ մտած բանաստեղծների գործերից մի քանիսը: Դրանք ամբողջական պատկերացում չեն տա նորագույն բանաստեղծության մասին: Բայց դուք կկարողանաք գաղափար կազմել այդ բանաստեղծության գոնե ամենակարևոր միտումների մասին:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑՍԳՐԱՆՔՆԵՐ

1. Անվանիր այն բանաստեղծին, որին դու նախընտրում ես այս բաժնում հիշատակված բանաստեղծներից: Փորձիր բացատրել, թե թեզ ինչով է դուր գալիս այդ բանաստեղծի (կամ բանաստեղծների) ստեղծագործությունը:
2. Զո տպավորությունների հիման վրա փորձիր նշել պատերազմից հետո գրականություն եկած բանաստեղծների և վաթսուևականների սերնդի բանաստեղծների ստեղծագործությունների տարբերությունները:
3. Ո՞րն է այն ընդհանուրը, որը կապում է Պարույր Սևակին և Սիլվա Կապուտիկյանին: Ի՞նչ ընդհանուր եզրեր ունեն Սևակի «Անլռելի զանգակատուն» և Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմները:
4. Ներքևում բերվում են ժամանակակից հայ բանաստեղծների մի քանի գործեր: Ո՞րն է թեզ ամենից շատ դուր գալիս: Բացատրիր՝ ինչո՞ւ:

ՈՍՏՄԻԿ ԴՍՎՈՅՍՆ

ՀԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

*Քայլիր մի գիշեր և երկու գիշեր,
և այնքան, որքան կարող ես քայլել,
գուցե այն աստղը կհայտնաբերես,
որ մարդկանց համար բնավ չի փայլել:*

Գնա մի տարի և երկու տարի,
և այնքան, որքան կարող ես գնալ,
և գնա նույնիսկ այն դժնի պահին,
երբ որ քայլելն է թվում անհնար:
Քայլիր մի տարի և միլիոն տարի,
մինչև որ հասնես նախապապերիդ,
մի գնահատիր ո՛չ անցած ճամփադ
և ո՛չ էլ չնչին արժեքը բեռիդ:

Եվ եթե հասնես նախապապերիդ,
ուրեմն մոտ ես և ապագային.—
քեզանից առաջ, նրանք շատ առաջ,
բյուր դարեր առաջ ճամփա են ելել,
և նրանք են, որ մոտիկ են արդեն
ապագաներին բոլոր նոր ու հին:

Եվ եթե հանկարծ քո ճանապարհին
նախապապերիդ դու չհանդիպես,
ուրեմն սխալ ճամփով ես գնում,
և ոչ մի հրաշք չի փրկելու քեզ:

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Կանչիր, անպայման մեկը կլսի:	Վերադառնում են թռչունները չվող,
Ծառերը ծաղկում են գարնանը,	Վերադառնում է շոգը արևի,
Ջրերը վարարում են,	Վերադառնում են երազները նույնպես,
Կանչիր, անպայման մեկը կլսի...	Կանչիր, անպայման մեկը կլսի...

Ճանապարհներն են երկարում անվերջ,
Բոլորն էլ սեր ու քուն են երազում,
Կարոտն է շրջում մայրամուտի մեջ
Կանչիր, անպայման մեկը կլսի...

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿԱՅՈՒՆ

Մի ծնծղաձայն կարոտ ծովի ծալքում փայլող
քարշ է տալիս իր հետ առագաստ ու թիակ,
մարգարտափայլ մի կին թիկնեթեկին քայլող
մրմնջում է հայրեն իր զավակին միակ:

Մրմնջում է հայրեն ասածո որդու համար
թիկնեթեկին քայլող մարգարտափայլ մի կին,
և աչքերի ծովում առագաստը համառ
լող է տալիս որպես աստվածային գրգիռ:

Եվ ծանրանիստ որպես արձակ շարադրանք
անմեղսունակ սիրո, անսեթեթ երգի՝
լուռ հունցվում է քո մեջ, իբրև մատյան և կյանք,
մի խտացած թախիժ, որ դու գիտես անգիր:

Լուռ հունցվում է քո մեջ, իբրև մատյան և կյանք,
մի խտացած թախիժ՝ մի կորուսյալ երկիր,
որպես ասածուն պարզված տխուր շարադրանք,
որի վրա արյան հետքն է քո սեպագիր:

Մրմնջում է հայրեն ծանոթ և անաղարտ
թիկնեթեկին քայլող մարգարտափայլ մի կին.
— Տուր ինձ, տեր իմ, ողբի մատյան ու մագաղաթ,
որպես թախիժ մի հին՝ մի կորուսյալ երկիր:

Մի երկնային ծաղիկ աչքերի մեջ ծավի
և մագաղաթ զսպված՝ դարձած ողբի մատյան,
ամփոփում են լույսը տխուր մի անցյալի,
որպես ներփակ տաճար — ընդմիշտ և հավիտյան:

ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆ

ՄԻ ՍԻՐՏ ՀԱՐԱՏԵՎ

Փռքըրիկ երկիր՝ սեղմված
լեռների կոնքերում, ի՞նչ երգ ես
ուզում լսել, ի՞նչ խոսքեր ես հիմա
տեսնում քո երազում: Չորացած
կոկորդի մեջ, ամռան
կիզիչ օդում, ընկնում են բառերը
անձայն ու անարձագանք,
ինչպես ծառեր՝ կտրված
օտար մի ձեռքով, ինչպես շիրմաքարեր,
որոնց տակ աշխարհը
չունի ոչ մի չափում:
Կարճ, ինչպես կյանքի խոստում,
երկար, ինչպես քունը մղձավանջային,
բառերը չեն հասնում քեզ:
Ի՞նչ երգ ես ուզում լսել
քո հին երազում: Այն, ինչ ունես դու,
մի սիրտ է հարատև,
որ բաց է և արթուն
դեռևս անավարտ քո աղոթքի մեջ:

ՍԼԱՎԻԿ ԶԻԼՈՅԱՆ

ՊՈՆՏ ԷԻՆ ՆՐԱՆՔ

Պոետ էին նրանք
անտառից փախած
արջերի նման
վայրի ոռոցով
ու մոլորոցով
խուժեցին քաղաք,
հաստափոր ու կիրթ
մարդիկ խլացան
տիկիններ կորան
այդ օրն աշխարհից.
պոետ էին նրանք:

Պոետ էին նրանք.
բամբասող ու շար
շների նման
հաչում էին այստեղ,
հաչում էին այնտեղ,
հաչում ամենուր
մի հոտած մսի
պատառի համար,
նույնիսկ այն պահին,
երբ առիթ չկար,
պոետ էին նրանք:

Պոետ էին նրանք,
ռչխարների պես
անմահ Հիսուսի
գայլի փարախում
նրանք ծնվեցին,
վերջին մայրցուղ
լուռ հոշոտեցին,
պոետ էին նրանք:

Պոետ էին նրանք
ամեն գիրկ ընկնող
պոռնկուհու պես
ընկնում էին, ելնում
շրթներին ժպիտ,
ջրում ցուլացող
փրփուրների պես,
իսկ մենակ պահին
լացում էին խեղճ,
լացում էին լուռ
Մագթադինացու
աչքերով տխուր,
պոետ էին նրանք:

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍ

* * *

...Բայց չիներ, չիներ, չիներ մարդ.
– ով սպանում է, երբ կուշտ է նույնիսկ,
զուգավորվում լոկ հաճույքի համար
և սատկում իր իսկ ստեղծած թույնից,
ով հողուջրի վրա դնում է հարկ,
(երբ մաքսավորը նույնիսկ դարձավ Պողոս),
ով փառք ու պատիվ առնում է փողով...
– Ոչ, չիներ, չիներ, չիներ մարդ:

ԱՐԵՎԵԱՏ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐԹՆԱՅՈՒՄ

Հեասպառ քամիների հետ
գարնանամուտից մինչև ամառ ձգվող
տարածքների միջով
վարդում են
իմ մանկություն ձիերը:

Ամպերի միջով
ծովերի ջրեր են ուղարկում
լեռներից իջնող
շնչահեղձ գետերին:

Օր ու գիշեր
ծղրիդները փորփրում են
լուսթյան բլուրները,
շեկ ավազը մաղվում,
թափվում է ջրի մեջ՝
ժամանակի անցքից:

Վեր կենամ,
ականջս դնեմ հողի կրճքին,
ականջս դնեմ խնձորենու բնին
ու լուսթյան մեջ լսեմ բնության
և սերմնավորվող կարմիր պտղի
սրտիփողը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Սա իմ երկիրն է — չափսերով այնպիսին,
որ կարող եմ վերցնել հետս,
թե մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,
փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ,
իսկ քարտեզի վրա
ընդամենը արցունքի մի կաթիլ...

Սա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,
որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
որ չկորցնեմ հանկարծ...

ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՕՏԱՐԱԿԱՆԸ

Հանգչող
Արևածաղիկը
Մայրամուտի ձեռքին...
Անցյալը ծառ է դարձել:
Ես վերադառնում եմ հիմա,
Խոսում ցանկապատի
Երկար հեքիաթի հետ,
Ես բարձրացնում եմ
Քամու ֆուգաներում
Ծնվող թռչուններին:

Խոտ՝ եզան լեզու,
Ծածկիր ինձ դժբախտություններից
Քո մեծ տերևներով:

ՀՐԱՉՅԱ ՍԱՐՈՒԽԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

Աչքերս բներ են ցավերի:
Լուսինը կարմիր է բարձրանում:
Երազս օրորվող նավերից
Ընկնում է ու ցավից կարծրանում:

Դու երեկ ավելին ուզեցիր:
Չունեի: Տխուր էր թերևս:
Երազում մազերս խուզեցին...
– Հոգնած են, հոգնած են թևերս:

Գնացիր: Ձանձրույթի վտառից
Մի թռչուն վանդակում մեռել էր,
Մի կին էր մահացել վտառից –
Եվ հիմա երկուսն էլ բառեր են:

Կանաչ է ծառերի արյունը:
Էլ երբեք մենք իրար չենք շոյի:
Ափսոս է, ափսոս է գարունը,–
Զուում է իշուկը Սանչոյի:

Մենք Հուդա՞, թե Հիսուս ենք եղել
Ստվերում տիրամոր արգանդի...
Լճափին լույսեր կան ու եղեգ:
Ժանգոտ է օրերի գերանդին:

Տխուր է երևի ու ծանր
Առաջին ու վերջին նվերս,–
Ընդունիր կարոտիս վախճանը...
Հոգնած են, հոգնած են թևերս:

ԱՐՄԵՆ ՇԵԿՈՅԱՆ

ԳՈՎՔ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԻ
Դեմքս էլի շրջվում է ետ,
Հին էջերն եմ հավաքում լուռ:
Հուշն է զարթնում, և նրա հետ
Իմ քաղաքը՝ բացված մի նուռ:

Եվ մայրս ինձ կանչում է տուն,
Լ գույները բռնել են ինձ:
Եվ մայրս ինձ ետ է կանչում,
Ճակատին՝ լույս, ափին՝ փոխինձ:

Ո՛չ երազ է, ո՛չ էլ թեմա,
արցունք է լոկ, կյանք է մի բուռ:
Այն օրերից մինչև հիմա
ես ծեծել եմ հազար մի դուռ:

Եվ աչքերս պինդ եմ փակել,
որ գույները ճիշտ երևան,
որ անընդհատ չըկըրկընեմ՝
ուրիշ էին մարդ, հարևան...

Ձէ, տեսիլք չէ եկած-անցած,
ո՛չ երազ է, ո՛չ էլ թեմա:
Այն ջրերում ես լողացա
և մաքուր եմ մինչև հիմա:

ՀԱԿՈՐ ՄՈՎՍԵՍ

* * *

Ես թխեցի բլիթը իմ: Կուժս լցրի պաղ ջրով:
Ելնեմ, գնամ, ասացի ես և դուրս եկա գիշերով:
Եվ Լուսաստղը բռնած շարժվեց քարավանն իմ շարվեշար:
Դու, ապրուստի միակ իմ հույս, բառի պարեն և պաշար:
Բայց այս ո՞վ է, ո՞վ է արդյոք, որ հանց ստվեր աննկատ
Հետևում է, գալիս ինձ հետ և երգում է անընդհատ:
Եթե երգի՞լ ո՞վ է տեսել երգիչ այսպես խոսափուկ:
Ձինակիր է: – Ապա ո՞ւր է ձեռքին իր տեգը դիպուկ:
Իսկ եթե մի ուղեկից է, ճամփի ընկեր պարզապես,
Ապա ինչո՞ւ է հապաղում, դես-դեն խփվում թռչնի պես:
Ջուր եմ տալիս, հետը շալե իմ մախաղի նկանակներն եմ կիսում:
Ես չգիտեմ, ինչպես դիմեմ և նրան ինչ եմ ասում:
Հետ է ընկնում, վազում առաջ և, շրջվելով, հետ գալիս:
Հույսերդ թող, երգում է նա, ընկնում կրծքիս և լալիս:

ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱՉՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

*Խաղաղությո՞ւնն բոլոր նրանց,
Որ այս կյանքի ուղին մտան,
Ճամփաներում անհանգրվան
Պահեցին մեր երթն անվթար:*

*Որ ձգեցին կյանքն իրենցով՝
Թելի պես նուրբ, մազից բարակ,
Դարձան լույսի շավիղ և ցուլք,
Երբ քանդվում էր կծիկն արագ:*

*Խաղաղությո՞ւնն բոլոր նրանց,
Որ խավարից լույսն ընտրեցին,
Պահպանեցին լույսը զվարթ
Ուղիներում որբ, ընկեցիկ:*

*Խաղաղությո՞ւնն հոգիներին
Մենաբաղձիկ ու մենավոր,
Խաղաղությո՞ւնն մեր երգերին,
Որ ծովն ելած, իբրև նավորդ*

*Անցան կյանքի հորձանքն ահեղ,
Տազնապների տարերքը խոլ,
Շողարձակող կենաց պահերն
Ու տարիներն ալեբախող:*

*Հույզերի մեջ ալեծածան
Կարոտներին մեր փարվեցին,
Ուրիշներին փարոս դարձան,
Սակայն իրենք լուռ մարեցին:*

*Հանուն կյանքի և ապրողաց
Ուղիներում խավար և ցուրտ,
Խաղաղությո՞ւնն անցավորաց,
Խաղաղությո՞ւնն ամենեցուն:*

ՀՈՎԻԿ ՀՈՎԵՅԱՆ

ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՇՈՒԿԱՆ ԱՇՆԱՆԸ

*Փոքրիկ շուկա...
Դեղձերի բուրգ...
Գնորդ չկա...
Թախիժը՝ մուգ:
Միայն մի կին՝
Դեղձավաճառ,
Անհունի մեջ անվերջ լավող
Սիրո դադար,
Շուկա, բազար...
Ու միայնակ մի մենություն՝
Թախծահայաց քո թիկունքին,
Բուրգն՝ աչքիդ մեջ,
Հուշիդ մուլթին...
Դեղձե կամար՝
Եղեգնաձոր,
Անհունից դուրս ընկած
Բազար,
Եկար, տեսար,
Մի պահ՝ ոչինչ ու լռություն,
Դու էլ անցար...*

ԱՌԱՅԱՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկեք Նորագույն շրջանի հայ բանաստեղծներին և Նրանցից յուրաքանչյուրի մեկ-երկու ստեղծագործության վերնագիր:
2. Կարդացեք դասագրքում զետեղված ժամանակակից հայ բանաստեղծների ստեղծագործությունները. ընդհանուր գծերով ներկայացրեք, թե ինչի մասին է Նրանց քնարերգությունը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐ

Նորագույն շրջանի հայ արձակը հարուստ է ու բազմերանգ: Մի կողմից՝ այն հայ դասական արձակի՝ Աբովյանի, Պռոշյանի, Աղայանի, Րաֆֆու, Մուրացանի, Շիրվանզադեի և մյուսների ստեղծածի շարունակությունն է: Մյուս կողմից՝ քսաներորդ դարի առաջին տասնամյակների ճակատագրական իրադարձությունները իրենց ուժեղ կնիքը դրեցին այդ արձակի վրա՝ դրանով իսկ սկզբնավորելով հայկական նորագույն արձակի պատմությունը: Արձակի բնագավառում ևս ստեղծագործում էին տարբեր սերունդների գրողներ՝ իրենց փորձով, սկզբունքներով, կենսական տպավորություններով:

Ստեփան Զորյանը (1889–1967)՝ քսաներորդ դարի հայ գրականության դասականներից մեկը, իր ստեղծագործությամբ կենդանի կամուրջ եղավ դասական արձակի և նորագույն արձակի միջև: Նա ծնվել է Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: Սովորել է ռուսական գիմնազիայում, որովհետև այդ տարիներին ցարական իշխանությունները փակել էին հայկական դպրոցները: Ինչպես ինքն է վկայում, իր նման երեխաների հետ գաղտնի ուսումնասիրել է հայոց պատմություն: Գնացել է Թիֆլիս, այնտեղ աշխատակցել հայկական թերթերի, տպագրել առաջին գործերը: 1919-ից ապրել է Երևանում: Գրել է պատմվածքներ, վեպեր, վիպակներ: Ինքը մի հետաքրքրական վկայություն ունի, թե ինչու է ընտրել արձակը.

«Պետք է ասեմ, որ գրական բոլոր ժանրերը ինձ դուր էին գալիս, բայց իմ համակրանքը միշտ թեքվում էր դեպի արձակը: Ինչո՞ւ էր այդպես. որովհետև արձակը ինձ թվում էր ամենաքնական գրական ձևը:

Այստեղ այն էր, ինչ կյանքում, մարդիկ չափով ու հանգով չէին խոսում և ոչ էլ սարքած տեսարաններով: Բայց արձակի մեջ էլ սիրում էի ամենաքնականը, ամենապարզը, որտեղ հույզերն ու հոգեբանությունը տրվում են ոչ արհեստականորեն, առանց ճոռոմության, առանց շատախոսության: Մի բան, որ ես չէի նկատում բոլոր արձակագիրների մոտ: Այդ հատկությունները ես ամենից շատ տեսնում էի Լև Տոլստոյի մեջ, Չեխովի մեջ և մեր Թումանյանի գործերում»:

Սա ճշգրիտ ինքնաբնութագրում է: Զորյանի արձակը մոտ է կյանքին, առօրյա խնդիրներին, նրա պատմվածքների հերոսները սովորական մարդիկ են՝ իրենց բնորոշ խոսքով, վարքուբարքով, հոգեբանությամբ: Նա պատմում է պարզ լեզվով՝ հեռու մնալով լեզվական զարդարանքներից: Հայկական արձակի ամենամեծ հոգեբաններից է, որը կարողանում է տեսնել և բացահայտել իր հերոսների հոգիների ամենանուրբ շարժումները:

Տպագրել է պատմվածքների մի քանի գրքեր՝ «Տխուր մարդիկ», «Ցանկապատ», «Պատերազմ», «Կրակ», «Առաջին օրեր» և այլն: «Տխուր մարդիկ» գրքի պատմվածքները այսպես կոչված փոքր մարդկանց մասին են, որոնց

կյանքը անցնում է գորշ, առանց իրադարձությունների. այդ իմաստով դա իսկապես տխուր կյանք է: «Ցանկապատ» գրքի հերոսներն էլ այսպիսի տխուր մարդիկ են, բայց հիմա Զորյանը ավելի մեծ ուշադրություն է դարձնում հերոսների ներքին կյանքին ու ճակատագրի հաճախ կտրուկ շրջադարձերին, նաև սոցիալական խնդիրներին: Այս ժողովածուի լավագույն գործերից մեկը «Հանեսը» պատմվածքն է, որի մեջ Զորյանը հմտորեն բացում է փոքրիկ տղայի ապրած ողբերգությունը, երբ նա իմանում (ավելի ճիշտ՝ զգում) է իր ընտանիքի պատմությունը:

«Պատերազմ» ժողովածուում Զորյանի հոգեբանական վարպետությունը հանդես է գալիս իր ողջ խորությամբ: Զորյանը ներկայացնում է մարդկային հոգիների վրա Առաջին համաշխարհային պատերազմի թողած ազդեցությունը, ողբերգությունները, որ ապրում են մարդիկ այդ պատերազմի հետևանքով: Ուժեղ, ավարտուն գործեր են «Զրհորի մոտ», «Զաքարի հարսը», «Օհանի մահը», «Պատերազմ» պատմվածքները: Վերջինում Զորյանը պատմում է մի զինվորի մասին, որը ռուսական բանակում ծառայելուց հետո վերադառնում է հայրենի գյուղ, ամուսնանում: Բայց շուտով սկսվում է պատերազմը, Մաճկալանց Դավթին (այդպես է հերոսի անունը) նորից բանակ են տանում, և ռազմաճակատից նա վերադառնում է վիրավոր ոտով, որը նրան գրկում է գեղեկական իր աշխատանքը կատարելու, հող մշակելու հնարավորությունից: Ծեր հայրն աշխատում է, իսկ ինքն անընդունակ է նրան օգնելու: Կինը ամուսնացել է ուրիշի հետ, հեռացել: Կարելի է պատկերացնել զինվորի հոգեվիճակը: Այս վիճակում Դավթին կանչում են տանուտերի մոտ: Խոսակցությունը սուր բնույթ է ընդունում, և Դավիթը ձեռնափայտով հարվածում է գյուղապետին, որը մահանում է: Գյուղացի երիտասարդը ականա մարդասպան է դառնում: Նրան աքսորում են: Զորյանը մանրակրկիտ հոգեբանական վերլուծություններ չի կատարում, բայց այնպես է նկարագրում Դավթի գործողությունները, որ ընթերցողը զգում է երիտասարդ, բայց արդեն բնականոն կյանքով ապրելու անընդունակ մարդու վիճակը:

Ժողովածուի ամենախոր գործերից մեկը «**Օհանի մահը**» պատմվածքն է: Զորյանը պատմում է մի մարդու մասին, որի միակ տղային թուրքերը սպանել են: Ծերունու ցանկությունն է լուծել որդու վրեժը և մեռնել: Եվ ահա թուրքերը մտնում են գյուղը, գրավում են տները, այդ թվում և ծերունու տունը: Ծերունին, թուրքերից զգված, սկսում է ապրել նրանցից հեռու՝ այգու տնակում: Երբ թուրքերը գյուղից հեռանում են, նա վերադառնում է իր տունը, նայում, հավաքում, կարգի բերում: Սենյակներից մեկում տեսնում է անծանոթ մարդու: Պարզվում է՝ մի թուրք վիրավոր զինվոր չի կարողացել ընկերների հետ փախչել: Նրան թողել են և գնացել: Կարծես թե ծերունու համար վրեժ լուծելու լավ հնարավորություն է ստեղծվել: Բայց նրա մեջ զարթնում է կարեկցանքը վիրավոր մարդու հանդեպ: Վիրավորն արդեն թշնամի չէ, այլ տառապող մարդ:

Ծերունին համագյուղացիներից թաքուն սկսում է խնամել թուրքին: Պատերազմական պայմաններում նրան խիստ պատիժ էր սպասում թշնամու զինվորին թաքցնելու համար: Մի օր հարևան պառավը մտնում է ծերունու տուն՝ ինչ-որ բան խնդրելու: Ծերունուն տանը չի գտնում, նայում է գոմը և տեսնում վիրավորին: Միամտաբար պատմում է գյուղացիներին: Լուրը հասնում է իշխանություններին: Ծերունուն և թուրք զինվորին գնդակահարում են... Հասարակ մարդկանց ամենօրյա կյանքում գլխավորը ոչ թե ազգային ու քաղաքական տարբերություններն են, այլ մարդկային բնական հարաբերությունները: Վերքերից տառապող և յուրայիններից լքված մարդու ցավը հասկանալի է բոլորին, առավել ևս՝ հայ մարդուն: Հայ գրականության մեջ այս թեման մի անգամ չէ, որ արծարծվել է: Զորյանի ժողովածուից հետո տարիներ անց Ալսեղ Բակունցը գրեց «Եղբայրության ընկուզենիները» գործը, որը շատ է հիշեցնում Զորյանի պատմվածքը: Մարդկայության պաթոսը միշտ ուժեղ է եղել հայ գրականության մեջ:

Ժամանակին մեծ արձագանք ունեցավ դարձյալ դասական կատարելության մի պատմվածք՝ «**Խնձորի այգին**»: Զորյանը պատմում է, թե ինչպես խնձորի գեղեցիկ այգին դառնում է հոր և դուստրերի գժտության պատճառ: Մարտին ապերը ամբողջ կյանքում սիրով խնամել է իր այգին, ոչ այնքան իբրև հարստության աղբյուր, որքան իբրև գեղեցկություն: Կնոջ մահից հետո երկու ամուսնացած դուստրերը սպասում են, որ այգին ժառանգություն կմնա իրենց: Բայց Մարտին ապերը անսպասելիորեն ամուսնանում է երիտասարդ գաղթականուհու՝ Նունուֆարի հետ: Դուստրերը սկսում են վախենալ: Նունուֆարը երեխա կարող է ունենալ և խլել իրենցից այգին: Եկեղեցու ճանապարհին երկուսով դաժանորեն ծեծում են հղի Նունուֆարին, որը մահանում է: Ծերունին հասկանում է, թե ինչ է կատարվել: Եվ մի առավոտ մոլեգնած սկսում է կտրել իր փայփայած այգու ծառերը: Փեսաները հասնում են, բռնում, հետո Մարտին ապորը տանում հոգեբուժարան: Գեղեցկության խորհրդանիշ այգին վերածվում է սոսկական հողակտորի, որից մեծ եկամուտներ են սպասվում, և հանուն այդ եկամուտների՝ երկու քույրերը փաստորեն սպանում են իրենց չճնված եղբորը... Այս բոլորի մասին Զորյանը պատմում է հասարակ, անգարդ, բայց ճշգրիտ խոսքերով, նուրբ գծերով ներկայացնելով հերոսներից ամեն մեկի հոգին:

Հայրենական պատերազմի տարիներին և պատերազմից հետո Զորյանը գրեց երեք պատմվեպ հայ Արշակունի թագավորների մասին՝ «Պապ թագավոր», «Հայոց բերդ», «Վարազդատ», որոնք պատկերում էին 4-րդ դարի դեպքերը: Այս եռագրության ամենահաջողված գործը «Պապ թագավորն» է («Հայոց բերդը» պատկերում է Պապի հոր՝ Արշակ թագավորի հայրենասիրական գործունեությունը, Վարազդատը հաջորդում է Պապին): «Պապ թագավորը» հայոց պատմությանը նվիրված վերլուծական գործերից է, որի մեջ Զորյանը քննում է հայոց դժբախտությունների պատճառները, վերագնահատում

պատմագրության մեջ անարդար գնահատականների արժանացած Պապ թագավորի և նրա հոր՝ Արշակի գործունեությունը: Նրանք ձգտում էին ստեղծել ուժեղ, կենտրոնաձիգ թագավորություն, որը դիմանար երկու հզոր և նենգ հարևանների՝ պարսից և բյուզանդական թագավորների խարդավանքներին և հարձակումներին: Բայց կենտրոնախույս ուժերը, հենվելով այդ երկրների արքունիքների վրա, ամեն ինչ անում են դա թույլ չտալու համար:

Առաջին համաշխարհային պատերազմը ծանր և ողբերգական ազդեցություն գործեց հայ ժողովրդի ճակատագրի, նրա գրականության և ողջ մշակույթի վրա: Ցեղասպանության իրողությունը ստիպեց նոր հայացքով նայել հայ ժողովրդի ամբողջ պատմությանը: XIX դարի վերջի ռոմանտիկական պատրանքները, Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույսերը մեռած էին, երկիրը դատարկվել էր, նրա իսկական տերերը կամ զոհվել էին, կամ ցրվել էին աշխարհով մեկ: Գրականությունը ավելի սթափ, երբեմն էլ մռայլ գույներով էր ներկայացնում հայ ժողովրդի պատմությունն ու ազգային-ազատագրական պայքարը: Դրա ամենավառ արտահայտությունը Եղիշե Չարենցի ստեղծագործությունն էր, նրա պոեմները հայոց պատմության մասին և «Երկիր Նաիրի» վեպը:

Պարզ է, որ այդ շրջանի հայ գրողները չէին կարող անցնել հայոց պատմության ճակատագրական իրադարձությունների կողքով, պետք է փորձեին հասկանալ և գնահատել դրանք: Այս դեպքում ավելի ու ավելի հաճախ նրանք դիմում էին երգիծանքին՝ ցուցադրելով հայոց ազգային ուժերի թերությունները, ազգային կյանքը բարդ իրավիճակում դեկլարելու անկարողությունը: Չարենցի հռչակավոր վեպը՝ «Երկիր Նաիրին», որտեղ ներկայացվում էին Առաջին համաշխարհային պատերազմի իրողությունները և հայկական քաղաքի անկումը, հենց երգիծական վեպ էր, բայց հագեցած ողբերգական զգացողություններով: Ազգային ողբերգությունը մի կողմից երգիծանք էր ծնում ազգային կուսակցությունների անկարողության հանդեպ, մյուս կողմից՝ խորին ցավ երկրի և ժողովրդի ճակատագրի համար:

Այդպես գրվեց և Վահան Թոթովենցի «Դոկտոր Բուրբոնյան» վեպը, որի մեջ գրողը ներկայացնում էր ազգային գործչի երգիծական կերպարը: Դոկտոր Բուրբոնյանը ի վիճակի չէր տեսնելու իրականությունը, ապրում էր պատրանքների մթնոլորտում, երագում էր փառքի մասին և իր գործողություններով իր հայրենակիցներին կանգնեցնում էր անլուծելի խնդիրների առջև: Այսպես, ըստ Թոթովենցի, գործում էին և հայկական կուսակցությունները:

Հայկական երգիծական արձակի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը քսան-երեսնականներին **Լեռ Կամսարն** (1888–1965) էր, մի գրող, որը ժառանգել էր արևմտահայ երգիծանքի ավանդույթները: Դեռ Վանում նա գրում էր ֆելիետոններ (երգիծական պատումներ կամ խորհրդածություններ) դաշնակցական կուսակցության, ապա և անկախ Հայաստանի կառավարության գործողությունների մասին՝ ծաղրելով նրանց հավակնություններն ու իրական վիճակը:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Լեռ Կամսարը շարունակեց գրել ֆելիետոններ՝ այս անգամ ուղղված նոր կարգերի թերությունների դեմ: Կամսարը իսկական երգիծաբան էր, որը տեսնում էր առօրյա կյանքի և քաղաքականության մերժելի կողմերը՝ լինեին դրանք Ռաշնակցության թե կոմունիստների մեղքով, և խարազանում էր դրանք: Բայց ԽՍՀՄ-ում հետզհետե ուժեղացող գրաքննությունը, բռնությունները դուրս մղեցին Լեռ Կամսարին գրական ասպարեզից. նրան աքսորեցին:

Քաղաքական երգիծանքի կողքին հայ գրականության մեջ ձևավորվում էր ևս մեկ ուղղություն, որը շատ ընդհանուր գծեր ուներ սփյուռքի «կարոտի» գրականության հետ: Ռա ևս իր տեսակի կարոտի գրականություն էր: Գրողները անդրադառնում էին մոտ անցյալի կամ նախահեղափոխական կյանքին՝ նկարագրելով այդ կյանքի արատավոր և տխուր կողմերը: Բայց, մյուս կողմից, նրանք պատկերում էին այն գեղեցկությունները, որ բնորոշ էին նահապետական հայ մարդուն, գեղեցկություններ, որոնք անհետանում էին նոր իրողությունների հաստատմանը զուգընթաց: Այդպիսին էին Ակսել Բակունցի պատմվածքները: Բակունցի արձակը մի կողմից մարդկային խորտակված հույսերի և կյանքերի, ավերված գեղեցկության աշխարհ էր, մյուս կողմից՝ բարձր բարոյականության, նուրբ ապրումների ու զգացմունքների աշխարհ: Եվ չէր կարելի չափսոսալ այդ ամենի կորստի համար: Նույն կերպ էր գրում Գուրգեն Մահարին իր կորած մանկության, իր ավերված Վանի մասին: Մի կողմից՝ այդ ամենի վրա կախված էր Յեղասպանության սովերը, մյուս կողմից՝ մենք չենք կարող չզգալ, թե ինչ կարոտով է գրում իր տատի, իր ընկերների, առհասարակ նախապատերազմական կյանքի մասին Մահարին:

Այս գործերի մեջ էր **Վահան Թորթվենցի** (1894–1938) «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակը: Այս գլխի սկզբում արդեն հիշվեց Թորթվենցի «Ռոկտոր Բուրբոնյան» երգիծական վեպը: Թորթվենցի ստեղծագործությունը շատ բազմազան էր: Նա գրել է բանաստեղծություններ, պոեմներ, հետո անցել է արձակի, գրել է նաև դրամաներ, որոնց մեջ առանձնանում էր «Նոր Բյուզանդիոնը» Թուրքիայում ապրող հայ վաճառականի մասին: Արձակի մեջ աչքի էին ընկնում, «Ռոկտոր Բուրբոնյանի» կողքին, նրա պատմվածքները Ամերիկայի մասին, որտեղ Թորթվենցը ապրել էր հայրենի Խարբերդից հեռանալուց հետո: Քսանական թվականների սկզբին Թորթվենցը տեղափոխվեց Հայաստան: Այստեղ նրա գրած գործերի մեջ առանձնանում էր ինքնակենսագրական վիպակը, որը նա անվանեց «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա»՝ մատնացույց անելով հայրենի Խարբերդը: Վիպակում նա պատմում է իր ընտանիքի, մանկության և երիտասարդության, հայրենի քաղաքի մասին: Պատմությունը հագեցած է քնարականությամբ, կարոտով՝ կորած մարդկանց և երկրի հանդեպ: Միաժամանակ առկա է մեղմ հումորը: Վիպակը ներկայացնում է մանր ու մեծ պատմություններ, որոնք կապված են

նույն հերոսներով և համակված նույն զգացմունքներով: Հրաշալի էջեր են նվիրված ծնողներին: Հայրը խստադեմ, բայց բարի սրտի և ջերմ զգացմունքների տեր մարդ է, մայրը՝ համակ սեր, որին Թոթովենցը, ոչ առանց հումորի, համարում է աշխարհի միակ իսկական քրիստոնյան: Այս գրքի էջերում վերակենդանանում են Խարբերդի շքեղ բնությունը, խարբերդցիների արատներն ու առաքինությունները: Թոթովենցը ևս դարձավ երեսնականների բռնությունների զոհերից մեկը:

Ինչպես արդեն տեսանք, Թոթովենցը Հայաստան վերադարձավ արտասահմանից: Նա այն հայ մտավորականների շարքում էր, որոնք ուզում էին օգտակար լինել իրենց հայրենիքի կառուցմանը: Բայց ստալինյան ռեժիմը չինայեց նաև նրանց: Նույն ճակատագրից չխուսափեց արձակագիր **Զապել Եսայանը** (1878–1943), որը ավելի ուշ՝ երեսնականներին, վերջնականապես հաստատվեց Հայաստանում և ակտիվորեն մասնակցում էր Երևանի գրական-հասարակական կյանքին: Մինչ այդ նա արդեն լայն համբավ էր ձեռք բերել Արևմտյան Հայաստանում և սփյուռքում իր արձակ և հրապարակախոսական երկերով: Հայաստանում, ի թիվս այլ գործերի, որոնց մեջ պատկերում էր նոր Հայաստանի կյանքը, նա գրեց «Միլիտարի պարտեզները» գիրքը իր մանկության մասին, գրքի էջերում վերակենդանացնելով հայկական Պոլիսը, այն քաղաքը, որի հետ կապված էին շատ հայ գրողների կյանքը և ստեղծագործությունը: Զապել Եսայանը մահացավ բանտում 1943թ.:

Մկրտիչ Արմենը (1906–1972) այն հայ գրողներից էր, որոնք գրականություն եկան հեղափոխության հետ: Նա Չարենցի մտերիմներից էր, նրա ստեղծած «Նոյեմբեր» միության անդամ: Նրա առաջին հայտնի գործերից մեկը «Կարմիր և կապույտ փողկապներ» վեպն էր մանկական կոմունիստական կամ պիոներական շարժման մասին: Բայց Արմենը իր իսկական տեղը հայ արձակում նվաճեց «Հեղնար աղբյուր» վիպակով, որը պատկերում էր նահապետական-արհեստավորական Գյումրու կյանքը: Այդ վիպակում նա ստեղծում է կերպարներ, որոնք ուժեղ ու խոր զգացմունքներ և բարոյական բարձր չափանիշներ կրողներ էին, բայց դժբախտ էին: Երիտասարդ կինը սիրում է ոչ թե ամուսնուն, այլ Վարոսին: Իսկ ամուսինը՝ հռչակավոր աղբյուրագործ վարպետը, համոզված, որ կինը պետք է սիրի միայն օրինական ամուսնուն, կառուցում է մի աղբյուր, որը անվանում է կնոջ անունով՝ Հեղնար աղբյուր: Այդ աղբյուրից միայն ինքը կարող էր ջուր խմել: Դա դառնում է ամուսնական կապի սրբության և աներերության խորհրդանիշ, և գյումրեցիները, այդ թվում և Վարոսը, հավատում են նրան: Վարոսը ամբողջ կյանքում տառապում է իր մեղքի համար, Հեղնարը շուտ մահանում է: Անցնում են տասնամյակներ, վարպետ Մկրտիչն արդեն չկար, Հեղնար աղբյուրը քանդվել էր, և Վարոսը իր համար հայտնագործում է աղբյուրի գաղտնիքը: Այդ աղբյուրը ջուր էր տալիս միայն Մկրտչին ոչ թե ինչ-որ միստիկական նախախնամության հրամանով, ոչ

թե աստծո կամքով, այլ վարպետ Մկրտչի հնարանքի շնորհիվ: Բայց Մկրտիչը ոչ թե խաբել էր համաքաղաքացիներին, այլ այդպես մարմնավորել էր իր անխորտակ համոզումը ընտանեկան կապերի անխախտության մասին...

1937-ին Մկրտիչ Արմենին էլ աքսորեցին: Աքսորից վերադառնալուց հետո՝ հիսունականներին, նա գրեց իր մյուս հայտնի գիրքը՝ պատմվածքներ աքսորի տարիների, մարդկային զգացմունքների ու երազանքների մասին, որոնք խորտակվում են Սիբիրի ձյուններում: Գիրքը ուներ խորհրդանշական անուն՝ «Պատվիրեցին հանձնել ձեզ»: Արմենը կարծես կատարում էր իր գոհված ընկերների պատվերը՝ պատմելով նրանց ճակատագրերի մասին... Այս գիրքը Մահարու «Ծաղկած փշալարերի» և Վալտեր Արամյանի՝ մի այլ աքսորական հայ գրողի պատմվածքների հետ ստեղծեց «աքսորի գրականության» հայկական տարբերակը:

Հայկական նորագույն արձակի կարևորագույն թեմաներից մեկը եղավ Յեղասպանությունը իր հետևանքներով: Դեռ երեսնական թվականներին Ալսեղ Բակունցը գրեց մի քանի պատմվածք, որտեղ ակնարկվում էր Յեղասպանության մասին: Բայց այն տարիներին այս թեման արգելքի տակ էր: Պատերազմի ժամանակ գրվեցին գործեր, որոնց մեջ դարձյալ խոսվում էր հայկական մեծ ողբերգության մասին: Դրանց մեջ էր **Հրաչյա Քոչարի** (1910–1965) հայտնի պատմվածքը՝ «Գեներալի քույրը», որի հերոսի նախատիպը Հայրենական պատերազմի հայ փառաբանված զորավար Հովհաննես Բաղրամյանն էր: Յեղասպանությունից հետո հեռավոր երկրներ հասած հայ կինը նամակ է գրում հայ զորավարին՝ հավատալով, որ նա իր կորած եղբայրն է: Զորավարը սիրով պատասխանում է նրան՝ ասելով, որ թեև ինքը կնոջ հարազատ եղբայրը չէ, բայց իրենք քույր ու եղբայր են, որովհետև նույն ժողովրդի գավակներն են:

Քոչարը երեսնական թվականներին երիտասարդ գրողի իր հանգամանքով ակտիվորեն մասնակցում էր գրական կյանքին, մոլեռանդ ելույթներ է ունեցել շատերի, այդ թվում և Եղիշե Չարենցի դեմ: Բայց պատերազմից հետո նրա դիրքերը աստիճանաբար փոխվեցին՝ հեռանալով կուսակցական մոլեռանդությունից: Նա դարձավ ամենահեղինակավոր ազգային գործիչներից մեկը, մեծ աշխատանք կատարեց սփյուռքի հետ հարաբերություններ հաստատելու, Յեղասպանության թեման հասարակական կյանքում և գրականության մեջ վերահաստատելու, հայոց պատմության մոռացված էջերը վերականգնելու ուղղությամբ: Այս թեմայով նրա գրած երկու վիպակները՝ «Նահապետը» և «Կարոտ», տաղանդավոր և խոր գործեր էին: Առաջինում պատմում է հայ մարդու մասին, որն ընտանիքը կորցնում է Յեղասպանության օրերին, թվում է՝ ինքն էլ արդեն մեռած է: Բայց Արևելյան Հայաստանում աստիճանաբար ուշքի է գալիս, նոր ընտանիք ստեղծում, երեխաներ ունենում, այգի տնկում: Հայ մարդու կենսունակության պատմություն է այս վիպակը: Վիպակի հիման վրա

նկարահանված ֆիլմը ևս մեծ տպավորություն գործեց հանդիսատեսի վրա: «Կարոտը» քնարական շնչով համակված պատմություն է հայ մարդու հայրենակարոտության մասին: Առաքելը իր հայրենակիցների հետ գաղթել է Արևելյան Հայաստան, բայց չի մոռանում, չի կարող մոռանալ իր ծննդավայրը: Մի օր էլ որոշում է գնալ, տեսնել, կարոտն առնել իրենց տնից, սարերից ու բնությունից և վերադառնալ: Նրա արածի մեջ ոչինչ հակախորհրդային չկա, նրա որդիները նոր գյուղում բարձր դիրքեր են գրավում: Նա մտածում է միայն գնալ, տեսնել, հետ գալ: Չէ՞ որ դա ամենաբնական մարդկային զգացմունքներից մեկն է՝ կարոտը իր ծննդավայրի հանդեպ: Բայց երբ Առաքելը վերադառնում է, նրան ձերբակալում են, ենթարկում կտտանքների, որդիները գրկվում են ամեն ինչից... Քոչարի այս գործերը արժարժեցին մարդկային ամենապարզ և ամենախոր զգացմունքները՝ սերն ու կարոտը հայրենիքի, ծննդավայրի հանդեպ:

Վաթսուրականներին հրապարակվեց **Խաչիկ Դաշտենցի** (1910–1974) «Ռանչպարների կանչը» վեպը, որը դարձյալ կապված էր Ցեղասպանության և ազգային-ազատագրական պայքարի հետ: Դաշտենցը ծնվել էր Արևմտյան Հայաստանի Դաշտադեն գյուղում: Գրել էր բանաստեղծություններ, դրամա և այլ գործեր: Նրա լավագույն երկերը նվիրված էին Արևմտյան Հայաստանին: Առաջին այդպիսի գործը «Խողեղան» վեպն էր: Այստեղ դեռ չկար ազատագրական պայքարի պատկերը: «Ռանչպարների կանչը» պատմում է հենց այդ պայքարի, հայ ֆիդայիների՝ ազատամարտիկների մասին, որոնք հրաժարվեցին կյանքի բոլոր բարիքներից՝ իրենց ժողովրդին ծառայելու համար: Դաշտենցի վեպը առաջինն էր՝ նվիրված այս թեմային: Մենք շատ քիչ բան գիտեինք այդ քաջ, ազնվական, ռոմանտիկական երագողների մասին, որոնք տարիներով ապրում էին սարերում՝ միայն ժամանակ առ ժամանակ իջնելով իրենց գյուղերը: Դաշտենցը այս վեպում հմտորեն միահյուսում է իրական մարդկանց, իրական հերոսների՝ Անդրանիկի և ուրիշների պատմությունները կիսաառասպելական դրվագների հետ, որոնք այս զարմանալի վեպը մոտեցնում են հայկական ազգային էպոսին, մանավանդ հերոսներից շատերը հենց սասունցիներ էին, հայոց ազգային էպոսի դյուցազունների ժառանգները: Ֆիդայիները ռազմատենչ մարդիկ չեն, նրանք սովորական հայ գյուղացիներ են, որոնք երագում են միայն մի բան՝ իրավունք ունենալ ազատորեն աշխատելու իրենց շենքերում, մշակելու իրենց ոչ այնքան բերքատու հողը և ապրելու իրենց պապերի պես: Սակայն նրանց թույլ չեն տալիս այդպես ապրել: Թուրքերը ուզում են պահել այդ մարդկանց ինչպես ստրուկների: Բայց նրանք չեն կարող ապրել իբրև ստրուկներ, նրանք հպարտություն և արժանապատվություն ունեն: Դրա համար սար են բարձրանում: Դրանք մոռումենտալ, ամբողջական բնավորություններ են, երբեմն դաժան, երբ դա են պահանջում նրանց գործը, նրանց բարոյական սկզբունքները: Բայց նրանք կռվում են միայն ու միայն ռանչպարի իրենց կյանքը արժանապատվությամբ ապրելու իրավունքի համար:

Հայ արձակույթ միանգամայն առանձնահատուկ տեղ է գրավում **Վախթանգ Անանյանի** (1905–1980) ստեղծագործությունը: Հյուսիսային Հայաստանի (Դիլիջան) անտառոտ բնության մեջ ծնված ու հասակ առած այս գրողը իր պատմվածքները, վիպակներն ու վեպերը նվիրեց երկրի բնությանը, կենդանական և բուսական աշխարհին: Հայ գրականության մեջ նա առանձնացավ բնության թեմային իր հավատարմությամբ: Ուրբով շրջել է ամբողջ Հայաստանը, իր բոլոր հերոսներին հանդիպել իրենց բնական միջավայրում: Նրա հերոսները մարդիկ էին ու կենդանիներ: Անանյանի ընթերցողները նրա գործերով ճանաչում էին Հայաստանի բնությունը: Գրողը կենդանիներին ընկալում էր իբրև մտածող ու զգացող արարածների, որոնք ընդունակ էին բարեկամություն անել մարդկանց հետ կամ պատժել վատ մարդկանց: Իր ստեղծագործությամբ նա ընթերցողներին սովորեցնում էր սիրել բնությունը, խնայել և խնամել այն: Նա մեկ Լոռվա հարուստ բնությունն է ներկայացնում, մեկ՝ Սևանա լիճը և նրա շրջակայքը, մեկ՝ Վայոց ձորի քարքարոտ սարերը... Անանյանը նաև ամենաշատ թարգմանված հայ գրողներից էր, նրա գործերը տպագրվում էին ոչ միայն ռուսերեն և նախկին Խորհրդային Միության ամենատարբեր լեզուներով, այլև արտասահմանյան երկրներում: Անանյանի «Սևանի ափին» և «Հովազածորի գերիները» ընթերցանության սիրելի նյութ են եղել պատանիների տասնյակ սերունդների համար, պատմվածքները մինչև այժմ հաճույք են պատճառում բնության խոր իմացությամբ և պատմելու հմտությամբ: Անանյանը շատ բան էր սովորել Հովհաննես Թումանյանից, որի ստեղծագործության մեջ բնությունը այնքան մեծ տեղ է գրավում: Մարդու և բնության կապի այն խոր զգացողությունը, որը կար Անանյանի ստեղծագործության մեջ, անշուշտ գալիս էր Թումանյանից: Թումանյանից հետո արևելահայ գրականության մեջ բնության մասին շատ են գրել քսաներորդ դարի հայ արձակի դասականները՝ Բակունցը, Ստեփան Զորյանը: Անանյանը յուրովի շարունակեց նրանց ավանդույթները: Մեր օրերում Անանյանի ստեղծագործությունը ինչ-որ իմաստով ավելի հրատապ է դառնում: Բնության գլխին կախված վտանգը ավելի ու ավելի հստակ է գծագրվում, մարդիկ միավորվում են բնությունը փրկելու համար, և Անանյանի ստեղծագործությունը օգնում է նրանց այս գործում:

Անահիտ Սահինյանը (1917–2007), Մերո Խանգաղյանը, Խաժակ Գյուլնազարյանը, Մկրտիչ Մարգարյանը, Բաղիշ Հովսեփյանը կարող են համարվել արձակագիրների հետպատերազմյան սերնդի ներկայացուցիչներ: Նրանցից ամենաավագը՝ Անահիտ Սահինյանը, դեռ պատերազմի ժամանակ վեպ տպեց: Մյուսները իրենց առաջին գործերը տպագրեցին Հայրենական պատերազմից հետո, երբեմն՝ տարիներ անց: Բայց պատերազմի փորձը էական դեր խաղաց նրանց ստեղծագործության մեջ:

Անահիտ Սահինյանը հոգեբանական արձակի հետևորդ էր: Նրա վեպերում (վեպը նրա գլխավոր ժանրն էր) մարդիկ հանդես էին գալիս կենսական բարդ շրջադարձերի պայմաններում, երբ որոշումներ ընդունելը հեշտ չէր, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր ընտանեկան կյանքին: Սահինյանը կարող է համարվել նորագույն շրջանի Հայաստանի կյանքի տարեգիրը. նրա վեպերում Հայաստանի կյանքն է քսանական թվականներից մինչև յոթանասունականները, և Սահինյանը երբեք չշրջանցեց կյանքի առաջադրած բարդագույն խնդիրները: Հատկապես մեծ հաջողություն ունեցան նրա երկու վեպերը՝ «Ծարավը» և «Կարոտը»: Անահիտ Սահինյանը իր ժամանակի անվանի հրապարակախոսներից էր:

Սերո Խանգադյանը, ինչպես և **Խաժակ Գյուլնազարյանը**, **Մկրտիչ Սարգսյանը**, **Բաղիշ Հովսեփյանը**, մասնակցել էին Հայրենական պատերազմին և իրենց երկերում արտացոլում էին տպավորությունները նորագույն պատմության այդ արյունալի կոնֆլիկտից: Նրանք հեռացան հետպատերազմյան առաջին տարիների ավանդույթից, երբ պատերազմը պատկերվում էր շքահանդեսային գույներով, մոռացվում էին դրա ողբերգական կողմերը, հարյուրհազարավոր մարդկային ճակատագրերի ավերումը: Այս հեղինակները պատմում էին սովորական զինվորների խրամատային կյանքի, զոհերի, նահանջի, հերոսության մասին: Խաժակ Գյուլնազարյանի (1918–1995) «Ինչ-որ տեղ վերջանում էր հորիզոնը», Բաղիշ Հովսեփյանի (1922–2004) «Սերմնացանները չվերադարձան» վեպերը, Մկրտիչ Սարգսյանի (1924–2002) «Սերժանտ Կարոն» վիպակը և «Ճակատագրով դատապարտվածները» վեպը հայ ընթերցողին ներկայացրին պատերազմի դաժան և հակասական պատկերը:

Սերո Խանգադյանի (1916–1998) ստեղծագործության համապատկերը ավելի հարուստ էր: Հիսունականներից սկսած՝ նա գրում էր հայկական գյուղի («Հողը»), արդյունաբերական նոր քաղաքի («Քաջարան»), այնուհետև հայոց պատմության տարբեր շրջանների մասին: Արժեքավոր էին նրա պատմվածքները հասարակ մարդկանց առօրյայի մասին:

60-ական թվականներին ասպարեզ եկավ գրողների մի սերունդ, որը փոխեց հայ արձակի դեմքը: Այդ սերնդի հեղինակներն էին Հրանտ Մաթևոսյանը, Մուշեղ Գալշոյանը, Աղասի Այվազյանը, Ռուբեն Հովսեփյանը, Մանուկ Մնացականյանը, Զորայր Խալափյանը, Վարդգես Պետրոսյանը, Պերճ Զեյթունցյանը և ուրիշներ: Այս բոլոր գրողները ձգտում էին ցույց տալ կյանքի իրական հակասություններն ու դրամատիզմը, մարդու հոգեբանության բարդությունը, գծագրվող այն նոր խնդիրները, որոնք ավելի ու ավելի էին սրվելու հետագայում:

Մուշեղ Գալշոյանը (1933–1980) ծնվել էր սասունցի փախստականի ընտանիքում: Նրա հայրը կորցրել էր ընտանիքը Յեղասպանության ժամանակ, նորից ամուսնացել էր Հայաստանում: Իր ընտանիքի պատմությունը, սասունցի փախստականների կյանքը դարձան նրա գրականության նյութը: Գալշոյանը շատ խորն էր վերապրում այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, և որոնց պատճառով իր հայրենակիցները, հարյուրհազարավոր հայեր գրկվեցին իրենց հայրենիքից: Նրա գլխավոր գործի՝ «Ձորի Միրոյի» հերոսը ապաստան էր գտել Արևելյան Հայաստանում, նա էլ կորցրել էր իր ընտանիքը և ամուսնացել երկրորդ անգամ: Նրա կյանքը հիշեցնում է Քոչարի վիպակի հերոսի՝ Նահապետի ճակատագիրը, բայց մի էական տարբերությամբ: Նահապետը ուշքի է գալիս սարսափելի կորուստներից, նա դառնում է դիմացկունության և կենսունակության խորհրդանիշ: Իսկ Միրոն ամբողջ կյանքում ապրում է իրենց ճակատագրի դառնությունը և անարդարությունը: Նա չի ներում իրեն և մյուսներին իրենց փախուստը հայրենիքից, հայրենիքի կորուստը: Նա խռոված է և՛ աշխարհից, և՛ իրենից: Դրա համար էլ նա իր տունը կառուցել է գյուղի եզերքին, մեջքով դեպի գյուղը: Սա հայկական ճակատագրի երկրորդ երեսն էր՝ իրենց նկատմամբ գործված ահավոր անարդարության և իրենց պարտության զգացողությունը: Այս զգացողությունն էր կենդանի պահում արդարության սպասումը: Հայ մարդը չպետք է մոռանար այդ ամենը: Նույն այդ մարդկանց ճակատագիրն է պատկերում Մուշեղ Գալշոյանը իր պատմվածքներում, որոնք կազմեցին «Մարութա սարի ամպերը» շարքը: Այս շարքի հերոսները ապրում են հայրենի հուշերով և բարոյական օրենքներով, չեն կարողանում հաշտվել «սպառնողական հասարակության» չափանիշների հետ, ընդդիմանում են դրանց, ինչպես կարողանում են: «Դավոն» պատմվածքը կարող է տեղ գտնել հայ պատմվածքի ընտրանիի մեջ: Սա պատմություն է Անդրանիկի զինվորի մասին, որը երկար թափառումներից հետո հանգրվան է գտել Արևելյան Հայաստանում: Շատ բնորոշ է մեկ այլ գործի հերոսի պահվածքը, որը, հարբած ժամանակ գովելով իրենց հիմնարկի կաշառակեր պետին, սթափվելուց հետո գիշերով վերադառնում է պետի տուն և իր խոսքերը հետ առնում:

Աղասի Այվազյանը (1925–2007) իր սերնդակիցների և առհասարակ հայկական նորագույն արձակի մեջ աչքի էր ընկնում իրականության հեքիաթային-առասպելական ընկալման հակումով: Ամեն դեպք, ամեն սյուժե նրա գործերում ձեռք է բերում վերժամանակային իմաստ, դառնում հայոց պատմության, մարդու էության ընդհանրական բանաձև: Այդպիսին են նրա «Եռանկյունի» վիպակը (որի հիման վրա շատ լավ ֆիլմ է նկարահանվել), թիֆլիսյան շարքի պատմվածքները, «Սինյոր Մարտիրոսը», «Աղի կոմսը» և այլ վիպակներ: Իր

վաղ շրջանի պատմվածքներից մեկում նա պատմում է, թե ինչպես աճապարարը ներկայացման կեսին ձիեր է ստեղծում, որոնք վազվզում են բեմի վրա: Այդ գեղեցիկ ձիերի օգնությամբ նա ուզում է արտահայտել իր սերը մարդկանց հանդեպ, բայց մարդիկ դա չեն հասկանում: Նրանց համար այդ ամենը ձանձրալի է, նրանք սովորական աճապարարություն են ուզում: «Սինյոր Մարտիրոսը» պատմություն է միջնադարի հայ մարդու մասին, որը Կոլումբոսի հետ հասնում է մինչև Ամերիկա, վերադառնում և նորից գալիս է Հայաստան:

Պերճ Զեյթունցյանը (ծնվ. 1938թ.) մանկական տարիներին Հայաստան էր եկել Եգիպտոսից: Նրա պատմվածքները սկսեցին տպագրվել մանկական «Պիոներ» հանդեսում, ապա՝ առանձին գրքերով: Զեյթունցյանը շատ զգայուն էր գրականության առջև բարձրացող նոր խնդիրների նկատմամբ: Նա կապերը կտրուկ խզեց դասական ավանդույթներից՝ ստեղծելով իր տեսակի փորձարարական արձակ: Օգտագործում էր մամուլում հրապարակված փաստերը՝ դրանց շուրջը կառուցելով իր վիպակները: Այդ ձևով նա քննարկում էր քսաներորդ դարում մարդկության առջև բարձրացած բարդագույն հարցերը: Այդպես ծնվեցին նրա «Կլոդ Ռոբերտ Իգերլի», «Ամենատխուր մարդը» վիպակները: «Կլոդ Ռոբերտ Իգերլի» վիպակի նյութը ատոմային առաջին ռմբակոծությունն էր: Ամերիկացի Կլոդ Ռոբերտ Իգերլին էր այն օդաչուն, որը ռումբը նետեց ճապոնական Հիրոսիմա քաղաքի վրա: Զեյթունցյանը ցույց է տալիս այս արարքի անիմաստությունը՝ ներկայացնելով ամերիկյան օդաչուի տառապանքները: Ավելի ուշ նա գրեց «Արշակ Երկրորդ» վեպը չորրորդ դարի հայկական կյանքից, վեպ Գրիգոր Զոհրապի կյանքի մասին և այլ գործեր:

Վարդգես Պետրոսյանը (1932–1994) հայտնի հրապարակախոս էր և լրագրող, «Գարուն» ամսագրի հիմնադիրը: Իր գեղարվեստական երկերում նա պատմում էր երիտասարդ մարդկանց կյանքի, նրանց զգացմունքների, տառապանքների մասին: Պետրոսյանի արձակը հրապարակախոսական շունչ ուներ, նա արագ արձագանքում էր ժամանակի հուզող հարցերին: Ընթերցողների շրջանում հատկապես սիրված էր նրա հրապարակախոսական մանրանկարների ժողովածուն՝ «Հայկական էսքիզներ», որոնց մեջ նա խորհրդածում էր հայոց պատմության ու հոգեբանության տարբեր խնդիրների մասին:

Վաթսուհականների փորձը հենարան եղավ հետագա տասնամյակների արձակագիրների համար: Յոթանասուն-ութսունական թվականներին հրապարակ եկան արձակագիրներ, որոնք, մի կողմից, շարունակում էին վաթսուհականների սերնդի գործը, մյուս կողմից՝ ունեին իրենց սեփական աշխարհը և պատմելու իրենց ձևը: **Դավիթ Մուրադյանը** (ծնվ. 1951թ.) պատմում էր քաղաքի երիտասարդ մարդկանց, գերազանցապես մտավորականների կենսափորձի,

պատմության հանդեպ նրանց վերաբերմունքի մասին: Մուրադյանը հետո հաջող փորձեր կատարեց դրամատուրգիայի բնագավառում: «Հրաժեշտ» վիպակը նրան գրական համբավ բերեց: Դրամատիկական լավ գործեր է գրել, որոնցից «Մեր հին դաշնամուրը» նվիրված է արտագաղթի խնդիրներին: Մի քանի տարի առաջ Մուրադյանը եվրոպացի մի խումբ գրողների հետ անցավ ամբողջ Եվրոպայով և գրեց ուղեգրական-խոհագրական գիրք՝ «Եվրոպան անիվների վրա»:

Ռաֆայել Նահապետյանը գրում էր իր սերնդի երիտասարդների թափառումների, որոնումների մասին:

Ութսունական թվականների վերջերին սկսեցին տպագրվել նոր սերնդի ներկայացուցիչները, որոնց մեջ հատկապես աչքի ընկան Լևոն Խեչոյանը և Գուրգեն Խանջյանը:

Լևոն Խեչոյանի (ծնվ. 1956թ.) արձակը դաժան է իր ռեալիզմով, մարդկային հարաբերությունների լարվածությամբ, բնավորությունների կրքոտությամբ: Նա գրեց առայժմ լավագույն վեպը վերջին տասնամյակների իրադարձությունների, դարաբաղյան պատերազմի մասին՝ «Սև գիրք, ծանր բզեզ»: Խեչոյանն ինքը մասնակցել է այդ պատերազմին: Նրա վեպում ընթերցողը տեսնում է պատերազմի մռայլ, արյունոտ դեմքը: Խեչոյանը ոչ մի ցանկություն չունի խնայելու ընթերցողի հոգին: Նա ասում է ամբողջ ծանր ճշմարտությունը: Եվ սա վերաբերում է ոչ միայն պատերազմին, այլև ընտանեկան և առհասարակ մարդկային հարաբերություններին: Հենց իր այս հատկությամբ Խեչոյանի արձակը հաստատուն տեղ գրավեց անկախության շրջանի հայ գրականության մեջ:

Գուրգեն Խանջյանը (ծնվ. 1950թ.) իր երկերում պատկերում է քաղաքային կյանքը, մարդկանց շփոթվածությունը, մարդկային բարքերի անկումը: Նորագույն շրջանի գրականության մեջ հենց Խանջյանը ներկայացրեց հասարակության «հատակը», մարդկանց, որոնք իրենց կյանքի բերումով արդեն դուրս են այդ հասարակությունից, մերժում են նրա կարգերը: Նրա երիտասարդ հերոսները իրենց վարքով, պահվածքով, որ երբեմն դեմ է համակեցության տարրական պահանջներին, ըմբոստանում են հասարակության դեմ («Նստիր Ա գնացքը»): Նրա առաջին գործերից մեկում՝ «Հիվանդանոց» վեպում, վերնագիրը դառնում է ժամանակակից հասարակության փոխաբերություն: Մարդիկ հիվանդներ են՝ և՛ բժիշկները, և՛ բուժվողները, իսկ հիվանդությունը բարոյական արատներն են...

Ութսունականների վերջերին սկսված գործընթացները՝ Խորհրդային Միության փլուզումը, դարավոր բարոյական չափանիշների վերջնական ավերումը, տնտեսական նոր հարաբերությունների հաստատումը էական

փոփոխություններ մտցրին գրականության մեջ: Ոչ միայն հասարակական հարաբերությունների բնույթը փոխվեց, այլև՝ մարդկային հոգեբանությունը: Առաջին պլան եկան մարդկային էության այն կողմերը, որոնք նախորդ տասնամյակներում այդքան չէին ընդգծվում՝ նրանց արատավոր հակումները, հոգեբանության մութ կողմերը, դաժանությունը և այլն, և այլն: Գրականությունը պետք է պատկերեր այս բոլորը, պետք է փոխվեին և՛ ձևը, և՛ բովանդակությունը: Ութսունականների փոփոխությունները սկիզբ էին առնում վաթսունականների գրականությունից, հատկապես Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունից: Բայց Խեչոյանի, Խանջյանի և մյուսների գործերը ավելի հեռուն գնացին, դրանցով ըստ էության նոր փուլ էր սկսվում հայ արձակի պատմության մեջ: Ասպարեզ է գալիս երիտասարդների մի ողջ սերունդ, որոնք աշխույժ որոնումներ են կատարում և՛ մարդկային հոգեբանության մեջ, և՛ խոսքի ու պատումի բնագավառում:

ՀԱՐՁԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆԵՆԵՐ

1. Թվարկեք նորագույն շրջանի հայ արձակագիրներին և նրանցից յուրաքանչյուրի մեկ-երկու ստեղծագործության վերնագիր:
2. Ի՞նչ հեղինակների գիտեք, որոնք գրական ասպարեզ եկան 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին: Ի՞նչ գրքեր են նրանք գրել:
3. Ի՞նչ թեմաներ են հիմնականում արծարծվում ժամանակակից արձակում:

ՄԹՅՈՒՌՔԱՆՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանությունը իր արյունոտ կնիքը դրեց հայ ժողովրդի ողջ կյանքի և մշակույթի վրա: Ըստ էության ընդհատվեց հայկական մշակույթի մի թևի՝ արևմտահայ մշակույթի զարգացումը: Ինքը՝ արևմտահայությունը, փաստորեն վերացավ: Նրա այն հատվածները, որոնք կարողացան փրկվել ջարդերից և ապաստան գտնել Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում, այլևս ոտքի տակ չունեին հայրենական հող, չունեին այն ավանդույթները, որոնք ձևավորվել էին դարերի ընթացքում սեփական հողի վրա: Այդ խլյակները պետք է ապրեին օտար միջավայրերում, հարմարվեին դրանց՝ անխուսափելիորեն կորցնելով իրենց ազգային ավանդույթները, ի վերջո՝ իրենց ազգային դեմքը:

Սկզբում հայության կենդանի մնացորդները դեռ հույս ունեին վերադառնալ հայրենի երկիր: Թուրքիան պարտվել էր Առաջին համաշխարհային պատերազմում, 1918-ին կնքվել էր Սևրի դաշնագիրը, որով հայերին պետք է վերադարձվեին նրանց պատմական հողերը: Բայց այդ դաշնագիրը մնաց թղթի վրա, չվավերացվեց ստորագրող պետությունների խորհրդարանների կողմից: Թուրքիան հմտորեն օգտագործեց հաղթող պետությունների միջև եղած հակասությունները, վերականգնեց ուժերը և պահպանեց իր նախապատերազմյան տարածքները: Մեծ պետությունները հայերին խոստացան գոնե Թուրքիայի տարածքում հող տալ նրանց՝ այսպես կոչված ազգային տուն ստեղծելու համար: Բայց շուտով հրաժարվեցին նաև դրանից, և արևմտահայության բեկորները մնացին օտար երկրներում: Այսպես ստեղծվեց հայկական սփյուռքը:

Մանավանդ առաջին երկու տասնամյակներում սփյուռքն ապրում էր բուռն մշակութային կյանքով: Ստեղծվում էին դպրոցներ, թերթեր, հանդեսներ, գրվում էին գեղարվեստական գործեր, որոնք պատվավոր տեղ գրավեցին հայ գրականության մեջ: Մի պահ իսկական վերածննդի տպավորություն կարելի էր ստանալ այդ աշխուժությունից:

Այդ տարիներին դեռ կենդանի էին արևմտահայ գրականության ավանդները, արևմտահայ գրողներից մի քանիսը (Վահան Թեքեյան, Երվանդ Օտյան, Հակոբ Օշական և ուրիշներ) ողջ էին մնացել ու շարունակում էին ստեղծագործել: Ասպարեզ եկավ երիտասարդ գրողների մի ողջ սերունդ, որը, հենվելով առաջին հերթին արևմտահայ գրականության հարուստ ավանդների վրա, նոր գրականություն էր ստեղծում: Այդ գրականությունը այլևս դժվար էր իսկական իմաստով արևմտահայ համարել, որովհետև այլևս արևմտահայություն չկար, Արևմտյան Հայաստան չկար: Նա ոչնչացվել էր, արևմտահայության մնացորդները դարձել էին սփյուռքահայեր, ցրվել տարբեր երկրներում: Նոր պայմաններ էին, նոր հոգեբանություն:

Այդ նոր գրականության մեջ հստակորեն զանազանվում էր երկու ուղղություն: Առաջինի նպատակը կորցրած հայրենիքի պատկերի վերստեղծումն

էր: Դա, մի կողմից, կարող էր ժամանակավրեպ թվալ. այդ երկիրը այլևս չկար, մարդկային այդ հարաբերությունները արդեն քայքայվել էին, ուրեմն ի՞նչ իմաստ ունենալ վերակենդանացնել դրանք գրականության մեջ: Բայց իրականում այդ գրականությանը շատ կարևոր դեր էր վիճակված: Արևմտյան Հայաստանն ու արևմտահայությունը վերացան (Արևմտյան Հայաստանը մնում էր իբրև աշխարհագրական միավոր, թեև թուրքերը անում էին և անում են ամեն ինչ՝ այդ անունը մոռանալ տալու համար), բայց նրանք գոյություն էին ունեցել հազարավոր տարիներ, մասն էին կազմել հայության կյանքի և պատմության, և արևմտահայության այժմ արդեն գուտ հոգևոր պատկերը պետք է պահպանվեր իբրև մեր ազգային դեմքի մի կարևորագույն բաղկացուցիչը, առանց որի մենք շատ կաղքատանայինք: Ահա այս իմաստով արևմտահայ և սփյուռքահայ գրողները, որոնք պատկերում էին գյուղը և առհասարակ անհետացած արևմտահայ կյանքը, շատ կարևոր գործ էին անում՝ հայկական ազգային ինքնությունը պահպանելու համար:

Այս ուղղությունը սովորաբար անվանում են կարոտի գրականություն: Անվանման մեջ իր մեծ ճշմարտությունը կա: Հայրենիքը կորցրած մարդիկ չէին կարող այդ հայրենիքը մոռանալ, չէին կարող մոռանալ այն արժեքները, որոնցով ապրել էին իրենց հայրերն ու պապերը: Նրանք պահպանում էին անցած կյանքի այդ բարձր հիշատակները: Կարոտի գրականությունը տվեց մի շարք տաղանդավոր հեղինակներ, որոնց ստեղծագործությունները մնացին քսաներորդ դարի հայ գրականության լավագույն երկերի թվում: Այդ գրողներից ամեն մեկը մի գավառի ծնունդ էր և ստեղծում էր իր հայրենի գավառի սովորույթների պատկերը, մարդկանց կերպարները: Օրինակ՝ Համաստեղը Խարբերդի Փերչենճ գյուղից էր, և նրա գործերը, իրենց բարձր գեղարվեստականության հետ միասին, ընթերցողին պատկերացում էին տալիս իր գավառի և գյուղի կյանքի ու կենցաղի մասին, այսինքն՝ ձեռք էին բերում նաև ազգագրական արժեք: Նույնը կարելի է ասել Մնձուրու մասին: Նրա պատմվածքներում երևում են իր գյուղի, Կապույտ լեռների ծեսերը, ամենօրյա կենցաղը, բարբառը:

Համաստեղը (Համբարձում Կելենյան, 1895–1966) դեռ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ հոր հետ մեկնել էր ԱՄՆ և հաստատվել այնտեղ: Ցեղասպանության զոհ դարձան նրա ընտանիքի այն բոլոր անդամները, որոնք մնացել էին Հայաստանում: Համաստեղն իր կյանքի մեծ մասը անցկացրեց Ամերիկայում: Բայց զարմանալիորեն ամերիկյան կյանքը ստեղծագործական իմաստով խորթ մնաց նրան: Համաստեղը իրեն նվիրեց հայկական գյուղի պատկերմանը՝ հենվելով իր տպավորությունների վրա: Կարելի էր մտածել, որ այդ տպավորությունները այդքան շատ չէին, որովհետև նա հայրենի գյուղը թողել էր դեռ բոլորովին երիտասարդ տարիքում: Բայց նա ստեղծեց պատմվածքների մի մեծ շարք, որոնց մեջ երևում էին գյուղի կյանքը, գյուղի մարդիկ: Համաստեղը չէր շրջանցում գյուղական կյանքում եղած հակասությունները,

սոցիալական խնդիրները, անարդարությունը («Փիլիկ աղբարը»): Բայց այդ բոլորի վրա իշխում էր հայրենակարոտությունը, որը բոլորովին այլ երանգներ էր տալիս գյուղի պատկերին: Համաստեղը չէր ընդունում ամերիկյան ապրելաձևը (դա երևում է նրա այն քիչ գործերից, որոնց մեջ պատկերվում է ամերիկյան կյանքը): Եվ իր կորած գյուղը հովվերգական գույներ էր ստանում՝ ի հակադրություն մեծ, աղմկոտ, դաժան, անմարդկային ամերիկյան կյանքի: Հայ մարդիկ կործանվում էին իրենց խորթ այդ միջավայրում («Զոհը Կար ամուն էր»):

Համաստեղի ժառանգության մեջ լավագույնը գյուղական կյանքի պատկերներն են: Դրանց մեջ երևում են գյուղացի միամիտ, մաքուր մարդիկ, որոնք ձուլված են բնությանը, ապրում են բնության օրենքներով: Տափան Մարգարը համաճանաչելով ամբողջ հոգով նվիրված է հողին ու բնությանը, հասկանում է հողի ու կենդանիների լեզուն, գյուղացիները նրա հետ են խորհրդակցում հողագործի իրենց խնդիրները լուծելիս: Մարգարը մահանում է բնական աղետից՝ կայծակնահար է լինում: Մյուս հերոսը՝ Միջոն, գյուղացի տղա է, որը սիրահարվում է համագյուղացի փոքր աղջկան և իր սիրուն հասնելու համար որոշում է մատաղ անել (կենդանի գոհել) իրենց գյուղում շատ հարգված սուրբ Սարգսին: Եվ սառչում է ձմռան երեկոյան սրբի մատուռի ճանապարհին: Այս մարդիկ ապրում են բնության հետ և մահն էլ ընդունում են բնական տառերքներից...

Համաստեղի լավագույն պատմվածքներից մեկը «Փիլիկ աղբարն» է, պատմությունը մի մարդու, որն ամբողջ կյանքում ծառայել է համագյուղացիներին՝ չունենալով սեփական ընտանիք և տնտեսություն: Ծառայել է սիրով, հաճախ առանց վարձատրության: Փիլիկը իր այս գծերով շատ է հիշեցնում Ալսեղ Բակունցի հերոսներին, մանավանդ Պետուն՝ «Այու սարի լանջին» պատմվածքից: Հետո, երբ Փիլիկի ֆիզիկական ուժերը նվազել են, գյուղի հարուստներից մեկը նրան վերցրել է իր տուն՝ ծառայության: Փիլիկը խնամում էր կենդանիներին և իրեն լավ էր զգում: Բայց ահա այդ հարուստը մահանում է, իսկ նրա որդին չար մարդ էր: Եվ մի օր, երբ Փիլիկը ընդհանուր խնջույքի մեջ խմում է խմիչքների մնացորդները և հարբում ու երգում, նոր տերը նրան վռնդում է տնից: Փիլիկը մնում է փողոցում, անտանիք և սոված, և համագյուղացիներից ոչ ոք նրան ձեռք չի մեկնում: Փիլիկը առաջին անգամ անգոր զայրույթից հայհոյում է նրանց: Սկսում է ապրել գյուղին մոտ մի կիսաքանդ շենքում: Անձրևից մրսում է և մեռնում: Նրա դագաղի հետևից գնում էր միայն պառավ ձին, որը նույնպես պատսպարվում էր այդ կիսաքանդ շենքում... Համաստեղը, որն այնքան սիրով է հիշում իր գյուղը, ամենևին չի շրջանցում մարդկային արատները, որոնք երևան էին գալիս այդ նույն միջավայրում: Բայց նրա հայացքը հոռետեսական չէ, գյուղացիների մեջ նա ավելի շատ տեսնում է մարդկայնություն և բարություն, մանավանդ, երբ գյուղը համեմատում է ամերիկյան իրականության հետ:

Համաստեղին շատ բան է կապում արևելահայ իր գրչակիցների, մանավանդ Հովհաննես Թումանյանի, Ստեփան Զորյանի, Ակսել Բակունցի հետ:

Համաստեղին իր ստեղծագործության որոշ կողմերով հոգեհարազատ է **Հակոբ Մնձուրին** (1886–1978): Այս գրողի կյանքը արտացոլում է հայ մարդու ապրած ողբերգությունը և նրա զարմանալի կենսունակությունը: Մնձուրին ծնվել և երիտասարդությունը անցկացրել է Կապույտ լեռների փեշերին ընկած գյուղում, ամուսնացել և երեխաներ ունեցել: Հետո գնացել է Պոլիս գործով, սկսվել է պատերազմը, ընտանիքը համազրուղացիների հետ կոտորվել է, իսկ ինքը մնացել է Պոլսում: Այստեղ նորից է ամուսնացել, զբաղվել է զանազան արհեստներով, հացթուխ է եղել: Գրականությամբ զբաղվել է ամբողջ կյանքում, բայց իսկական գրական համբավ ձեռք է բերել առաջացած տարիքում, երբ հրատարակել է «Կապույտ լույս» գիրքը: Մնձուրու երկերի ատաղձը հուշերն են հին գյուղի մասին, ինչպես Համաստեղինը: Բայց Մնձուրու պատումն ավելի պարզ է, նրա գործերը երբեմն գյուղական կյանքի սովորական պատկերներ են: Մնձուրու տաղանդի առանձնահատկությունը հենց այդ է՝ պարզ, հասարակ պատկերների միջոցով վերստեղծել գյուղական կյանքի համապատկերը, որտեղ իրենց տեղերն ունեն գյուղի մեծուփոքրերը, կանայք ու տղամարդիկ, հարուստներն ու աղքատները: Մնձուրին հաճախ հումորով է պատմում իր համազրուղացիների բնավորության մասին: «Վերիգեղցի Տեր-Պողոսը» պատմվածքը գյուղի քահանայի մասին է, որը ծանր հիվանդ էր: Նրա ազգականները գնում են նրա տուն՝ մտածելով, որ Տեր-Պողոսը արդեն մեռել է: Բայց գնում-տեսնում են, որ քահանան ողջ-առողջ է: Պարզվում է, որ ջերմից տառապող Տեր-Պողոսը զայրացել է, բարձրացել կտուրը և մերկ նստել ձյան վրա: Ու ձյունը նրան հանգստացրել է: Այստեղ էլ բնությունը, տարվա եղանակների հերթագայությունը շատ բան են որոշում մարդկանց կյանքում:

Մի փոքրիկ, անպաճույճ պատմություն ունի այն մասին, թե ինչպես պառավ տատը զարնան մի արևոտ օր գառներին տանում է դաշտ: Եղանակը հանկարծ փոխվում է, ձնաբուք է սկսվում, տատն ու գառները խեղդվում են բքի մեջ: Գարունը, բնության և մարդու զարթոնքը այնքան տպավորիչ են ներկայացված, այնքան նուրբ գույներով, որ ընթերցողն զգում է տատի և գառների ձգտումը դեպի դաշտ, դեպի թարմ կանաչը: Գեղեցիկ է այդ ամենը: Բայց բնությունն էլ իր օրենքներն ու քմահաճությունները ունի: Եվ տատի ու գառների կորուստը ընկալվում է այնպես, ինչպես Տափան Մարգարի կայծակնահար լինելը Համաստեղի համանուն պատմվածքում՝ բնությունը բերեց, բնությունը տարավ: Մնձուրու պատումի պարզությունն իր հմայքն ունի: Դա գյուղական կյանքի ձայնն է:

Սփյուռքահայ գրականության մյուս մասը գերազանցապես պատկերում էր հայերի կյանքը սփյուռքում: Այստեղ արդեն ուրիշ վերաբերմունք կար պատկերվող կյանքի հանդեպ: Գրողները նկարագրում էին հայ մարդկանց

հուսահատ պայքարը իրենց ֆիզիկական և գոյությունը պահպանելու համար: Բայց այդ պայքարում նրանք պետք է զոհեին իրենց բարոյական պատկերացումները, ազգային դեմքը: Ուրիշ կերպ հնարավոր չէր ապրել օտար երկրներում: Արևմտահայերը ապաստան էին գտել Արևմուտքի զարգացած երկրներին մեծ քաղաքներում, որոնք մարդկանց ենթարկում էին իրենց օրենքներին, զրկում բարոյականությունից ու ազգային կերպարից: Դա իսկապես նահանջ էր ազգությունից ու բարոյականությունից: Շահան Շահնուրի վեպը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Նահանջ առանց երգի»: Նույն քսան-երեսնական թվականներին գրվեցին Հրաչ Զարդարյանի «Մեր կյանքը», Զարեհ Որբունու վեպերը: Բոլորի մեջ նույն հայկական ողբերգությունն էր՝ տարբեր դիտակետերից դիտված: Օրինակ՝ **Հրաչ Զարդարյանի** (1892–1986) վեպը մի ընտանիքի պատմություն էր, ընտանիք, որը Պոլսից տեղափոխվել էր Փարիզ: Այս ընտանիքը ևս նահանջում է իր հայկականությունից, բայց այստեղ ընտանիքի պատմությունը արդեն պարունակում էր այդ նահանջի սաղմերը: Զարդարյանը որոնում էր նահանջի պատճառները ոչ միայն բուրժուական իրականության և փարիզյան կյանքի արատների մեջ, այլև ընտանիքի անցյալում: Պատմության մեջ նահանջի պատճառները փնտրելը նրան մոտեցնում է Շահան Շահնուրին, որը իր հոդվածում՝ «Մենքի դեկլարացիան», խստագույն քննադատության է ենթարկում հայոց ազգային կյանքը մինչև Յեղասպանությունը, ազգային ուժերի վարած քաղաքականությունը՝ այդ բոլորի մեջ տեսնելով հայկական ողբերգության արմատները:

Սփյուռքահայ գրականության այս երկու ճյուղերը լրացնում էին միմյանց: Դրանք նույն ազգային փորձի, նույն ժողովրդի ապրած ողբերգության արտացոլումն էին տարբեր դիրքերից: Միայն նրանց միասնության մեջ կարելի է տեսնել արևմտահայության տառապալից ուղին XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում:

Կա նաև մի ուրիշ հանգամանք՝ ոչ բոլոր սփյուռքահայ գրողները կարող են այդպես միանշանակ դասվել մեկ կամ մյուս ճյուղին՝ կարոտի կամ նահանջի գրականություններին: Վերցնենք սփյուռքի ամենահայտնի դեմքերից մեկին՝ **Վազգեն Շուշանյանին** (1903–1941): Նա ծնվել և մանկությունն անցկացրել է Ռոդոսյա քաղաքում (այժմ՝ Բուլղարիայի կազմում): Այդ քաղաքը, Պոլսի նման, նահապետական աշխարհի մի անկյուն է: «Ճերմակ Վարսենիկ» վեպի հերոսի մանկությունն ու պատանեկությունը անցել են այդ անկյունում՝ մարդկային ջերմ, անխաթար հարաբերությունների մթնոլորտում: Վեպը վստահորեն կարելի է համարել կարոտի գրականության արգասիք: Բայց նույն Շուշանյանը նկարագրում է հայ երիտասարդ մարդկանց ողիսականը աշխարհի ճանապարհներով, նրանց տառապալից կյանքը Փարիզում, և այստեղ նրան դժվար է գատել նահանջի գրականությունից:

Միանշանակ բնութագրումների չի ենթարկվում նաև սփյուռքի ամենանշանավոր գրողներից մեկի՝ **Հակոբ Օշականի** (1883–1947) գրականությունը (Օշականը նաև հայտնի քննադատ էր, որի կարծիքները մեծ հեղինակություն ունեին սփյուռքում): Օշականը պատկերում է դարձյալ արևմտահայ գյուղը Յեղասպանությունից առաջ: Բայց նրա գյուղը խորապես տարբեր է Համաստեղի կամ Մնձուրու պատկերած գյուղից, հովվերգականությունը իսպառ բացակայում է նրա աշխարհից: Այստեղ պատկերվում են ուժեղ ու մռայլ կրքեր, մանավանդ սեռական կիրքը, քննվում են ազգային-ազատագրական պայքարի պատմության հարցեր: Օշականը իր գեղարվեստական երկերում հետևում է եվրոպական նորագույն գրականության միտումներին: Սփյուռքի այն ժամանակվա գրականության մեջ նա թերևս ամենից ավելի է դասեր առնում եվրոպական գրականությունից, մանավանդ ֆրանսիացի գրող Մարսել Դրուստից: Նրա գրական ուսուցիչների թվում պետք է հիշել և ռուս գրող Ֆեոդոր Դոստոևսկուն: Նա քննում է համամարդկային խնդիրներ, ձգտում բացահայտել մարդկային հոգեբանության մութ ծալքերը: Բայց նրան հետաքրքրում են հայկական աշխարհը, հայոց ողբերգությունը, այսինքն՝ նա համամարդկային խնդիրներ արծարծելիս միշտ ելնում է հայկական իրողություններից: Սա Օշականի ստեղծագործության ամենահետաքրքրական առանձնահատկություններից մեկն է:

Օշականը իր երկերում մեծ ուշադրություն է դարձրել ազգային-ազատագրական պայքարի խնդիրներին: Նրա ամենաձավալուն գործը՝ «Մնացորդաց» վիպաշարը (իրար հետ նույն հերոսներով ու խնդիրներով կապված վեպերի շարք), բաղկացած է երկու վեպերից, որոնցից առաջինը՝ «Արգանդի ճամբով», գերազանցապես սոցիալ-հոգեբանական խնդիրների է նվիրված, իսկ երկրորդը՝ «Արյունի ճամբով», հիմնականում ազգային-ազատագրական պայքարի մասին է պատմում: Ազգային խնդիրներին կենտրոնական տեղ է հատկացված նաև «Հարյուր մեկ տարվան» վիպաշարում (սա կազմված է երեք վիպակներից): Հենց ազգային-ազատագրական պայքարի գնահատումների մեջ երևան են գալիս հետաքրքրական ընդհանրություններ, որոնք Օշականին կապում են ոչ միայն Շահնուրի և սփյուռքահայ այլ գրողների, այլև, ամենից առաջ, Եղիշե Չարենցի հետ: Այս ընդհանրությունները նույն ազգային իրականությունից ծնված մտահոգություններ են:

Սփյուռքահայ արձակի ամենահետաքրքրական հեղինակներից մեկը **Հակոբ Կարապենցն էր** (Ժակ Կարապետյան, 1925–1994), Իրանում ծնված և ԱՄՆ-ում բարձրագույն կրթություն ստացած մի գրող, որի ստեղծագործության նյութը ամերիկյան մեծ քաղաքի կյանքն է: Գրել է հայ մարդկանց մասին, որոնք ապրում են այդ քաղաքում և տառապում են կրկնակի մենակությունից: Նրանք հեռու են Հայաստանից, ապրում են օտար միջավայրում, որը նրանց համար հայրենիք չի դառնում: Մյուս կողմից՝ նրանք մենակ են այնպես, ինչպես մեծ

քաղաքների բոլոր բնակիչները՝ անկախ ազգությունից: Մա հերոսի նոր տիպ էր սփյուռքահայ արձակում, որ բերում էին նոր սերնդի հեղինակները: Նրանք չունեին հայրենի աշխարհի, հայրենի գյուղի կամ ծննդավայրի այն հուշերը, որոնք սնունդ էին տալիս կարոտի գրականության հեղինակներին: Սփյուռքահայությունը, գոնե Ամերիկայում, հարմարվել էր նոր միջավայրին, նոր քաղաքակրթությանը և ձեռք էր բերել այն բոլոր բարոյությունները, որ բնորոշ էին այդ քաղաքակրթության մարդկանց: Բայց այդ մարդիկ պահպանել էին հայ լինելու գիտակցությունը, կարոտը հայրենի երկրի հանդեպ: Կարապենցին բնորոշ է հակումը դեպի հոգեբանական նուրբ քննությունները:

Կարապենցը հրատարակել է պատմվածքների մի քանի ժողովածու՝ «Անծանոթ հոգիներ», «Նոր աշխարհի հին սերմնացանները», «Միջնարար», «Ամերիկյան շուրջպար», «Մի մարդ ու մի երկիր», «Կարթագենի դուստրը» վեպը և այլ գրքեր:

Մինչև այժմ մենք խոսում էինք սփյուռքահայ արձակի մասին: Քսան-երեսնական թվականների արձակը ամենաուժեղ թևն էր սփյուռքահայ գրականության մեջ: Բայց բանաստեղծությունն էլ այդ տարիներին ծնունդ տվեց տաղանդավոր գործերի, որոնց մեջ՝ Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը, Վազգեն Շուշանյանի քնարական պոեմը՝ «Երկիր հիշատակաց», Բուզանդ Թոփալյանի և ուրիշների բանաստեղծությունները: Շուշանյանի պոեմը նվիրված է գաղթականության, սփյուռքահայ լինելու ողբերգությանը: Դա այդ թեմայով գրված ամենուժեղ գործերից մեկն է սփյուռքահայ գրականության մեջ: Այս պոեմում Շուշանյանը կարծես պատասխանում է կարոտի գրականության քննադատներին: «Հիշատակը մեր միակ ապավենն է, հիշեցնք», – այսպես է նա դիմում իր բախտակիցներին: Հուսախաբության ու հիասթափության ծանր օրերին իրենց բնօրրանից զրկված երիտասարդ մարդիկ պետք է դիմեին հուշերի օգնությանը: Բայց այդ հուշերն իրենք ողբերգական ապրումների աղբյուր էին:

Պիտի ըլլայի բարձրահասակ, առնական ու գեղջուկ՝ մեր գյուղաքաղաքին մեջ:

Հիմա հոս ո՛վ եմ ես, ըսեք, այս խառնակ ու գեշ քաղաքին մեջ ո՛վ եմ ես...

Այսպես է բացականչում տրտմության պահերին պոեմի քնարական հերոսը:

Սփյուռքահայ գրականության մեջ այդ տասնամյակներում ամենաճանաչված բանաստեղծներից մեկը **Վահան Թեքեյանն** (1887–1945) էր, որի գրական գործունեությունը սկսվել էր դեռ Ցեղասպանությունից առաջ՝ դարասկզբին: Թեքեյանը ծնվել էր Պոլսում, բայց գործերի բերումով հեռացել էր ծննդավայրից, զբաղվել լրագրողական աշխատանքով, թերթեր էր խմբագրել Կահիրեում և այլուր: Նա Ռամկավար ազատական կուսակցության հայտնի գործիչներից էր, և նրա լրագրողական-խմբագրական աշխատանքը կապված էր իր կուսակ-

ցության հետ: Միյուռքյան տարիներին Թեքեյանը շարունակեց գրել՝ ստեղծելով իր լավագույն ժողովածուներից մի քանիսը: Նա շարունակեց քնարական մենախոսությունը՝ արտացոլելով իր ժամանակի մարդու մտահոգությունները: Քսաներորդ դարի հայ գրականության մեջ նրան ամենից հոգեհարազատ գրողը թերևս Վահան Տերյանն էր: Մարդու մենակության տառապանքը կենտրոնական խնդիրներից մեկն էր ինչպես Տերյանի, այնպես էլ Թեքեյանի ստեղծագործության մեջ: Թեքեյանը պատկանում էր սփյուռքահայության այն թվին, որը տրամադրված էր օգնել Խորհրդային Հայաստանին և համագործակցել նրա հետ: Նա շատ լավ հասկանում էր, որ Խորհրդային Հայաստանը իր և իր կուսակիցների ու սերնդակիցներից շատերի երազած երկիրը չէր, և իհարկե, ԽՍՀՄ-ում հաստատված կարգերը նրան խորթ էին: Բայց նա և ուրիշները առաջնորդվում էին այն գիտակցությամբ, որ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը միակ գոյություն ունեցող Հայաստանն է, և ուրեմն՝ պետք է սատարել նրան: Երեսնական թվականներին գրած մի բանաստեղծության մեջ (որը մասն էր կազմում նոր Հայաստանին նվիրված նրա բանաստեղծական եռագրության) նա ուղղակի ասում է. «Տարբեր ես դուն մեր երազեն», բայց նույն այդ բանաստեղծության մեջ շեշտում է, որ հենց իր գոյության փաստով նոր Հայաստանը արդեն արժանի է սիրո և համակրանքի: Այսինքն՝ այդ տողերը ծնունդ էին ոչ թե քաղաքական համակրանքների կամ հաշիվների, այլ անկեղծ և խոր հայրենասիրության:

Ահա մի օրինակ Թեքեյանի քնարերգությունից.

ԵՍ ՍԻՐԵՑԻ

*Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե
Զինքը որքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտե:*

*Ամենեն մեծ հրճվանքիս,
Ամենեն մեծ վիշտերուս
Ներշնչողները, ավա՛ղ,
Զիս չեն ճանչնար այս պահուս:*

*Սերս կարծես այն գետն էր,
Որ իր հոսանքը անբավ
Առավ լեռան ձյուններեն,
Ու լեռը զայն շտեսավ:*

*Սերս այն դուռն էր կարծես,
Ուրկե ոչ ոք մտավ ներս.
Ծաղիկներով ծածկված՝
Գաղտնի պարտեզ մ'ն էր սերս:*

*Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե
Զինքը որքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտե:*

Այս բանաստեղծության մեջ դուք զգում եք միայնակ հոգու տառապանքը, չհասկացված լինելու դրաման, որը Թեքեյանն արտահայտել է այնպես նրբորեն:

Սփյուռքահայ գրականության ամենասակտիվ օջախներից մեկը Մերձավոր Արևելքն էր՝ Սիրիան և Լիբանանը, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմից հետո գաղթից փրկված հայերի մեծ զանգված էր կենտրոնացել: Այդ երկրները այսօր էլ մնում են հայկական մշակույթի զարգացման կենտրոնների թվում: Երեսնական թվերին այստեղ հանդես եկան երիտասարդ հեղինակներ, որոնց գործերը լայն արձագանք գտան սփյուռքում և Հայաստանում: Դրանց մեջ էր լրագրող, արձակագիր, բանաստեղծ **Անդրանիկ Ծառուկյանը** (1913–1989): Նա երկար ժամանակ Բեյրութում հրատարակել է «Նայիրի» շաբաթաթերթը, որը իր ժամանակի լավագույն սփյուռքահայ հանդեսներից էր, եթե ոչ լավագույնը: Նրա արձակ երկերից Հայաստանում լավ հայտնի են «Մանկություն չունեցող մարդիկ» և «Երազային Հալեպ» գրքերը: Սրանցից առաջինը Մոսկվայում ժամանակին թարգմանվել և տպագրվել է նաև ռուսերեն:

Այդ գիրքը Ցեղասպանության ժամանակ մենակ մնացած, ծնողներից զրկված երեխաների մասին է, որոնք իսկապես մանկություն չեն ունեցել, ապրել են օտար որբանոցներում, անսիրտ և դաժան մարդկանց հսկողության տակ: «Երազային Հալեպը» նուրբ, գեղեցիկ լեզվով գրված պատմություն է երիտասարդության, սիրիական Հալեպ քաղաքի հայկական գաղութի մասին: Երկու գրքերն էլ սփյուռքահայ արձակում պատվավոր տեղ են գրավում: Ծառուկյանը նաև ակտիվ հասարակական գործիչ էր և հրապարակախոս, իր ճանապարհորդական գրառումներում պատմել է Հայաստան կատարած ուղևորությունների, ասփյուռքահայ գաղութների մասին: Հատկապես Հայաստանի մասին գրած գիրքը՝ «Հին երազներ, նոր ճանապարհներ», գեղարվեստական հրապարակախոսության բարձր նմուշ է: Ծառուկյանն ակտիվորեն աշխատում էր մերձեցնել սփյուռքահայությանն ու հայրենիքը: Նրա «Թուղթ առ Երևան» բանաստեղծությունը, որը գրված էր ոգևորությամբ ու կրքով, ուղղված էր հայ ժողովրդի երկու մասերը իրարից կտրելու, իրար հակադրելու դեմ:

Այդ նույն գաղթօջախում ասպարեզ եկած բանաստեղծներից մեկը **Մուշեղ Իշխանն** (1913–1990) էր՝ Մուշեղ Ճենտերեճյանը։ Պատերազմի տարիներին նա «Հայաստան» վերնագրով մի պոեմ գրեց՝ հայրենակարոտության ամենաուժեղ արտահայտություններից մեկը հայ գրականության մեջ։ Սփյուռքահայության առաջին սերունդների մեջ կարոտը հայրենի երկրի, Հայաստանի նկատմամբ շատ ուժեղ էր։ Եվ ոչ միայն այդ պոեմում, այլև բանաստեղծությունների մի ամբողջ շարքում Մուշեղ Իշխանը արտահայտում էր նույն տրամադրությունները։ Ահա հատվածներ նրա «Քաղցր է երգիք մ'ունենալ» բանաստեղծությունից.

*Երբ ծառերուն ու հողին անձրևն իջնի շաղալեն,
Երբ դուրսը ցուրտ գիշերին կաղկանձե շունն իր քաղցեն,
Երբ ձկնորսին նավուն շուրջ փոթորկի մահը ծովուն,
Ապրող գրկի պես տաքուկ, լույսով, սիրով օրորուն
Քաղցր է երգիք մ'ունենալ:*

*Եթե փաղանգն հույսերուդ մարդիկ խաչեն մի առ մի,
Եթե ոտներդ արյունին, եթե հոգիդ խոցոտվի,
Եվ հալածվիս աշխարհեն հոգնաճ, դժբախտ, աննշան,
Հեծկլտանքներ թաղելու իբրև միակ ապաստան՝
Քաղցր է երգիք մ'ունենալ:*

*Ըլլաս գիտուն, թե տգետ, մեծահարուստ, թե աղքատ,
Ամենուրեք, ամեն ժամ, բայց օրհասիդ մանավանդ
Երբ տենչաս ձեռք մը ընտանի, լուռ աղոթող մը քու տեղ
Եվ աչքիդ մեջ մահաստվեր՝ աչքեր տամուկ ու բոցեղ՝
Քաղցր է երգիք մ'ունենալ:*

Հայրենի տուն ունենալը համամարդկային երազանք է, բայց Ցեղասպանությունը վերապրած, հայրենիքից զրկված հայ մարդկանց այդ երազանքը շատ ավելի բնորոշ էր։

Այդ նույն տարիներին՝ քսան-երեսնական թվականներին, սփյուռքահայ գրականության մեջ հանդես է գալիս մի սերունդ, որը ձգտում է դուրս գալ ազգային բանաստեղծության ավանդական թեմաների և պատկերների շրջանակից։ Այդ բանաստեղծների մեջ առավել հայտնի է Նիկողոս Սարաֆյանը։

Նիկողոս Սարաֆյանը (1905–1972) ամբողջ գիտակցական կյանքը ապրել է Փարիզում: Իր սերնդի բանաստեղծների մեջ Սարաֆյանը թերևս ամենից ավելի զգայուն էր ժամանակի տրամադրությունների ու բանաստեղծական ձևերի նկատմամբ: Սարաֆյանը իսկական քաղաքի բանաստեղծը եղավ սփյուռքահայ գրականության մեջ, ձգտեց հասկանալ նոր քաղաքակրթության էությունը, հրապուրվեց այդ քաղաքակրթությամբ և հուսախաբվեց նրանից, բայց միշտ մնաց հավատարիմ դրան: Քաղաքը նրա հերոսին երջանկություն չի բերում: Ընդհակառակը, նա մենակ է, հեռու քաղաքական հոսանքներից ու բախումներից: Բայց հասկանում է, զգում, որ հետդարձ չկա, աշխարհը զարգանում է այդ ուղիով: Եվ եթե հիասթափվում ու քննադատում է, ապա՝ իբրև այդ նույն քաղաքակրթության ներկայացուցիչ: Դրանով նա կարծես խզում էր կապերը արևմտահայության գրական ավանդներից: Բայց իրականում Սարաֆյանը մնաց սերտորեն կապված իր հայրենիքին, հայկական մշակույթին: Հայության ողբերգությունը նրա պոեզիայի թեմաներից մեկն էր (մասնավորապես «Մուշեն Փարիզ» խոսուն վերնագրով բանաստեղծության մեջ): Իր սերը հայ մշակույթի հանդեպ նա արտահայտել է «Հայկազյան բառարան» բանաստեղծության մեջ.

*Անոր նման, որ զեխ, շռալ կյանքե մը վերջ,
 Խոնջ՝ կ'երագե ապաստանիլ վանք մը խաղաղ,
 Ես՝ լքելով աշխարհն անհուն գիրքերուս պերճ,
 Մտայաններ ճոխ, մտածումի թռիչք ու խաղ,
 Կմտենեմ ներս բառարանեն Հայկազյան հին,
 Հին ու մաշած նման մեր հին հայ աշխարհին:
 Սերունդներու ձեռքն է դպեր անոր, անցեր,
 Զգեր արնոտ տառեր, թիվեր – Զարդ, մահ ու գաղթ:
 Կողքին մեռած հայրս է – օ, հայրս ծեր՝
 Որուն համար մեր գիրն էր սուրբ – Եղբայր մ'անբախտ
 Զայն թղթատեր, մեռեր՝ դեռ ես չեկած աշխարհ:
 Հետքեր տխուր, նշխարներ թանկ, պարզ ու խոնարհ:
 Տխուր, բայց քաղցր աշխարհ մ'է ան խորհրդածին:
 Կը սուզվիմ ներս, կը թափառիմ ես բառե բառ:
 Բառեր, բառեր, զոր գրեցին ու հնչեցին
 Եվ որոնցմով եղան հպարտ, խանդ անսպառ՝
 Նարեկացին, Մեսրոպն, Եզնիկն ու Եղիշեն,*

*Բառեր՝ ավանդ անհետացած կյանքի մը շեն:
 Եվ բառերն այդ, զոր շենք գրեր, ա՛լ չենք լսեր,
 Կը դառնան երգ, կը հուզեն գիտ: Եվ հուշերս հին,
 Որ կբերեն երկրե երկիր մեռած հույսեր՝
 Պատանության, ունայնության՝ կու տան մութին
 Մեջ այդ՝ ներքին լույս մը... կ'երթամ ես վանական՝
 Կերթամ բոպիկ: Աշխարհ մը սուրբ, կախարդական:*

Սարաֆյանը նաև գրական մշակման է ենթարկել «Սասնա ծռեր» էպոսը:

Զահրատը (1924–2007) այլ գրական միջավայրի ծնունդ էր: Պոլիսը (այսօրվա Ստամբուլը) տասնամյակներ, եթե ոչ դարեր, եղել էր հայ մշակույթի, մասնավորապես հայ գրականության զարգացման օջախներից մեկը: Այստեղ էր կենտրոնացել արևմտահայ մտավորականության գերակշիռ զանգվածը, այստեղ էին գործել Պարոնյանը, Օտյանը, Սիամանթոն, Վարուժանը, Մեծաբենցը, Զոհրապը, Ռուբեն Սևակը և ուրիշներ: Ցեղասպանությունից հետո, իհարկե, գրական կյանքը աղքատացավ, բայց չընդհատվեց: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նորից երևան եկան աշխուժության նշաններ, ստեղծվեց գրական մի միջավայր, որը ծնեց տաղանդավոր բանաստեղծների և արձակագիրների՝ Կարպիս Ճանճիկյան, Զարեհ Խրախունի, Ռոբերտ Հատտեճյան և ուրիշներ: Այս օջախի ծնունդն էր նաև Զահրատը՝ մեր նորագույն բանաստեղծության ամենաինքնատիպ դեմքերից մեկը:

Զահրատի բանաստեղծությունները հաճախ նման են առօրյա զրույցի: Խոսքը չունի քնարականության բնորոշ հատկանիշները՝ ոչ միայն հանգը, չափը, այլև սրված հուզականությունը, զգացմունքայնությունը: Այս հատկանիշները քողարկված են պարզ, առօրեական խոսքի խորքում: Զահրատի հերոսը փոքր մարդն է, որն ապրում է մեծ քաղաքի հետ ընկած թաղամասում, տարված է իր առօրյա հոգսերով, օրվա ապրուստով: Շատ բանաստեղծություններում այդ հերոսը ունի իր անունը՝ Կիկո: Բայց հենց այդ փոքր մարդը կարիք ունի կարեկցանքի ու սիրո: Զահրատի ամբողջ բանաստեղծությունը համակված է այդ սիրով: Հումորը նրա բանաստեղծության հատկանիշներից մեկն է: Սիրում է անսպասելի, առաջին հայացքից անտրամաբանական պատկերներ, բայց որոնք միանգամայն կենսական են, այդ նույն առօրյայից ծնված: Զահրատն ինքը իր բանաստեղծական հավատամքը ձևակերպել է այսպես. «*Քերթված մը պետք է ըլլա հունտի պես, որ երբ ավարտի չափարտի – ծիլ տա – վերապրի մեզի հետ*»: Ամեն մի իսկական բանաստեղծություն այդպիսին պետք է լինի, որ կարդալուց հետո ստիպի մտածել ու մտածել մարդկային կյանքի ու բնության անվերջ առեղծվածների մասին: Ահա այդպիսի մի քերթված.

ՔԱՐԵ ԿԱՄԱՐԸ

Այս կամարեն

Երբ նայիս

Դեմդ աշխարհ մը քարի

և ժայռի –

Ու մարդիկ

– Մարդիկ

Զոր քարի վրա

Բուռնող ծառի պես:

Այսպես է արտահայտում իր սերը մարդու հանդեպ և իր հավատը նրա կենսունակության նկատմամբ Զահրատը:

Լիբանանում հայկական գրական կյանքը այլևս չունի այն աշխուժությունը, որն ուներ նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին: Գրողներից շատերը տեղափոխվում են Եվրոպա և Ամերիկա: Ֆրանսիայում է ապրում Լիբանանում ծնված և մեծացած Գրիգոր Պըլըտյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Վեհանույշ Թեքյանը, որոնք իրենց բանաստեղծություններով թարմացրին սփյուռքահայ պոեզիան:

Իրանի Իսլամական Հանրապետությունում ապրում և ստեղծագործում են բազմաթիվ հայ բանաստեղծներ և արձակագիրներ: Հատկապես հայտնի են բանաստեղծ Վարանդը (Սուքիաս Բյուրքյան), բանաստեղծ և թարգմանիչ Ազատ Մաթյանը, որը պարսկերենից հայերեն է թարգմանել միջնադարի պարսկական մեծ բանաստեղծներ Խայամի և Հաֆեզի բանաստեղծությունները, իսկ հայերենից պարսկերեն՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը:

Այսօր սփյուռքում հայերեն գրող բանաստեղծները և ընթերցողները պակասում են: Այդպիսին է իրերի բնական ընթացքը՝ սփյուռքում հայությունը կորցնում է իր լեզուն և ուրեմն՝ նաև գրականությունը: Հայ մարդիկ սկսում են գրել իրենց ապրած երկրի լեզվով:

ՀԱՐՋԵՐ ԵՎ ԱՌԱՅՈՒՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտեք սփյուռքի մասին. երբ և ինչո՞ւ է այն առաջացել:
2. Ի՞նչ է նշանակում կարոտի գրականություն:
3. Թվարկե՛ք սփյուռքահայ գրողների և նրանց ստեղծագործություններից մի քանիսը:
4. Ժամանակակից սփյուռքահայ ի՞նչ գրողների գիտեք:

ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԳԻ ՊՐՈՂՆԵՐ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայության մեծ զանգվածներ հեռացան Արևմտյան Հայաստանից և հանգրվանեցին Եվրոպայում և Ամերիկայում: Ժամանակի ընթացքում նրանցից շատերը կորցրին մայրենի լեզուն, որովհետև պետք էր հարմարվել նոր միջավայրին, պետք էր յուրացնել նոր երկրի լեզուն՝ ապրել կարողանալու համար: Մայրենի լեզուն մնում էր միայն ընտանիքի կամ բարեկամների նեղ շրջանի ներսում: Եվ բնականաբար երեխաները դպրոցում առաջին հերթին ուսումնասիրում էին նոր լեզուն, այդ լեզվով ստեղծված գրականությունը: Եվ եթե նրանց մեջ գրական ընդունակություններ էին ի հայտ գալիս, նրանք գրում էին այդ նոր լեզվով: Օրինակ՝ Վիլյամ Սարոյանը գրում էր անգլերեն, անգլերենի անցավ և Լևոն Զավեն Սյուրմեյանը, Վահե Քաչան գրում էր ֆրանսերեն, մեր ժամանակակիցներից Անտոնինա Արսլանը գրում է իտալերեն, Ալիսիա Կիրակոսյանը սկսել է գրել իսպաներեն և այլն:

Մրանցից ամեն մեկի կապը հայ գրականության, հայ մշակույթի հետ տարբեր է եղել: Միայն հայկական արմատները դեռ գրականության որակ չեն որոշում: Օրինակ՝ քսաներորդ դարի առաջին կեսին Անգլիայում մեծ համբավ ձեռք բերեց արձակագիր Մայքլ Առլենը, որի իսկական անունը Տիգրան Գույումճյան էր: Նա գաղթական հայերի առաջին սերնդից էր և ամեն կերպ խուսափում էր հայկական միջավայրից ու նյութից: Նրա ստեղծած գրականությունը միայն հեռավոր կապեր ունի հայոց պատմության ու մշակույթի հետ: Կամ Ֆրանսիայի հայտնի գրողներից մեկը նույն քսաներորդ դարում Անրի Թրուայան էր, ծագումով հայ, որը հեղափոխությունից հետո ծնողների հետ Ռուսաստանից գաղթել էր Ֆրանսիա: Թրուայան էլ կապված չէր հայկական իրականությանը, մշակույթին:

Իսկ, ասենք, **Լևոն Զավեն Սյուրմեյանը** (1905–1994) իր գրական ճանապարհը սկսեց իբրև հայ բանաստեղծ՝ հրատարակելով հայերեն բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու: Հետո անցավ Ամերիկա, յուրացրեց անգլերենը, և այնքան լավ, որ անգլերեն էր դասավանդում ամերիկյան բուհերում: Ժամանակին նա մի աշխատություն գրեց վիպագրության արվեստի մասին՝ «Արձակի տեխնիկան» վերնագրով, որը մինչև հիմա ուսումնասիրվում է ամերիկյան բուհերում: Նա սկսեց գրել անգլերեն, բայց ըստ էության մնաց հայ ամեն ինչով: Նրա վեպերի թեման հայկական կյանքն էր: Նրա լավագույն վեպը՝ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք», նվիրված էր հայոց Յեղասպանությանը (այդ վեպը թարգմանվեց հայերեն և ռուսերեն): Վեպը գրված էր Սյուրմեյանի մանկական տպավորությունների հիման վրա: Սյուրմեյանը անգլերեն գրելը համարում էր պարտքի կատարում իր ժողովրդի առջև, նա

հավատում էր աշխատանքի բաժանմանը, ըստ որի՝ հայ գրողների մի մասը պետք է գրեր օտար լեզուներով՝ ավելի շատ մարդկանց պատմելու իրենց ժողովրդի պատմության և ճակատագրի մասին:

Բոլորովին այլ է Վիլյամ Սարոյանի պարագան: Նա ծնվել է Բիթլիսից ԱՄՆ գաղթած հայերի ընտանիքում՝ Ֆրեզնո քաղաքում, որտեղ այն ժամանակ հայերը շատ էին (այսօր էլ այդ քաղաքում հայկական մեծ գաղութ կա): Ընտանիքում խոսել են հայերեն, բայց Վիլյամը դպրոցում անգլերեն է սովորել, և հենց անգլերենն էլ դարձել է նրա առաջին լեզուն: Կարդացել է ամերիկյան գրողների երկերը, գրել սովորել նրանցից, հետո ստեղծել իր սեփական ոճը: Արդեն երեսնականներին ամերիկյան հայտնի գրողներից մեկն էր: Այնպես որ, Սարոյանը իսկապես պատկանում է ամերիկյան գրականությանը և իր պատվավոր տեղն ունի քսաներորդ դարի ամերիկյան արձակույդ և դրամատուրգիայում: Բայց հայկական ոգին շատ ուժեղ է նրա երկերում: Ինքը իր մասին ճշգրիտ է ասել՝ «Լեզուն, որով գրում եմ, անգլերենն է, երկիրը, որը պատկերում եմ, Ամերիկան է, բայց ոգին, որն ինձ ստիպում է գրել, հայկական է»: Նրա վիպակների, պատմվածքների մեջ շատ հայ հերոսներ կան, երբեմն դրանք գլխավոր հերոսներն են: Ամերիկահայության կյանքը նրա գլխավոր թեմաներից մեկն է:

Հայագգի գրողների շրջանում մի ուրիշ հետաքրքրական երևույթ է նկատվում: Նոր սերնդի գրողները, որոնք ծնվել են օտար երկրներում, սկզբում շատ քիչ բան են իմացել իրենց հայկական արմատների մասին: Բայց հետո նրանց մեջ զարթնել է այսպես կոչված գենետիկական կամ ծագումնաբանական հիշողությունը: Այդ մասին է պատմում ամերիկացի հայագգի գրող Պիտեր Բալաքյանը (ծնվ. 1951թ.) «Ճակատագրի սև շունը» վերնագրով իր ինքնակենսագրական վեպում: Նրա տատիկը, ծնողները ամեն ինչ արել են՝ իրենց երեխային հեռու պահելու հայկական Ցեղասպանության ծանր հիշողություններից: Նրանք ցանկացել են, որ Պիտերը մեծանա իբրև լիարյուն ամերիկյան քաղաքացի և օգտվի այդ երկրի ընձեռած բոլոր հնարավորություններից: Սա քսան-երեսնական թվականների հայության մեջ տարածված բարդույթ էր: Նրանցից շատերը կարծում էին, որ բնականոն կյանքով ապրելու համար պետք է մոռացության տալ Ցեղասպանության արյունոտ հուշերը, և իրենց երեխաներին դաստիարակում էին այդ ոգով: Բայց Պիտերը, հասունանալուն զուգընթաց, սկսում է խորանալ իր և ավագների կենսագրության մեջ, աստիճանաբար պարզում է իր կապը հայության հետ, իր ժողովրդի պատմության մռայլագույն էջերը և ինչ-որ պահից գիտակցում, որ ամերիկացի լինելով հանդերձ՝ ինքը հայ է, կրողն ու պահպանողը այն ամենի, ինչ վերապրել են իր ծնողներն ու նախնիները: Եվ հայկական ողբերգությունը դառնում է նրա ստեղծագործության գլխավոր թեմաներից մեկը:

Այդպես է անցել և ամերիկացի հայագգի բանաստեղծուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանի կյանքը: Նրան էլ փորձել են հեռու պահել հայկական հիշողություններից, բայց, ի վերջո, նա էլ է իմացել ամեն ինչ, խորացել իր ընտանիքի պատմության մեջ, նրա բանաստեղծություններում հայկական թեման շատ ուժեղ է հնչում: Եվ նա դարձել է հայ գրականության ջանասեր թարգմանիչներից մեկը, որը թարգմանել է և՛ դասականների, և՛ ժամանակակից հայ բանաստեղծների գործերը:

Մոտավորապես այդպիսին է և ամերիկյան գրող Մայքլ Առլենի (ծնվ. 1930թ.) կյանքի պատմությունը: Նա որդին է անգլիացի գրող Մայքլ Առլենի (Տիգրան Գույումճյանի, և նրան հաճախ հորից տարբերելու համար անվանում են Մայք Առլեն կրտսեր), որը աշխատել է նրան հեռու պահել հայկական միջավայրից: Բայց հասուն տարիքում նա էլ է խորացել իր ընտանիքի կենսագրության մեջ և վերադարձել իր հայկական արմատներին, գրելով մի գիրք շատ պերճախոս վերնագրով՝ «Ճանապարհ դեպի Արարատ»:

Ահա այսպիսի ուղի են անցել այն հեղինակները, որոնց մենք անվանում ենք օտարագիր հայ գրողներ: Նրանք, ինչպես տեսանք, բառիս ճշգրիտ իմաստով հայ գրողներ չեն, որովհետև գրողի պատկանելությունը այս կամ այն գրականությանը առաջին հերթին լեզվով է որոշվում: Բայց նրանցից շատերը պահպանել են իրենց կապերը հայության հետ և իրենց յուրահատուկ տեղն ունեն հայկական կյանքում, շատ էական կապեր ունեն հայկական մշակույթի հետ, ինչպես Վիլյամ Սարոյանը, Լևոն Զավեն Սյուրմեյանը, Պիտեր Բալաքյանը, Դայանա Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ:

Առանձին պետք է խոսել աշխարհահռչակ երգիչ **Շառլ Ազնավուրի** (Վաղինակ Ազնավուրյան, ծնվ. 1924թ.) մասին: Ազնավուրի ստեղծագործությունը այսօրվա ֆրանսիական մշակույթի անբաժանելի մասն է կազմում: Բայց Ազնավուրը ծնունդով հայ է և կապված իր հայկական արմատներին: Նա հաճախակի է լինում Հայաստանում, երկրաշարժից հետո ամեն ինչ արեց տուժած շրջանների բնակիչներին օգնելու համար, այժմ էլ Հայաստանի դեպանն է Շվեյցարիայում: Նրա երգերը (որոնց և՛ տեքստը, և՛ երաժշտությունը ինքն է գրում) ֆրանսիական իրականության ծնունդ են, բայց նա էլ, Վիլյամ Սարոյանի պես, կարող է ասել, որ իր հոգին հայկական է:

Այս գրողներից ամեն մեկը անցել է միայն իրեն հատուկ, իր ընտանիքի ճակատագրով պայմանավորված ճանապարհը, մաս կազմել նոր երկրի գրականության, բայց նրանց բոլորին միացնում են հայկական արմատները և կապը իրենց ծնած ժողովրդի հոգեբանության և մշակույթի հետ: Ահա թե ինչու նրանց ստեղծագործությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ գրականությանը և մշակույթով հետաքրքրվող մարդկանց համար:

Այս խմբի մեջ միանգամայն յուրահատուկ տեղ է գրավում **Վիլյամ Սարոյանը** (1908–1981): 2008թ. Հայաստանում, ԱՄՆ-ում և այլ երկրներում հանդիսավորապես նշվեց նրա ծննդյան հարյուրամյակը: Սարոյանը հենց սկզբից գրավեց ընթերցողներին իր մարդկայնությամբ և պարզությամբ: Նրան չէին հետաքրքրում քաղաքական հեղաբեկումները, նշանավոր մարդկանց, հարուստների, պետական գործիչների կյանքը, նրա ուշադրության կենտրոնում էին այսպես կոչված փոքր մարդիկ, այսինքն՝ սովորական մարդիկ, որոնք ապրում են իրենց սովորական կյանքը: Ինքն իր ստեղծագործության մասին այսպես է ասում. *«Պատմվածքիս նյութը մի երևելի բան չէ: Առանձնահատուկ ոչինչ չի կատարվելու գրվածքիս մեջ: Հետաքրքրաշարժ սյուժե չեմ հորինում: Հիշարժան հերոսներ չեմ ստեղծում... Սան Ֆրանցիսկոյում, Կարլ Մթրիթի մի փոքրիկ սենյակում նստած՝ նամակներ եմ գրում հասարակ մարդկանց, պարզ լեզվով պատմում նրանց ծանոթ բաների մասին... Եթե մի բան կա, որ ինձ դրդում է գրել, ասելն է, որ մարդը մարդու եղբայրն է»* («Յոթանասուն հազար ասորի»):

Հենց հասարակ մարդկանց մեջ է Սարոյանը տեսնում մարդու լավագույն գծերը՝ կարեկցությունը ուրիշների հանդեպ, հավատարմությունը բարոյական գլխավոր արժեքներին: Նրանք կարող են հանապազօրյա հաց չունենալ, բայց պատրաստ են օգնելու ուրիշներին: Նրա լավագույն գործերից մեկը «Իմ սիրտը լեռներում է» դրաման է: Այստեղ էլ հետաքրքրաշարժ սյուժե չկա: Սովորական, «փոքր» մարդկանց կյանքի դրվագներ են՝ հագեցած կարեկցանքով, սիրով, խոնարհումով այդ նույն մարդկանց հանդեպ: Աղքատ մարդիկ են, որոնք սոված են, ընտանիքի հայրը՝ Բեն Ալեքսանդրը, ժամանտիկական հոգեբանության տեր մարդ է, նա բանաստեղծություններ է գրում, որոնք ոչ մի հանդես չի ընդունում տպագրության: Նրա որդին՝ Ջոնին, շատ է սիրում հորը և հավատում է, որ նա մեծ բանաստեղծ է: Նրա համար ավելի ու ավելի դժվար է դառնում իր, հոր և տատի համար ուտելիք ճարելը: Բայց նպարավաճառը, որից ամեն անգամ հաց ու պանիր է բերում Ջոնին՝ գործի դնելով իր ողջ պերճախոսությունը, նույնպես աղքատ և լավ մարդ է. նա գիտի, որ Ջոնին և նրա հայրը երբեք չեն կարողանա վճարել պարտքը, բայց թույլ է տալիս Ջոնին իրեն ամեն անգամ համոզել, որպեսզի հարևանները սոված չմնան: Մի օր ծեր դերասանը, որ փախել էր ծերանոցից, անցնում է նրանց տան մոտով, մտերմանում նրանց հետ, մնում այնտեղ, մինչև ծերանոցից գալիս ու տանում են նրան: Զասպեր Մեք-Գրեգորը՝ ծեր դերասանը, հրաշալի շեփորահար է, և առաջին երգը, որ նա նվագում է, «Իմ սիրտը լեռներում է» երգն է՝ շոտլանդացի բանաստեղծ Ռոբերտ Բլրնսի հայտնի բանաստեղծության հիման վրա գրված: Ինքը՝ Մեք-Գրեգորը, ներկայանում է իբրև մարդ, որի սիրտը լեռներում է: Բլրնսի այդ

բանաստեղծությունը մի տեսակ բնաբան է Սարոյանի պիեսի համար և ամբողջությամբ տպագրվում է տեքստից առաջ: Երբ նա նվագում է, հարևան տների բնակիչները, հնայված այդ երգով, հավաքվում են, լսում, մթերքներ բերում դերասանին և Զոնիի ընտանիքին, թեև իրենք էլ նույնքան աղքատ են... Ահա այս հասարակ, «փոքր» մարդիկ սիրում և հասկանում են գեղեցիկը, նրանք իրենց հոգու խորքում ժամանակակից են, որոնց սրտերը ևս լեռներում են: Այս պիեսում վատ մարդիկ չկան, Սարոյանը առհասարակ չի սիրում վատ մարդկանց, բացասական հերոսների պատկերել: Նրա հերոսները բարի, ազնիվ մարդիկ են, որոնք չեն հասկանում՝ ինչո՞ւ են մարդիկ այդքան չար լինում, ինչո՞ւ են պատերազմում միմյանց դեմ ու կոտորում իրար: Հատկապես Բեն Ալեքսանդրի խոսքերում այս առիթով զայրույթն ու տարակուսանքը շատ ուժեղ են: Ահա մի հատված. *«Օ՛, դուք՝ խելագարներ, ողբալի ապուշներ: Առա՛ջ, սպանեցեք բոլորին, պատերազմ հայտարարեք մեկդ մյուսիդ: Ժողովեք մարդկանց հազարներով և հոշոտեք նրանց: Հոշոտեք նրանց խեղճ սրտերը, նրանց խեղճ հոգիները և նրանց թշվառ մարմինները: Այլանդակեք նրանց: Պղծեք նրանց երազները: Ահաբեկեք նրանց. խեղեցեք նրանց՝ իրար հանդեպ ատելություն բորբոքելով: Ապականեցեք կյանքի առասպելը, դուք՝ խելագարներ, քանզի ձեր մեծությունը չափվում է ձեր կատարած ավերմունքով»:*

Իսկ նրա որդին՝ Զոնին, սիրում է աշխարհը և ուրախանում ամեն արևածագի համար: Պիեսում կա արևածագի մի շքեղ նկարագրություն, որը կարծես տեսնված է Զոնիի աչքերով. *«Արևը ծագելիս մի մեծ, շքեղ ժպիտ ողողում է նրա դեմքը: Նա աչքի ծայրով նայում է առավոտյան լույսին՝ կարծես դա իր թաքուն խաղընկերը լինի, որի հետ իրար շատ լավ են հասկանում: Որքան լույսը առատանում է, այնքան այդ խաղը Զոնիի և արևի միջև գնալով զարգանում է, ինչպես մի երաժշտական թեմա, և Զոնին, ոտքի կանգնելով, դեմքը դարձնում է լույսին»:* Զոնին ուրախանում է կյանքի պարզ գեղեցկությամբ: Այդպես և մյուս հերոսները, որոնք մեծ երեխաներ են՝ նրանց նման մաքուր և միամիտ: Մեք-Գրեգորը և Բեն Ալեքսանդրը ուրախ են, որ դեռ ապրում են: Բայց կյանքի գեղեցկությունը միշտ աղավաղվում է: Զոնին ասում է. *«Ինչ-որ մի տեղ մի բան սխալ է»:* Սխալ է, եթե մարդիկ, փոխանակ հասկանալու, որ իրենք եղբայրներ են, տանջում և կոտորում են իրար: Սա մի գործ է, որ ներծծված է մարդասիրությամբ և կարեկցանքով տառապող մարդու հանդեպ:

Սարոյանի պիեսների մեջ առանձնանում է մի փոքրիկ գործ՝ «Հեյ, ո՞վ կա» վերնագրով: Դա պատմություն է ձերբակալված մարդու մասին, որն սպասում է հաշվեհարդարի: Բանտում միայն ինքն է և այնտեղ աշխատող մի երիտասարդ

աղջիկ: Մարդը ժամանակ առ ժամանակ ձայն է տալիս՝ «Հեյ, ո՛վ կա»: Նրա հոգին պատում է վերահաս մահվան սարսափը, և նա ուզում է, որ կողքին մարդիկ լինեն, հարազատ մարդիկ: Բայց ոչ ոք չկա, բացի բանտում աշխատող աղջկանից: Երկու միայնակ հոգիներ, որոնք հենարան են փնտրում մեկը մյուսի մեջ, երկու էակ, որոնք կարիք ունեն մարդկային ջերմության: Նրանք, ովքեր պատրաստվում են սպանել երիտասարդ մարդուն, իրենք էլ հանցագործներ չեն, բայց խաղալիք են անհասկանալի ուժերի, ամբոխային կրքերի: Մարդանի մարդասիրության բարձրագույն դրսևորումներից է այս պիեսը:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսը Մարոյանին բնորոշ մի առանձնահատկություն ունի: Հերոսները պատկանում են տարբեր ազգերի: Մեք-Գրեգորը միշտ ասում է, որ իր տունը հազարավոր մղոններով հեռու է Ֆրեզնոյից, որտեղ ապրում են պիեսի հերոսները: Ազգանունը և սերը Բըրնսի հանդեպ հուշում են, որ նա շոտլանդացի է: Նպարավաճառ Կոսակը սլովակ է: Իսկ Ջոնին և նրա ընտանիքը հայեր են: Մարոյանը ոչ մի տեղ հատուկ չի ընդգծում ազգությունները՝ կարծես ասելու համար, որ բոլորն էլ մարդ են, բոլորն էլ եղբայրներ են և արժանի են սիրո ու կարեկցանքի: Բայց, մյուս կողմից, նա չի կարող և չի ուզում մոռանալ իր հայ լինելը: Բեն Ալեքսանդրի մայրը ժամանակ առ ժամանակ որդուն և թոռանը դիմում է հայերեն, որովհետև անգլերեն չգիտի: Այս երկու խնդիրը՝ բոլոր մարդկանց եղբայրությունը և իր ժողովրդի ճակատագիրը, Մարոյանի ստեղծագործության կարևորագույն թեմաներից են: Նրա գործերում հանդես են գալիս արաբներ, իռլանդացիներ, շոտլանդացիներ, ամերիկացիներ, և բոլորն էլ լավ մարդիկ են: Նույնիսկ թուրք մարդկանց հանդեպ նա թշնամանք չունի, «Յոթանասուն հազար ասորի» պատմվածքում ուղղակի ասում է՝ նկատի ունենալով թուրքերին. *«Նրանցից և ոչ մեկի դեմ ես ոչինչ չունեմ..., որովհետև գիտեմ, հաստատ համոզված եմ՝ մարդն ընդունակ չէ գազանությունների, գազան է դառնում ամբոխը: Իմ թշնամանքը ամբոխին է ուղղված»*: Պեստը էր շատ ուժեղ և շատ բարի մարդ լինել՝ հայկական Ցեղասպանությունից հետո այսպիսի բան գրելու համար:

Բայց, իհարկե, ամենից շատ նա գրում էր հայ մարդկանց մասին, որոնց տեսել էր, ճանաչել էր Ամերիկայում, և բոլորն էլ տարօրինակ, բարի մարդիկ էին՝ օժտված անսպառ ռոմանտիզմով: «Իմ սիրտը լեռներում է» գործի Բեն Ալեքսանդրը իր անհաջողակ կյանքից հետո էլ մնում է հպարտ, ազնվական, բարի մարդ, իսկ նրա որդին ելք է գտնում բոլոր դժվարություններից: Մարոյանի բազմաթիվ պատմվածքների հերոսները խեղճ, բարի, հպարտ հայեր են, որոնք օժտված են հզոր կենսունակությամբ: Օրինակ՝ երեսնական թվականներին Խորհրդային Միություն այցելելուց հետո գրած «Հայը և հայը» պատմվածքի հերոսները: Պիտի ենթադրել, որ պատմվածքը ինքնակենսագրական հիմք ունի:

Ընդհանրապես, Սարոյանը իր գործերից շատերի մեջ օգտագործում է իր կյանքի դեպքերը, կենսագրությունը: Այսինքն, կարելի է ասել, Սարոյանի ստեղծագործությունը ինչ-որ չափով ինքնակենսագրական է, որ չի գրկում նրա գործերը գեղարվեստական բարձր արժանիքներից: Ահա, ուրեմն, Ռոստովում հանդիպում են երկու հայ՝ մեկը պատահաբար այդ քաղաքը եկած, մյուսը՝ գաղթից հետո այնտեղ հաստատված: Ամփոփապես ճանաչում են իրար իբրև հայերի, թեև մինչ այդ երբեք չէին հանդիպել, ուրախանում են և սկսում գրուցել իրենց մայրենի լեզվով, կատակում են, ծիծաղում, ապրում օտար քաղաքում հայրենակցի հանդիպելու հրճվանքը: Ամբողջը այս գրույցն է: Հենց այդ գրույցը հեղինակին հուշում է այսպիսի տողեր. «Փորձեք կործանել այս ցեղը, ասացե՛ք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսե՛ք՝ կկարողանա՞ք: Իրենց տներից քշեցե՛ք անապատ, մի մոռացե՛ք ձեռքներից խել ճամփի հացն ու ջրի վերջին ումսը, կրակի տվե՛ք իրենց ու իրենց աստծու տները: Տեսե՛ք՝ նրանք դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը քսան տարի հետո հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզվով»: Սարոյանը, չնայած բոլոր կորուստներին ու ողբերգություններին, հավատում է հայ ժողովրդի հարատևությանը:

Նրա ստեղծագործության մեջ սեր ու համակրանք կա բոլոր մարդկանց հանդեպ, բայց իր ժողովրդի կենսունակության մասին նա խոսում է առանձնակի հպարտությամբ, թեև ցավով է հիշում հայրենակիցների միամիտ հավատը մեծ պետությունների, նրանց խոստումների նկատմամբ, նրանց կորուստները («Հայաստանի Անդրանիկը»): Ահա այս իրողությունը Սարոյանին անխզելիորեն կապում է հայ ժողովրդի, նրա մշակույթի ու հոգեբանության հետ, թեև նա մնում է իր ժամանակի ամենահայտնի ու սիրված ամերիկյան գրողներից մեկը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՍՈՍՑԱԳՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է նշանակում օտարագիր հայ գրականություն: Ինչո՞ւ և ինչպե՞ս է այն առաջացել:
2. Թվարկե՛ք օտարագիր հայագգի գրողների և նրանց ստեղծագործություններից մի քանիսը:
3. Ի՞նչ գիտե՛ք Վիլյամ Սարոյանի մասին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
10–12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՑԱԾԸ ԿՐԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հին գրականություն

1. Երբ է սկզբնավորվել հայ գրականությունը:
2. Խոսքի արվեստը Հայաստանում ինչպե՞ս է զարգացել մինչև գրերի ստեղծումը:
3. Ո՞ր է ստեղծել հայ գրերը, ովքե՞ր են նրան օգնել և սատարել: Ո՞ր է գրել նրա կենսագրությունը:
4. Հայ գրերի գյուտի մասին քսաներորդ դարում ի՞նչ պոեմներ են գրվել: Ինչպե՞ս են դրանց հեղինակները գնահատել գրերն ստեղծողի գործի արժեքը:
5. Ի՞նչ դեր են կատարել գիրն ու գրականությունը հայ ժողովրդի կյանքում:
6. Ի՞նչ գիտեք հինգերորդ դարի հայ գրականության մասին: Ի՞նչ տեղ են գրավել ինքնուրույն և թարգմանական երկերը հինգերորդ և հետագա դարերում:
7. Ովքե՞ր են հինգերորդ դարի հեղինակները: Ի՞նչ երկեր են նրանք գրել:
8. Ի՞նչ է պատմագրությունը:
9. Ի՞նչ հատկանիշներով է առանձնանում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հինգերորդ դարի պատմագրության մեջ:
10. Վերլուծիր Խորենացու ողբը:
11. Փորձիր քո կարդացած հատվածների հիման վրա համեմատել Փավստոս Բուզանդի, Եղիշեի և Մովսես Խորենացու գրքերը, ցույց տալ դրանցից ամեն մեկի առանձնահատկությունները:
12. Երբ է ձևավորվել «Սասնա ծռեր» դյուցազներգությունը (Էպոսը):
13. Դրանից առաջ հայերը բանավոր էպիկական գործեր ստեղծե՞լ են:
14. Հիշիր Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի սյուժեները: Ո՞ր հեղինակն է գրի առել դրանք:
15. Զանո՞ւ մասից է կազմված «Սասնա ծռերը», ինչպե՞ս են դրանք կոչվում:
16. Ի՞նչ սկզբունքով են բաժանված այդ մասերը, ովքե՞ր են դրանց գլխավոր հերոսները:
17. Հայկական էպոսի գլխավոր հերոսների ո՞ր գծերն են քեզ թվում ամենակարևորները:
18. Հիշիր անտիկ էպիկական պոեմները, որոնք վերագրվում էին Հոմերոսին, Աքիլլեսի, Ոդիսևսի և մյուսների կերպարները համեմատիր Սանասարի, Մեծ Միերի և Դավթի կերպարների հետ:
19. Ո՞ր է «Սասնա ծռերի» ամենասիրելի հերոսը, ինչո՞ւ:
20. Համեմատիր Դավթի և Մարա Մելիքի վարքը: Բնութագրիր այդ երկու հերոսներին:
21. Որո՞նք են Փոքր Միերի կերպարի առանձնահատկությունները, ինչո՞ւ է նա տարբերվում իր հորից, պապից, նախապապից:
22. Ինչո՞ւ է Փոքր Միերը փակվում Ագռավու քարում:
23. Ի՞նչ կարող ես ասել «Սասնա ծռերի» հումորի մասին:
24. Ինչպե՞ս է էպոսը ավանդվել և հասել մեզ:
25. Ո՞ր է «Սասնա ծռերի» առաջին գրառողը:
26. Երբ է ապրել Գրիգոր Նարեկացին: Նրա ապրած տարիներին Հայաստանը ի՞նչ վիճակում էր:

27. Ինչ է աղոթքը: Կապ ունի արդյոք աղոթքի հետ Նարեկացու «Մատյանը»:
28. Ինչպե՞ս է Աստված ներկայանում Նարեկացուն: Հիշիր պոեմից համապատասխան հատվածներ:
29. Ինչպե՞ս է բնութագրում մարդուն Նարեկացին: Բեր կոնկրետ օրինակներ:
30. Ինչ է խնդրում Աստծուց Նարեկացին:
31. Ոճի ի՞նչ առանձնահատկություններ ունի «Մատյանը»:
32. Համեմատիր հորենացու «Ողբը» և Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը: Ինչ է ողբում հորենացին և ի՞նչ՝ Նարեկացին:
33. Ինչ տեղ են գրավում Նարեկացու տաղերը հայ քնարերգության պատմության մեջ: Աշխարհիկ տարրերը ինչպե՞ս են ներթափանցում այդ հոգևոր տաղերի մեջ:
34. Ինչպե՞ս է զարգանում հայկական քնարերգությունը Գրիգոր Նարեկացուց հետո: Ինչ հեղինակների գիտես, որոնք ստեղծագործել են XII և հետագա դարերում:
35. Ինչ է աշխարհիկ քնարերգությունը, ինչո՞վ է տարբերվում Գրիգոր Նարեկացու տաղերից, առհասարակ հոգևոր երգից և բանաստեղծությունից:
36. Ինչ գիտես միջնադարի մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալու մասին:
37. Կարդա՛ Շնորհալու «Ողբ Եդեսիո» պոեմը և հանելուկները:
38. Ո՞վ է Ֆրիկը, էրբե՞ և ապրել, ի՞նչ է մեզ հայտնի նրա կյանքի մասին:
39. Ո՞րն է Ֆրիկի բերած ամենամեծ նորությունը միջնադարի հայ բանաստեղծության մեջ:
40. Ինչո՞ւ է Ֆրիկը դժգոհ ճակատագրից: Ո՞վ է տնօրինում մարդկանց ճակատագիրը:
41. Ինչ է առակը: Ինչ առակագիրների գիտես:
42. Ո՞վ է Մխիթար Գոշը: Հիշիր նրա առակներից մի քանիսը:
43. Ինչ է հայտնի մեզ Վարդան Այգեկցու կյանքի մասին: Ինչ առակներ են հիշում նրանից:
44. Ինչ է հայրենը: Ինչ հայրեննով են գրված հայրենները:
45. Ո՞վ է Նահապետ Զուգակը: Գրականագիտության մեջ ի՞նչ կարծիքներ կան նրա՝ հայրենների հեղինակ լինելու մասին:
46. Հայրենների ի՞նչ տեսակներ կան:
47. Ինչո՞ւ են պանդխտության հայրենները և պանդխտության երգերը հայկական բանահյուսության և գրականության մեջ այդքան մեծ տեղ գրավում:
48. Ծանո՞թ է քեզ «Կռունկ» երգը:
49. Հայրեններից բացի՝ ուրիշ ի՞նչ սիրային բանաստեղծություններ են եղել հայ միջնադարյան գրականության մեջ: Ծանո՞թ են քեզ Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Նաղաշ Հովնաթանի և միջնադարյան մյուս սիրերգակաների անունները:
50. Ինչո՞վ են տարբերվում հայրենները միջնադարի մյուս սիրային երգերից:
51. Ինչ առանձնահատկություններ ունի հայրենների պատկերավորությունը:
52. Օրինակներ հիշիր հայրենների մակդիրներից, համեմատություններից, փոխաբերություններից:
53. Անդրկովկասի դր քաղաքում է ծնվել Սայաթ-Նովան:
54. Ինչ լեզուներով է գրել իր բանաստեղծությունները:
55. Ինչ է աշուղական բանաստեղծությունը:
56. Որո՞նք են Սայաթ-Նովայի ստեղծագործության հիմնական թեմաները:

57. Ինչպե՞ս է բնութագրել Սայաթ-Նովային Հովհաննես Թումանյանը:
58. Որո՞նք են Սայաթ-Նովայի սիրերգության առանձնահատկությունները:
59. Համեմատիր Սայաթ-Նովայի սիրո երգերը սիրային հայրենների հետ և ցույց տուր տարբերությունները:
60. Ինչպե՞ս է վերաբերվում Սայաթ-Նովան սիրած կնոջը:
61. Մարդկային ի՞նչ արատների մասին է խոսում Սայաթ-Նովան իր խոհական բանաստեղծություններում: Հիշիր «Աշխարս մե փանջարա է» երգը:
62. Ի՞նչ է ասում իր արվեստի մասին Սայաթ-Նովան «Զյամանչա» և «Դուն էն գլխեն իմաստուն իս» երգերում:
63. Ի՞նչ է ասում մարդկային հարաբերությունների մասին Սայաթ-Նովան «Դուն էն գլխեն իմաստուն իս» երգում:

Նոր գրականություն

1. Ե՞րբ է ձևավորվել հայոց նոր գրականությունը, ի՞նչ պայմաններում:
2. Ի՞նչ գրական ուղղություններ են եղել նոր գրականության մեջ:
3. Ո՞ր գրողի անվան հետ է կապվում նոր գրականության սկզբնավորումը:
4. Ի՞նչ գիտե՞ք Խաչատուր Աբովյանի կենսագրության մասին:
5. Ի՞նչ է գրել Խաչատուր Աբովյանը: Ո՞րն է նրա ամենանշանավոր երկը:
6. Ի՞նչ է ասում Աբովյանը «Վերք Հայաստանի»-ի առաջաբանում իր վեպը գրելու պատճառների մասին: Բացատրիր Կրասոսի որդու պատմության իմաստը:
7. Ո՞վ է վեպի գլխավոր հերոսը: Ինչպե՞ս է պատճառաբանում այս հերոսի ընտրությունը Աբովյանը:
8. Ո՞րն է Աղասու արարքի իմաստը (պարսիկ զինվորներին սպանելը և Թագուհուն ազատելը): Ի՞նչ հետևանքներ է դա ունենում:
9. Ինչպե՞ս է հիմնավորում Աբովյանը աշխարհաբարի ընտրությունը այս վեպի համար: Իրականում ո՞րն է այս վեպի լեզուն:
10. Ի՞նչ լեզվով են գրված վեպի վերջին էջերը՝ գրաբար, թե՞ աշխարհաբար: Ինչո՞ւ:
11. Բացատրիր վեպի վերնագիրը՝ «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի»:
12. Ինչո՞ւ ենք Աբովյանի վեպը համարում հայոց նոր գրականության անկյունաքարային գործը:
13. Ի՞նչ տեղ է գրավում Միքայել Նալբանդյանը հայ գրականության և հասարակական մտքի պատմության մեջ:
14. Հրապարակախոսական ի՞նչ գործեր է գրել Միքայել Նալբանդյանը, ինչի՞ մասին են դրանք:
15. Որո՞նք են նրա գլխավոր գեղարվեստական երկերը:
16. Ո՞րն է «Ազատություն» բանաստեղծության գաղափարը:
17. Ի՞նչ է ուզում ասել Նալբանդյանը «Մանկության օրեր» բանաստեղծությամբ:
18. Կարդա՞ր Հովհաննես Թումանյանի հոդվածը Միքայել Նալբանդյանի մասին և վերլուծիր:
19. Ի՞նչ ազդեցություն է գործել Րաֆֆին հայոց հասարակական և հոգևոր կյանքի վրա:
20. Որո՞նք են նրա ծրագրային վեպերը, ինչո՞ւ են դրանք կոչվում ծրագրային:
21. Ի՞նչ է ասում Րաֆֆին պատմավեպի մասին, ինչպիսի՞ն պետք է լինի գրողի վերաբերմունքը պատմական փաստերի նկատմամբ:
22. Ո՞ր դարի դեպքերն են ընկած «Սամվել» վեպի հիմքում:

23. Ինչպէս է վերլուծում այդ դարաշրջանը Րաֆֆին իր վեպի «Փակագծի մեջ» հատվածում:
24. Ո՞ր պատմիչի գործից է օգտվել Րաֆֆին իր վեպը գրելիս:
25. Ինչպէս է հիմնավորում Րաֆֆին Սամվելի կողմից իր ծնողներին սպանելը: Հանուն ինչի է Սամվելը այդպես վարվում:
26. Տու՛ր քո գնահատականը Սամվելի արարքին և մանրամասն հիմնավորի՛ր այն:
27. Ի՞նչ վիճակում էր Հայաստանը այն ժամանակ, երբ Րաֆֆին գրում էր իր այս վեպը:
28. Ի՞նչ պայմաններում են ստեղծվում այսպիսի գործերը:
29. Համաշխարհային գրականության մեջ ուրիշ ի՞նչ գործեր կան, որոնց մեջ հերոսը հանուն հայրենիքի սպանում է իր ամենամերձավոր հարազատին:
30. Ուրիշ ի՞նչ աչքի ընկնող կերպարներ կան «Սամվել» վեպում: Ինչպէս է վարվում Մերուժան Արծրունու մայրը իր որդու հետ՝ իմանալով նրա դավաճանության մասին:
31. Մոր ուրիշ ի՞նչ կերպարներ գիտես հայ գրականությունից, որոնք մարմնավորում են հայրենիքի գաղափարը:
32. Ի՞նչ է ռոմանտիզմը և ի՞նչ ազդեցություն է գործել հայոց նոր գրականության զարգացման վրա:
33. Երբ և ինչո՞ւ են առաջացել արևելահայ և արևմտահայ գրական լեզուները:
34. Ի՞նչ պայմաններում էին զարգանում արևելահայությունը և արևմտահայությունը: Ինչպէս էր դա արտացոլվում արևելահայ և արևմտահայ գրականությունների մեջ:
35. Ի՞նչ արևմտահայ գրողների գիտես:
36. Ինչպէս է անցել Հակոբ Պարոնյանի կյանքը:
37. Որո՞նք են նրա գլխավոր երկերը:
38. Ի՞նչ գիտես «Պաղտասար աղբարի» մասին:
39. Պարոնյանն ո՞ւմ է անվանում «մեծապատիվ մուրացկաններ» իր համանուն վիպակում:
40. Ինչպիսի՞ն է Պարոնյանի վերաբերմունքը այդ մարդկանց հանդեպ:
41. Ո՞վ է Աբխոողոմ աղան: Փորձի՛ր քնութագրել նրա ամենածիծաղելի կողմերը: Ի՞նչ տեսակ կին է ուզում Աբխոողոմ աղան:
42. Ի՞նչ է երգիծանքը: Ի՞նչ է հումորը: Ինչո՞վ են իրարից տարբերվում: «Մեծապատիվ մուրացկաններ»-ում գործ ունենք երգիծանքի, թե՛ հումորի հետ:
43. Ուրիշ ի՞նչ երգիծական գործեր գիտես հայ գրականության մեջ:
44. Ի՞նչ դեր է կատարել Ալեքսանդր Ծիրվանզադեն հայ գրականության մեջ: Որո՞նք են նրա ամենահայտնի գործերը:
45. Ինչի՞ մասին է «Նամուսը» վիպակը: Ո՞վ կամ ի՞նչն էր մեղավոր Սուսանի և Սեյրանի կործանման համար: Ինչպէս են հասկանում Նամուսը վիպակի հերոսները:
46. Ծանո՞թ է քեզ «Պատվի համար» դրաման: Ինչպէս են հասկանում պատիվը այս դրամայի հերոսները:
47. Համեմատի՛ր Նամուսի և պատվի ըմբռնումները գավառական քաղաքում և հարուստ բուրժուայի ընտանիքում:
48. Ո՞րն է «Զառս» վեպի կոնֆլիկտը:
49. Ո՞վ է Մարկոս աղա Ալիմյանը: Ինչպէս է նա հարստացել:

50. Ովքեր են նրա որդիները: Առանձին-առանձին բնութագրիր Սմբատին, Միքայելին, Արշակին:
51. Ինչո՞ւ է Սմբատը դավաճանում իր երիտասարդության իղեալներին:
52. Բնութագրիր Իսահակ Մարութխանյանին և նրա հայտնի մենախոսությունը փողի մասին: Ինչ կարծիքի ես Մարութխանյանի փիլիսոփայության մասին:
53. Ինչպե՞ս է Շիրվանզադեն ներկայացնում հասարակ մարդկանց, բանվորներին:
54. Ինչ է վեպը: Ինչո՞վ է վեպը տարբերվում պատմվածքից և վիպակից:
55. Գրական ի՞ր ուղղությանն է պատկանում Շիրվանզադեի ստեղծագործությունը:
56. Ինչ է ռեալիզմը, ինչո՞վ է տարբերվում ռոմանտիզմից:
57. Ինչ է քեզ հայտնի հայկական ռեալիզմի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Գաբրիել Սունդուկյանի մասին: Ծանո՞թ է քեզ նրա «Պեպո» կատակերգությունը:
58. Ինչ ընդհանուր կետեր կան «Պեպոյի» և Շիրվանզադեի ստեղծագործությունների միջև:
59. Ո՞վ է Մուրացանը: Որո՞նք են նրա ամենահայտնի գործերը:
60. Մուրացանի ի՞ր գործերն են վերաբերում հայոց պատմությանը:
61. Ո՞ր դարի իրադարձություններն է նկարագրում Մուրացանը «Գևորգ Մարգալետունի» վեպում:
62. Ինչ է պատմությունից հայտնի Աշոտ Երկաթի մասին, թագավորական ի՞ր ընտանիքին է նա պատկանել:
63. Աշոտ Երկաթի բնավորության ի՞ր գծերն է ընդգծում Մուրացանը իր վեպում: Ինչո՞ւ:
64. Ինչ տեղ է հատկացնում Մուրացանը ընտանիքին պետության և հայրենիքի կյանքում:
65. Ո՞վ է Գևորգ Մարգալետունին: Ինչո՞ւ է իր վեպը Մուրացանը կոչել ոչ թե հայոց ամենահայտնի թագավորներից մեկի, այլ հենց նրա անունով:
66. Ինչ է նշանակում «Մի ծաղկով գարուն»: Որտեղի՞ց է այս կապակցությունը, և ի՞նչ է ուզում ասել Մուրացանը:
67. Ինչ ընդհանրություններ եք տեսնում Բաֆֆու «Սամվելի» և Մուրացանի «Գևորգ Մարգալետունու» միջև:
68. Ո՞րոնք են Նար-Դոսի գլխավոր գործերը:
69. Ինչի՞ մասին է «Մեր թաղը» պատմվածաշարը:
70. Ինչ հակադրություն է անցկացնում Նար-Դոսը «Ես և նա» պատմվածքում:
71. Ո՞րն է «Սպանված աղավնին» վիպակի սյուժեն:
72. Ո՞րն է Թուլայանի փիլիսոփայության էությունը:
73. Մարդկային ի՞նչ տիպ է ներկայացնում Սառան:
74. Գրական ի՞ր դպրոցին է պատկանում Չոիրապը: Ինչ են վկայում նրա ժողովածուների վերնագրերը:
75. Ինչո՞վ են իրարից տարբերվում պատմվածքն ու նորավեպը: Օրինակներ բեր Չոիրապի և Բակունցի գործերից:
76. Եվրոպական ի՞ր գրականության ավանդույթներն են արտացոլվել Չոիրապի ստեղծագործության մեջ:
77. Ինչո՞ւ է Չոիրապը հերոսուհու մահը երջանիկ համարում «Երջանիկ մահը» պատմվածքում:
78. Ինչ տեղ են գրավում պատմվածքը և նորավեպը հայկական արձակում:

79. Հիշիր հայկական պատմվածքի և նորավեպի մյուս վարպետներին:
80. Ինչ տեղ է գրավում Թումանյանը հայ ժողովրդի հոգևոր կյանքում:
81. Հայաստանի դր մասում է ծնվել Հովհաննես Թումանյանը: Բնութագրիր նրա ծննդավայրի բնությունը: Ծննդավայրը նշանակություն ունի բանաստեղծի ձևավորման համար:
82. Թումանյանի դր գործերին ես ծանոթ: Նշիր այդ գործերի ժանրերը:
83. Որո՞նք են Թումանյանի գլխավոր պոեմները:
84. Ծանոթ է քեզ «Թմկաբերդի առումը» պոեմը: Ինչի մասին է այն:
85. Ինչպիսի՞ն է Թումանյանի վերաբերմունքը Թմկա իշխանուհու հանդեպ:
86. Զանի տարբերակ է ունեցել «Անուշը»:
87. Ինչի մասին է «Անուշը»:
88. Ինչ միջավայրում են դաստիարակվել Անուշը և Սարոն:
89. Ինչո՞ւ է Մոսին այդքան վճռական Սարոյից վրեժ լուծելիս:
90. Ինչպե՞ս է Անուշը պատասխանում անցորդին, որը նրան խորհուրդ էր տալիս մոռանալ Սարոյին և նոր սեր անել: Ինչո՞ւ է այդպես պատասխանում:
91. Ինչ խորհրդանշական իմաստ ունի Համբարձման գիշերվա տեսարանը պոեմի վերջում:
92. Համաշխարհային գրականությունից ուրիշ ի՞նչ գործեր գիտես սիրո ուժի և ողբերգականության մասին:
93. Թումանյանի հեքիաթներից որո՞նք են քեզ ծանոթ:
94. Ինչ գաղափարներ է արտահայտել Թումանյանը «Ոսկի քաղաքը» հեքիաթում:
95. Ինչո՞ւ է Զաչ Նազարը կարողանում հասնել իշխանության բարձունքներին:
96. Ո՞րն է Գիթորի ողբերգության պատճառը:
97. Ինչպիսի՞ն են մարդու և բնության հարաբերությունները «Գելը» պատմվածքում և Թումանյանի մյուս գործերում:
98. Ո՞րն է Իսահակյանի ստեղծագործության ամենատարածված և սիրված ժանրը:
99. Իսահակյանի բանաստեղծություններով գրված ի՞նչ երգեր գիտես:
100. Մորը նվիրված ի՞նչ բանաստեղծություններ է գրել Իսահակյանը:
101. Ինչ պոեմներ է գրել Իսահակյանը:
102. Պոեմի դր տեսակին է պատկանում «Աբու Լալա Մահարին»:
103. Ո՞վ է Աբու Լալա Մահարին, ինչո՞ւ է Իսահակյանը նրան ընտրել իբրև իր պոեմի հերոսի:
104. Ինչ է հաստատում և ի՞նչ է ժխտում Աբու Լալա Մահարին իր մենախոսության մեջ:
105. Ինչո՞ւ է «Համբերանքի չիբուխի» Օհան ամին լքել իր գյուղը: Ինչպե՞ս է ինքը դա բացատրում:
106. Ինչ գնահատական է տալիս մարդուն և հասարակությանը Օհան ամին: Այդ գնահատականները ընդհանրություններ ունեն Աբու Լալա Մահարիի գնահատականների հետ:
107. Ո՞վ է «Գարիբալդիականը» պատմվածքի հերոսը:
108. Ինչ ընդհանուր գծեր ունի Նա Օհան ամու հետ:
109. Իսահակյանի արձակից ուրիշ ի՞նչ գործերի ես ծանոթ:
110. Գրական ի՞նչ խմբակցության է պատկանել Լևոն Շանթը: Ինչ գիտես այդ խմբակցության մասին:
111. Ինչ ժանրերով է ստեղծագործել Լևոն Շանթը: Ո՞րն է գլխավորը դրանց մեջ:

112. Ինչ պիտեսներ է գրել Լևոն Շանթը:
113. Ինչ դարաշրջան է պատկերված Շանթի «Հին աստվածներ» պիեսում: Ինչպիսին է պատմական դարաշրջանի դերը նրա պիեսներում:
114. Ովքեր են հին աստվածները, ինչո՞ւ է Շանթը նրանց անունով կոչել իր պիեսը:
115. Ինչո՞ւ է կործանվում Աբեղան:
116. Վերլուծիր Վանահոր կերպարը: Ինչո՞ւ է Վանահայրը քանդում հին եկեղեցին: Ինչո՞ւ է փակել տալիս նորակառույց եկեղեցու լուսամուտը:
117. Ինչ կապ ունի «Հին աստվածները» հեթանոսական շարժման հետ:
118. Ո՞րն է Սիամանթոյի ստեղծագործության հիմնական թեման:
119. Ինչ բանաստեղծական ժողովածուներ է ստեղծել Սիամանթոն:
120. Ինչ դեպքերից են ծնունդ առել «Կարմիր լուրեր բարեկամես» շարքի բանաստեղծությունները:
121. Ինչո՞ւ է Սիամանթոյի հերոսը բացականչում. «Ես երգելով կուզեմ մեռնել»:
122. Որո՞նք են Սիամանթոյի արվեստի գլխավոր առանձնահատկությունները:
123. Ինչո՞ւ են Սիամանթոն, Վարուժանը, Սևակը և ուրիշներ երկար տարիներ ապրել և ստեղծագործել հայրենիքից հեռու:
124. Ինչ ուսումնական հաստատություններում է սովորել Վարուժանը, ինչ ազդեցություն են թողել այն երկրները, որտեղ սովորել է Վարուժանը, նրա բանաստեղծական արվեստի և աշխարհագագողության վրա:
125. Ինչ բանաստեղծական ժողովածուներ է ստեղծել Դանիել Վարուժանը:
126. Ինչո՞ւ է երկրորդ ժողովածուն կոչվում «Ցեղին սիրտը»:
127. Ինչ էր հեթանոսական շարժումը, որն էր Վարուժանի դերը այդ շարժման մեջ:
128. Ինչ մասերից է կազմված «Հեթանոս երգեր» ժողովածուն:
129. Ինչ նյութի հիման վրա է գրված «Հարձը» պոեմը: Ո՞րն է այդ պոեմի գլխավոր պաթոսը, որ տողերում է դա արտահայտվում:
130. Ինչո՞ւ է գրքի երկրորդ մասը կոչվում «Գողգոթայի ծաղիկներ»: Որտեղից է գալիս այս անվանումը:
131. Ինչի մասին է «Հացին երգը» շարքը: Ինչո՞ւ «Հեթանոս երգերից» հետո Վարուժանը գրեց «Հացին երգը»: Ինչ ընդհանուր բան կա այս՝ իրարից այնքան տարբեր շարքերի միջև:
132. Ինչ տարբերություն կարող ես նշել Սիամանթոյի և Վարուժանի ստեղծագործությունների միջև:
133. Միսաք Մեծարենցի կենսագրությունը ինչո՞վ է տարբերվում իրեն ժամանակակից մյուս արևմտահայ բանաստեղծների կենսագրությունից:
134. Ինչ տեղ է գրավում բնությունը Մեծարենցի ստեղծագործության մեջ:
135. Ինչպե՞ս է ներկայացնում բնությունը Մեծարենցը:
136. Տարվա որ եղանակներն է ամենից շատ սիրում Մեծարենցը: Ինչո՞ւ:
137. Ինչ տեղ է գրավում մահվան թեման երկու վաղամեռիկ բանաստեղծների՝ Պետրոս Դուրյանի և Միսաք Մեծարենցի գործերում:
138. Կարդա՛ Պետրոս Դուրյանի «Տրտունջքը» և համեմատիր Մեծարենցի ստեղծագործության հետ:
139. Ինչպե՞ս կարելի է անվանել Մեծարենցի վերաբերմունքը ուրիշ մարդկանց հանդեպ:
140. Ինչո՞ւ է Մեծարենցը խնդրում. «Տճուր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական»: Ինչ է նշանակում այս «անանձնական ուրախությունը»:
141. Ինչ զգացմունք է ընկած Մեծարենցի «Ըլլայի, ըլլայի...» շարքի հիմքում:

142. Ինչ նշանակություն է ունեցել Վահան Տերյանի ուսումնառությունը Մոսկվայում և Պետերբուրգում նրա գրական կողմնորոշման համար:
143. Ինչ վերաբերմունք է ունեցել Տերյանը Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործության նկատմամբ:
144. Ո՞վ է Տերյանի քնարական հերոսը: Համեմատիր Իսահակյանի քնարական հերոսի հետ:
145. Բնութագրիր քաղաքային միջավայրի դերը Տերյանի քնարերգության մեջ:
146. Ինչ տարբերություններ ես տեսնում Տերյանի և Նրան ժամանակակից, գրեթե նրան հասակակից Մեծարենցի ստեղծագործության մեջ:
147. Ինչ դեր է խաղացել սիմվոլիզմը (խորհրդապաշտությունը) Տերյանի պոեզիայում:
148. Որո՞նք են Տերյանի ստեղծած քնարական շարքերը:
149. Ինչ առանձնահատկություններ ունի Տերյանի հայրենասիրական շարքը՝ «Երկիր Նաիրին»: Փորձիր Տերյանի հայրենասիրական բանաստեղծությունները համեմատել Թումանյանի, Իսահակյանի, Սիամանթոյի հայրենասիրական բանաստեղծությունների հետ:
150. Վերլուծիր «Հրաժեշտի գագեղը»:
151. Ինչ կարծիք ունեւ Տերյանը հայ գրականության զարգացման մասին: Պատասխանելու համար կարդա՛ Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» հոդվածը:

Նորագույն գրականություն

1. Պատմիր Չարենցի կենսագրությունը՝ ուշադրություն դարձնելով նրա ապրած ժամանակաշրջանի առանձնահատկություններին:
2. Երբ և ինչ պայմաններում է գրել «Դանթեական առասպել» պոեմը:
3. Ինչպե՞ս է ներկայացնում Չարենցը մեռած քաղաքը և Արևմտյան Հայաստանը:
4. Ինչպե՞ս է Չարենցը ներկայացնում մարդու վայրենի քնազդների արթնացումը:
5. Կարդա՛ և վերլուծիր «Վահագն» բանաստեղծությունը: Երբ է գրվել այդ բանաստեղծությունը, ինչ իրադարձությունների ազդեցության տակ:
6. Համեմատիր այդ բանաստեղծությունը Հովհաննես Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» բանաստեղծության հետ:
7. Վերլուծիր «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով բոլոր մակդիրներին և համեմատություններին:
8. Կարդա՛ «Տաղ անձնական» բանաստեղծությունը: Ինչ տրամադրություն է արտահայտում այդ երգը:
9. Համեմատիր այդ բանաստեղծությունը Տերյանի «Մթնշաղի անուրջներ» շարքի բանաստեղծությունների հետ:
10. Ինչպե՞ս էր վերաբերվում Չարենցը հեղափոխությանը: Ինչ գործեր է գրել՝ հեղափոխությանը նվիրված:
11. Ինչ իմաստ է դնում Չարենցը «ամբոխները խելագարված» բառակապակցության մեջ:
12. Ինչպիսի՞ն է հեղափոխական զանգվածների վերաբերմունքը հին աշխարհի հանդեպ: Կարդա՛ նաև «Աթիլա» բանաստեղծությունը:

13. Դեպի ռւր Էին գնում «խելագարված ամբոխները»: Հիշիր Ավետիք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմը և փորձիր բացատրել՝ ինչ տարբերություն կա երկու պոեմներում գործածված՝ արևի խորհրդանիշների միջև:
14. Ինչ գիտես Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի մասին:
15. Որո՞նք են Դերենիկ Դեմիրճյանի ամենահայտնի գործերը:
16. Կարդա՛ Դեմիրճյանի «Քաջ Նազարը» պիեսը: Ինչո՞վ է այն տարբերվում Թումանյանի «Քաջ Նազարից»:
17. Ո՞ր դարի իրադարձություններն են պատկերված Դեմիրճյանի «Վարդանանք» վեպում: Ո՞ր պատմիչներից է օգտվել Դեմիրճյանը իր վեպը գրելիս:
18. Ինչո՞ւ է վեպն անվանված «Վարդանանք»:
19. Ինչ առանձնահատկություններ ունի Վարդանը իբրև ազնվական և սպարապետ:
20. Համեմատիր Վարդանի և Վասակի կերպարները:
21. Ինչպե՞ս են զուտ կրոնական խնդիրները և հայրենասիրությունը կապվում իրար Վարդանանց պատերազմում:
22. Ինչ տեսակետներ են եղել հայ պատմագիտության մեջ Վարդանի և Վասակի մասին: Խնդրիր ուսուցչին՝ պատմել այդ մասին:
23. Ինչ տարբերություն կա պատմագրության և պատմավիպասանության միջև: Հիշիր Նաև քեզ ծանոթ հայկական մյուս պատմավեպերը:
24. Գրական ռժմանում է Ակսել Բակունցը հասել ամենամեծ հաջողությունների:
25. Որի՞չ ինչ հայ գրողների ես հիշում, որոնք այդ ժանրի գլուխգործոցներ են ստեղծել:
26. Սոցիալական ինչ միջավայր է նկարագրում Ակսել Բակունցը:
27. Ինչո՞վ են իրարից տարբերվում Չոփրապի Նորավեպերն ու Բակունցի պատմվածքները:
28. Հայ գրականության մեջ ուրիշ ինչ գրողների գիտես, որոնք գրել են գյուղի մասին:
29. Ո՞րն է Բակունցի գյուղացի հերոսների բնավորության գլխավոր գիծը:
30. Բացասական հերոս կա՞ «Միրհավը» պատմվածքում:
31. Առհասարակ ինչ տեղ են գրավում բացասական հերոսները Բակունցի պատմվածքներում:
32. Ինչ տեղ է գրավում «Ծիրանի փողը» Ցեղասպանությանը նվիրված գրականության մեջ: Ուրիշ ինչ հեղինակներ են գրել Ցեղասպանության մասին:
33. Ինչպե՞ս է պատկերված բնությունը Բակունցի պատմվածքներում, ինչպիսի՞ն են մարդկանց և բնության հարաբերությունները:
34. Համեմատիր Թումանյանի «Գիթորի» և Բակունցի «Միրհավի» պատումները (ինչպե՞ս են հեղինակները պատմում տեղի ունեցած իրադարձությունների մասին): Այդ համեմատության հիման վրա բնութագրիր ամեն մեկի պատմելու ձևը:
35. Ինչ առանձնահատկություններով է բնորոշվում Գուրգեն Մահարու կենսագրությունը: Հայ գրողներից ուրիշ էլ ի՞նչ կենսագրությանն են հատուկ այդ առանձնահատկությունները:
36. Ինչ զգացմունքով է խոսում Մահարին իր հայրենի քաղաքի մասին: Այդ վերաբերմունքը կարելի՞ է համեմատել այն վերաբերմունքի հետ, որն ունի Ակսել Բակունցը իր նկարագրած հին գյուղի նկատմամբ:

37. Ինչո՞ւ է Մահարին հայրենի քաղաքին նվիրված իր վեպը վերնագրել «Այրվող այգեստաններ»:
38. Ո՞րն օրինակին է հետևել Մահարին իր վեպը գրելիս, ի՞նչ է ինքն ասում այդ մասին:
39. Ի՞նչ ընդհանրություններ կան Չարենցի և Մահարու միջև իրենց հայրենի քաղաքը նկարագրելիս:
40. Հայրենի քաղաքի նկատմամբ վերաբերմունքի ի՞նչ տարբերություններ կան Չարենցի և Մահարու վեպերում:
41. Բնութագրի՞ր Օհանես աղայի կերպարը՝ մանրամասն վերլուծելով նրա բնավորության դրական և բացասական կողմերը:
42. Ի՞նչ է երգիծանքը: Ի՞նչ է հումորը: Բնութագրի՞ր դրանց տարբերությունները Չարենցի և Մահարու վեպերից վերցված օրինակներով:
43. Ի՞նչ է քեզ հայտնի երեսնական թվականների բռնությունների մասին: Ովքե՞ր տուժեցին այդ բռնություններից:
44. Ինչո՞ւ մասին է «Ծաղկած փշալարեր» վեպը:
45. Ինչպիսի՞ նմանություններ և տարբերություններ կան Գուրգեն Մահարու և Նաիրի Չարյանի կենսագրությունների միջև:
46. Ինչպիսի՞ն են Նաիրի Չարյանի գրական ճանապարհի առանձնահատկությունները: Ի՞նչո՞ւ է նրա մասին Ալեքսանդր Մյասնիկյանը ասել, որ Չարյանը «հայավարի է երգում»:
47. Որո՞նք են Չարյանի կարևորագույն գործերը:
48. Հայ գրականության մեջ, բացի Նաիրի Չարյանից, ուրիշ ովքե՞ր են մշակել կամ հիշատակել Արա Գեղեցիկի առասպելը:
49. Մարդկային դժբախտության հատկանիշն է ամենակարևորը Չարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ:
50. Հայոց պատմության բնութագիրը դժբախտություն է տալիս Չարյանը:
51. Ովքե՞ր են Գյոթեն և Բեթհովենը:
52. Ինչպե՞ս են նրանք ներկայացվում Չարյանի «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության մեջ: Չարյանի համակրանքը ո՞րն կողմն է:
53. Ինչպե՞ս է Չարյանը բնութագրում իր և Եղիշե Չարենցի հարաբերությունները «Չրույց մեռած պոետի հետ» բանաստեղծության մեջ:
54. Ինչպե՞ս է բնութագրում Նաիրի Չարյանը Անդրանիկ զորավարին «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմում:
55. Նաիրի Չարյանի դժբախտություններն են քեզ ամենից դուր գալիս:
56. Կյանքի ինչպիսի՞ ուղի է անցել Կոստան Չարյանը: Ինչո՞ւ է այդ ուղին բնորոշ հայ մարդուն:
57. Թվի՞ր Կոստան Չարյանի գլխավոր գործերը:
58. Ի՞նչ բախում է ընկած «Տատրագոմի հարսը» պոեմի հիմքում:
59. Ո՞րն է հայ մարդու այն առանձնահատկությունը, որը բնորոշ է Կոստան Չարյանի արձակի բոլոր գլխավոր հերոսներին:
60. Հայաստանի պատմության դժբախտություն է արտացոլված Կոստան Չարյանի «Նավը լեռան վրա» վեպում:
61. Ի՞նչ առանձնահատկություն ունի այդ վեպի ճակատագիրը, ի՞նչ տարբերություն կա նրա առաջին և երկրորդ խմբագրությունների միջև:
62. Ի՞նչ առանձնահատկություններ ունի Կոստան Չարյանի լեզուն:

63. Ո՞ր քաղաքում է ծնվել և հասակ առել Շահան Շահնուրը: Ի՞նչ դեր է կատարել այդ քաղաքը հայ գրականության զարգացման ընթացքում:
64. Ի՞նչ է խորհրդանշում Շահնուրի վեպի վերնագիրը՝ «Նահանջը առանց երգի»:
65. Ի՞նչ տարբերություններ կային այն մշակույթների միջև, որ ներկայացնում էին Պիեռը և Ժանեթը:
66. Ի՞նչ խորհրդանշական իմաստ ունի Պետրոսի անվանափոխությունը: Ի՞նչ է տեղի ունենում Պետրոսի մեջ Փարիզում ապրած տարիներին:
67. Ո՞րն է Լոխումի ողբերգությունը, ինչո՞ւ է նա ինքնասպանություն գործում:
68. Ինչո՞ւ է Սուրենը իր գիրքը տպագրում ֆրանսերեն:
69. Ազգային մշակույթը և գրականությունը կարո՞ղ են զարգանալ հայրենի հողից դուրս, օտար երկրներում:
70. Զո կարծիքով՝ ինչպիսի՞ն է լինելու հայկական սփյուռքի ճակատագիրը:
71. Ի՞նչ իրադրություն էր հայկական պոեզիայում, երբ տպագրվեց Շիրազի առաջին գիրքը:
72. Ինչպե՞ս են արձագանքել նրա գրքին հայ գրականության դասականները:
73. Ինչո՞ւ էին տարբերվում Շիրազի բանաստեղծությունները նրա անմիջական նախորդների գործերից:
74. Որո՞նք են Շիրազի ստեղծագործության հիմնական թեմաները:
75. Փորձիր զուգահեռ անցկացնել Իսահակյանի և Շիրազի՝ կնոջն ու մորը նվիրված բանաստեղծությունների միջև:
76. Ի՞նչ կարծիքի ես Շիրազի բանաստեղծությունների արդիականության մասին:
77. Վերլուծիր «Բիբլիականը» պոեմը: Ինչո՞ւ են այդ պոեմի մասին այդքան բարձր կարծիք հայտնել ԱՎ. Իսահակյանը և Վ. Յամբարձումյանը:
78. Ինչո՞ւ բացատրել Շիրազի այդքան մեծ ժողովրդականությունը:
79. Ինչպիսի՞ն է եղել Յամո Սահյանի գրական ճանապարհը:
80. Որո՞նք են Սահյանի ամենահայտնի ժողովածուները:
81. Ինչո՞ւ է Սահյանը այդքան կապված բնությանը: Ինչպե՞ս է ներկայանում բնությունը նրա պոեզիայում:
82. Ի՞նչ ունի սովորելու մարդը բնությունից:
83. Ինչո՞ւ է Սահյանը այդքան հաճախ դիմում մանկական հուշերին: Մարդիկ ինչպիսի՞ն են այդ հուշերում:
84. Փորձիր բնութագրել Սահյանի հերոսին: Ինչո՞ւ է նա դժգոհ մարդկանցից և հասարակությունից:
85. Ինչո՞ւ Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն»-ը այդքան արագ և այդքան հիմնավոր գրավեց հայ ընթերցողին: Ի՞նչ դեր կատարեց այդ պոեմը հայկական հասարակական կյանքում:
86. Բնութագրիր այն ժամանակաշրջանը, երբ Սևակը գրեց իր պոեմը: Ի՞նչ փոփոխություններ էին տեղի ունենում խորհրդային Միությունում:
87. Բացատրիր պոեմի կառուցվածքը, ինչո՞ւ են մասերը կոչվում ղողանջներ, իսկ ամբողջ պոեմը կոչվում է «Անլուելի զանգակատուն»:
88. Ի՞նչ սկզբունքային նշանակություն ունեն «Մարդը ափի մեջ» ժողովածուն: Ի՞նչ նորություն էր բերում Սևակը խորհրդային Չայաստանի պոեզիայի մեջ մարդու պատկերման գործում:
89. Ի՞նչ էր ուզում ասել բանաստեղծը իր վերջին գրքի «Եղիցի լույս» վերնագրով:
90. Մարդկային դժբախտության դեմ էր ըմբոստանում Սևակը իր բանաստեղծություններով:

91. Ինչպե՞ս է Սևակը բնութագրում Մեսրոպ Մաշտոցի գործի նշանակությունը «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմում:
92. Ի՞նչ դեր կատարեց Սևակը իր ստեղծագործությամբ և հոգվածներով հայ բանաստեղծության զարգացման գործում:
93. Խորհրդային Հայաստանի պատմության դժուարագույն շրջանում գրական հրապարակ մտավ Հրանտ Մաթևոսյանը: Բնութագրիր այդ տարիները՝ հենվելով դասագրքում բերված՝ Մաթևոսյանի վկայության վրա:
94. Ի՞նչ է ասում Մաթևոսյանը «գյուղագրության» և «քաղաքագրության» մասին:
95. Բացատրիր Մաթևոսյանի վիպակի վերնագիրը՝ «Մենք ենք, մեր սարերը»:
96. Համեմատիր Բակունցի «Միրհավը» պատմվածքը և Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը: Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ես տեսնում՝
 - ա) կնոջ սոցիալական վիճակի պատկերներում,
 - բ) սիրո պատկերման մեջ,
 - գ) պատումի (պատմելու) ոճի մեջ:
97. Համեմատիր Աղունի և Սիմոնի կերպարները «Աշնան արև» վիպակից:
98. Ի՞նչ նորություն բերեց հայ արձակում Մաթևոսյանը իր պատումով:
99. Ի՞նչ տեղ է գրավում բանաստեղծությունը հայ գրականության պատմության մեջ:
100. Որո՞նք են քո սիրած հայ բանաստեղծները:
101. Նրանց դժուարություններն են ամենից շատ քեզ դուր եկել:
102. Հիշիր քսաներորդ դարի ամենանշանավոր հայ բանաստեղծներին:
103. Ի՞նչ երգեր են քեզ հայտնի՝ գրված հայտնի հայ բանաստեղծների խոսքերով:
104. Երբ է սկզբնավորվել հայ արձակը: Թվիր առաջին ամենանշանավոր հեղինակներին:
105. Ովքե՞ր են XIX–XX դդ. ամենանշանավոր հայ արձակագիրները:
106. Ո՞ր ժանրն է ամենից տարածված եղել հայ արձակում:
107. Թվիր հայ գրողների ամենանշանավոր վեպերը:
108. Ովքե՞ր են հայկական լավագույն պատմվածքների ու նորավեպերի հեղինակները:
109. Ի՞նչ շարժում սկսվեց հայկական արձակում XX դ. 60-ական թվականներին:
110. Ի՞նչ է նշանակում սփյուռքահայ գրականություն:
111. Երբ է սկիզբ առել սփյուռքահայ գրականությունը, հայոց պատմության ի՞նչ իրադարձությունների հետևանքով:
112. Ովքե՞ր են այդ գրականության ամենանշանավոր հեղինակները:
113. Որո՞նք են սփյուռքահայ արձակի երկու ուղղությունները և ի՞նչ են նրանք պատկերել:
114. Ինչպիսի՞ն է սփյուռքահայ գրականության ճակատագիրը:
115. Ովքե՞ր են օտարագիր հայագգի գրողները, ինչո՞վ են տարբերվում հայ գրողներից:
116. Ինչպե՞ս են նրանք կապված հայկական հոգևոր կյանքին, հայկական մշակույթին:
117. Ո՞վ է Շառլ Ազնավուրը:
118. Ո՞վ է Վիլյամ Սարոյանը: Նրա դժուարություններն են ծանոթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՅԱՐԻ	3
ՆԱԽՐԻ ՉԱՐՅԱՆ	18
ԿՈՍՏԱՆ ՉԱՐՅԱՆ	37
ՇԱՅԱՆ ՇԱՅՆՈՒՐ	49
ՀՈՎՅԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ	58
ՀԱՄՈ ՍԱՅՅԱՆ	72
ՊԱՐՈՒՅՐ ՍԱԱԿ	84
ՀՐԱՆՏ ՄԱԹԱՆՍՅԱՆ	101
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ	116
Ռազմիկ Դավոյան	
<i>Ճամփորդություն</i>	126
Յուրի Սահակյան	
<i>Կանչիր, անպայման մեկը կլսի...</i>	127
Արմեն Մարտիրոսյան	
<i>Նարեկացուն</i>	128
Հենրիկ Էդոյան	
<i>Մի սիրտ հարատև</i>	129
Սլավիկ Զիլոյան	
<i>Պոետ էին նրանք</i>	129
Դավիթ Հովհաննես	
<i>...Բայց չլինել, չլինել...</i>	130
Արևշատ Ավագյան	
<i>Արթնացում</i>	131
Հովհաննես Գրիգորյան	
<i>Հայաստան</i>	131
Արտեմ Հարությունյան	
<i>Օտարականը</i>	132
Հրաչյա Սարուխան	
<i>Հրաժեշտ</i>	132
Արմեն Շեկոյան	
<i>Գովք շարունակվող քաղաքի</i>	133
Հակոբ Մովսես	
<i>Ես թխեցի բլիթը իմ...</i>	134
Հրաչյա Թամրազյան	
<i>Խաղաղություն</i>	135
Հովիկ Հովեյան	
<i>Եղեգնաձորի շուկան աշնանը</i>	136
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԱՐՋԱԿԱԳԻՐՆԵՐ	137
ՍՓՅՈՒՌԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	151
ՕՏԱՐԱԳԻՐ ՀԱՅԱԶԳԻ ԳՐՈՂՆԵՐ	164
ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ	
ԱՆՑԱԾԸ ԿՐԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ	171

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12

Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական
հոսքերի 12-րդ դասարանի համար

Շապիկի ձևավորումը՝

Ա. Բաղդասարյանի

Համակարգչային մոտքագրում՝

Ս. Այվազյան

Համակարգչային էջադրում՝

Մ. Աբրահամյան

Սրբագրիչ՝

Պ. Հակոբյան

Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչություն ՓԲԸ տպարանում
Պատվեր՝ 1028: Տպաքանակ՝ 950:

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ

Ղ. Փարպեցու 9, հեռ.՝ 53-79-82, 53-79-83

E-mail: manmar@arminco.com